



Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ



National Endowment for Democracy
Supporting freedom around the world

ՀՀ ազգային անվտանգության ծառայության,
ՀՀ հատուկ քննչական ծառայության,
ՀՀ դատախազության գործունեությունը կարգավորող
օրենսդրության համեմատական վերլուծությունն
ըստ Եվրոպայի Խորհրդի չափորոշիչների

Վանաձոր
2015

Ուսումնասիրությունը՝

Իրականացրեց՝ Անահիտ Չիլինգարյան
ՀՔԱ Վանաձորի գրասենյակ ՀԿ-ի իրավական վերլուծությունների և
նախաձեռնությունների համակարգող

Խմբագրեց՝ Արթուր Սաքունց
ՀՔԱ Վանաձորի գրասենյակ ՀԿ-ի ղեկավար

Սույն ուսումնասիրությունը իրականացվել է «ՀՀ հատուկ քննչական ծառայության, դատախազության և ազգային անվտանգության ծառայության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների զարգացումը՝ որպես մարդու իրավունքների խախտման կանխարգելման երաշխիք Հայաստանում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրը ֆինանսավորվել է Ժողովրդավարության աջակցության ազգային հիմնադրամի (NED) կողմից: Ձեկույցում արտահայտած բոլոր տեսակետները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել ֆինանսավորող կազմակերպության տեսակետների հետ:

Բովանդակություն

Հապավումների ցանկ	6
Ներածություն	7
1. ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը	9
1.1 Ազգային անվտանգության ծառայության համակարգի կազմավորման, դեկավարման կարգը.....	9
1.1.1 Ազգային անվտանգության ծառայության դեկավարի, նրա տեղակալների, Ազգային անվտանգության ծառայության ծառայողների նշանակման կարգը.....	10
1.1.2 Ազգային անվտանգության ծառայության համակարգը և դեկավարումը	12
1.2 Ազգային անվտանգության ծառայության լիազորությունները և դրանց իրականացումը	14
Օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացումը Ազգային անվտանգության մարմինների կողմից	18
1.3 Ազգային անվտանգության ծառայության հաշվետվողականությունը, գործունեության ժողովրդավարական վերահսկողության երաշխիքները.....	20
1.4 Ներքին անվտանգության մարմինների հանդեպ վերահսկողությունը Եվրոպայի խորհրդի անդամ երկրներում ԵԽԽՎ թիվ 1402 (1999)1 հանձնարարականի պահանջների և ՀՀ ներպետական օրենսդրության համեմատական վերլուծություն	23
2. ՀՀ հատուկ քննչական ծառայությունը	41
2.1 Հատուկ քննչական ծառայության համակարգի կազմավորման, դեկավարման կարգը.....	41
Հատուկ քննչական ծառայության դեկավարի, նրա տեղակալների, ՀԲԾ ծառայողների նշանակման կարգը.....	41
Հատուկ քննչական ծառայության կառուցվածքը և դեկավարումը	43
2.2 Հատուկ քննչական ծառայության լիազորությունները և դրանց իրականացումը	44
2.3 Հատուկ քննչական ծառայության հաշվետվողականության, գործունեության ժողովրդավարական վերահսկողության երաշխիքները.....	45
2.4 Ոստիկանության դեմ բողոքները անկախ և արդյունավետ լուծելու վերաբերյալ Մարդու իրավունքների հանձնակատարի Կարծիքում սահմանված սկզբունքների և ՀՀ օրենսդրության համեմատական վերլուծություն	48
3. ՀՀ դատախազությունը	53
3.1 ՀՀ դատախազության համակարգի կազմավորման, դեկավարման կարգը.....	53
ՀՀ դատախազության համակարգը և դեկավարումը.....	56
3.2 ՀՀ դատախազության լիազորությունները և դրանց իրականացումը.....	60
Քրեական հետապնդում հարուցելու լիազորությունը	61
Հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու լիազորությունը	62

Դատարանում մեղադրանքի պաշտպանությանն ուղղված լիազորությունը.....	65
Դատախազության՝ պետական շահերի պաշտպանությանն ուղղած լիազորությունը	68
Դատախազության դատարանների վճիռների, դատավճիռների և որոշումների բողոքարկման լիազորությունը	71
Դատախազի՝ պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության իրականացման ուղղված լիազորությունը .	72
3.3. Դատախազության հաշվետվողականության, գործունեության ժողովրդավարական վերահսկողության երաշխիքները	74
ՀՀ դատախազության ներքին հաշվետվողականության և վերահսկողության մեխանիզմները.....	77
3.4 «Դատախազության դերը օրենքի ժողովրդավարական հասարակությունում, որը կառավարվում է օրենքի գերակայության սկզբունքի համաձայն» Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի Թիվ 1604 (2003) հանձնարարականի դրույթների և ՀՀ օրենսդրության համեմատական վերլուծությունը	79
4. Ամփոփում.....	85
5. Առաջարկություններ.....	90
6. Հավելվածներ.....	93
Հավելված 1 Պաշտոնատար անձանց լիազորությունները ԱԱԾ գործունեության ընթացքում	93
Հավելված 2 Գրություններ.....	94
Հավելված 3. ՀՀ ԱԱԾ քննիչների կողմից քննվող գործերի աղյուսակային պատկեր	96
Հավելված 4 Օպերատիվ - հետախուզական միջոցառումները և դրանց կատարման համար լիազորված մարմինները /Ըստ «Օպերատիվ -հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի/	98
Հավելված 5 Գաղտնի քննչական գործողությունների կատարման հիմքերը և պայմանները /ըստ ՀՀ ՔԴՕ նախագծի/.....	100
Հավելված 6 Ամփոփ տեղեկատվություն ՀՀ ԱԱԾ, ՀՀ ՀՔԾ և ՀՀ Դատախազության կարգավիճակի և գործունեության վերաբերյալ	101
Հավելված 7 Թիվ 1402 (1999)1 հանձնարարական Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունների ներքին անվտանգության ծառայությունների վերահսկում.....	106
Հավելված 8 Մարդու իրավունքների հարցերով հանձնակատարի եզրակացությունը ռստիկանության գործողությունների դեմ բողոքների անկախ և արդյունավետ քննության վերաբերյալ.....	112
Հավելված 9 Թիվ 1604 (2003) հանձնարարական Դատախազության դերն օրենքի գերակայության սկզբունքով կառավարվող ժողովրդավարական պետությունում	141
Հավելված 10 Նախարարների կոմիտեի թիվ Rec(2000)19 հանձնարարական անդամ պետություններին քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի վերաբերյալ	145

Հավելված 11 Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2012)11 հանձնարարական անդամ պետություններին քրեական արդարադատության համակարգից դուրս դատախազների դերի մասին.....	157
6. Օգտագործված գրականության ցանկ.....	165
Նշումների համար	169
Կազմակերպության մասին	170

Հապավումների ցանկ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ԿԱ	Կառավարությանն առընթեր
ԱԱԾ	Ազգային անվտանգության ծառայություն
ՀՔԾ	Հատուկ քննչական ծառայություն
ՔՕ	Քրեական օրենսգիրք
ՔԴՕ	Քրեական դատավարության օրենսգիրք
ՄԱԿ	Միացյալ ազգերի կազմակերպություն
ԵԽԽՎ	Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով
ԵԽՆԿ	Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտե

Ներածություն

Յուրաքանչյուր երկրում մարդու իրավունքների խախտումների հիմնական ռիսկերը կապված են իրավապահ մարմինների, այդ թվում՝ անվտանգության ծառայությունների գործունեության հետ, որը պայմանավորված է այդ մարմինների գործունեության առանձնահատկությամբ: ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, ՀՀ հատուկ քննչական ծառայությունը և ՀՀ դատախազությունը հանդիսանում են իրավունքի գերակայության սկզբունքի ապահովման կարևորագույն ինստիտուտները: Մինևույն ժամանակ այս մարմինների գործունեությունն անմիջական ազդեցություն ունի մարդու իրավունքների վիճակի վրա՝ կապված մարդու իրավունքների միջամտության և անձի իրավունքների սահմանափակումների հետ:

Նշված իրավապահ մարմինների գործունեության ռիսկայնությունը նաև պայմանավորված է այն հանգամանքով, որ նրանք տիրապետում են հանցագործությունների կանխարգելման և բացահայտման համար նախատեսված մի շարք գործիքների, ինչպիսին են օրինակ հանցագործության մեջ կասկածվող անձանց վերաբերյալ տվյալների հավաքումը, հարկադրանքի միջոցների կիրառման լիազորությունները: Այս մարմինների գործունեության նկատմամբ քաղաքացիական և հասարակական վերահսկողության մեխանիզմների բացակայությունը ռիսկային է դարձնում նրանց գործունեությունը մարդու իրավունքների տեսանկյունից:

Հատուկ քննչական ծառայությունը և Դատախազությունը, համապատասխանաբար իրականացնում է քննություն պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողությունների վերաբերյալ, և հսկողություն այլ իրավապահ մարմինների գործունեության նկատմամբ: Այս մարմինների գործունեության արդյունավետությունն էական նշանակություն ունի այլ իրավապահ մարմինների կողմից մարդու իրավունքների խախտումների կանխարգելման, խախտումների բացահայտման տեսակետից: Մարդու իրավունքների խախտումների ռիսկերի կանխարգելման և բացահայտման արդյունավետությունը իր հերթին պայմանավորված է վերահսկողություն իրականացնող այս մարմինների անկախությամբ:

Ուստի նման մարմինների հանդեպ ոչ բավարար և արդյունավետ քաղաքացիական և հասարակական վերահսկողական մեխանիզմները ևս կարող են հանգեցնել մարդու իրավունքների անհիմն և ոչ համաչափ միջամտությանը: Սույն զեկույցում նպատակ է դրվել ուսումնասիրել Ազգային անվտանգության մարմինների համակարգի մաս հանդիսացող Ազգային անվտանգության ծառայության, պաշտոնատար անձանց կողմից կատարված հանցագործություններով քննություն իրականացնող, անկախ քննչական մարմին հանդիսացող Հատուկ քննչական ծառայության և Դատախազության գործունեությունը կարգավորող իրավական նորմերը ԵԽԽՎ, ԵԽՆԿ բանաձևերում, հանձնարարականներում ամրագրված չափորոշիչների տեսակետից: Մասնավորապես հիմք են ընդունվել Ներքին անվտանգության մարմինների հանդեպ վերահսկողությունը Եվրոպայի խորհրդի անդամ երկրներում¹ ԵԽԽՎ թիվ

¹ St 'u Control of internal security services in Council of Europe member states

1402 (1999)¹ հանձնարարականի, Ոստիկանության դեմ բողոքները անկախ և արդյունավետ լուծելու վերաբերյալ Մարդու իրավունքների հանձնակատարի Կարծիքի, «Դատախազության դերը ժողովրդավարական հասարակությունում, որը կառավարվում է օրենքի գերակայության սկզբունքի համաձայն» Խորհրդարանական վեհաժողովի Թիվ 1604 (2003) հանձնարարականի, Քրեական արդարադատությունից դուրս դատախազների դերի վերաբերյալ Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2012)11 հանձնարարականի, Քրեական արդարադատության շրջանակներում Դատախազության դերի վերաբերյալ ԵԽ Նախարարների Կոմիտեի թիվ Rec(2000)19 հանձնարարականի շրջանակներում ամրագրված չափորոշիչները:

Ուսումնասիրության մեթոդաբանությունը

Ուսումնասիրության նպատակով վեր են լուծվել մարմնի գործունեությանն առնչվող իրավական ակտերը՝ թե՛ ներպետական, թե՛ միջազգային, ուսումնասիրվել են ԱԱԾ, ՀՔԾ, Գլխավոր դատախազության ինտերնետային կայքէջերը, այս պետական մարմիններից պաշտոնական հարցումների միջոցով ստացված տեղեկատվությունը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը, հաշվի առնելով, որ այն լուծում է տալիս մի շարք խնդիրների:

Ուսումնասիրությունը չի հավակնում լինել ամփոփ վերլուծություն այս երեք մարմինների գործունեության ամբողջ ծավալի վերաբերյալ:

¹ <http://assembly.coe.int/Main.asp?link=/Documents/AdoptedText/ta99/EREC1402.htm>

1. ՀՀ ազգային անվտանգության ծառայություն

Անվտանգության ծառայությունները բնականաբար հրահանգներ են ստանում կառավարությունից: Նրանք պետք է պատշաճ կերպով վերահսկվեն գործադիր կողմից «պետություն պետության մեջ» մտածելակերպի ձևավորումից խուսափելու նպատակով²:

1.1 Ազգային անվտանգության ծառայության համակարգի կազմավորման, ղեկավարման կարգը

ՀՀ ազգային անվտանգության մարմինները, ըստ «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ ազգային ազնվտանգության մարմինները ՀՀ անվտանգության ապահովման համակարգի բաղկացուցիչ մասն են և իրենց իրավասության սահմաններում ապահովում են անձի, հասարակության ու պետության անվտանգությունը:

Ազգային անվտանգության մարմինների գործունեությունը կարգավորվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքով («Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքը ընդունվել է 2000 թ. դեկտեմբերի 28-ին), «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենքով, մի շարք այլ օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով:

Ազգային անվտանգության մարմինների միասնական համակարգը կազմված է ՀՀ ազգային անվտանգության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնից, նրան ենթակա մարզային մարմիններից, սահմանապահ զորքերից, ուսումնական կենտրոններից, հատուկ նշանակության և այլ ստորաբաժանումներից: Լիազորված մարմինն է հանդիսանում ԱԱԾ-ն, որի շրջանակներում նաև գործում են հետախուզական, հակահետախուզական, ռազմական հակահետախուզության ստորաբաժանումներ:

ԱԱԾ-ն հանդիսանում է ՀՀ կառավարությանն առընթեր մարմին, մինչ 2002 թ. դեկտեմբերի 17-ը այն ունեցել է նախարարության կարգավիճակ: Ազգային անվտանգության ծառայության՝ կառավարությանն առընթեր մարմին հանդիսանալու հանգամանքով է պայմանավորված նրա ղեկավար անձնակազմի նշանակման, գործունեության շրջանակներում որոշումների կայացման առանձնահատկությունները և այդ շրջանակներում ՀՀ նախագահի դերը (տե՛ս [Հավելված 1](#)):

² «Անվտանգության ծառայության հանդեպ ժողովրդավարական վերահսկողության վերաբերյալ» Վենետիկի հանձնաժողովի զեկույց, ընդունված Վենետիկի հանձնաժողովի կողմից 71 –րդ պլենար նիստում, Վենետիկ 2007 թ. հունիսի 1-2, կետ 4:
³ [http://www.venice.coe.int/webforms/documents/CDL-AD\(2007\)016.aspx](http://www.venice.coe.int/webforms/documents/CDL-AD(2007)016.aspx)

1.1.1 Ազգային անվտանգության ծառայության ղեկավարի, նրա տեղակալների, Ազգային անվտանգության ծառայության ծառայողների նշանակման կարգը

«Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով սահմանված են ԱԱԾ մարմիններում ծառայության ընդունվելու համար նախատեսված նվազագույն պայմանները: Սահմանված են նաև ԱԱԾ մարմիններում ծառայության անցնելու սահմանափակումները: Այսպես, ԱԱԾ մարմիններում ծառայության չի կարող անցնել այն անձը, ով դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ, դատական կարգով զրկվել է քաղաքացիական կամ այլ ծառայությունում պաշտոն զբաղեցնելու իրավունքից, դատապարտվել է հանցագործություն կատարելու համար, կամ ում նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում, ով միաժամանակ հանդիսանում է այլ պետության քաղաքացի, չի համապատասխանում «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի առաջին մասով սահմանված պահանջներին: «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային անվտանգության մարմիններում ծառայության կարող է ընդունվել ՀՀ մինչև 30 տարեկան (բացառությամբ տեղափոխվածների) քաղաքացիները, առանձին պաշտոններում և բացառիկ դեպքերում ծառայության կարող են ընդունվել 30-ից ավելի բարձր տարիք ունեցող քաղաքացիները ծառայության անցնելու համար լիազոր մարմնի ղեկավարի թույլտվությամբ:

Այսպիսով, օրենքով սահմանված են ԱԱԾ մարմիններում ծառայության անցնելու համար նախատեսված որոշակի չափանիշներ, ինչպես նաև որոշակի հիմքերով խտրականության բացառմանն ուղղված կարգավորումներ: Միևնույն ժամանակ սահմանված չափանիշներից որոշները չեն համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին: Մասնավորապես հայտնի չէ, թե որոնք են այն գործնական, անձնական, բարոյական հատկանիշները, որոնց դեպքում անձը կարող է անցնել ԱԱԾ ծառայության, ինչպես նաև պարզ չէ օրենքում ամրագրված տարիքային շեմի հիմնավորումը:

Ըստ «Ազգային անվտանգության մարմինների» մասին ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի առաջին մասի՝ լիազորված մարմնի գործունեության ընդհանուր ղեկավարումը, իրենց իրավասության սահմաններում, իրականացնում են ՀՀ նախագահը, ՀՀ կառավարությունը և ՀՀ վարչապետը: «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ազգային անվտանգության մարմինների ղեկավարումն իրականացնում է պետական լիազոր մարմնի ղեկավարը՝ ԱԱԾ տնօրենը: Լիազոր մարմնի ղեկավարին՝ ԱԱԾ տնօրենին, պաշտոնի է նշանակում ՀՀ նախագահը՝ ՀՀ վարչապետի առաջարկությամբ: «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենքի 119-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է ԱԱԾ տնօրենին պաշտոնի նշանակելու նվազագույն պահանջները՝ պետական լիազոր մարմնի ղեկավար կարող է նշանակվել ազգային անվտանգության մարմինների այն ծառայողը, ով մինչ նշանակումը զբաղեցրել է ազգային անվտանգության մարմինների ծառայողների բարձրագույն խմբի պաշտոն կամ առնվազն 3 տարի զբաղեցրել է

գլխավոր խմբի պաշտոն և ունի գնդապետից ոչ ցածր կոչում: Մինչ այսօր (2014 թ. դեկտեմբեր ամիսը) ՀՀ կառավարությանն առընթեր մարմնի ՀՀ ԱԱԾ-ն ունեցել է թվով 2 տնօրեններ (2003 թ. հունվարի 1-ից՝ Կառլոս Պետրոսյան³, Գորիկ Հակոբյան⁴՝ 2004 թ. նոյեմբերի 9-ից մինչ այժմ): Այսինքն շուրջ 10 տարի է, ԱԱԾ տնօրենը չի փոփոխվել:

ԱԱԾ տնօրենի տեղակալներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ նախագահը: Տեղակալ կարող է նշանակվել ազգային անվտանգության մարմինների այն ծառայողը, ով մինչև նշանակումն զբաղեցրել է ազգային անվտանգության մարմինների ծառայողների բարձրագույն խմբի պաշտոն կամ մինչ նշանակումն առնվազն 3 տարի զբաղեցրել է ազգային անվտանգության մարմինների ծառայողների գլխավոր խմբի պաշտոն և ունի գնդապետից ոչ ցածր կոչում (19-րդ հոդվածի 2-րդ մաս): ԱԱԾ տնօրենը ունի մեկ առաջին տեղակալ և այլ տեղակալներ:

Այսպիսով, Ազգային անվտանգության ծառայության տնօրենի և տնօրենի տեղակալների նշանակումը հանդիսանում է ՀՀ նախագահի բացառիկ լիազորությանը, և միայն տնօրենի ղեկավարման մասնակցություն ունի նաև ՀՀ վարչապետը՝ թեկնածուի առաջադրման ձևով:

Միննույն ժամանակ սահմանված չէ տնօրենի պաշտոնավարման ժամկետ և նույն անձի կողմից ԱԱԾ տնօրենի պաշտոնում նշանակելու սահմանափակում, ինչպես նաև առանձին կերպով սահմանված չեն տնօրենին պաշտոնից ազատելու հիմքերը:

«Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ ազգային անվտանգության մարմինների ծառայողների գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոններում ծառայողներին պաշտոնների նշանակումները կատարվում են պետական լիազոր մարմնի ղեկավարի սահմանած կարգով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: ԱԱԾ տնօրենի կողմից են սահմանվում նաև ծառայության անցնելու համար թեկնածուների ընտրության, ուսումնասիրման կարգը, ինչպես նաև նրանց ներկայացվող մասնագիտական, ֆիզիկական պատրաստակամության, առողջական վիճակի հետ կապված պահանջները («Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մաս):

Անհրաժեշտ է նշել, որ ԱԱԾ կառուցվածքը և ԱԱԾ մարմինների գլխավոր, ավագ, միջին և կրտսեր պաշտոնների խմբերի պաշտոնները սահմանող իրավական ակտերը հրապարակային չեն եղել: ՀՔԱ Վանաձորի գրասենյակը համապատասխան հարցում է ներկայացրել ԱԱԾ տնօրենին, որի վերաբերյալ ստացել է պատասխան առ այն, որ ԱԱԾ կառուցվածքը և ԱԱԾ մարմինների գլխավոր, ավագ, միջին և կրտսեր պաշտոնների խմբերի պաշտոնները սահմանված են ՀՀ կառավարության որոշումներով և կրում են համապատասխանաբար «հույժ

³ ՀՀ նախագահի հրամանագիրը

⁴ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=2923>

⁴ ՀՀ նախագահի հրամանագրերը

⁵ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=3065>

⁶ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=3066>

գաղտնի» և «գաղտնի» դրոշմագրեր (պարունակում են պետական և ծառայողական գաղտնիք) և համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ տրամադրվել չեն կարող (տե՛ս [Հավելված 2](#)):

ԱԱԾ մարմինների պաշտոններից ազատելը

ԱԱԾ ծառայողները կարող են ազատվել պաշտոններից տվյալ պաշտոնի նշանակելու իրավունք ունեցող ղեկավարի կողմից օրենքով սահմանված դեպքերում.

Նշված ռոտորում առկա իրավակարգավորումների ուսումնասիրության արդյունքում կարելի է արձանագրել, որ օրենսդրությամբ սահմանված չէ ԱԱԾ մարմնի տնօրենի պաշտոնավարման առավելագույն ժամկետը, ինչպես նաև ԱԱԾ մարմիններում պաշտոնից ազատման համար սահմանված է սուբյեկտիվ, որոշակիության սկզբունքին չհամապատասխանող այնպիսի հիմք, որն է՝ «ծառայողական անհրաժեշտությամբ պայմանավորված» պաշտոնից ազատելու հիմքը:

1.1.2 Ազգային անվտանգության ծառայության համակարգը և ղեկավարումը

ԱԱԾ կառուցվածքը սահմանող ՀՀ կառավարության որոշումը հանդիսանում է գաղտնի, ուստի, ԱԱԾ մարմինների գործունեության կարգը սահմանող հասանելի իրավական կարգավորումներից ելնելով՝ կարելի է կատարել ԱԱԾ կառուցվածքի վերաբերյալ միայն որոշ եզրահանգումներ: Այսպես, ԱԱԾ մարմինների համակարգը ներառում է Ազգային անվտանգության պետական լիազոր մարմինը՝ ԱԱԾ-ն, նրան ենթակա մարզային մարմինները, սահմանապահ զորքերը, ուսումնական կենտրոնները, հատուկ նշանակության և այլ ստորաբաժանումները: ԱԱԾ համակարգում սահմանված կարգով գործում են հետախուզական, հակահետախուզական և ռազմական հակահետախուզության մարմիններ («Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդված, 4-րդ հոդվածի երրորդ մաս):

Ազգային անվտանգության ծառայության համակարգում գործում է նաև.

- ՀՀ պետական պահպանության ծառայությունը, որի կառավարումն իրականացվում է ՀՀ նախագահի, իսկ ընդհանուր ղեկավարումը՝ ԱԱԾ տնօրենի կողմից, անմիջական ղեկավարումը իրականացվում է Պահպանության ծառայության ղեկավարի կողմից («Պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդված):

- Օպերատիվ-տեխնիկական գլխավոր վարչությունը: Գլխավոր վարչության անմիջական ղեկավարումն իրականացնում է Գլխավոր վարչության պետը, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ նախագահը՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության ղեկավարի ներկայացմամբ: Օրենքով նաև սահմանված է, որ հետախուսային խոսակցությունների վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացումն ապահովում է միայն ՀՀ ազգային անվտանգության ծառայության օպերատիվ-տեխնիկական գլխավոր վարչությունը:

- Սահմանապահ գորքերը, որի անմիջական ղեկավարումն իրականացնում է սահմանապահ գորքերի հրամանատարը: Հրամանատարին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ նախագահը («Սահմանապահ գորքերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդված):

Ըստ ՀՀ կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին ՀՀ նախագահի 2007 թ. հուլիսի 18-ի թիվ ՆՀ-174-Ն հրամանագրով հաստատված Կարգի (հետայսու՝ Կարգ) 13.1. կետի՝ Ազգային անվտանգության հանրապետական գործադիր մարմնի համակարգում կարող են ստեղծվել նաև այդ մարմնի աշխատակազմից դուրս կառուցվածքային կամ առանձնացված ստորաբաժանումներ, որոնք գործում են համապատասխան մարմնի ղեկավարի անմիջական ենթակայությամբ: Համաձայն Կարգի 136.1. կետի՝ այն դեպքում, երբ ազգային անվտանգության հանրապետական գործադիր մարմնի համակարգերում աշխատակազմից դուրս ստեղծված առանձնացված ստորաբաժանումների կանոնադրություններն ու կառուցվածքները հաստատում է կառավարությունը, աշխատակազմի կառուցվածքային և աշխատակազմից դուրս ստեղծված կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրություններն ու կառուցվածքները հաստատում է համապատասխան հանրապետական գործադիր մարմնի ղեկավարը:

Ազգային անվտանգության ծառայության ընդհանուր ղեկավարումը, ըստ «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի իրականացնում է ՀՀ նախագահը, ՀՀ կառավարությունը, ՀՀ վարչապետը: Անմիջական ղեկավարումը իրականացվում է ԱԱԾ տնօրենի կողմից: («Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդված): Տնօրենը իր հերթին հաշվետու է ՀՀ նախագահին, ՀՀ կառավարությանը և ՀՀ վարչապետին (Ազգային անվտանգության ծառայության կանոնադրության 10-րդ կետ):

ԱԱԾ տնօրենի լիազորությունները սահմանված են ՀՀ ԿԱ ԱԱԾ կանոնադրության 11-րդ մասով:

ՀՀ նախագահի Ազգային անվտանգության մարմինների գործունեությունը համակարգելու լիազորությունները կարելի է բաժանել ըստ հետևյալ ուղղությունների՝

- *ինստիտուցիոնալ*

- ծառայությունը ստեղծելու, վերակազմակերպելու և նրա գործունեությունը դադարեցնելու լիազորությունը («Ազգային անվտանգության ծառայության կանոնադրության» 1-ին հոդվածի 3-րդ մաս),

- *կադրային*

- ծառայության տնօրենին նշանակելու և ազատելու լիազորությունը (վարչապետի առաջարկությամբ) (Ազգային անվտանգության ծառայության կանոնադրության 8-րդ կետ),
- տնօրենի տեղակալների նշանակելու լիազորությունը (Ազգային անվտանգության ծառայության կանոնադրության 8-րդ կետ):

1.2 Ազգային անվտանգության ծառայության լիազորությունները և դրանց իրականացումը

Ըստ «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ Ազգային անվտանգության մարմինների գործունեությունն իրականացվում է հետևյալ հիմնական ուղղություններով՝

- ա) հետախուզական գործունեություն,
- բ) հակահետախուզական գործունեություն,
- գ) ռազմական հակահետախուզական գործունեություն,
- դ) պետական սահմանի պահպանություն,
- ե) պայքար հանցագործությունների դեմ:

Ի լրումն թվարկվածի՝ «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքով և այլ օրենքներով կարող են սահմանվել Ազգային անվտանգության մարմինների գործունեության այլ ուղղություններ:

Ազգային անվտանգության ծառայությունը նաև հանդիսանում է տեղեկատվության անվտանգության ոլորտում լիազոր մարմին:

Հետախուզական գործունեություն

Հետախուզական գործունեությունը, այդ թվում՝ արտաքին հետախուզությունը, ազգային անվտանգության մարմինների իրավասության սահմաններում իրականացվող գործունեությունն է՝ ուղղված ՀՀ ազգային անվտանգության սպառնալիքների մասին տեղեկություններ ստանալուն և պետության հիմքերն ամրապնդելուն («Ազգային անվտանգության մարմինների» մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ի մաս): Ըստ «Ազգային անվտանգության մարմինների» մասին ՀՀ օրենքի՝ հետախուզական միջոցառումներ անցկացնելու կարգը, ինչպես նաև հետախուզական գործունեություն իրականացնելիս գաղտնի մեթոդների և միջոցների օգտագործման կարգը սահմանվում են օպերատիվ-հետախուզական գործունեությունը կանոնակարգող ՀՀ օրենսդրությամբ և լիազորված մարմնի գերատեսչական նորմատիվ ակտերով: Այդ ակտերի թվին կարելի է դասել «Օպերատիվ-հետախուզական միջոցառումների մասին» ՀՀ օրենքը, «Օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում օգտագործվող հատուկ (մշակված, ծրագրված, հարմարեցված) տեխնիկական միջոցների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2008 թ. հուլիսի 31-ի թիվ 810 որոշումը:

ՀՀ գործադիր իշխանության մարմինների հետ լիազորված մարմնի հետախուզական մարմնի համագործակցության կարգը և պայմանները որոշվում են ՀՀ օրենսդրությամբ և համատեղ ընդունված իրավական ակտերով, իսկ միջազգային կազմակերպությունների հետ՝ միջազգային պայմանագրերով:

Հակահետախուզական գործունեություն

Հակահետախուզական գործունեությունն ազգային անվտանգության մարմինների իրավասության սահմաններում իրականացվող գործունեությունն է՝ ուղղված օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների և այլ կազմակերպությունների, ինչպես նաև առանձին անձանց հետախուզական գործունեության բացահայտմանը, կանխմանը և խափանմանը («Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մաս): Հակահետախուզական գործունեության իրականացման հիմքերի սպառիչ ցանկը սահմանված է «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքով:

«Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ ՀՀ քաղաքացիների նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը, քաղաքացիների բնակարանների անձեռնմխելիությունը շոշափող հակահետախուզական գործունեությունն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

Միննույն ժամանակ հատուկ կարգ է սահմանում դատարանի կողմից որոշում կայացնելու հարցի քննարկման համար: Մասնավորապես՝ ազգային անվտանգության մարմինները, հակահետախուզական գործունեության իրականացման համար՝ դատարանի պահանջով, ներկայացնում են հակահետախուզական գործունեության իրականացման հիմքերին վերաբերող ծառայողական փաստաթղթեր (բացառությամբ օպերատիվ-ծառայողական փաստաթղթերի, որոնք տեղեկություններ են պարունակում ազգային անվտանգության մարմինների հետ գաղտնի հիմունքներով համագործակցող կամ համագործակցած անձանց, ինչպես նաև հակահետախուզական գործունեության իրականացման կազմակերպման, գործելակերպի, մեթոդների և միջոցների մասին («Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մաս):

Ռազմական հակահետախուզական գործունեությունը իր հերթին իրականացվում է ՀՀ զինված ուժերում, ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության զորքերում⁵, այսինքն՝ ՀՀ ոստիկանության զորքերում, ՀՀ արտակարգ իրավիճակների վարչության քաղաքացիական պաշտպանության զորամասերում և այլ զինվորական կազմավորումներում, ինչպես նաև դրանց կառավարման մարմիններում՝ իրենց քննչական ենթակայությանը վերապահված հանցագործությունները բացահայտելու, կանխելու և խափանելու, օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների ներթափանցումից պաշտպանելու, ինչպես նաև մարտունակությունը և մարտական պատրաստությունը պահպանելիս հրամանատարությանն աջակցելու նպատակով («Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդված):

⁵ «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխություն չի կատարվել և «ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության զորքերում» արտահայտության փոխարեն օգտագործվում է «ՀՀ ոստիկանության զորքերում» արտահայտությունը:

Պետական սահմանի պահպանությունն իրականացվում է սահմանապահ զորքերի կողմից «Պետական սահմանի» և «Սահմանապահ զորքերի մասին» ՀՀ օրենքներին, այլ օրենքների և միջազգային պայմանագրերին համապատասխան («Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդված):

Պետական սահմանի պահպանությունը ՀՀ ազգային անվտանգության ապահովման համակարգի անբաժանելի մասն է և ընդգրկում է քաղաքական, իրավական, տնտեսական, ռազմական, օպերատիվ, կազմակերպչական, տեխնիկական, ռեժիմային, բնապահպանական, մշակութային և այլ միջոցառումներ, որոնք երաշխավորում են՝

ա) պետական սահմանի անձեռնմխելիությունը,

բ) իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից պետական սահմանի ռեժիմի, սահմանային ռեժիմի և պետական սահմանի անցման կետերի ռեժիմի պահպանման ապահովումը,

գ) պետական սահմանում անձի, հասարակության և պետության համար կենսական շահերի պաշտպանությունն արտաքին և ներքին սպառնալիքներից («Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդված):

Ցամաքում, սահմանային ջրերում պետական սահմանի պահպանությունն իրականացնում են սահմանապահ, իսկ օդային տարածքում՝ հակաօդային պաշտպանության զորքերը: Այն դեպքում, երբ հակաօդային պաշտպանության զորքերը գործում են ՀՀ զինված ուժերի կազմում՝ սահմանապահ զորքերը գործում են Ազգային անվտանգության ծառայության կազմում:

Պայքար հանցագործությունների դեմ

Հաշվի առնելով, որ հանցագործությունների դեմ պայքարի ոլորտում Ազգային անվտանգության մարմինները առավել սերտորեն են առնչվում անձանց թե՛ նյութական, թե՛ քրեադատավարական իրավունքներին, փորձենք առավել մանրամասն դիտարկել ԱԱԾ մարմինների գործունեության այս ուղղությունը: Այդ նպատակով առաջին հերթին կուսումնասիրվի, թե որ դեպքերում են Ազգային անվտանգության մարմինները իրավասու իրականացնել քննչական գործողություններ և իրավական որ նորմերով են առաջնորդվում նման դեպքերում:

Ազգային անվտանգության մարմինները «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքով և այլ օրենքներով իրենց առջև դրված խնդիրների լուծման նպատակով, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացնում են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, կատարում են հետաքննություն և նախաքննություն՝ իրենց քննչական ենթակայությանը վերապահված հանցագործությունների բացահայտման, կանխման և խափանման նպատակով («Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մաս):

Ազգային անվտանգության մարմինների վրա օրենքով կարող են դրվել նաև հանցագործությունների դեմ պայքարի այլ խնդիրներ («Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մաս): Այս նորմը կարող է իրավական անորոշության

ինդիր առաջացնել, ԱԱԾ մարմինների լիազորությունների անհարկի ընդլայնելու և կամայական մեկնաբանությունների տեղիք տալ:

ԱԱԾ-ի գործունեության շրջանակները անհրաժեշտ է ձևակերպել բավարար հստակ կամայականությունների կանխման նպատակով:

Համաձայն ՀՀ ՔԴՕ 190-րդ հոդվածի 3-րդ մասի՝ նախաքննությունը ՀՀ ՔՕ 190, 217, 217¹, 219-221, 224, 226, 233, 234, 250, 299, 302-307, 329, 329.1, 330, 384-397¹ հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում են Ազգային անվտանգության մարմինների քննիչները: Այս ցանկի մեջ են մտնում տնտեսական գործունեության, հասարակական անվտանգության, Սահմանադրական կարգի հիմունքների և պետության անվտանգության, Կառավարման կարգի, Խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները (տե՛ս [Հավելված 3](#)): Ընդհանուր առմամբ ԱԱԾ մարմինները իրականացնում են նախաքննություն ՀՀ ՔՕ թվով 36 հոդվածներով նախատեսված հանցագործություններով, որոնց շրջանակներում ԱԱԾ մարմինների լիազորությանն է վերապահված իրականացնել նախաքննություն Խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների բաժնի բոլոր հանցագործություններով, Հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների բավականին մեծ ծավալի, Սահմանադրական կարգի հիմունքների և պետության անվտանգության ու Կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունների թվի մի մասով:

ՀՀ ՔԴՕ 190-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված հանցագործությունների վերաբերյալ գործերով Ազգային անվտանգության մարմինները կատարում են նախաքննություն, եթե այդ հանցագործությունները բացահայտվել են իրենց վարությամբ գտնվող գործի քննության ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ գործը դատախազը հանձնում է նախաքննության այլ մարմնի: Այս ցանկում են տնտեսական գործունեության դեմ ուղղված մի շարք հանցագործություններ (ապօրինի ձեռնարկատիրությունը, կեղծ ձեռնարկատիրությունը, հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելը), բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործություններ (թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության վերաբերյալ գործեր):

Այսպիսով, հաշվի առնելով, որ ՀՀ ՔԴՕ 190-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հանցագործությունների դեպքում նախաքննությունը իրականացնում են Ազգային անվտանգության մարմինների քննիչները, բացառությամբ այն դեպքերի, երբ դատախազը հանձնում է նախաքննության այլ մարմնի, անհրաժեշտ է արձանագրել, որ սահմանված չէ, թե կոնկրետ որ դեպքում է դատախազը գործը հանձնում նախաքննության այլ մարմնի և մասնավորապես ինչ չափանիշներով պետք է առաջնորդվի այդ դեպքերում, ով կարող է նման պահանջով դիմել դատախազին: Այսինքն դատախազին տրված է բացառիկ լիազորություն որոշելու, թե որ դեպքում նախաքննությունը պետք է իրականացվի Ազգային անվտանգության մարմնի քննիչների և որ դեպքում այլ մարմնի քննիչների կողմից: Ինչը նաև կարող է խոչընդոտել անձի կողմից դատախազի համապատասխան որոշումների բողոքարկմանը:

«Ազգային անվտանգության մարմինների» մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանցագործությունների դեմ պայքարի ոլորտում ազգային անվտանգության մարմինների գործունեությունն իրականացվում է ՀՀ ՔՕ, ՀՀ ՔԴՕ և օպերատիվ-հետախուզական գործունեությունը կանոնակարգող օրենսդրությանը, նույն օրենքի և գերատեսչական նորմատիվ ակտերին համապատասխան:

Հաշվի առնելով, որ ազգային անվտանգության մարմինների թե՛ հետախուզական գործունեությունը, թե՛ հանցագործությունների դեմ պայքարին ուղղված գործունեությունը պետք է իրականացվեն օպերատիվ-հետախուզական գործունեությունը կանոնակարգող օրենսդրությանը համապատասխան, անհրաժեշտ է նաև առավել մանրամասն ուսումնասիրել օպերատիվ-հետախուզական գործունեությունը կանոնակարգող օրենսդրական ակտերը, մասնավորապես՝ «Օպերատիվ հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքը, «Օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում օգտագործվող հատուկ (մշակված, ծրագրված, հարմարեցված) տեխնիկական միջոցների ցանկը հաստատելու մասին» 2008 թ. հուլիսի 31-ի թիվ 810 ՀՀ կառավարության որոշումը, ՀՀ քրեական դատավարության համապատասխան իրավակարգավորումները: Միևնույն ժամանակ նշենք, որ օպերատիվ-հետախուզական գործունեության՝ միջազգային չափորոշիչներին համապատասխանության վերաբերյալ առկա է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի համեմատական վերլուծությունը Եվրոպայի խորհրդի սկզբունքների և չափանիշների հետ» վերլուծությունը, որի մեջ վեր են հանված այս ոլորտում առկա հիմնական օրենսդրական խնդիրները⁶:

Օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացումը Ազգային անվտանգության մարմինների կողմից

Ազգային անվտանգության մարմինների կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառումներն իրականացվում են «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ ՔԴՕ, «Օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում օգտագործվող հատուկ (մշակված, ծրագրված, հարմարեցված) տեխնիկական միջոցների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 810-Ն որոշմանը (հետայսու՝ ՀՀ կառավարության թիվ 810 որոշում) և այլ իրավական ակտերին համապատասխան: Միևնույն ժամանակ նշված իրավական ակտերով կարգավորվում են ոչ միայն Ազգային անվտանգության մարմինների, այլ նաև մյուս իրավասու մարմինների կողմից իրականացվող օպերատիվ-հետախուզական գործունեությունը:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքը ընդունվել է 2007 թ. դեկտեմբերի 8-ին, ՀՀ կառավարության թիվ 810-Ն որոշումը՝ 2008 թ. օգոստոսի 23-ին:

⁶ «Օպերատիվ – հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի համեմատական վերլուծությունը Եվրոպայի խորհրդի սկզբունքների և չափանիշների հետ», «Բազին» փաստաբանական գրասենյակ Լուսինե Սահակյան, Արա Ղազարյան, Տիգրան Սաֆարյան, Երվանդ Վարդյան Տե՛ս

⁷ http://www.partnership.am/res/POS%20Publications_Arm/Comparative%20analysis%20of%20the%20Law_ARM.doc

ՀՀ ՔԴՕ նախագիծն իր հերթին, ի տարբերություն գործող օրենսգրքի, պարունակում է օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման վերաբերյալ առավել լայն կարգավորումներ:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքը սահմանում է օպերատիվ-հետախուզական գործունեության նպատակները, սկզբունքները, օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու իրավասու ունեցող մարմինների ցանկը:

Օրենքում նշված մարմինները իրենց կառուցվածքում պետք է ունենան օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման համար պատասխանատու ստորաբաժանումներ: Այդ ստորաբաժանումների կառուցվածքը, ենթակայությունը, աշխատանքի կազմակերպման և օպերատիվ-հետախուզական միջոցառումների փաստաթղթավորման կարգը սահմանում է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարը: *Ըստ ցանկի որ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ կարող են իրականացնել Ազգային անվտանգության մարմինները, սակայն հստակ նշված չէ, թե ազգային անվտանգության մասնավորապես որ ստորաբաժանումն է իրավասու իրականացնել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ: «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքը, «Ազգային անվտանգության ծառայության կանոնադրությունը» չեն սահմանում, թե Ազգային անվտանգության մարմինների որ ստորաբաժանումն է իրավասու կատարել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ:*

ՀՀ-ում հեռախոսային խոսակցությունների վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառումներից հեռախոսային խոսակցություն միջացառման անցկացումն ապահովում է միայն ՀՀ ազգային անվտանգության ծառայության օպերատիվ-տեխնիկական գլխավոր վարչությունը՝ այդ օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացնելու իրավասություն ունեցող մարմինների միջնորդության հիման վրա՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով ամրագրված է թվով 16 տեսակի օպերատիվ-հետախուզական միջոցառում, որոնցից Ազգային անվտանգության մարմինները իրավասու են իրականացնել 15-ը (բոլորը, բացառությամբ «հսկիչ գնում» օպերատիվ-հետախուզական միջոցառման): Սա այն եզակի դեպքերից է, երբ օրենքում հստակ սահմանվում է մարմնի գործառույթների շրջանակը, այն դեպքում երբ ԱԱԾ մարմինների գործունեության շրջանակը հստակ սահմանված է:

ՀՀ ՔԴՕ նախագիծը իր հերթին առանձնացնում է օպերատիվ-հետախուզական միջոցառումները գաղտնի քննչական գործողություններից: Օպերատիվ-հետախուզական են հանդիսանում «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված այն միջոցառումները, որոնց իրականացման համար դատարանի որոշում չի պահանջվում (ՀՀ ՔԴՕ նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի 40-րդ կետ): Գաղտնի քննչական գործողությունների շարքին են դասվում՝ ներքին դիտում, արտաքին դիտում, նամակագրության և այլ ոչ թվային հաղորդումների վերահսկում, թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության

վերահսկում, ֆինանսական գործարքների վերահսկում, կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում քննչական գործողությունները: ՀՀ ՔԴՕ նախագծով նաև սահմանված են գաղտնի քննչական գործողությունների կատարման հիմքերը, պայմանները, իրավաչափության երաշխիքները, ինչպես նաև գաղտնի քննչական գործողությունների հասկացությունները և յուրաքանչյուրի կատարման առանձնահատկությունները:

Այսպիսով, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված 16 օպերատիվ-հետախուզական միջոցառումներից 6-ը դասվել են գաղտնի քննչական գործողությունների շարքին:

ՀՀ ՔԴՕ նախագծով սահմանված գաղտնի քննչական գործողությունների վերաբերյալ երաշխիքները և իրավակարգավորումները ընդհանուր առմամբ համապատասխանում են ԵԽ ինչպես նաև ՄԻԵԴ կողմից ամրագրված սկզբունքներին:

Միննույն ժամանակ դեռևս առկա են որոշակի խնդրահարույց և ոչ լիարժեք կարգավորումներ, որոնք ներկայացված են սույն զեկույցի թիվ 1.4 բաժնում:

1.3 Ազգային անվտանգության ծառայության հաշվետվողականությունը, գործունեության ժողովրդավարական վերահսկողության երաշխիքները

Համաձայն «Ազգային անվտանգության մասին մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի՝ Ազգային անվտանգության մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են ՀՀ Նախագահը և ՀՀ կառավարությունը՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում: Ինչպես նշվել է «Անվտանգության ծառայությունների հանդեպ ժողովրդավարական վերահսկողության վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի զեկույցում, /Ազգային/ անվտանգության ծառայությունները, որպես կանոն ստանում են հրահանգներ կառավարության կողմից: Նրանք պետք է պատշաճ կերպով վերահսկվեն գործադիրի կողմից «Պետություն պետության ներսում» մտածելակերպի ձևավորումից խուսափելու նպատակով⁷:

Գործող օրենսդրությունը՝ ԱԱԾ գործունեության հանդեպ օրենսդրի կողմից վերահսկողության շատ նեղ իրավակարգավորումներ է սահմանում: Այդ մեխանիզմները սահմանափակվում են ԱԺ կողմից ԱԱԾ մարմինների գործունեության օրենսդրական կարգավորումների ընդունմամբ, տարեկան բյուջեն, ինչպես նաև տարեկան բյուջեի կատարման վերաբերյալ Կառավարության հաշվետվությունը հաստատելու լիազորություններով: Այսպիսով անհրաժեշտ է, որպեսզի ԱԱԾ գործունեության սահմանները, լիազորությունները սահմանված լինեն միմիայն օրենքով և որևէ փոփոխության կամ ընդլայնման չենթարկվեն այլ իրավական ակտերով: Ոլորտի ռիսկայնությունից ելնելով՝ մարմնի գործունեությունը կարգավորող հիմնական օրենսդրությունը՝ ներառյալ կարգավորումներ պարունակող նորմերը, պետք է

⁷ «Անվտանգության ծառայության հանդեպ ժողովրդավարական վերահսկողության վերաբերյալ» Վենետիկի հանձնաժողովի զեկույց, ընդունված Վենետիկի հանձնաժողովի կողմից 71 –րդ պլենար նիստում, Վենետիկ 2007 թ. հունիսի 1-2, կետ 4: Տե՛ս [http://www.venice.coe.int/webforms/documents/CDL-AD\(2007\)016.aspx](http://www.venice.coe.int/webforms/documents/CDL-AD(2007)016.aspx)

հաստատվեն օրենքի մակարդակով: Օրենքի մակարդակով է անհրաժեշտ սահմանել նաև մարմնի գործունեության գաղտնիության շեմը:

«Ազգային անվտանգության ծառայության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն նաև սահմանում է, որ կապված իրենց պատգամավորական գործունեության իրականացման հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, ԱԺ պատգամավորներն իրավունք ունեն տեղեկություններ ստանալ ազգային անվտանգության մարմինների գործունեության մասին: Բացի այդ, համաձայն «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, որը տարածվում է նաև ՀՀ ԿԱ ԱԱԾ համակարգում գործող ձերբակալված անձանց պահելու վայրի վրա՝ առանց հատուկ թույլտվության ձերբակալվածներին պահելու վայր և կալանավորվածներին պահելու վայր անարգել մուտքի և ելքի իրավունք ունեն 1) ՀՀ Նախագահը, ՀՀ Ազգային ժողովի նախագահը, ՀՀ վարչապետը, ՀՀ սահմանադրական դատարանի նախագահը, ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահը, ՀՀ Ազգային ժողովի պատգամավորը, պետական կառավարման լիազորված մարմնի ղեկավարը կամ նրա համապատասխան տեղակալը:

ՀՀ ԱԺ Կանոնակարգի 78-րդ կետի համաձայն՝ ՀՀ Ազգային ժողովի Պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովը իր որոշմամբ, կարող է իր քննարկմանը ներկայացված օրենսդրական ակտերի նախագծերի եւ այլ հարցերի վերաբերյալ հարցումներով դիմել պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմիններին, պաշտոնատար անձանց, հիմնարկներին եւ կազմակերպություններին:

ՀՀ կառավարությունը հաստատում է ԱԱԾ կանոնադրությունը, սահմանում է ԱԱԾ կառուցվածքը:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 87-րդ հոդվածի՝ Վարչապետը ղեկավարում է կառավարության գործունեությունը և համակարգում նախարարների աշխատանքը, իսկ համաձայն Կարգի 121-րդ կետի՝ Վարչապետը վերահսկում է գործադիր իշխանության մարմինների գործունեությունը: Անհրաժեշտ է նաև քննարկել կանոնադրության որոշ դրույթների ամրագրումը օրենքի մակարդակով:

ՀՀ Սահմանադրությունն ուղղակիորեն չի նախատեսում կառավարության առընթեր մարմինների ստեղծման հնարավորությունը: Միևնույն ժամանակ համաձայն ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի առաջին մասի՝ Կառավարությունը մշակում և իրականացնում է ՀՀ ներքին քաղաքականությունը: ՀՀ արտաքին քաղաքականությունը կառավարությունը մշակում և իրականացնում է Հանրապետության Նախագահի հետ համատեղ: Կառավարությունը կազմված է վարչապետից և նախարարներից: Կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը վարչապետի ներկայացմամբ սահմանվում է Հանրապետության Նախագահի հրամանագրով: ՀՀ կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանվում է ՀՀ նախագահի 2007 թ. հուլիսի 18-ի թիվ ՆՀ-174-Ն ՀՀ նախագահի հրամանագրով: Կարգի 7-րդ և 8-րդ կետերի

համաձայն՝ Կառավարության քաղաքականությունն առանձին բնագավառներում մշակում և իրականացնում են հանրապետական գործադիր մարմինները (այսուհետ՝ ՀԳՄ), որոնք ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում են վարչապետի առաջարկությամբ՝ ՀՀ Նախագահի հրամանագրով: ՀԳՄ-ներն են՝ ՀՀ նախարարությունները և կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինները: ՀՀ կառավարության կառուցվածքը սահմանելու մասին 2002 թ. մարտի 16-ի ՀՀ Նախագահի թիվ ՆՀ-1063 Հրամանագրով սահմանված է, որ մինչև պետական կառավարման համակարգի բարեփոխումների գործընթացի ավարտը, գործում են ՀՀ կառավարությանն առընթեր պետական կառավարման թվով 6 մարմիններ՝ ներառյալ Ազգային անվտանգության ծառայությունը: Այսպիսով, մի կողմից համաձայն ՀՀ Սահմանադրության՝ ՀՀ կառավարությունը կազմված է վարչապետից և նախարարներից և չի ճանաչում կառավարության առընթեր մարմինների ղեկավարներին որպես կառավարության անդամներ, մյուս կողմից, ՀՀ նախագահի հրամանագրերով սահմանվում է նաև Կառավարության առընթեր մարմինների ստեղծումը: Ընդ որում օրենսդրությունը հստակ պատասխան չի տալիս այն հարցին, թե արդյոք ՀՀ կառավարության առընթեր մարմինները գտնվում են ՀՀ կառավարության կազմի մեջ, թե ոչ: Միայն ՀՀ նախագահի հրամանով է սահմանվում կառավարության առընթեր մարմինների ստեղծումը և գործունեության կազմակերպման կարգը:

Կառավարության առընթեր մարմինների՝ տվյալ դեպքում ԱԱԾ-ի կարգավիճակի անորոշությունը իր ազդեցությունը ունի նաև ԱԱԾ գործունեության նկատմամբ արդյունավետ պառլամենտական վերահսկողության իրականացման վրա:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի՝ ՀՀ կառավարությունը ՀՀ նախագահի հետ համատեղ մշակում է և իրականացնում է ՀՀ արտաքին քաղաքականությունը: Մինևույն ժամանակ ՀՀ ներքին քաղաքականությունը մշակում է ՀՀ կառավարությունը: Այսպիսով, Ազգային անվտանգության ծառայությունը ընդգրկված չէ կառավարության կազմում, այսինքն ԱԱԾ պետը ուղղակիորեն լիազորված չէ մասնակցել երկրի արտաքին և ներքին քաղաքականության մշակման գործընթացին: Մինևույն ժամանակ, գործնականում առանց նման կարևոր ծառայության հնարավոր չէ մշակել ամբողջական և արդյունավետ քաղաքականություն: Նման անորոշությունը ոչ միայն իրավական խառնաշփոթ է ստեղծում, այլ նաև դժվարացնում է ԱԱԾ նկատմամբ պառլամենտական վերահսկողությունը:

Համաձայն «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի՝ Գլխավոր վարչության ղեկավարը օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման իրավասություն ունեցող յուրաքանչյուր մարմնի կտրվածքով հաջորդ տարվա հունվարի 31-ից ոչ ուշ ՀՀ Նախագահին տարեկան հաշվետվություն է ներկայացնում, որը պարունակում է նախորդ տարվա ընթացքում՝

1) հեռախոսային խոսակցությունների վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացնելու վերաբերյալ Գլխավոր վարչություն ներկայացրած միջնորդությունների ընդհանուր թվաքանակը,

2) այն միջնորդությունների թվաքանակը, որ բերվել են առանց դատարանի որոշման քաղվածքի, և հետագայում քաղվածքը չի ներկայացվել,

3) այն միջնորդությունների թվաքանակը, որ բերվել են առանց դատարանի որոշման քաղվածքի, իսկ դատարանը հետագայում իր որոշմամբ չի թույլատրել նման օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումը:

ԱԱԾ մարմինների գործունեությունը ենթակա է դատական վերահսկողության: Նախնական դատական վերահսկողության շրջանակներում կարևոր է նշել օպերատիվ-հետախուզական միջոցառումների միայն դատարանի թույլտվությամբ անցկացումը, իսկ post factum դատական վերահսկողության շրջանակներում նաև ԱԱԾ մարմինների որոշումների վիճարկումը դատական կարգով:

Որպես հետաքննություն և նախաքննություն, ներառյալ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անց կացնող մարմին, ԱԱԾ գործունեությունը ենթակա է նաև դատախազական հսկողության: Համաձայն «Օպերատիվ հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի՝ նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելիս դատախազը հսկողություն է իրականացնում օպերատիվ-հետախուզական գործունեության օրինականության նկատմամբ՝ օրենքով իրեն վերապահված լիազորությունների սահմաններում: Դատախազի կողմից հսկողության ենթակա չեն օպերատիվ-հետախուզական գործունեության կազմակերպման և իրականացման եղանակները:

Այսպիսով, ԱԱԾ-ի ձևավորման, գործունեության կարգավորման վերաբերյալ գոյություն ունեցող օրենսդրական կարգավորման նորմերը չեն երաշխավորում պարզունակ պառլամենտական և ժողովրդավարական, քաղաքացիական ու հասարակական վերահսկողության հնարավորությունը:

1.4 Ներքին անվտանգության մարմինների հանդեպ վերահսկողությունը Եվրոպայի խորհրդի անդամ երկրներում⁸ ԵԽԽՎ թիվ 1402 (1999)¹ հանձնարարականի պահանջների և ՀՀ ներպետական օրենսդրության համեմատական վերլուծություն

Ներքին անվտանգության ծառայությունների կազմակերպման վերաբերյալ

i. Ներքին անվտանգության բոլոր ծառայությունները պետք է կազմակերպվեն և գործեն օրենսդրական հիմքերի վրա, այն է՝ խորհրդարանում պատշաճ օրինաստեղծ գործընթացի արդյունքում ընդունված ազգային օրենքների հիման վրա, որոնք պետք է լինեն ամբողջապես հրապարակային:

⁸ St 'u Control of internal security services in Council of Europe member states
¹ <http://assembly.coe.int/Main.asp?link=/Documents/AdoptedText/ta99/EREC1402.htm>

ՀՀ ազգային անվտանգության ծառայության գործունեությունը որպես ազգային անվտանգության մարմինների բաղկացուցիչ մաս, կարգավորվում է «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքով և մի շարք այլ օրենքներով: Մինևույն ժամանակ, ԱԱԾ-ի գործառույթները, աշխատանքի կազմակերպման և կառավարման կարգը սահմանված են «ՀՀ ԿԱ ԱԱԾ կանոնադրությամբ», որը հաստատվել է ՀՀ Կառավարության 17 ապրիլի 2003 թվականի N 433-Ն որոշմամբ: Կառավարության որոշմամբ հաստատված ՀՀ կանոնադրության մի շարք դրույթները անհրաժեշտ է սահմանել օրենքով:

ii. Ներքին անվտանգության ծառայությունների միակ խնդիրը պետք է լինի ազգային անվտանգության պահպանումը: Ազգային անվտանգության պահպանումը սահմանվում է որպես պայքար պետության ժողովրդավարական կարգի և բնակչության առջև ծառայած ակնհայտ վտանգների դեմ: Ազգային անվտանգության ծառայությունների գործունեության շրջանակը չպետք է տարածվի տնտեսական նպատակների իրագործման կամ որպես այդպիսին կազմակերպված հանցագործության դեմ պայքարի վրա: Նշված ծառայությունները պետք է առնչվեն տնտեսական նպատակներին կամ կազմակերպված հանցավորություններին միմիայն այն դեպքերում, երբ դրանք ակնհայտ վտանգ են ներկայացնում ազգային անվտանգության համար:

Ազգային անվտանգության ծառայության՝ հանցագործությունների դեմ պայքարը որպես գործունեության ուղղություն սահմանված է «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով: Ընդ որում օրենքով սահմանված է, որ ազգային անվտանգության մարմինները իրականացնում են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, կատարում են հետաքննություն, նախաքննություն՝

- իրենց առաջադրված խնդիրների լուծման նպատակով,
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,
- ուղղված իրենց քննչական ենթակայությանը վերապահված հանցագործությունների բացահայտմանը, կանխմանը և խափանմանը:

Կարելի է եզրակացնել, որ ԱԱԾ հետաքննության և նախաքննության մարմինների ենթակայությանը կարող են վերապահվել այն հանցագործությունները, որոնք որպես խնդիրներ դրված են ԱԱԾ մարմինների առջև: Ընդ որում ԱԱԾ մարմինների խնդիրները որպես այդպիսին սահմանված են ենթաօրենսդրական ակտով՝ ՀՀ ԿԱ ԱԱԾ կանոնադրությամբ (մաս 6): Այս փաստաթղթում որպես խնդիրներ սահմանված են՝ 1. իր իրավասության սահմաններում հանցագործությունների բացահայտումը, կանխումը և խափանումը, դրանց հետաքննության ու նախաքննության կատարումը, հանցագործություններ կատարած կամ դրանց կատարման մեջ կասկածվող անձանց հետախուզումը («ե» կետ), 2. ՀՀ տնտեսական անվտանգության ապահովումը և իր իրավասության սահմաններում պայքարը տնտեսական

հանցագործությունների դեմ («Ժա» կետ): Այսինքն օրենքը, հղում կատարելով ԱԱԾ մարմինների խնդիրներին, մեկ այլ փաստաթղթով որպես խնդիր սահմանում է նույն գործողությունները:

Այն հանցագործությունների ցանկը, որոնք գտնվում են ԱԱԾ մարմինների քննչական ենթակայության ներքո սահմանվում են ՀՀ ՔԴՕ-ով:

ՀՀ ՔԴՕ-ով սահմանված է հանցագործությունների՝ ԱԱԾ քննչական ենթակայության ներքո գտնվելու 3 եղանակ⁹

- հանցագործություններ, որոնց վերաբերյալ նախաքննությունը կատարում են ԱԱԾ քննիչները,
- հանցագործություններ, որոնց վերաբերյալ նախաքննությունը կատարում են ԱԱԾ կամ մաքսային մարմինների քննիչները,
- հանցագործություններ, որոնց վերաբերյալ նախաքննությունը կատարում են ԱԱԾ քննիչները, եթե այդ հանցագործությունները բացահայտվել են իրենց վարույթում գտնվող գործի քննության ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ գործը դատախազը հանձնում է նախաքննության այլ մարմնի (Ապօրինի ձեռնարկատիրությունը, Կեղծ ձեռնարկատիրությունը, Հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելը):

✓ Առաջին խմբի մեջ են գտնվում Հասարակության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները, Սահմանադրական կարգի հիմունքների և պետության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները, Կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունները (Պետական սահմանն ապօրինի հատելը, Պետական սահմանի նշանները վերցնելը, տեղաշարժելը կամ ոչնչացնելը), Խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները:

✓ Երկրորդ խմբի մեջ մտնում է միայն Մաքսանենգությունը:

✓ Երրորդ խմբի մեջ մտնում են Տնտեսական գործունեության դեմ ուղղված 4 հանցագործություններ, Բնակչության առողջության դեմ ուղղված թվով 5 հանցագործություններ, Հասարակական կարգի եվ բարոյականության դեմ ուղղված 1 հանցագործություն, Հասարակական կարգի եվ բարոյականության դեմ ուղղված 1 հանցագործություն, Կառավարման կարգի դեմ ուղղված 1 հանցագործություն:

Այսպիսով, ՀՀ ՔԴՕ և ՀՀ ՔՕ վերլուծությունից կարելի է եզրակացնել. ՀՀ օրենսդրությունն ամփոփ ցանկով սահմանում է հանցագործությունների այն շրջանակը, որոնց վերաբերյալ նախաքննություն կարող են կատարել միայն ԱԱԾ մարմինները: Սակայն հայեցողական չափազանց լայն հնարավորություններ է թողնված ԱԱԾ մարմիններին նրանց կողմից նախաքննության կատարման դեպքերի համար այնպիսի հանցագործությունների վերաբերյալ, որոնցով նախաքննությունը կարող են կատարել նաև մաքսային մարմինների քննիչները, կամ

⁹ Տե՛ս Հավելված 1.

այն հանցագործությունների ուղղությամբ, որոնց վերաբերյալ նախաքննությունը կատարում են ԱԱԾ քննիչները, եթե այդ հանցագործությունները բացահայտվել են իրենց վարույթում գտնվող գործի քննության ընթացքում, որի դեպքում նաև գործում է գործը մեկ մարմնից մյուս մարմնին հանձնելու Դատախազի լիազորությունը: Սահմանված չեն հստակ չափորոշիչները և պայմանները, որոնցով պետք է առաջնորդվի դատախազը մեկ մարմնից մյուս մարմնին գործը հանձնելու համար: Կան մի շարք հանցագործություններ, որոնց քննության իրավասությունը տրված է ԱԱԾ քննիչներին, այն դեպքում երբ այդ հանցագործությունները բացահայտվել են իրենց վարույթում գտնվող գործի քննության ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ գործը դատախազը հանձնում է նախաքննության այլ մարմնի: Քանի որ գործում է մեկ մարմնից մյուս մարմնին հանձնելու դատախազի լիազորությունը, որի վերաբերյալ չկան հստակ չափորոշիչներ, ապա որոշ հանցագործություններով քննության վերաբերյալ թե՛ դատախազության, թե՛ ԱԱԾ քննիչների կողմից մեծանում է հայեցողական մոտեցումը:

ԱԱԾ մարմինների և մաքսային մարմինների ընդհանուր իրավասության տակ գտնվող գործերի դեպքում առհասարակ բացակայում է գործերի բաշխման լիազորությունների որևէ որոշակիություն:

Հարկ է նաև ուշադրություն դարձնել, որ այն հանցագործությունների վերաբերյալ գործերը, որոնք կարող են քննվել և՛ ԱԱԾ, և՛ մաքսային մարմինների ու այլ քննչական մարմինների կողմից՝ չունեն հստակ դասակարգում, թե ինչքանով են իրենցից ներկայացնում հստակ և իրական վտանգ ազգային անվտանգության տեսակետից:

Այսպիսով, անհրաժեշտ է սահմանել, որ ԱԱԾ մարմինները կարող են իրականացնել նախաքննություն տնտեսական բնույթի այն հանցագործություններով որոնց դեպքում առկա է հստակ և իրական վտանգ ազգային անվտանգությանը:

iii. Գործադիր իշխանությունը չպետք է հնարավորություն ունենա ընդլայնել ներքին անվտանգության ծառայությունների լիազորությունները: Փոխարենը, նման լիազորությունները պետք է սահմանվեն օրենքով և հակասական մեկնաբանությունների պարագայում մեկնաբանվեն դատական իշխանությունների (այլ ոչ թե իրավահաջորդ կառավարությունների) կողմից: Ներքին անվտանգության ծառայությունները չպետք է ծառայեն որպես քաղաքական գործիք՝ քաղաքական կուսակցություններին, ազգային փոքրամասնություններին, կրոնական խմբերին կամ բնակչության այլ որոշակի խմբերին ճնշելու համար:

«Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված է, որ Ազգային անվտանգության ծառայության գործունեության հիմնական ուղղություններն են հանդիսանում՝ ա) հետախուզական գործունեությունը, բ) հակահետախուզական գործունեությունը, գ) ռազմական հակահետախուզական գործունեությունը, դ) պետական սահմանի պահպանությունը, ե) հանցագործությունների դեմ պայքարը: Օրենքով նաև

ընդհանուր ձևակերպումներով տրված է այս գործողությունների սահմանումը, ինչպես նաև սահմանված է, որ Ազգային անվտանգության մարմինների գործունեության այլ ուղղությունները որոշվում են նույն օրենքով և ՀՀ այլ օրենքներով: Ազգային անվտանգության ծառայության գործունեության նպատակները և խնդիրները, գործառույթները սահմանված են Ազգային անվտանգության ծառայության կանոնադրությամբ, որը հաստատվել է ՀՀ կառավարության որոշմամբ: Անհրաժեշտ է նշել, որ Կառավարության որոշմամբ հստակորեն չի սահմանվում, թե նշված նպատակներից և խնդիրներից որոնք են ուղղված օրենքով նախատեսված գործառույթի իրականացմանը: Իսկ Կանոնադրությամբ սահմանված խնդիրների, նպատակների և գործառույթների ու օրենքներով սահմանված գործունեության ուղղությունների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ այդուհանդերձ այդ նպատակների և խնդիրների շրջանակներում առկա են այնպիսիք, որոնք դուրս են օրենքներով նախատեսված գործունեության ուղղություններից և լայնացնում են «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքով և այլ օրենքներով սահմանված Ազգային անվտանգության ծառայության գործունեության ուղղությունները:

Այսպիսով, Ազգային անվտանգության ծառայության՝ որպես ՀՀ ազգային անվտանգության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի խնդիրները, նպատակները, գործառույթները և լիազորությունները անհրաժեշտ է սահմանել օրենքով, մեկ օրենսդրական ակտով:

Անհրաժեշտ է նաև արձանագրել, որ բավարար երաշխիքներ չկան քաղաքական կուսակցությունների, կրոնական կազմակերպությունների և այլնի հանդեպ ԱԱԾ որպես քաղաքական ճնշման գործիք օգտագործելը չթույլատրելու համար: Հստակ չի սահմանված ԱԱԾ մարմինների կողմից ըստ քաղաքական հայացքների քաղաքացիների հետապնդման արգելքը:

iv. Ցանկալի է, որ ներքին անվտանգության ծառայությունները չկազմավորվեն զինվորական կառույցի ներքո: Քաղաքացիական անվտանգության ծառայությունները չպետք է կազմավորվեն ռազմական կամ կիսառազմական հաստատությունների նմանությամբ:

«Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Ազգային անվտանգության բոլոր աշխատակիցները հանդիսանում են զինվորական ծառայողներ, իսկ ազգային անվտանգության մարմիններում ծառայությունը հանդիսանում է զինվորական ծառայություն:

Այսպիսով, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը կազմակերպվում, կազմավորվում և գործում է որպես զինվորական կառույց:

Այսինքն ԱԱԾ ծառայությունը իր բնույթով թե՛ օրենսդրական մակարդակով, թե՛ գործնականում չի համապատասխանում ԵԽԽՎ նշված չափորոշիչին: Անհրաժեշտ է քննարկել

ազգային անվտանգության ծառայության ստորաբաժանումներում աշխատանքը զինվորական ծառայությունից՝ քաղաքացիական ծառայությամբ փոխարինելու հարցը:

v. Անդամ պետությունները չպետք է իրենց ներքին անվտանգության ծառայությունները ֆինանսավորեն ոչ կառավարական աղբյուրներից, այլ՝ միմիայն պետական բյուջեի միջոցներով: Խորհրդարանի հաստատմանը ներկայացվող բյուջեն պետք է լինի մանրամասն և հստակ:

ԱԱԾ գործունեության ֆինանսավորման գաղտնիության հետևանքով և ՀՀ պետական բյուջեի ուսումնասիրությունից դժվար է եզրակացություն կազմել այն մասին, թե արդյոք ՀՀ Ազգային անվտանգության մարմինների ֆինանսավորումը իրականացվում է միայն պետական բյուջեի միջոցների հաշվին:

B. Ներքին անվտանգության ծառայությունների աշխատանքային գործունեության վերաբերյալ

i. Ներքին անվտանգության ծառայությունների աշխատակիցները պետք է պահպանեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան:

ՀՀ-ն վավերացրել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան դեռևս 2002 թ.:

Կոնվենցիան, թե՛ իր կոնվենցիոն դրույթների ուժով, թե՛ ՀՀ Սահմանադրության ուժով հանդիսանում է ՀՀ օրենսդրության բաղկացուցիչ մասը¹⁰: Ուստի ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, հանդիսանալով ՀՀ պետական մարմին, իր գործունեության մեջ պարտավոր է հարգել ՄԻԵԿ-ով սահմանված մարդու իրավունքները միայն այն սահմանափակումներով և այն թույլատրելի մասով, որը նախատեսվում է Կոնվենցիայով:

ii. Ներքին անվտանգության ծառայությունների աշխատանքային գործունեության ընթացքում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի ցանկացած խախտում պետք է հիմնավորված լինի օրենքով: Հեռախոսագրույցների գաղտնալուծումը, մեխանիկական կամ տեխնիկական, լսողական և տեսողական միջոցներով վերահսկողությունը և անձի իրավունքների խախտման մեծ սպառնալիք ներկայացնող այլ օպերատիվ միջոցները պետք է կիրառվեն դատական իշխանությունների հատուկ նախնական թույլտվությամբ: Օրենսդրությամբ պետք է սահմանվեն համապատասխան չափանիշներ, որոնց հիման վրա դատավորները կամ հաշտարար դատավորները պետք է նման նախնական թույլտվություն տրամադրեն: Դատավորների այս ծառայությունը պետք է լինի հասանելի շուրջօրյա, որպեսզի

¹⁰ Տե՛ս ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ, էջ 67-68, Իրավունք, 2010

օպերատիվ գործողությունների, օրինակ՝ տան խուզարկություն, կատարելու թույլտվության դիմումն ընթացք ստանա մի քանի ժամում (առավելագույնը): Նման թույլտվության չափանիշները պետք է ներառեն հետևյալ նվազագույն պահանջները.

ա. հավանական պատճառ կա կարծելու, որ տվյալ անձը կատարում, կատարել կամ պատրաստվում է կատարել իրավախախտում,

բ. հավանական պատճառ կա կարծելու, որ առաջարկվող գաղտնալսման կամ բնակարանի խուզարկությունների միջոցով կարելի է ձեռք բերել նշված իրավախախտմանն առնչվող որոշակի տեղեկատվություն կամ կոնկրետ ապացույց, կամ կանխել հանցագործությունը (ձերբակալության պարագայում),

գ. ձեռնարկվել են բնականոն քննչական միջոցառումներ, որոնք, սակայն, ձախողվել են կամ անհաջող են թվացել կամ եղել են չափազանց վտանգավոր:

Նման օպերատիվ գործողություններ ձեռնարկելու թույլտվությունը պետք է լինի ժամանակավոր (առավելագույնը մինչև երեք ամիս): Հսկողության կամ հետախուսազրույցների գաղտնալսման ավարտից հետո տվյալ անձը պետք է տեղեկացվի իր նկատմամբ ձեռնարկված նման միջոցի մասին:

Ընդհանուր նկարագրություն

Սույն խնդրի վերլուծության նպատակով անհրաժեշտ է ուսումնասիրել ՀՀ ՔԴՕ նախագծով և այլ իրավական ակտերով սահմանված երեք հասկացություններ՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, քննչական գործողություններ, գաղտնի քննչական գործողություններ:

Օպերատիվ-հետախուզական գործունեության և միջոցառումների հասկացությունը տրված է թե՛ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով, թե՛ ՀՀ ՔԴՕ նախագծով: Այսպես, ըստ ՀՀ ՔԴՕ նախագծի՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումը «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված օպերատիվ-հետախուզական միջոցառումն է, որի իրականացման համար **դատարանի որոշում չի պահանջվում**: Ըստ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի՝ Օպերատիվ-հետախուզական գործունեությունը մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, պետական ու հասարակական անվտանգությունը հակաիրավական ոտնձգություններից պաշտպանելու նպատակով՝ օրենքով նախատեսված օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացումն է: «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով սահմանվում են օպերատիվ հետախուզական միջոցառումների 16 տեսակ: Այդ միջոցառումների ցանկի մեջ են մտնում նաև ՀՀ ՔԴՕ նախագծով առանձնացված գաղտնի քննչական միջոցառումները: Որպես գաղտնի քննչական գործողություններ՝ ՀՀ ՔԴՕ նախագիծը սահմանում է հետևյալը՝ 1) ներքին դիտում, 2) արտաքին դիտում, 3) նամակագրության և այլ ոչ թվային հաղորդումների վերահսկում, 4)

թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում, 5) ֆինանսական գործարքների վերահսկում, 6) կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում:

Այսինքն, ՀՀ ՔԴՕ նախագիծը առանձնացնում է օպերատիվ-հետախուզական միջոցառումները և գաղտնի քննչական գործողությունները, որոնց տարբերությունը կայանում է նրանում, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման համար, ի տարբերություն գաղտնի քննչական գործողությունների, դատարանի որոշման առկայությունը պարտադիր չէ: «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքը իր հերթին չի առանձնացնում այս հասկացողությունները և գաղտնի քննչական գործողությունները նույնպես դասվում է ՕՀՄ ցանկին:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված միջոցառումներից 15-ը իրականացնելու իրավասություն ունեն ազգային անվտանգության մարմինները (բացառությամբ «հսկիչ գնում» ՕՀՄ): Եթե համադրենք մյուս քննչական մարմինների օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու իրավասությունների ցանկին՝ Ոստիկանության հետ հավասարապես ԱԱԾ մարմինները ունեն ՕՀՄ իրականացնելու ամենալայն շրջանակը, և ավելին, նրանք իրավասու են իրականացնել միննույն ՕՀՄ միջոցառումները:

Դատարանի կողմից թույլտվությունը

ՀՀ ՔԴՕ նախագծով նախատեսված բոլոր գաղտնի քննչական գործողությունների համար սահմանված է կատարման հատուկ կարգ, որը ենթադրում է նաև, որ քննչական գործողությունը կարող է իրականացվել միայն դատարանի նախնական թույլտվությամբ: «Օպերատիվ - հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված այն ՕՀՄ-ների համար, որոնք ըստ ՀՀ ՔԴՕ-ի հանդիսանում են գաղտնի քննչական գործողություններ, նախատեսված է, որ միջոցառումները կարող են իրականացվել դատարանի թույլտվությամբ: Բացառություն է կազմում արտաքին դիտում ՕՀՄ-ն, որի դեպքում դատարանի թույլտվությունը անհրաժեշտ է միայն եթե, արտաքին դիտման արդյունքների ամրագրումն առանց տեխնիկական միջոցների օգտագործման հնարավոր չէ, և անձը (անձինք), որի (որոնց) նկատմամբ իրականացվում է արտաքին դիտումը, ողջամտորեն չէր (չէին) կարող ենթադրել դրա անցկացման հնարավորության մասին:

Ըստ ՀՀ ՔԴՕ նախագծի՝ բացառապես դատարանի որոշմամբ են կատարվում հետևյալ քննչական գործողությունները՝ բնակարանի խուզարկությունը և առգրավումը, դեպքի վայր չհանդիսացող բնակարանում գնումը և դեպքի վայր հանդիսացող բնակարանում հետազոտումը, նոտարական, բանկային կամ հարակից գաղտնիք պարունակող փաստաթղթերի և առարկաների առգրավումը:

Դատարանի կողմից թույլտվության ժամկետները

Ըստ ՀՀ ՔԴՕ նախագծի 300-րդ հոդվածի՝ ապացուցողական գործողությունների, ներառյալ գաղտնի քննչական և վերը նշված համապատասխան քննչական գործողությունների կատարման վերաբերյալ իրավասու մարմինների միջնորդությունների քննությունը դատարանի կողմից սկսվում է անհապաղ, բայց ոչ ուշ քան երեք ժամվա ընթացքում:

Դատարանի թույլատրության համար առաջադրվող չափորոշիչներ¹¹

Գաղտնի քննչական գործողությունների դեպքում սահմանվում է տարբերակված մոտեցում տարբեր գաղտնի քննչական գործողությունների իրականացման համար անհրաժեշտ պայմանների սահմանման հարցում:

Միևնույն ժամանակ բոլոր գաղտնի քննչական գործողությունների համար գործում են հետևյալ պայմանները՝

✓ ի՞նչ ապացույցներ է անհրաժեշտ ձեռք բերել

Գաղտնի քննչական գործողություն կարող է կատարվել միայն այն դեպքում, երբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ դրա արդյունքում կարող է ձեռք բերվել տվյալ վարույթի համար նշանակություն ունեցող ապացույց և, միաժամանակ, այլ եղանակով այդ ապացույցի ձեռքբերումը ողջամտորեն անհնար է (249.1):

Տվյալ պայմանը կիսով չափ բավարարում է գ. կետով սահմանված պայմանը, այն է՝ փորձ է կատարվել կիրառել նախաքննության սովորական մեթոդներ, սակայն ձախողվել է, կամ պարզվել է, որ այդ մեթոդների միջոցով քիչ հավանական է հասնել հաջողության, կամ որ դրանք կարող են լինել չափազանց վտանգավոր: Սակայն սահմանված չէ այլ քննչական գործողությունների կամ ՕՀՄ-ների կիրառման անհրաժեշտությունը մինչ առավել ռիսկային միջոցների կիրառմանն անցնելը:

✓ Ի՞նչ ծանրության հանցագործության դեպքում

Գաղտնի քննչական գործողությունները կարող են կատարվել ծանր և առանձնապես ծանր ենթադրյալ հանցագործությունների վերաբերյալ վարույթներով, իսկ թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկումը միայն որոշ դեպքերում (ՀՀ ՔԴՕ նախագծի 256-րդ հոդվածի 4-րդ հոդվածով նախատեսված), նաև ոչ մեծ կամ միջին ծանրության ենթադրյալ հանցագործությունների վերաբերյալ վարույթներով (249.3):

✓ Ու՞մ նկատմամբ

¹¹ Տե՛ս նաև Հավելված 5

Ներքին դիտում, արտաքին դիտում, նամակագրության և այլ ոչ թվային հաղորդումների վերահսկում, թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում գաղտնի քննչական գործողությունները կարող են կատարվել՝

1) այն ֆիզիկական անձի նկատմամբ, ում վերաբերյալ առկա են ենթադրյալ հանցանք կատարելու մասին վկայող փաստեր,

2) մեղադրյալի նկատմամբ,

3) այն ֆիզիկական անձի նկատմամբ, ում վերաբերյալ առկա է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ նա պարբերաբար անմիջականորեն հաղորդակցվել է կամ ողջամտորեն կարող է հաղորդակցվել մեղադրյալի հետ.

4) այն իրավաբանական անձի նկատմամբ, որի վերաբերյալ առկա է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ դրա գործունեությունն ամբողջությամբ կամ վերաբերելի մասով կարող է կառավարվել, վերահսկվել կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվել են սույն մասի 1-ին կամ 2-րդ կետով նշված անձանց կողմից:

Ֆինանսական գործարքների վերահսկում գաղտնի քննչական գործողությունը կարող է կատարվել միայն այն դեպքում, երբ դրա արդյունքում ստացվելիք տեղեկությունները կարող են վերաբերել մեղադրյալին կամ այն իրավաբանական անձին, որի կապակցությամբ առկա է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ դրա գործունեությունն ամբողջությամբ կամ վերաբերելի մասով կարող է կառավարվել, վերահսկվել կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվել մեղադրյալի կողմից:

Կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում գաղտնի քննչական գործողությունը կարող է կատարվել բացառապես այն անձի նկատմամբ, ում վերաբերյալ առկա են ենթադրյալ հանցանք կատարելու մասին վկայող փաստեր:

Կիրառված միջոցների մասին անձի տեղեկացվածության ապահովումը

Թե՛ ՀՀ ՔԴՕ-ով, թե՛ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով չի սահմանվում տեսահսկումը կամ գաղտնալսումը դադարացնելուն պես համապատասխան մարմնի կողմից անձին կիրառված միջոցների մասին տեղեկացնելու պարտականությունը:

Օպերատիվ գործողությունների ժամանակավոր բնույթը

Ըստ ՀՀ ՔԴՕ նախագծի 250-րդ հոդվածի 5-րդ մասի՝ անկախ կարգավիճակից՝ նույն անձի նկատմամբ գաղտնի քննչական գործողության (ներքին դիտում, արտաքին դիտում, նամակագրության և այլ ոչ թվային հաղորդումների վերահսկում, թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում, ֆինանսական գործարքների վերահսկում) կատարման ընդհանուր ժամկետը չի կարող գերազանցել տասներկու ամիսը: Ընդ որում,

յուրաքանչյուր անգամ դատարանի թույլտվությունը կարող է տրվել երեք ամիսը չգերազանցող ժամկետով:

Օրենսդրությամբ սահմանված թույլատրելի առավելագույն ժամկետը նախատեսում է 12 ամիս, որը 4 անգամ գերազանցում է հանձնարարականով նախատեսված առավելագույն ժամկետը:

Իսկ կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում գաղտնի քննչական գործողությունը նույն անձի նկատմամբ նույն անձի կողմից տրված հայտարարության հիման վրա կարող է կատարվել միայն մեկ անգամ:

iii. Ներքին անվտանգության ծառայությունները չպետք է իրավասու լինեն կատարելու իրավապահ մարմինների աշխատանքը, օրինակ՝ քրեական հետաքննություն, ձերբակալություն կամ կալանավորում: Մեծ սպառնալիք ներկայացնող նշված լիազորությունների չարաշահումից և ոստիկանության ավանդական գործառույթների կրկնությունից խուսափելու համար՝ նման լիազորությունները պետք է իրականացնեն բացառապես այլ իրավապահ մարմինները:

«Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ ազգային անվտանգության մարմինները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացնում են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, կատարում են հետաքննություն և նախաքննություն՝ ուղղված իրենց քննչական ենթակայությանը վերապահված հանցագործությունների բացահայտմանը, կանխմանը և խափանմանը: Ազգային անվտանգության մարմինները իրավասու են իրականացնել քննություն որոշ տեսակի քրեական գործերով (տե՛ս կետ 1.2):

Միննույն ժամանակ Ազգային անվտանգության մարմիններին է վերապահված առանձին ձերբակալված անձանց պահման վայրեր ունենալու իրավունքը, ինչից և օգտվելով ստեղծվել է ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության համակարգում գործող ձերբակալված անձանց պահելու վայրը:

ԱԱԾ ՁՊՎ-ն ստեղծվել է 2007 թ. հուլիսին: Ըստ ԽԿԿ զեկույցի՝ այն բաղկացած է 2 խցից, որոնցից մեկը նախատեսված է 2 անձի համար՝ 7 մ², երկրորդը՝ 4 անձի համար՝ 17 մ² մակերեսով¹²:

Միննույն ժամանակ, համաձայն «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի՝ Ձերբակալվածներին պահելու վայրերի և կալանավորվածներին պահելու վայրերի գործունեության նկատմամբ հասարակական

¹² Տե՛ս Խոշտանգումների եվ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (cpt) 2008 թվականի մարտի 15-17-ը Հայաստան կատարած այցելության վերաբերյալ զեկույցը, Ստրասբուրգ, 19 մարտի, 2010թ., կետ 28, էջ 19
¹³ <http://www.cpt.coe.int/documents/arm/2010-07-inf-arm.pdf>

վերահսկողությունն իրականացվում է լիազորված համապատասխան մարմնի ղեկավարի կազմավորած հասարակական դիտորդների խմբի միջոցով: ՀՀ ոստիկանության պետի համապատասխան հրամանի համաձայն գործում է ՀՀ ոստիկանության համակարգի ձեռքարկված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խումբը:¹³ ԱԱԾ համակարգում գործող ձեռքարկվածների պահման վայրի հանդեպ բացակայում են հասարակական դիտորդական խմբերի կողմից մշտադիտարկում իրականացնելու մեխանիզմները:

Այսպիսով, ՀՀ ազգային անվտանգության մարմինները, բացի այն, որ իրավասու են որոշ գործերով իրականացնել հետաքննություն և նախաքննություն, նաև իրավասու են ունենալ և ունեն առանձին ձեռքարկված անձանց պահման վայր: Այդ հաստատության նկատմամբ, ի տարբերություն ոստիկանության համակարգում գործող ՁՊՎ-ների, չի գործում հասարակական դիտորդական խմբի կողմից մշտադիտարկումներ իրականացնելու մեխանիզմը, ինչի արդյունքում այս հաստատություններում պահվող անձինք գտնվում են առավել խոցելի վիճակում, իսկ վատ վերաբերմունքից և անհիմն ազատագրկումից զերծ մնալու իրավունքների խախտումները առավել հավանական են դառնում: ԽԿԿ-ն այցելել է այս հաստատություն 2 անգամ 2008 և 2010 թվականներին:

ՀՀ ոստիկանության պետի հրամանը ՀՀ ոստիկանության համակարգի ձեռքարկված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի գործունեության կարգը հաստատելու մասին

Գ. Ներքին անվտանգության ծառայությունների նկատմամբ արդյունավետ ժողովրդավարական հսկողության վերաբերյալ

i. Գործադիր իշխանությունը պետք է իրականացնի ներքին անվտանգության ծառայությունների հետադարձ վերահսկողություն, օրինակ՝ նման ծառայությունների աշխատակիցներին պարտավորեցնելով կազմել և ներկայացնել մանրամասն տարեկան հաշվետվություններ իրենց գործունեության վերաբերյալ: Նախարարներից մեկը պետք է ստանձնի ներքին անվտանգության ծառայությունների աշխատանքը հսկելու և վերահսկելու քաղաքական պատասխանատվությունը, և նրա աշխատակազմը պետք է ունենա արդյունավետ առօրյա հսկողության համար անհրաժեշտ լիարժեք լիազորություններ: Նախարարը պետք է խորհրդարանին ներկայացնի ներքին անվտանգության ծառայությունների աշխատանքի վերաբերյալ տարեկան հաշվետվությունը:

ՀՀ ԱԱԾ-ն հանդիսանում է Կառավարության առընթեր մարմին: Կառավարության առընթեր մարմինները, ինչպես և նախարարությունները հանդիսանում են հանրապետական գործադիր մարմիններ, որոնք ՀՀ նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի թիվ ՆՀ-174-Ն հրամանագրի 7-րդ կետի համաձայն՝ մշակում և իրականացնում են Կառավարության քաղաքականությունն

¹³ ՀՀ ոստիկանության պետի 2005 թ. հունվածի 14-ի թիվ 1-Ն հրամանը ՀՀ ոստիկանության համակարգի ձեռքարկված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի գործունեության կարգը հաստատելու մասին:

¹⁴ <http://policemonitoring.org/index.php?m=7>

առանձին բնագավառներում, ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում են վարչապետի առաջարկությամբ՝ ՀՀ Նախագահի հրամանագրով: Կառավարության առընթեր մարմինների ցանկը սահմանվել է ՀՀ կառավարության կառուցվածքը սահմանելու մասին ՀՀ նախագահի 2002 թ. մարտի 16-ի թիվ ՆՀ-1063 հրամանագրով:

ԱԱԾ հաշվետվողականությունն գործադիր իշխանության առջև¹⁴

«Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ԱԱԾ գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է ՀՀ նախագահը և ՀՀ Կառավարությունը ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում:

ԱԱԾ-ի Նախագահի և Կառավարության առջև հաշվետվողականության վերաբերյալ իրավակարգավորումները կարելի է նաև պայմանավորել ԱԱԾ տնօրենի և նրա տեղակալների նշանակման լիազորություն ունեցող մարմիններ հանդիսանալու հանգամանքով:

Հաշվետվողականության որոշակի մեխանիզմ է հանդիսանում Նախագահի թիվ ՆՀ-174-Ն հրամանագիրը՝ որի համաձայն Վարչապետը պարբերաբար լսում է ՀՀ նախարարների, ՀԳՄ-ների և տարածքային կառավարման մարմինների ղեկավարների հաշվետվությունները կառավարության և վարչապետի որոշումների, հանձնարարականների կատարման ընթացքի և դրանց կատարման ապահովման ուղղությամբ ձեռնարկված միջոցների մասին:

Ամեն դեպքում ԱԱԾ մարմնի հաշվետվողականության մակարդակը ՀՀ կառավարության առջև չի կարելի համարել բավարար հանձնարարականի իմաստով, քանի որ այն չի պարունակում համակարգային հաշվետվողականության մեխանիզմ:

Պարզ չեն նաև առանձին ոլորտային խնդիրների վերաբերյալ հաշվետվություններ կայացնելու ձևաչափերը և սահմանները:

ԱԱԾ հաշվետվողականությունը օրենսդիր իշխանության առջև

«Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքը պարունակում է չափազանց սահմանափակ կարգավորումներ ԱԱԾ-ի օրենսդիր մարմնի առջև հաշվետվողականության և զեկուցման վերաբերյալ:

Այսպես, օրենքը սահմանում է, որ ՀՀ ԱԺ պատգամավորները, կապված իրենց պատգամավորական գործունեության իրականացման հետ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունեն տեղեկություններ ստանալ ազգային անվտանգության մարմինների գործունեության մասին:

¹⁴ Հաշվի առնելով, որ «Հանրապետության նախագահը գործադիր իշխանության կրողներից մեկն է, իսկ նրա կարգավիճակը՝ որպես պետության գլուխ, և դրա հետ կապված տարբեր խնդիրները և գործառույթները հիմնականում ներդաշնակ են կիսանախագահական կառավարման մոդելում գործող իշխանությունների բաժանման յուրահատկություններին» (ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ, «Իրավունք» 2010, 3-րդ գլուխ, 2-րդ կետ, էջ 572), տվյալ դեպքում որպես գործադիր իշխանության մարմիններ դիտարկվել են ՀՀ նախագահը և Կառավարությունը:

Այլ կարգավորումներ ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում: Անհրաժեշտ է նշել, որ ԱԾ առջև հաշվետվողականության որոշակի տարր է պարունակվում յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվության մեջ:

Ամեն դեպքում, թե՛ գործադիր, թե՛ օրենսդիր մարմինների կողմից իրականացվող վերահսկողության մակարդակը չի կարելի համարել բավարար, թեև Կառավարությունը կամ ՀՀ Նախագահը ունի հաշվետվություն պահանջելու որոշ լծակներ, ԱԾ-ն չի տիրապետում որևէ մեխանիզմների ԱԱԾ մարմնից համակարգային հաշվետվություն պահանջելու համար:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված ԱԱԾ-ի հաշվետվողականության պահանջները չեն համապատասխանում հանձնարարականի ոգուն:

ii. Օրենսդիր իշխանությունը պետք է ընդունի հստակ և համարժեք օրենքներ՝ օրենսդրական հիմք նախապատրաստելով ներքին անվտանգության ծառայությունների համար, սահմանելով անձի իրավունքների խախտման մեծ սպառնալիք ներկայացնող օպերատիվ գործողությունները և դրանք ձեռնարկելու դեպքերը՝ ապահովելով բռնությունից պաշտպանության համարժեք երաշխիքներ: Օրենսդիր իշխանությունը պետք է նաև խստորեն վերահսկի ներքին անվտանգության ծառայությունների բյուջեն՝ ի թիվս այլոց պարտավորեցնելով նշված ծառայություններին ներկայացնել մանրամասն տարեկան հաշվետվություններ դրանց օգտագործման վերաբերյալ և հիմնի վերահսկողություն իրականացնող հատուկ ընտրված կոմիտեներ:

Պետական բյուջեի կատարման վերաբերյալ ՀՀ կառավարությունը տարեկան հաշվետվություն է ներկայացվում Ազգային ժողով: Հաշվետվությունը ներկայացվում է ոչ ուշ, քան մինչև հաջորդ տարվա մայիսի 1-ը: Ազգային ժողովը Բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը քննարկում և հաստատում է Վերահսկիչ պալատի եզրակացության առկայությամբ՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հունիսի երկրորդ չորեքշաբթին: Այն պարունակում է տեղեկատվություն նաև Ազգային անվտանգության ծառայության կողմից կատարված ծախսերի վերաբերյալ: Բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության նախնական քննարկումները տեղի են ունենում Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի ԱԾ մշտական հանձնաժողովում, որոնց սահմանված կարգով մասնակցում են նաև Կառավարության անդամները եւ վարչապետի լիազորած անձինք: Ազգային ժողովի պլենար նիստում տարեկան հաշվետվության քննարկման ընթացքում զեկույցով կարող են հանդես գալ ՀՀ կառավարության ներկայացուցիչը, հանդես են գալիս Վերահսկիչ պալատի նախագահը, Կենտրոնական բանկի նախագահը, Ֆինանսավարկային և բյուջետային ոլորտի մշտական հանձնաժողովի ներկայացուցիչը՝ ներկայացնելով հաշվետվության վերաբերյալ հանձնաժողովի եզրակացությունը, Պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի ոլորտի

մշտական հանձնաժողովի ներկայացուցիչը՝ ներկայացնելով բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունում պետական և ծառայողական գաղտնիք պարունակող ծախսերի օրինականության եւ հիմնավորվածության մասին հանձնաժողովի եզրակացությունը: Ջեկույցով կարող են հանդես գալ նաև մյուս հանձնաժողովներից մեկական ներկայացուցիչ, ինչպես նաև պատգամավորները: Պատգամավորները կարող են նաև հարցեր տալ զեկույցողներին: Քննարկման արդյունքում որոշում է ընդունվում հաշվետվությունը հաստատելու վերաբերյալ: Եթե բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին առաջարկությունը քվեարկության արդյունքում չի ստանում ընդունման համար անհրաժեշտ թվով ձայներ, ապա Կառավարությունը կարող է բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հաստատման առնչությամբ դնել իր վստահության հարցը:

2012 թ. Պետական բյուջեի կատարման ՀՀ կառավարության տարեկան հաշվետվության¹⁵ մեջ Ազգային անվտանգության ծառայության վերաբերյալ տվյալները ներառված են Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն բաժնի մեջ, որում Հասարակական կարգ և անվտանգություն խմբի մեջ Ոստիկանության հետ համատեղ ներառված է Ազգային անվտանգություն դասը: Այս դասի մեջ ներառված և առանձին ներկայացված են Ազգային անվտանգության ծառայության և Պետական պահպանության ծառայության և Ազգային անվտանգության խորհրդի պահպանման և գործունեությանն ուղղված ֆինանսական ռեսուրսների վերաբերյալ հաշվետվությունը:

Այսպիսով, Ազգային անվտանգության ծառայությունը չի ներկայացնում առանձին ֆինանսական հաշվետվություն իրենց հատկացված բյուջեի կատարման վերաբերյալ: Միևնույն ժամանակ ոչ մանրամասն հաշվետվություն ներկայացվում է ՀՀ կառավարության կողմից ներկայացվող տարեկան հաշվետվությունների շրջանակներում: Այսպիսով, ԱԱԾ-ն չի ներկայացնում տարեկան բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվություն ԱԺ-ին: Ավելին, բյուջեի կատարման մասին ՀՀ կառավարության տարեկան հաշվետվության պետական և ծառայողական գաղտնիք պարունակող ծախսային հոդվածներին վերաբերող փակ ծրարի նյութերը քննարկվում են պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի, ֆինանսավարկային եւ բյուջետային ոլորտների մշտական հանձնաժողովների համատեղ դռնփակ նիստում, որին կարող են մասնակցել պատգամավորները, Վերահսկիչ պալատի նախագահը և վարչապետի լիազորած անձինք:

iii. Դատական իշխանությունը պետք է լիազորված լինի իրականացնելու նախնական և հետադարձ ծավալուն հսկողություն, այդ թվում՝ նախնական թույլտվություն տրամադրի որոշակի գործողությունների իրականացման համար, որոնք կարող են խախտել մարդու իրավունքները: Հետադարձ հսկողության գերակա սկզբունքը պետք է կայանա նրանում, որ բոլոր նրանք, ովքեր կարծում են, որ անվտանգության ծառայությունների աշխատակիցների

¹⁵ Տե՛ս 2012 թ. Պետական բյուջեի կատարման ՀՀ կառավարության տարեկան հաշվետվությունը
Պhttp://parliament.am/legislation.php?sel=show&ID=4809&lang=arm

գործողությունները (կամ բացթողումները) հանգեցրել են իրենց իրավունքների խախտմանը, պետք է, ընդհանուր առմամբ, կարողանան փոխհատուցման դիմում ներկայացնել դատարան կամ այլ դատական մարմիններ: Նման դատարանները պետք է իրավասու լինեն որոշելու, թե արդյոք բողոքարկված գործողություններն իրականացվել են ներքին անվտանգության ծառայությունների աշխատակիցների՝ օրենքով սահմանված լիազորությունների և գործառնությունների շրջանակներում, թե՞ ոչ: Այսպիսով, դատարանները պետք է իրավասու լինեն որոշելու, թե արդյոք նշված ծառայությունների աշխատակիցներն անհարկի ոտնձգություն են կատարել անձի նկատմամբ կամ չարաշահել են իրենց հայեցողական վարչական լիազորությունները:

ԱԱԾ գործողությունների (անգործության) հետևանքով անձի իրավունքների խախտման դատական կարգով պաշտպանության մեխանիզմներ է սահմանում Վարչական դատավարության օրենսգիրքը: Հաշվի առնելով, որ ԱԱԾ մարմինները հանդիսանում են նաև քրեական գործերով քննություն իրականացնող մարմիններ, որպես քննություն իրականացնող մարմինների՝ նրանց որոշումները կարող են թե՛ վերադասության, թե՛ դատական բողոքարկման առարկա դառնալ նաև ՀՀ ՔԴՕ շրջանակներում և նախատեսված դեպքերում:

Ամեն դեպքում կարելի է արձանագրել, որ տեսականորեն այն դեպքերում, երբ անձի նյութական իրավունքները և ազատությունները, ԱԱԾ մարմինների լիազորությունները, հստակորեն և բավարար չափով սահմանված են ՀՀ օրենսդրությամբ, դրանց պաշտպանության համար կարող են օգտագործվել թե՛ վարչական դատավարության, թե՛ քրեական դատավարության շրջանակներում դատական բողոքարկման առկա մեխանիզմները:

iv. Առանձին դեպքերում այլ մարմինների ներկայացուցիչները (օրինակ օմբուդսմանները և տվյալների պաշտպանության հարցերով հանձնակատարները) պետք է լիազորված լինեն իրականացնել անվտանգության ծառայությունների աշխատանքի հետադարձ հսկողություն:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը կարող է քննության առնել ԱԱԾ մարմինների գործողությունների վերաբերյալ անձանց բողոքները: Սովորաբար Մարդու իրավունքների պաշտպանը նաև իր տարեկան զեկույցում անդրադառնում է ԱԱԾ վերաբերյալ քննված բողոքներին:

Հաշվի առնելով, որ ՀՀ-ում մարդու իրավունքների պաշտպանը իրավասու է անարգել այցելել ցանկացած պետական հիմնարկ կամ կազմակերպություն, ներառյալ՝ գորամիավորումներ, անձանց հարկադրական պահման վայրեր, այդ թվում՝ նաև նախնական կալանքի և ազատագրկման վայրեր, ինչպես նաև Պաշտպանը հանդիսանում է «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ

պատժի դեմ կոնվենցիայի» կամընտիր արձանագրությամբ սահմանված կանխարգելման անկախ ազգային մեխանիզմ, նա նաև իրավասու է այցելություն կատարել ԱԱԾ ՁՊԿ:

Հասարակական կազմակերպությունների կողմից ԱԱԾ նկատմամբ վերահսկողական միջոցառումների վերաբերյալ կարելի է արձանագրել, որ նման վերահսկողություն անհրաժեշտության դեպքում կարող է իրականացվել ԱԱԾ կողմից քննված գործերի հանդեպ մշտադիտարկում իրականացնելու, ԱԱԾ պաշտոնատար անձանց գործողությունների հետևանքով տուժած անձանց իրավական աջակցություն ցուցաբերելու, տեղեկատվության ազատության իրավունքի իրացման շրջանակներում ԱԱԾ-ից տեղեկատվություն պահանջելու և այլ օրենքով չարգելված միջոցներով: Միևնույն ժամանակ նման մշտադիտարկումը ևս անարդյունավետ է, հաշվի առնելով, որ ԱԱԾ կողմից իր գործունեության վերաբերյալ տեղեկատվության մեծապես չի տրամադրվում, այն գաղտի տեղեկատվության շարքին դասելու հիմնավորմամբ:

V. Անհատները պետք է ունենան ներքին անվտանգության ծառայության (ծառայությունների) կողմից ձեռքբերված և պահպանվող տեղեկատվության մատչելիության ընդհանուր իրավունք, բացառությամբ օրենքով հստակ սահմանված այն դեպքերի, երբ նման տեղեկատվության գաղտնիությունը բխում է ազգային անվտանգության շահերից: Ցանկալի կլինի նաև, որպեսզի ներքին անվտանգության ծառայությունը՝ տեղեկատվությունը չբացահայտելու լիազորությունը ենթակա լինի դատական վերահսկողության:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը սահմանում է անձի՝ տեղեկատվություն ստանալու իրավունքը՝ միևնույն ժամանակ սահմանելով որոշակի սահմանափակումներ: Հաշվի առնելով ԱԱԾ գործունեության բնույթը՝ նման սահմանափակումները առավել լայն մեկնաբանություններ են ստանում այս մարմինների կողմից: Տվյալ դեպքում կիրառելի են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումները: Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի՝ Տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք, խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը, պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները: «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը իր հերթին սահմանում է պետական և ծառայողական գաղտնիք հասկացությունը, գաղտնիության աստիճանները, գաղտնիք կազմող տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելու իրավական հիմքերը: Միևնույն ժամանակ երկու օրենքներով սահմանված լայն ձևակերպումները և «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի համաձայն կազմվող

գաղտնագրման ենթակա տեղեկատվության գերատեսչական ցանկերի գաղտնի բնույթ կրելու հանգամանքը տեղիք են տալիս բազմաթիվ չարաշահումների: Խնդրին որոշ չափով լուծում փորձեց տալ ՀՀ Սահմանադրական դատարանը, իր՝ ՄԴՈ 1010 որոշման¹⁶ մեջ, որը սակայն դեռևս իր ամբողջական արտացոլումը չի ստացել ՀՀ օրենսդրության մեջ, մասնավորապես, դեռևս չի իրականացվել գերատեսչական ցանկերի գաղտնագրման գործընթացը, ինչի արդյունքում դեռևս ապահովված չէ տեղեկատվության ազատության իրավունքը:

¹⁶ «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հկ դիմումի հիման վրա՝ «Պետական ել ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի «գ» ենթակետի, 12-րդ հոդվածի 6-րդ ել 7-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով 2012 թ. մարտի 6-ի թիվ 1010 Սահմանադրական դատարանի որոշում
~<http://www.concourt.am/armenian/decisions/common/2012/pdf/sdv-1010.pdf>

2. ՀՀ հատուկ քննչական ծառայություն

Վերջին տասնամյակների ընթացքում հասարակության կառուցվածքի բարդացման և գիտության ու տեխնոլոգիաների առաջընթացի հետ համընթաց մեծացել է նաև ոստիկանության աշխատակիցների՝ իրենց պարտականությունների կատարման համար վերապահված հատուկ լիազորությունների շրջանակը և նրանց՝ քաղաքացիների կյանքին միջամտելու և քաղաքացիների մարդու իրավունքները խախտելու հնարավորությունները:¹⁷

2.1 Հատուկ քննչական ծառայության համակարգի կազմավորման, ղեկավարման կարգը

«Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածով Հատուկ քննչական ծառայությունը (հետայսու՝ ՀՔԾ) սահմանվում է, որպես ինքնուրույն պետական մարմին, որը իր լիազորություններն իրականացնելիս անկախ է և ենթարկվում է միայն օրենքին:

Համաձայն «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՔԾ-ն իրականացնում է ՀՀ ՔԴՕ նախատեսված՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց իրենց պաշտոնական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների, ինչպես նաև ընտրական գործընթացների հետ կապված քրեական գործերով նախաքննություն:

Հատուկ քննչական ծառայության գործունեությունը կարգավորվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ ՔԴՕ-ով, «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքով, «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով:

Հատուկ քննչական ծառայության ղեկավարի, նրա տեղակալների, ՀՔԾ ծառայողների նշանակման կարգը

ՀՔԾ պաշտոնատար անձանց նշանակման համար «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքը սահմանում է մի շարք պահանջներ: Մասնավորապես՝ համաձայն օրենքի 6-րդ հոդվածի՝ ՀՔԾ-ում ծառայության կարող է անցնել ՀՀ-ում մշտապես բնակվող ՀՀ այն քաղաքացին, որն ունի ՀՀ բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն

¹⁷ Opinion of the Commissioner for Human Rights Concerning Independent and Effective Determination of Complaints against the Police. CommDH(2009)4, 12 March 2009

☞ <https://wcd.coe.int/ViewDoc.jsp?id=1417857>

իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ օտարերկրյա պետությունում ձեռք բերած նմանատիպ աստիճան, որի ճանաչումն ու համարժեքության հաստատումը ՀՀ-ում իրականացվել է օրենքով սահմանված կարգով, ով անցել է պարտադիր զինվորական ծառայություն կամ պահեստագործի սպա է, տիրապետում է գրական հայերենին: Պարտադիր զինվորական ծառայության անցնելու պահանջը բացառվում է իգական սեռի կամ դիմելու պահին «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «բ-ե» կետերով նախատեսված հիմքերով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված կամ 13-րդ հոդվածի համաձայն՝ մինչև 27 տարին լրանալը պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստացած և պահեստագործում հաշվառված անձանց համար:

«ՀՔԾ ծառայողի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների ցանկը սահմանելու մասին» ՀՀ Կառավարության 2008 փետրվարի 13-ի թիվ 143-Ն որոշմամբ սահմանված են այն ֆիզիկական արատների և հիվանդությունների ցանկը, որոնք խոչընդոտում են ՀՔԾ ծառայողի պաշտոնում նշանակվելուն:

Միևնույն ժամանակ օրենքով սահմանվում են ՀՔԾ ծառայության նշանակման այլ խոչընդոտող հանգամանքները՝

- 1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
- 2) դատական կարգով զրկվել է քաղաքացիական կամ այլ ծառայությունում պաշտոն զբաղեցնելու իրավունքից,
- 3) դատապարտվել է հանցագործություն կատարելու համար՝ անկախ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված լինելու հանգամանքից,
- 4) գտնվում է քրեական հետապնդման մեջ,
- 5) չի համապատասխանում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներին:

ՀՔԾ առանձին պաշտոնների նշանակման համար օրենքը սահմանում է նաև լրացուցիչ պահանջներ: ՀՔԾ պետ կարող է նշանակվել այն անձը, ով մինչև նշանակումը զբաղեցրել է հատուկ քննչական ծառայության բարձրագույն խմբի կամ վերջին հինգ տարին գլխավոր խմբի պաշտոն կամ վերջին յոթ տարին առաջատար խմբի պաշտոն կամ ունի դատախազի կամ քննիչի առնվազն 10 տարվա ստաժ: Հատուկ քննչական ծառայության պետի տեղակալ կարող է նշանակվել այն անձը, ով մինչև նշանակումը վերջին չորս տարին զբաղեցրել է Հատուկ քննչական ծառայության գլխավոր խմբի կամ վերջին հինգ տարին առաջատար խմբի պաշտոն կամ ունի դատախազի կամ քննիչի առնվազն 8 տարվա ստաժ:

ՀՔԾ պետը նշանակվում է ՀՀ նախագահի կողմից՝ Վարչապետի ներկայացմամբ: ՀՔԾ պետի տեղակալը նշանակվում է ՀՔԾ պետի կողմից:

Օրենքով սահմանված է նաև հատկապես կարևոր գործերի ավագ քննիչի և վարչության պետի, հատկապես կարևոր գործերի ավագ քննիչի, վարչության պետի տեղակալի, հատկապես կարևոր գործերի քննիչի պաշտոնի նշանակելու նվազագույն պայմանները:

Բացառությամբ ՀՔԾ պետի և ՀՔԾ պետի տեղակալի, ՀՔԾ մյուս ծառայողները նշանակվում են մրցույթի հիման վրա:

Մրցույթի անցկացման նպատակով ձևավորվում է հանձնաժողով, որը գործում է «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի և «Հատուկ քննչական ծառայության մրցութային հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2008 թ. փետրվարի 28-ի թիվ 180-Ն որոշման հիման վրա: Մրցույթի անց կացման կարգը սահմանված է «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքով: ՀՔԾ պաշտոններում, բացառությամբ ՀՔԾ պետի պաշտոնի, նշանակում և ազատում է ՀՔԾ պետը:

Հատուկ քննչական ծառայության ծառայողի ազատումը և Հատուկ քննչական ծառայության ծառայողի լիազորությունների դադարեցումը

«Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքը նաև նախատեսում է ՀՔԾ պաշտոններից ազատման և պաշտոնավարման դադարեցման կարգը:

ՀՔԾ պաշտոններից ազատման հիմքերը թվարկված են օրենքի 12-րդ հոդվածով: Պաշտոնից ազատման պայմանները ունեն իմպերատիվ բնույթ, այսինքն՝ այդ պայմանների դեպքում, ցանկացած պարագայում անձը պետք է ազատվի պաշտոնից: Պայմանների շրջանակներում շարադրված են ինչպես հիմքերը, որոնք պայմանավորված են անձի վարքագծով, այնպես էլ հիմքեր, որոնք կարող են վրա հասնել օբյեկտիվ պատճառներով:

«Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքը սահմանում է նաև ՀՔԾ ծառայողի լիազորությունների ժամանակավորապես դադարեցման հնարավորությունը: Ըստ նույն օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերի՝ ՀՔԾ ծառայողի լիազորությունները կարող են ժամանակավորապես դադարեցվել ծառայողական քննության ժամանակահատվածում, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ պաշտոնում մնալով՝ նա կխոչընդոտի ծառայողական քննության անցկացմանը, ինչպես նաև ՀՔԾ ծառայողի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելիս: ՀՔԾ ծառայողի լիազորությունները դադարեցվում են ՀՔԾ պետի կողմից: Համաձայն ՀՀ ՔԴՕ 190-րդ հոդվածի 6.1 մասի՝ հատուկ քննչական ծառայության ծառայողների՝ իրենց պաշտոնական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների վերաբերյալ գործերով նախաքննությունը կատարում են ազգային անվտանգության մարմինների քննիչները:

Անհրաժեշտ ենք գտնում նշել, որ պետք է բացառել ՀՔԾ ծառայողների լիազորությունների դադարեցման վերաբերյալ ՀՔԾ պետի հայեցողական լիազորությունը մի կողմից կոռուպցիոն ռիսկերի, մյուս կողմից ծառայողական քննության և քրեական գործով քննության վրա ՀՔԾ ծառայողի ազդեցության բացառման նպատակով:

Հատուկ քննչական ծառայության կառուցվածքը և ղեկավարումը

ՀՔԾ հանդիսանում է ՀՔԾ պետի կողմից ղեկավարվող կենտրոնացված համակարգ: ՀՔԾ պետը ունի երկու տեղակալ, որոնից յուրաքանչյուրը համակարգում է ՀՔԾ պետի կողմից

սահմանված իրեն վերապահված ոլորտները: ՀՔԾ կառուցվածքը հաստատվում է կառավարության կողմից: Ներկայումս ՀՔԾ կազմում գործում են 3 վարչություններ՝ Կոռուպցիոն, կազմակերպված և պաշտոնական քննությունների, Խոշտանգումների և մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության, Ընդհանուր բնույթի հանցագործությունների քննության: ՀՔԾ կազմում գործում են նաև ՀՔԾ պետին առընթեր քննիչներ: Հատկանշական է, որ ՀՔԾ կազմում գործում է Խոշտանգումների և մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչություն, չնայած գործող ՀՀ ՔՕ նախատեսված Խոշտանգում հանցակազմի սահմանումը չի նախատեսում պաշտոնատար անձին՝ որպես հանցագործության հատուկ սուբյեկտ¹⁸:

2.2 Հատուկ քննչական ծառայության լիազորությունները և դրանց իրականացումը

Ինչպես արդեն նշվել է, ՀՔԾ-ն իրականացնում է ՀՀ ՔԴՕ-ով նախատեսված՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց իրենց պաշտոնական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների, ինչպես նաև ընտրական գործընթացների հետ կապված քրեական գործերով նախաքննություն:

Օրենքով սահմանված է օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց սպառիչ ցանկը, որոնց կողմից իրենց պաշտոնական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների դեպքում նախաքննություն են իրականացնում ՀՔԾ մարմինները: Ընտրական գործընթացների հետ կապված քրեական գործերը ներառում են ընտրական խախտումների վերաբերյալ ոչ բոլոր հոդվածները, այլ միայն «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև ՀՀ ՔԴՕ-ով սահմանված ցանկում ներառված հոդվածները:

Միևնույն ժամանակ սահմանված է, որ անհրաժեշտության դեպքում ՀՀ գլխավոր դատախազը կարող է քննչական այլ մարմինների քննիչների վարույթից վերցնել և հատուկ քննչական ծառայության քննիչների վարույթին հանձնել քրեական գործեր, որոնք առնչվում են սույն մասում թվարկված պաշտոնատար անձանց հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործություններին, կամ որոնցով այդ անձինք ճանաչված են որպես տուժող, ինչպես նաև ցանկացած այլ քրեական գործ, եթե դրա փաստական հանգամանքներով պայմանավորված՝ առկա է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունը երաշխավորելու անհրաժեշտություն:

ՀՀ ՔԴՕ-ով սահմանվում են ընտրական գործընթացների վերաբերող ՀՀ ՔՕ այն հոդվածները, որոնցով քննությունը իրականացվում է ՀՔԾ կողմից, այն է. ՀՀ ՔՕ 149-րդ (Ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը), 150-րդ

¹⁸ «Խոշտանգում» հանցակազմը նոր սահմանմամբ. օրենքի նախագծի հետքերով
¹⁹ <http://hcav.am/events/21-01-2015/>

(Ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը), 154¹-րդ (Կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ պատրաստելը կամ ակնհայտ կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ հանձնելը կամ իրացնելը) և 154² -րդ (Ընտրողի կամքի ազատ իրականացմանը խոչընդոտելը) հոդվածները: Ինչպես նկատում ենք ընտրական գործընթացներին վերաբերող ՀՀ ՔՕ սահմանված ոչ բոլոր հոդվածներով է քննություն իրականացվում ՀՔԾ կողմից: Պարզ չէ, թե ինչով է պայմանավորված ընտրական գործընթացների վերաբերյալ ՀՀ ՔՕ-ով միայն որոշ հոդվածներով նախաքննության իրականացումը: Այստեղ անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ ընտրական գործընթացների արդյունքում թեկնածուները որոշակի պաշտոնական դիրքի հավակնող անձինք են: ՀՀ ընտրական օրենսգիրքը սահմանում է նախագահի և պատգամավորի թեկնածուների համար ընտրված պաշտոնատար անձանց ներհատուկ որոշակի երաշխիքներ: Նման երաշխիքներից է հանդիսանում անձեռնամխելիության ինստիտուտը: Այսպես նախագահի կամ պատգամավորի թեկնածուն կարող է ձերբակալվել կամ կալանավորվել կամ նրա նկատմամբ դատական պատասխանատվության ենթարկելու հարց կարող է հարուցվել միայն կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնությամբ: Այսինքն, օրենսդրությունը որոշակի չափով հավասարեցնում է պաշտոնի հավակնող

թեկնածուի և պաշտոնի կրողի կարգավիճակից բխող երաշխիքները, ուստի նման սկզբունքի կիրառումը անհրաժեշտ է պահպանել նաև այլ իրավակարգավորումների շրջանակներում:

ՀՔԾ քննիչների լիազորությունների շրջանակը սահմանվում է ՀՀ ՔԴՕ-ով:

2.3 Հատուկ քննչական ծառայության հաշվետվողականության, գործունեության ժողովրդավարական վերահսկողության երաշխիքները

Հատուկ քննչական ծառայության անկախությունը կարևոր երաշխիք է հանդիսանում երկրում անձի իրավունքների պաշտպանությունը և խախտված իրավունքների վերականգնումը ապահովելու տեսանկյունից: Միննույն ժամանակ, անկախ քննչական մարմնի գործունեության իրական անկախությունը ապահովելու համար կարևոր նշանակություն ունի մարմնի ինչպես ինստիտուցիոնալ, այնպես էլ գործառնական անկախությունը:

Ինչպես արդեն իսկ նշվել է «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Հատուկ քննչական ծառայությունն ինքնուրույն պետական մարմին է և լիազորություններն իրականացնելիս անկախ է:

ՀՔԾ կողմից իրականացվող նախաքննության օրինականության նկատմամբ, հսկողություն է իրականացնում ՀՀ գլխավոր դատախազը և նրա լիազորած դատախազները: Վերլուծելով օրենքի դրույթները կարելի է եզրակացնել, որ դատախազությունը հսկողություն է իրականացնում ՀՔԾ կողմից իրականացվող նախաքննության օրինականության նկատմամբ, իսկ ՀՀ նախագահը հնարավորություն ունի միջամտելու և ազդելու ՀՔԾ գործունեությանը: Դա պայմանավորված է ՀՔԾ պետին նշանակելու, ազատելու, կարգապահական տույժի ենթարկելու ՀՀ նախագահի լիազորություններով:

Հատուկ քննչական ծառայության արտաքին հաշվետվողականության համակարգերի շրջանակներում կարևոր ենք համարում ուսումնասիրել ՀՔԾ-ի Ազգային ժողովին, Նախագահին, Կառավարությանը, ինչպես նաև հանրային հաշվետվողականության մեխանիզմները:

Ներքին հաշվետվողականության մեխանիզմների շրջանակներում կուսումնասիրենք ՀՔԾ շրջանակներում առկա հաշվետվողականության մեխանիզմները:

Ինչպես ցույց է տալիս «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի վերլուծությունը, ՀՔԾ մարմինների՝ ՀՀ օրենսդիր և ներկայացուցչական մարմնի՝ Ազգային ժողովի հանդեպ արդյունավետ ուղղակի հաշվետվողականության մեխանիզմները բացակայում են: Ազգային ժողովի՝ ՀՔԾ նկատմամբ վերահսկողություն իրականացնելու միակ մեխանիզմն է ոլորտային օրենսդրական ակտերի ընդունումը, մարմնի բյուջեի հաստատումը: Օրենսդրական ակտերի նախագծերի քննարկման ընթացքում «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 30.1 հոդվածի համաձայն Հանձնաժողովը՝ իր որոշմամբ, կարող է իր քննարկմանը ներկայացված օրենսդրական ակտերի նախագծերի եւ այլ հարցերի վերաբերյալ հարցումներով դիմել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, պաշտոնատար անձանց, հիմնարկներին եւ կազմակերպություններին, որոնք պարտավոր են 20-օրյա ժամկետում քննարկել հանձնաժողովի գրավոր հարցումը եւ գրավոր պատասխանել նրան և ոչ ուշ, քան քննարկումից երեք օր առաջ գրավոր տեղեկացնել հանձնաժողովին իր բարձրագրած հարցի քննարկման մասին:

Միննույն դրույթը սահմանված է Պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի ԱԺ մշտական հանձնաժողովի կանոնակարգի 78-րդ կետով՝ հանձնաժողովը՝ իր որոշմամբ, կարող է իր քննարկմանը ներկայացված օրենսդրական ակտերի նախագծերի և այլ հարցերի վերաբերյալ հարցումներով դիմել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, պաշտոնատար անձանց, հիմնարկներին եւ կազմակերպություններին:

Պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմիններին, պաշտոնատար անձանց, հիմնարկներին եւ կազմակերպություններին հարցումներով և առաջարկություններով դիմելու, իր բարձրագրած հարցերի քննարկմանը մասնակցելու իրավունք ունեն նաև ԱԺ պատգամավորները: Իսկ պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմիններին, պաշտոնատար անձանց, հիմնարկներին և կազմակերպություններ 10-օրյա ժամկետում, բացառությամբ նույն օրենքով նախատեսված դեպքերի, քննարկել պատգամավորի գրավոր հարցումը եւ գրավոր պատասխանել նրան:

ՀՀ նախագահի և ՀՀ կառավարության վերահսկողությունը ՀՔԾ գործունեության նկատմամբ:

Համաձայն «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 6-րդ մասի՝ Հատուկ քննչական ծառայությունը հրապարակում է տեղեկատվություն իր գործունեության մասին: Հատուկ քննչական ծառայության պետը յուրաքանչյուր տարի Հանրապետության

Նախագահին և ՀՀ կառավարություն է ներկայացնում գրավոր հաղորդում՝ հատուկ քննչական ծառայության նախորդ տարվա գործունեության մասին:

Հատուկ քննչական ծառայության անկախ մարմին գործելու կարևոր երաշխիք ենք համարում նրա գործունեության նկատմամբ պառլամենտական վերահսկողության սահմանումը: Անհրաժեշտ է սահմանել այս մարմնի գործունեության հանդեպ օրենսդիր մարմնի կողմից գործուն վերահսկողության մեխանիզմներ: ՀՀ ներկայացուցչական մարմնի առջև ՀՔԾ հաշվետվողականության բացակայությունը բացասաբար են անդրադառնում մարմնի կողմից իր լիազորությունների պատշաճ կատարման վրա: Հատուկ քննչական ծառայության կողմից միայն ՀՀ նախագահին և ՀՀ կառավարությանը հաշվետվություններ ներկայացնելու պարտավորությունը ուղղակի վտանգում է ՀՔԾ-ի՝ որպես անկախ քննչական մարմնի գործունեությունը:

Հատուկ քննչական ծառայության հանդեպ հանրային վերահսկողության իրականացման մեջ մեծ է Մարդու իրավունքների պաշտպանի և հասարակական միավորումների դերը: Այս տեսակետից կարևոր նշանակություն կարող է ունենալ ընդունված բողոքների դիմումների, հարուցված, կարճված, կասեցված, ավարտված և դատարան ուղարկվող գործերի վերաբերյալ վիճակագրության վարումը և հրապարակումը: ՀՔԾ կողմից վիճակագրական հաշվետվությունների կազմման և ՀՀ նախագահին ներկայացման, սակայն ոչ հրապարակման պարտավորությունը սահմանվել է 2014 թ. մայիս ամսին կատարված օրենսդրական փոփոխություններով: Միննույն ժամանակ, ըստ ՀՔԾ ուղարկված հարցման և այդ հարցման պատասխանի՝ «ՀՀ հատուկ քննչական ծառայության վիճակագրության վարման համար պարտադիր վիճակագրական դասակարգիչները, վիճակագրական տվյալների (տեղեկությունների) ցանկը և վիճակագրական հաշվետվությունների բովանդակության նկարագրությունը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն պետք է ներկայացվեր մինչ 2014 թ. նոյեմբերի առաջին տասնօրյակը: Մինչ այժմ ՀՀ կառավարության համապատասխան որոշումը չի ընդունվել:

Միննույն ժամանակ, ըստ ՀՔԾ պատասխանի՝ ՀՔԾ-ն բացառապես տեղեկատվական բնույթի հաշվետվություններ է ներկայացրել ՀՀ դատախազությանը 2008 թ. հոկտեմբերի 23-ի թիվ 1225-Ն որոշման համաձայն, իսկ այդ տեղեկատվությունը, դատախազության կողմից ամփոփվելով, ուղարկվել է ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն:

2.4 Ոստիկանության դեմ բողոքները անկախ և արդյունավետ լուծելու վերաբերյալ Մարդու իրավունքների հանձնակատարի Կարծիքում սահմանված սկզբունքների և ՀՀ օրենսդրության համեմատական վերլուծություն

36. Ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմինը պետք է լինի հաշվետու, իսկ նրա գործունեությունը՝ թափանցիկ: Ոստիկանության հարցերով յուրաքանչյուր օմբուդսմենը կամ ոստիկանության գործողությունների դեմ բողոքները քննող հանձնաժողովի հանձնակատարը պետք է նշանակվի և պատասխանատու լինի օրենսդրական մարմնին կամ հանձնաժողովի ընտրված ներկայացուցիչների կոմիտեին, որն անմիջական պատասխանատվություն չի կրում ոստիկանական ծառայություններ մատուցելու համար:¹²

Ոստիկանության ծառայողների նկատմամբ քրեական գործեր քննող ՀՔԾ գործունեության թափանցիկությունը գնահատելու նպատակով անհրաժեշտ է ուսումնասիրել այն եղանակները, որոնց միջոցով հասարակությունը կարող է ստանալ տեղեկատվություն այս մարմնի գործունեության վերաբերյալ: «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է, որ ՀՔԾ-ն տեղեկատվություն է հրապարակում իր գործունեության մասին, վարում է վիճակագրություն, ինչպես նաև հաղորդում է ներկայացնում ՀՀ նախագահին և ՀՀ կառավարությանը նախորդ տարվա իր գործունեության մասին: ՀՔԾ պաշտոնական կայքէջի ուսումնասիրությամբ պարզվել է, որ այնտեղ չեն պարունակվում վիճակագրական հաշվետվություններ: Յուրաքանչյուր նախորդ տարվա իրականացված գործունեության ամփոփման նպատակով ՀՔԾ խորհրդակցության վերաբերյալ հրապարակվող հակիրճ տեղեկատվություն, ներառում է սահմանափակ տվյալներ նախորդ տարի քննած գործերի և դրանց ընթացքի վերաբերյալ, որը սակայն չենք կարող համարել, որպես ամփոփ վիճակագրական տվյալներ: Եվ չնայած ՀՔԾ-ն պարբերաբար նաև հակիրճ տեղեկատվություն է ներկայացնում իր կողմից քննվող գործերի վերաբերյալ, գործերի քննության ընթացքի և վերջնական արդյունքի վերաբերյալ որպես կանոն տեղեկություն չի հրապարակվում:

ՀՀ Ազգային ժողովի՝ որպես օրենսդիր իշխանության և ներկայացուցչական մարմնի առջև հաշվետվությունների ներկայացման ընթացակարգ նույնպես սահմանված չէ: Ընդ որում, նման ընթացակարգ սահմանված է եղել մինչ 2014 թ. մայիս: 2014 թ. մայիսի 19-ին «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով մինչ այդ ՀՀ Ազգային ժողովին հաղորդման ներկայացնելու պարտավորության փոխարեն սահմանվել է ՀՀ կառավարությանը հաղորդում ներկայացնելու պարտավորությունը:

Այսպիսով, չնայած ՀՔԾ-ն ժամանակ առ ժամանակ և որոշակի չափով հրապարակում է իր գործունեության վերաբերյալ տեղեկատվություն, սակայն այն չի կարելի համարել բավարար ՀՔԾ գործունեության թափանցիկության և հաշվետվողականության ապահովման տեսակետից: Անհրաժեշտ է նաև ապահովել ՀՔԾ կողմից կազմվող վիճակագրական հաշվետվությունների, քննվող քրեական գործերի ընթացքի վերաբերյալ տեղեկատվության հրապարակայնությունը:

¹² Տե՛ս՝ օրինակ՝ «Խանն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Khan v UK) գործ (դիմում թիվ՝ 35394/97), 2000թ. հունիսի 27-ի վճիռ, § 46:

ՀՀ Կառավարությանը հաղորդում ներկայացնելու ՀՔԾ պարտավորությունը առանց համապատասխան ընթացակարգերի՝ հաղորդումը կառավարության նիստին ներկայացնելու, քննարկելու, առաջարկություններ ներկայացնելու և այլն, վկայում է ՀՔԾ-ի՝ Կառավարության առջև հաշվետվողականության ձևական բնույթի մասին: Իհարկե նման ընթացակարգերի բացակայության պարագայում կառավարությունը կարող է սեփական նախաձեռնությամբ լսել ՀՔԾ հաղորդումը, այնուամենայնիվ նշված ընթացակարգերի բացակայության պարագայում որևէ իրական ազդեցություն ՀՔԾ գործունեության արդյունավետության վրա չունի:

Մյուս կողմից ՀՔԾ –ի՝ ՀՀ նախագահին հաղորդում ներկայացնելու պարտավորությունը իր մեջ պարունակում է ՀՔԾ գործունեության նկատմամբ ՀՀ նախագահի ուղղակի և սուբյեկտիվ ազդեցության մեծ ռիսկեր, ինչը հանդիսանում է նաև ՀՔԾ գործունեության գնահատման չափորոշիչների և ընթացակարգերի բացակայության հետևանք: Այսպիսով, ներկայացուցչական մարմնին ՀՔԾ հաշվետվողականության պարտավորության փոխարինումը միայն ՀՀ կառավարության և ՀՀ նախագահին հաշվետվություն ներկայացնելու պարտավորությամբ մեծացնում է ՀՔԾ կախվածությունը ՀՀ նախագահից: Տվյալ պարագայում հարկ է նշել, որ ԱԺ առջև ՀՀ գլխավոր դատախազի կողմից ներկայացվող տարեկան հաղորդումների վերաբերյալ հստակեցված ընթացակարգը անհրաժեշտ է կիրառել նաև ԱԺ առջև ՀՔԾ հաշվետվողականության ապահովման համար:

37. Ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմնին պետք է հատկացնել բավարար պետական միջոցներ, որպեսզի այն կարողանա կատարել իր քննչական և վերահսկողական գործառնությունները: Նշված մարմնի քննիչները պետք է ունենան ոստիկանության աշխատակիցներին վերապահված բոլոր լիազորությունները, որպեսզի կարողանան իրականացնել արդար, անկախ և արդյունավետ քննություն:

Ըստ «Հատուկ քննչական ծառայության մասին» և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքների՝ ՀՔԾ-ն իրականացնում է միայն նախաքննություն, այն չունի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնելու լիազորություն, որը էական նշանակություն ունի ՀՔԾ կողմից ոստիկանության աշխատակիցների նկատմամբ քննվող գործերի արդյունավետությունն ապահովելու համար:

40. Ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմինը պետք է պատասխանատու լինի այնպիսի բողոքների քննության համար, որոնք առնչվում են.

- ՄԻԵԿ-ի 2-րդ կամ 3-րդ հոդվածով ամրագրված իրավունքների խախտմանը կամ
- քրեական կամ կարգապահական պատասխանատվության առաջացմանը:

Բացի այդ, ոստիկանությունը կարող է կամավոր բողոքարկուներին ուղղորդել ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմնի մասնագետների մոտ: Ոստիկանության գործունեության համար պատասխանատու Կառավարությունը կարող է

պահանջել, որպեսզի նշված մարմինն իրականացնի ոստիկանության գործունեությանն առնչվող որևէ հարցի քննություն, եթե, համարվի, որ դա բխում է հանրային շահերից է, կամ Ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմինը կարող է կոչ անել քննել ոստիկանության գործունեության հետ կապված որևէ հարց, եթե դա բխում է հանրության շահերից:¹³

ՀՔԾ մարմինները «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ կատարում են նախաքննություն ՀՀ ՔԴՕ-ով նախատեսված՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց իրենց պաշտոնական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործություններով, այդ թվում նաև ՄԻԵԿ 2-րդ և 3-րդ հոդվածով հոդվածով նախատեսված իրավունքների խախտման դեպքերում:

Ոստիկանության աշխատակիցների նկատմամբ կարգապահական վարույթը իրականացվում է ոստիկանության ներքին անվտանգության ծառայության կողմից, որը անկախ մարմին չէ, հանդիսանում է ոստիկանության կառուցվածքային միավորում:

46. Թե՛ բողոքարկուները և թե՛ նրանց իրավական ներկայացուցիչները կարող են դիմել ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության համակարգին մի շարք միջոցներով, այդ թվում՝

- դիմել անձամբ ոստիկանության տարածքում բողոք ներկայացնելու պատճառը հանդիսացող միջադեպից անմիջապես հետո կամ հետագայում,
- զանգահարել ոստիկանության բաժին կամ ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության մարմնի գրասենյակ,
- հեռապատճեն ուղարկել ոստիկանության բաժին կամ ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության մարմնի գրասենյակ,
- նամակ ուղարկել ոստիկանության բաժին կամ ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության մարմնի գրասենյակ,
- դիմել ոստիկանության բաժին կամ ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության մարմնի գրասենյակ էլեկտրոնային եղանակով, էլեկտրոնային փոստով կամ համաշխարհային համացանցի ընձեռնած միջոցներով:

ՀՔԾ կողմից քրեական գործ հարուցելու առիթ կարող են հանդիսանալ՝

- 1) հանցագործությունների մասին ֆիզիկական և իրավաբանական անձանց հաղորդումները՝ ուղղված հետաքննության մարմնին, քննիչին, դատախազին,
- 2) հանցագործությունների մասին լրատվության միջոցների հաղորդումները,

¹³ Տե՛ս՝ օրինակ՝ «Աքարն ընդդեմ Թուրքիայի» (Acar v Turkey) գործ (դիմում թիվ՝ 26307/95), 2004թ. ապրիլի 8-ի վճիռ, § 221:

3) հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի, դատավորի կողմից հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերումը՝ իրենց լիազորություններն իրականացնելիս (ՀՀ ՔԴՕ 176-րդ հոդված...):

Ընդ որում, չնայած սահմանված է, որ հաղորդումները կարող են ներկայացվել թե՛ գրավոր, թե՛ բանավոր, քննչական գործողություն կատարելիս կամ դատական քննության ընթացքում հանցագործության մասին արված բանավոր հաղորդումը ներառվում է համապատասխանաբար՝ քննչական գործողության կամ դատական նիստի արձանագրության մեջ, բայց ցանկացած դեպքում փաստաթուղթը պետք է ստորագրվի հաղորդում ներկայացնող անձի կողմից: Ֆիզիկական անձանց համար օրենսդրությունը ուղղակիորեն չի նախատեսում վավերացված հեռագրի, հեռախոսագրի, ռադիոգրի, էլեկտրոնային փոստի միջոցով հաղորդում ներկայացնելու հնարավորությունը:

Հաշվի առնելով իրավապահ մարմինների նկատմամբ քաղաքացիների անվստահությունը, անհրաժեշտ է դյուրինացնել ՀՔԾ մարմիններին համապատասխան հաղորդումների ներկայացման կարգը և ազատել լրացուցիչ վարչարարությունից, սահմանել բողոքներ ներկայացնելու ինչպես էլեկտրոնային եղանակներ, այնպես էլ ներկայացուցչի կողմից բողոք ներկայացնելու հնարավորություն: Անհրաժեշտ է արձանագրել, որ փաստաբանները նույնպես պետք է առավել նախաձեռնողական լինեն իրենց պաշտպանյալի կամ վստահորդի նկատմամբ իրավապահ մարմինների կողմից իրավախախտումների վերաբերյալ հաղորդում ներկայացնելու հարցում:

48. Ոստիկանության ժամանակավոր պահման վայրում գտնվելու ընթացքում կամ ոստիկանության գործողությունների արդյունքում մահվան կամ ծանր մարմնական վնասվածքի հանգեցրած բոլոր միջադեպերի մասին հարկավոր է հնարավորինս շուտ հայտնել ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմնին:¹⁴

ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում ՀՀ ոստիկանության կողմից ՀՀ ոստիկանության հսկողության ներքո գտնվող անձանց կամ նրանց մոտ լուրջ վնասվածքների առկայության վերաբերյալ ՀՔԾ-ին հայտնելու պահանջ:

53. Դաժան վերաբերմունքի կամ ոչ իրավաչափ գործողությունների վերաբերյալ դատական մարմին ներկայացված հաղորդումները պետք է հաշվառվեն և ուղղորդվեն Ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմնին այնտեղ ևս հաշվառվելու համար:¹⁶ Նույնը վերաբերում է դատական մարմին ներկայացվող վստահության արժանի ապացույցների ընթացակարգին:

¹⁴ Տե՛ս՝ օրինակ՝ «Ռամսահայն ընդդեմ Նիդերլանդների» (Ramsahai v The Netherlands) գործ (դիմում թիվ՝ 52391/99), 15 May 2007թ. մայիսի 15-ի վճիռ, § 339:

¹⁶ Տե՛ս՝ օրինակ՝ ԽԿԿ չափանիշներ, Գլուխ IX, § 28:

ՀՀ ՔԴՕ 176-րդ հոդվածի 3-րդ մասը որպես քրեական գործի հարուցման առիթ է սահմանում ի թիվս այլոց նաև դատարանի, դատավորի կողմից հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերումը՝ իրենց լիազորություններն իրականացնելիս: Սակայն սահմանված չէ հայտնաբերված տվյալների հիման վրա ՀՔԾ տեղեկատվություն հայտնելու պարտավորությունը: Գործնականում դատավորի նկատմամբ հստակ պարտավորության բացակայությունը կարող է հիմք տալ դատարաններին, դատավորներին չներկայացնելու հանցագործության մասին հաղորդումը: Նման պարտավորության սահմանումը էական նշանակություն ունի հատկապես վատ վերաբերմունքի դեպքերի կանխարգելման տեսակետից, քանի որ նման դեպքերով քննության բացակայության պարագայում դատաքննությունը դատավորի կողմից կարող է հանգեցնել արդար դատաքննության իրավունքի խախտմանը:

Այսպիսով, անհրաժեշտ է սահմանել դատական մարմինների կողմից, իրենց լիազորությունների իրականացման ընթացքում ոստիկանության անօրինական գործողությունների մասին հայտնի դառնալու դեպքում ՀՀ ոստիկանության և ՀՔԾ մարմիններին տեղեկատվության փոխանցման հստակ ընթացակարգ, ինչպես նաև յուրաքանչյուր դեպքում քննություն իրականացնելու ՀՔԾ մարմինների պարտավորությունը:

3. ՀՀ դատախազությունը

«Դատախազական ծառայությունը, որը անվախ է և պաշտպանում է իր անկախությունը և անաչառությունը, ազատ է քաղաքական վերահսկողությունից և ուղղորդումից, կլինի անկախության և ազատության պաշտպան»¹⁹

3.1. ՀՀ դատախազության համակարգի կազմավորման, ղեկավարման կարգը

Ըստ ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի՝ ՀՀ դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը:

Դատախազությունը կազմավորված է ՀՀ գլխավոր դատախազությունից, զինվորական կենտրոնական դատախազությունից, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների, մարզերի դատախազություններից, կայազորների զինվորական դատախազություններից («Դատախազության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մաս):

ՀՀ գլխավոր դատախազը նշանակվում է ՀՀ Ազգային ժողովի կողմից ՀՀ նախագահի առաջարկությամբ: «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով սահմանված է դատախազությունում պաշտոնի նշանակվելու համար ներկայացվող ընդհանուր պահանջները: Մասնավորապես սահմանված է, որ Դատախազ կարող է նշանակվել ՀՀ-ում մշտապես բնակվող ՀՀ այն քաղաքացին, ով՝

1) ՀՀ-ում ստացել է բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ նմանատիպ աստիճան է ձեռք բերել օտարերկրյա պետությունում, որի ճանաչումն ու համարժեքության հաստատումը ՀՀ-ում իրականացվել են օրենքով սահմանված կարգով,

2) տիրապետում է գրական հայերենին: Սահմանված չեն գլխավոր դատախազի պաշտոնում նշանակվելու, առաջադրվելու համար նախատեսված նվազագույն չափանիշները:

ՀՀ գլխավոր դատախազ նշանակելու և պաշտոնանկ անելու մասին ՀՀ Ազգային ժողովը ընդունում է որոշում, որը ստորագրում և հրապարակում է Ազգային ժողովի նախագահը: Գլխավոր դատախազի պաշտոնանկ անելու առաջարկությամբ ՀՀ ԱԺ-ին կարող է դիմել ՀՀ նախագահը օրենքով սահմանված դեպքերում, մասնավորապես, եթե՝

1) նա հիվանդացել է ծանր հիվանդությամբ, որը տևական ժամանակահատվածով խոչընդոտում է կամ խոչընդոտելու է իր պարտականությունների կատարմանը,

2) իր պարտականությունները չի կատարում պատշաճ,

¹⁹ From: Attorney General's Office and The Rt Hon Dominic Grieve QC MP
Delivered on: 9 September 2013 (Original script, may differ from delivered version)
Location: The 18th Annual Conference and General Meeting of the International Association of Prosecutors, Moscow
¹⁹ <https://www.gov.uk/government/speeches/the-rule-of-law-and-the-prosecutor>

3) դրսևորել է դատախազության հեղինակությունը վարկաբեկող կամ ոչ վայել վարքագիծ, կամ

4) առկա են լիազորությունների կատարման այլ անհաղթահարելի խոչընդոտներ: («Դատախազության մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մաս):

Ընդ որում ՀՀ գլխավոր դատախազ նշանակելու մասին ՀՀ Ազգային ժողովի որոշումը ընդունվում է քվեարկությանը մասնակցած պատգամավորների ձայների մեծամասնությամբ (ՀՀ Սահմանադրության 71-րդ հոդված), իսկ Գլխավոր դատախազի պաշտոնանկ անելու մասին որոշումը ընդունվում է Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալները նշանակվում են ՀՀ նախագահի կողմից գլխավոր դատախազի առաջարկությամբ: Ի տարբերություն գլխավոր դատախազի, գլխավոր դատախազի տեղակալների պաշտոնում նշանակվելու հավակնորդներին առաջադրվում են հատուկ պահանջներ: Մասնավորապես, Գլխավոր դատախազի տեղակալի պաշտոնում կարող է նշանակվել այն անձը, ով ունի դատավորի, դատախազի, փաստաբանի, քննիչի, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնում իրավաբանի մասնագիտությամբ աշխատանքի առնվազն հինգ տարվա ստաժ կամ իրավաբանի մասնագիտությամբ այլ աշխատանքի առնվազն տասը տարվա ստաժ («Դատախազության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մաս):

ՀՀ գլխավոր դատախազը ի հերթին նշանակում է՝

- Գլխավոր դատախազության դատախազներին,
- Գլխավոր դատախազության վարչությունների և բաժինների կազմում գործող դատախազներին,
- Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների, մարզերի և կայազորների զինվորական դատախազությունների դատախազներին,
- Զինվորական կենտրոնական դատախազության դատախազներին,
- Զինվորական կենտրոնական դատախազության բաժինների կազմում գործող դատախազներին

- դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված այն անձանց թվից, որոնք ավարտել են ուսումնառությունը, դատախազական դպրոցում հաջողությամբ հանձնել են որակավորման քննությունը կամ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 10-րդ մասի հիման վրա ազատված են եղել դատախազական դպրոցում ուսումնառությունից: Այսինքն, եթե անձը. 1) ունի դատախազի, դատավորի, քննիչի պաշտոնում կամ փաստաբանի 3 տարվա մասնագիտական աշխատանքի ստաժ, եթե չի անցել այդ պաշտոնը թողնելուց հետո 5 տարի. 2) իրավաբանական գիտությունների դոկտոր է. 3) իրավաբանական գիտությունների թեկնածու է և ունի իրավաբանի մասնագիտությամբ աշխատանքի 5 տարվա ստաժ:

- Գլխավոր դատախազության ավագ դատախազներին,
- Գլխավոր դատախազության բաժինների պետերին,

- Գլխավոր դատախազության վարչությունների պետերի տեղակալներին,
- Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների, մարզերի և կայազորների զինվորական դատախազների տեղակալներին,
- Զինվորական դատախազի տեղակալներին,
- Գլխավոր դատախազության վարչությունների և բաժինների կազմում գործող ավագ դատախազներին,
- Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների, մարզերի և կայազորների զինվորական դատախազությունների ավագ դատախազներին,
- Զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազներին,
- Զինվորական կենտրոնական դատախազության բաժինների կազմում գործող ավագ դատախազներին
 - դատախազների առաջխաղացման ցուցակում ընդգրկված անձանց թվից:
- Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների, մարզերի դատախազներին,
- Կայազորների զինվորական դատախազներին,
- Գլխավոր դատախազության վարչությունների պետերին
 - դատախազների առաջխաղացման ցուցակում ընդգրկված անձանց թվից, եթե որակավորման հանձնաժողովը դրական եզրակացություն է տալիս այդ անձին համապատասխան պաշտոնում նշանակելու համար:

Դատախազների պաշտոնների համալրման նպատակով Որակավորման հանձնաժողովի կողմից կազմվում են դատախազների թեկնածությունների և դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակները:

Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելուն հավակնող անձը պարտավոր է ներկայացնել մի շարք փաստաթղթեր: Ներկայացման պարտադիր փաստաթղթերի ցանկում թերևս առանձնակի ուշադրության է արժանի դատախազի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին կառավարության կողմից սահմանված կարգով տրված փաստաթղթի անհրաժեշտությունը: Համաձայն 2007 թվականի նոյեմբերի 15-ի «Դատախազի և ՀՀ դատախազության աշխատակազմի պետական ծառայողի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների ցանկը սահմանելու և դատախազի ու ՀՀ դատախազության աշխատակազմի պետական ծառայողի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության վերաբերյալ տեղեկանք տրամադրելու մասին» ՀՀ կառավարության թիվ 1348-Ն որոշման՝ թե՛ դատախազի, թե՛ ՀՀ դատախազության աշխատակազմի պետական ծառայողի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող կարող են համարվել այնպիսի ֆիզիկական խնդիրներ, ինչպիսիք են

1. տեսողության սրության իջեցում՝ լավ տեսնող աչքում 0,03 և ցածր,
2. դժվարալսության երրորդ և բարձր աստիճան,

3. խոսքի արտահայտված խանգարում և համրություն,

4. ձևախախտումային խանգարումներ՝ դեմքի, գլխի, մարմնի, վերջույթների կառուցվածքային դեֆորմացիա, արտահայտված արտաքին այլանդակություն, մարսողական, միզարձակման, շնչառական ուղիների ոչ նորմալ բացվածքներ, մարմնի չափսերի խանգարումներ, գիզանտիզմ, գաճաճություն, կախեքսիա, գերզիբություն:

Անհրաժեշտ է նշել, որ նույնիսկ եթե ֆիզիկական հաշմանդամության տվյալ տեսակի առկայությունը կարող է օբյեկտիվորեն խոչընդոտել դատախազի կողմից իրականացվող աշխատանքներին, ապա նման ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձանց համապատասխան գիտելիքների և ունակությունների տիրապետման դեպքում ՀՀ դատախազության աշխատակազմում աշխատելու համար որպես միանշանակ խոչընդոտող համարելը կարող է վիճելի լինել: Նման իրավական կարգավորումները կարող են հակասել խտրականության կանխարգելման և հաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքի, աշխատանքային իրավունքը սահմանող մի շարք իրավական ակտերին, ներառյալ ՀՀ Սահմանադրությանը, ՄԱԿ-ի մարդու իրավունքների համընդհանուր չափորոշիչներին:

ՀՀ դատախազության համակարգը և ղեկավարումը

ՀՀ դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է ՀՀ գլխավոր դատախազը (ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի 1-ին մաս): ՀՀ գլխավոր դատախազն իրավասու է իրականացնելու ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները ՀՀ ամբողջ տարածքում: Նա ղեկավարում է ՀՀ դատախազության աշխատանքները, սահմանում է դատախազության սահմանադրական լիազորությունների իրականացման քաղաքականությունը և ապահովում դրա իրականացման նկատմամբ վերահսկողությունը, դատախազության հաստիքների քանակը՝ օրենքով նախատեսված աշխատավարձի ֆոնդի շրջանակներում, հաստատում է «Դատախազի վարքագծի կանոնագիրքը», դատախազության աշխատակազմի կանոնադրությունը, հաստատում և փոփոխում է դատախազության աշխատակազմում պետական ծառայողների պաշտոնների անվանացանկը և հաստիքների քանակը և այլն:

ՀՀ դատախազության համակարգը ներառում է՝

- Գլխավոր դատախազությունը, ղեկավար՝ ՀՀ գլխավոր դատախազ,
- Երևան քաղաքի դատախազություն, ղեկավար՝ Երևան քաղաքի դատախազ,
- Երևան քաղաքի վարչական շրջանի դատախազություն (թվով 7), ղեկավար՝ Երևան քաղաքի վարչական շրջանի դատախազ,
- Մարզի դատախազություն (թվով 10)՝ ղեկավար Մարզի դատախազ,
- Զինվորական կենտրոնական դատախազություն, կենտրոնը՝ քաղաք Երևան, ղեկավար՝ Զինվորական դատախազ,

- Կայագործի զինվորական դատախազություն՝ ըստ զինված ուժերի տեղաբաշխման (թվով 9), ղեկավար՝ կայագործի զինվորական դատախազ:

Դատախազության յուրաքանչյուր տարածքային կառուցվածքային ստորաբաժանում իրականացնում է ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածով սահմանված լիազորությունները, այնքանով, որքանով դա վերապահված չէ զինվորական դատախազությանը, մասնավորապես՝

- Երևան քաղաքի վարչական շրջանի (վարչական շրջանների) դատախազությունը՝ Երևան քաղաքի վարչական շրջանի (վարչական շրջանների) տարածքում, այնքանով, որքանով դա վերապահված չէ Երևան քաղաքի դատախազությանը,

- Երևան քաղաքի դատախազությունը՝ Երևան քաղաքում²⁰,
- Մարզի դատախազությունը՝ մարզում,
- Գլխավոր դատախազը՝ ՀՀ ամբողջ տարածքում:

Զինվորական դատախազությունը ապահովում է Սահմանադրության 103-րդ հոդվածով նախատեսված լիազորությունների իրականացումը զինված ուժերում, Կայագործի զինվորական դատախազությունը՝ զինվորական կայագործում:

ՀՀ դատախազության կառուցվածքի հիմքում ընկած է աշխարհագրական՝ ըստ ՀՀ վարչատարածքային և զինված ուժերի տեղաբաշխման (Զինվորական դատախազության) և ըստ գործառույթների տարանջատման սկզբունքը:

ՀՀ գլխավոր դատախազը իր գործառույթները իրականացնում է տեղակալների միջոցով: Եթե զինվորական դատախազի՝ որպես գլխավոր դատախազի տեղակալի գործառույթները հստակ սահմանված են, ապա մյուս տեղակալների գործառույթների վերաբերյալ իրավական հասանելի ակտերը բացակայում են:

Ներկայումս ՀՀ գլխավոր դատախազության կազմում գործում են հետևյալ վարչությունները և բաժինները՝


- Հատկապես կարևոր գործերով քննության վարչություն,
- Հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչություն,
- Մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչություն,
- ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված և կիրքերի անցագործությունների գործերով վարչություն
- Պետական շահերի պաշտպանության վարչություն,

²⁰ ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով, ինչպես նաև քրեական գործերով Սահմանադրության 103-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով սահմանված լիազորությունները Երևան քաղաքի դատախազությունը իրականացնում է այն դեպքերում, երբ մինչդատական վարույթն իրականացնում են մինչդատական վարույթ իրականացնող քաղաքային մարմինները: Սակայն այս դրույթը չի սահմանափակում Երևան քաղաքի դատախազի իրավասությունները՝ որպես վերադաս դատախազ:

Երևան քաղաքի դատախազը նաև իրականացնում է Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազությունների աշխատանքների ընդհանուր ղեկավարում:

- Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչություն,
- Կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություն,
- Վերահսկողական-տեսչական վարչություն,
- Իրավական ապահովման և եվրաինտեգրման բաժին,
- Միջազգային իրավական կապերի բաժին:

ՀՀ դատախազության համակարգի և ղեկավարման սկզբունքների ուսումնասիրության տեսակետից անհրաժեշտ է **Դատախազության համակարգում ծառայողական ենթակայության վերաբերյալ դրույթների ուսումնասիրությունը** (տես՝ նկ. 1):



Նկար 1.

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածում օգտագործվում են անմիջականորեն վերադաս և վերադաս դատախազ եզրույթները: Մասնավորապես սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված են անմիջականորեն վերադաս դատախազի լիազորությունները: Այսպես, անմիջականորեն վերադաս դատախազը իրականացնում է հետևյալ գործառնությունները.

1) հետևում է դատախազների աշխատանքային կարգապահության պահպանմանը, խախտում հայտնաբերելիս անհրաժեշտության դեպքում համապատասխան հաղորդում է ներկայացնում գլխավոր դատախազին,

2) հետևում է դատախազի՝ օրենքով սահմանված պարտականությունների կատարման օրինականությանը, խախտում հայտնաբերելիս ցուցում է տալիս ստորադաս դատախազին, անհրաժեշտության դեպքում համապատասխան հաղորդում է ներկայացնում գլխավոր դատախազին,

3) դատախազի կողմից վարքագծի կանոնադրքի պահանջների խախտում հայտնաբերելիս անհրաժեշտության դեպքում համապատասխան հաղորդում է ներկայացնում գլխավոր դատախազին,

4) դատախազի արձակուրդի կամ ժամանակավոր այլ բացակայության դեպքում ըստ անհրաժեշտության վերաբաշխում է նրա պարտականություններն այլ դատախազների միջև,

5) իրականացնում է օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ:

Միննույն ժամանակ սահմանված է, որ դատախազության գործունեության կազմակերպման հարցերով վերադաս դատախազի կողմից ստորադաս դատախազին տրված կարգադրությունները և հանձնարարականները պարտադիր են:

Վերադաս դատախազը՝

- իրավասու է վերացնելու կամ փոփոխելու ստորադաս դատախազի ընդունած ակտերը, բացառությամբ սույն օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքի («Դատախազության մասին» ՀՀ օրենքի 31 -րդ հոդվածի 8-րդ մաս),

- քննարկում և լուծում է ստորադաս դատախազի ակտերի և գործողությունների (անգործության) դեմ բերված բողոքները («Դատախազության մասին» ՀՀ օրենքի 31 -րդ հոդվածի 9-րդ մաս)

Հատկանշական է նշել, որ տվյալ դրույթներում խոսքը գնում է ոչ թե անմիջականորեն վերադաս, այլ առհասարակ տվյալ դատախազի նկատմամբ վերադաս համարվող դատախազի մասին: Այսպիսով ըստ օրենքի տվյալ դատախազի նկատմամբ վերադաս համարվող բոլոր դատախազներն իրավասու են վերացնելու կամ փոփոխելու ստորադաս դատախազի ընդունած ակտերը, բացառությամբ այն դեպքերի, երբ ստորադաս դատախազն իրականացնում է հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու լիազորությունները, այն էլ եթե դա նախատեսված չէ օրենքով: Այս բացառությունը բխում է հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ

հսկողություն իրականացնելիս դատախազի ինքնուրույնության և առանց վերադաս դատախազի թույլտվության և համաձայնության գործելու սկզբունքից:

Ստորադաս դատախազը իր հերթին պարտավոր է՝

- վերադաս դատախազի պահանջով նրան ներկայացնել իր գործունեության մասին հաշվետվություններ, տեղեկատվություն, իր վարույթում գտնվող գործերը և նյութերը,
- կատարել վերադաս դատախազի բոլոր օրինական ցուցումները, բացառությամբ սույն օրենքի 25-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքի:

Այն դեպքում, երբ հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի վերադաս դատախազի ցուցումն անհիմն կամ անօրինական է, առաջինը պարտավոր է հրաժարվել այն կատարելուց, անհապաղ գրավոր իրազեկելով ցուցում տված վերադաս դատախազին, որն իրավունք ունի անձամբ ստանձնելու հսկողությունը կամ դրա իրականացումը հանձնարարելու մեկ այլ դատախազի («Դատախազության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 4-րդ մաս):

Միևնույն ժամանակ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 12-րդ մասի դրույթների համաձայն՝ վերադաս դատախազի կողմից տրված ցուցումների, կարգադրությունների կամ հանձնարարականների հետ համաձայն չլինելու դեպքում դատախազը կարող է դրանք բողոքարկել ցուցում կամ հանձնարարական տված դատախազի վերադասին: Բողոքարկելը չի վերացնում ցուցումի, կարգադրության կամ հանձնարարականի կատարման պարտադիր լինելը, բացառությամբ այն դեպքի, երբ դատախազը համարում է, որ ցուցումն անօրինական է:

Այսպիսով, դատախազների՝ ըստ ենթակայության հարաբերությունները կարգավորող նորմերի վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ բացակայում են բավարար իրավական երաշխիքները դատախազի անկախության, հատկապես, ստորադաս դատախազի գործունեությանը ոչ իրավաչափ միջամտություններից զերծ պահելու համար: Դատախազության համակարգում դատախազի անկախության իրավական պաշտպանության մեխանիզմները բավարար չեն:

3.2. ՀՀ դատախազության լիազորությունները և դրանց իրականացումը

ՀՀ դատախազության լիազորությունները սահմանված են ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածով: Այսպես, ՀՀ դատախազությունը.

- 1) հարուցում է քրեական հետապնդում,
- 2) հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ,
- 3) դատարանում պաշտպանում է մեղադրանքը,
- 4) պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան,

5) բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները,

6) հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ:

Վերոնշյալ լիազորություններից երեքը՝ քրեական հետապնդման հարուցումը, հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության իրականացումը, դատարանում մեղադրանքի պաշտպանությունը, դատախազը իրականացնում է բացառապես քրեական վարույթի շրջանակներում: Ուստի տվյալ լիազորությունների շրջանակներում կարգավորումները սահմանված են նաև ՀՀ ՔՕ-ով, ՀՀ ՔԴՕ-ով, մի շարք այլ իրավական ակտերով: «ՀՀ դատախազության կանոնակարգով» մանրամասն սահմանված են Գխավոր դատախազության և ՀՀ դատախազության ստորաբաժանումների լիազորությունների շրջանակը:

Քրեական հետապնդում հարուցելու լիազորությունը

Ըստ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի՝ քրեական հետապնդման հարուցումը դատախազի բացառիկ լիազորությունն է:

ՀՀ ՔԴՕ-ով սահմանված են քրեական դատավարության շրջանակներում դատախազի լիազորությունները ինչպես մինչդատական վարույթում, այնպես էլ քրեական գործը կամ նյութերը դատարանում քննելիս:

Քրեական հետապնդում հարուցելու լիազորության տեսանկյունից անհրաժեշտ է անդրադառնալ ՀՀ ՔԴՕ-ով սահմանված հետևյալ լիազորություններին՝ դատախազը լիազորված է հարուցել և իրականացնել քրեական հետապնդում, վերացնել քննիչի կայացրած որոշումը քրեական գործը կարճելու մասին, դատարանի միջնորդության հիման վրա հարուցել քրեական գործ, վերացնել հետաքննության մարմնի և քննիչի որոշումը քրեական գործի հարուցումը մերժելու մասին և հարուցել քրեական գործ, ինչպես նաև իր նախաձեռնությամբ հարուցել քրեական գործ: Այսպիսով, դատախազը լիազորված է հարուցել քրեական գործ ինչպես իր նախաձեռնությամբ, այնպես էլ դատարանի միջնորդության հիման վրա, ինչպես նաև հետաքննության մարմնի և քննիչի որոշումը քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը կամ քննիչի կայացրած որոշումը քրեական գործը կարճելու մասին որոշումը վերացնելով:

ՀՀ ՔԴՕ 6-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ քրեական հետապնդման հարուցումը քրեական հետապնդման մարմնի որոշումն է անձին որպես մեղադրյալ ներգրավելու, ինչպես նաև մինչև այդ նրան ձերբակալելու կամ նրա նկատմամբ խափանման միջոց կիրառելու մասին: Ըստ ՔԴՕ 55-րդ հոդվածի 4-րդ մասի 13-րդ և 14-րդ կետերի՝ քննիչը լիազորված է ձերբակալել հանցագործության համար կասկածվող անձին և որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում ուղարկել դատախազին, որոշում կայացնել անձին քրեական գործով որպես մեղադրյալ ներգրավելու մասին, մեղադրանք առաջադրել, այդ մասին 24 ժամվա

ընթացքում տեղյակ պահել դատախազին: Այսպիսով, ըստ ՀՀ ՔԴՕ-ի քննիչը նույնպես լիազորություն ունի հարուցելու քրեական հետապնդում՝ պարտադիր ծանուցելով դատախազին: Մինևույն ժամանակ ՀՀ ՔԴՕ 55-րդ հոդվածի 4-րդ մասի 26-րդ կետի համաձայն՝ քննիչը լիազորված է բողոքարկել դատախազի յուրաքանչյուր ցուցումը՝ չկասեցնելով դրա կատարումը, իսկ 103-րդ հոդվածի համաձայն՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի գործողությունները և որոշումները կարող են նույն օրենսգրքով սահմանված կարգով բողոքարկվել դատավարության մասնակիցների կողմից:

Հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու լիազորությունը

Հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու կարգը և սահմանները սահմանված են «Դատախազության մասին» ՀՀ օրենքով և ՀՀ ՔԴՕ-ով: Գլխավոր դատախազության գործունեության ուղղությունները ներկայացված են նաև ՀՀ դատախազության կանոնակարգի 24-րդ հոդվածով:

Ըստ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի՝ հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն, որպես կանոն, իրականացնում է սովյալ քրեական գործով քրեական հետապնդում հարուցած դատախազը, բացառությամբ, երբ նրան օրենքով նախատեսված դեպքերում փոխարինում է վերադաս դատախազը: Մինևույն ժամանակ, այն դեպքում, երբ քրեական հետապնդումը հարուցվել է վերադաս դատախազի կողմից, դատախազական հսկողությունը, վերադաս դատախազի կողմից կարող է հանձնարարվել ստորադաս դատախազին:

ՀՀ ՔԴՕ-ում օգտագործվում է նաև հետաքննության և նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում եզրույթը, որի իրականացումը հանդիսանում է դատախազի բացառիկ լիազորությունը (ՀՀ ՔԴՕ 53-րդ հոդվածի 3-րդ մաս): Սակայն դատավարական ղեկավարումը որպես լիազորություն հիշատակված չէ ո՛չ «Դատախազության մասին» ՀՀ օրենքում, ո՛չ էլ ՀՀ Սահմանադրության մեջ: Դատավարական ղեկավարումը, ըստ բովանդակության, արտացոլում է դատախազի կողմից հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու լիազորությունը: Ընդ որում, ՀՀ ՔԴՕ 53-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավարական ղեկավարման բացառիկ լիազորությունների շրջանակում նշված են՝

1) ստուգել կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների, այլ դեպքերի վերաբերյալ հաղորդումների ընդունման, գրանցման և լուծման մասին օրենքի պահանջների կատարումը հետաքննության մարմնի կողմից,

2) ստուգման համար հետաքննության մարմնից, քննիչից պահանջել նյութեր, փաստաթղթեր, քրեական գործեր և քննության ընթացքի մասին տեղեկություններ, ինչպես նաև ծանոթանալ դրանց կամ դրանք ստուգել նրանց գտնվելու վայրում,

3) ցանկացած քրեական գործ վերցնել հետաքննության մարմնից և հանձնել նախաքննության մարմնին, քրեական գործը սույն օրենսգրքի 190 հոդվածով սահմանված

նախաքննության մի մարմնից հանձնել նախաքննության մեկ այլ մարմնին՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն ապահովելու նպատակով,

4) անհրաժեշտության դեպքում քննչական բաժնի պետին գրավոր ցուցում տալ գործի քննությունը քննչական խմբի կողմից կատարելու վերաբերյալ, ինչպես նաև ցուցում տալ նախաքննություն իրականացնող տարբեր մարմինների քննչական բաժինների պետերին՝ այդ մարմինների քննիչներից ստեղծված քննչական խմբում ներառելու վերաբերյալ,

5) լուծել հետաքննության մարմնի աշխատակցին, քննիչին, ստորադաս դատախազին հայտնված բացարկի, ինչպես նաև վերջիններիս ինքնաբացարկի հարցերը,

6) հետաքննության մարմնին, քննիչին գրավոր ցուցումներ տալ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու, որոշումներ ընդունելու վերաբերյալ,

7) լուծել հետաքննության մարմնի կամ նրա աշխատակցի և քննիչի՝ սույն օրենսգրքով նախատեսված առարկությունները՝ դատավարական ղեկավարում իրականացնող ստորադաս դատախազի ցուցումների վերաբերյալ,

8) գործի քննության օրինականությունն ապահովելու նպատակով հսկողություն իրականացնող դատախազին տալ գրավոր ցուցումներ,

9) լուծել հետաքննության մարմնի, քննիչի որոշումների և գործողությունների դեմ բերված բողոքները, բացառությամբ այն բողոքների, որոնց լուծումն օրենքով վերապահված է դատարանին,

10) հետաքննության մարմնի աշխատակցին, քննիչին հեռացնել տվյալ գործով քրեական դատավարությանը մասնակցելուց, եթե գործի քննության ընթացքում նրանք թույլ են տվել օրենքի խախտում,

11) դիմել համապատասխան մարմիններ քրեական հետապնդման անձեռնմխելիությունից օգտվող անձանց կալանավորման հարցը լուծելու, քրեական պատասխանատվության ենթարկելու միջնորդություններով, եթե այդ անձինք քրեական գործով պետք է ներգրավվեն որպես մեղադրյալ,

12) վերադարձնել քրեական գործերը քննիչին՝ լրացուցիչ քննություն կատարելու համար պարտադիր ցուցումներով,

13) վերացնել հետաքննության մարմնի կամ քննիչի որոշումը քրեական գործով վարույթը կարճելու մասին, ինչպես նաև նրանց այլ որոշումներ՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում,

14) հաստատել մեղադրական եզրակացությունը, իսկ այն անձանց նկատմամբ քրեական գործերով, որոնք քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը կատարել են անմեղսունակ վիճակում կամ անմեղսունակ են դարձել քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը կատարելուց հետո՝ եզրափակիչ որոշումը,

15) գործն ուղարկել դատարան՝ ըստ էության քննելու համար:

ՀՀ ՔԴՕ 53-րդ հոդվածի 3-րդ մասով Դատախազի կողմից դատավարական ղեկավարման շրջանակներում որպես իրավասություններ նշված են՝

1) իր իրավասության շրջանակներում հետաքննության մարմնից տեղեկություններ ստանալ օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման և հանցագործությունների բացահայտման, անհայտ կորած անձանց և կորած գույքի հայտնաբերման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների մասին,

2) պահանջել փաստաթղթեր, նյութեր և գործեր, որոնք կարող են տեղեկություններ պարունակել դեպքերի և դրանց առնչվող անձանց մասին,

3) հետաքննության մարմնին պարտադիր գրավոր ցուցումներ տալ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման մասին՝ կապված քրեական գործով վարույթի հետ,

4) դիմել դատարան՝ մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և նրան կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վրա կալանք դնելու, հեռախոսային խոսակցությունները լսելու, բնակարանի խուզարկության միջնորդություններով,

5) հրաժարվել մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց, կարճել քրեական գործով վարույթը կամ դադարեցնել քրեական հետապնդումը,

6) հետաքննության մարմնին՝ հանձնարարել իրականացնել ձերբակալման, բերման ենթարկելու, կալանավորման, այլ դատավարական գործողություններ կատարելու վերաբերյալ որոշումները,

7) միջոցներ ձեռնարկել տուժողի, վկայի և քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանց պաշտպանության համար,

8) դիմել դատարան՝ ՀՀ ՔԴՕ նախատեսված միջնորդություններով,

9) ազատել առանց օրինական հիմքերի կամ առանց անհրաժեշտության ձերբակալված կամ կալանավորված անձանց,

10) անհրաժեշտությունը վերանայու դեպքում վերացնել նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակումները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, որպես դատավարական ղեկավարման շրջանակներում նշված լիազորություններ կարելի է դիտարկել, հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելուն ուղղված գործառնություններ: Միննույն ժամանակ, նկատում ենք, որ ՀՀ ՔԴՕ-ն դատախազին վերապահում է նաև նախաքննություն իրականացնելուն ուղղված լիազորություններ:

Թե՛ ըստ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի, թե՛ ըստ ՀՀ ՔԴՕ հետաքննության և նախաքննության հանդեպ հսկողություն իրականացնելիս դատախազն ինքնուրույն է և գործում է առանց վերադաս դատախազի թույլտվության և համաձայնության: Միննույն ժամանակ, վերադաս դատախազը իրավասու է տալ ցուցումներ, որոնք պետք է լինեն գրավոր, և որոնք ստորադաս դատախազի համար կրում են պարտադիր բնույթ: Ստորադաս դատախազը

համաձայն չլինելով ցուցումներին, իրավունք ունի այն չկատարելու և բողոքարկելու ըստ վերադասության:

Որպես հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության գործուն միջոց կարելի է առանձնացնել դատախազի՝ հետաքննություն կամ նախաքննություն իրականացնող համապատասխան մարմնին հետաքննություն կամ նախաքննություն իրականացնող անձի նկատմամբ ծառայողական քննություն անցկացնելու միջնորդությամբ դիմելու լիազորությունը: Նման միջնորդությունն ուղարկվում է խախտում թույլ տված պաշտոնատար անձի վերադասին, որը պարտավոր է այն ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, սկսել ծառայողական քննությունը: Դատախազության կողմից ծառայողական քննության ընթացքին հետամուտ լինելու մեխանիզմներ սահմանված չեն:

Դատարանում մեղադրանքի պաշտպանությանն ուղղված լիազորությունը

Քրեական դատավարության շրջանակներում դատախազը նաև իրականացնում է մեղադրանքի պաշտպանությունը դատարանում՝ հանդես գալով որպես մեղադրող: Ըստ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի՝ մեղադրանքի պաշտպանությունը դատարանում, որպես կանոն, իրականացնում է տվյալ քրեական գործով հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացրած դատախազը, բացառությամբ, երբ նրան օրենքով նախատեսված դեպքերում փոխարինում է վերադաս դատախազը:

Դատարանում որպես մեղադրող հանդես գալով՝ դատախազը մեղադրանքի պաշտպանությունը իրականացնելիս լիազորված է՝

- 1) հայտնել բացարկներ,
- 2) հարուցել միջնորդություններ,
- 3) կարծիք հայտնել դատավարության մյուս մասնակիցների հարուցած միջնորդությունների վերաբերյալ,
- 4) ներկայացնել ապացույցներ, հետաքննության մարմնին նրա համար պարտադիր հանձնարարություններ տալ ապահովելու դատարանին ապացույցներ ներկայացնելը,
- 5) մասնակցել գործի նյութերի հետազոտմանը,
- 6) բողոքել մյուս կողմի անօրինական գործողությունների դեմ,
- 7) առարկել նախազահողի անօրինական գործողությունների դեմ,
- 8) պահանջել դատական նիստի արձանագրության մեջ գրառումներ կատարելու իր նշած հանգամանքների մասին,
- 9) հրաժարվել մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց,
- 10) դատարանում հրապարակել մեղադրական եզրակացությունը, առաջին աստիճանի և վերաքննիչ դատարանում հանդես գալ ճառով և ռեպլիկով, իսկ Վճռաբեկ դատարանում՝ ներկա գտնվել նիստին,
- 11) բողոքարկել դատարանի դատավճիռները, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ դատարանի այլ որոշումներ,
- 12) օգտվել սույն օրենսգրքով նախատեսված այլ լիազորություններից:

Դատախազի իրավունքները և պարտավորությունները սահմանված են և ՀՀ ՔԴՕ-ով, և «Դատախազության մասին» ՀՀ օրենքով: Մասնավորապես «Դատախազության մասին» ՀՀ օրենքով սահմանված է, դատախազի՝ որպես մեղադրողի հետևյալ պարտավորությունը՝ ՀՀ ՔԴՕ-ով նախատեսված դեպքերում հրաժարվել մեղադրանքից («Դատախազության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մաս): ՀՀ ՔԴՕ-ով սահմանված է, որ մեղադրողը, դատարանում հայտնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, պարտավոր է հայտարարել ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին:

Դատախազի միևնույն գործառույթի տարաբնույթ սահմանումը տարբեր օրենքներով կարող է հող ստեղծել հայեցողական կիրառման և չարաշահումների համար:

Դատախազը քրեական հետապնդումից հրաժարվում է հետևյալ դեպքերում՝

- եթե մեղադրողը դատարանում հայտնաբերում է քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ,
- երբ տուժողը հաշտվում է կասկածյալի կամ մեղադրյալի հետ ՀՀ ՔԴՕ 33-րդ հոդվածի երկրորդ մասում նշված հանցագործությունների վերաբերյալ գործերով,

Եթե իր /դատախազի/ համոզմամբ մեղադրանքը չի հաստատվել դատական քննության ընթացքում:

Ընդ որում քրեական հետապնդում իրականացնելուց դատախազի հրաժարվելը մեկ դեպքում սահմանված է որպես պարտավորություն, մյուս դեպքում որպես լիազորություն, և մեկ այլ դեպքում՝ որպես իրավասություն (տե՛ս «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մաս, ՀՀ ՔԴՕ 53-րդ հոդվածի 3-րդ մասի վեցերորդ կետ, 54-րդ հոդվածի 1-ին մասի իններորդ կետ):

Այսինքն օրենսդիրը մի կողմից դատախազի համար սահմանել է պարտավորություն, իսկ մյուս կողմից այդ որոշման կայացումը թողնված է դատախազի սուբյեկտիվ գնահատմանը:

Նշված դեպքերում դատախազի գործառույթը կա՛մ պետք է սահմանվի որպես պարտավորություն, կա՛մ լիազորություն, կա՛մ իրավասություն, կա՛մ առանձին դեպքերում պետք է սահմանվեն տարբեր մոտեցումներ, որոնք հստակորեն ամրագրված կլինեն օրենսդրությամբ:

Իսկ ըստ ՀՀ ՔԴՕ 306-րդ հոդվածի («Դատախազի մասնակցությունը դատական քննությանը և նրա չներկայանալու հետևանքները»)՝ դատախազը պարտավոր է հրաժարվել մեղադրանքից, եթե իր համոզմամբ այն չի հաստատվել դատական քննության ընթացքում:

Համաձայն «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի՝ մեղադրանքը պաշտպանող դատախազի մասնակցությունը պարտադիր է առաջին ատյանի և վերաքննիչ դատարանում գործի քննությանը, այդ թվում՝ նախնական լուսմներին: Համաձայն ՀՀ ՔԴՕ 54-րդ հոդվածի 3-րդ մասի՝ դատարանի կողմից քրեական գործեր և դատական որոշումներն ի կատար ածելու հետ կապված հարցեր քննելիս դատախազի մասնակցությունը նույնպես

պարտադիր է: Դատախազի չներկայանալու և նրան այլ դատախազով փոխարինելու անհնարինության դեպքում գործի քննությունը հետաձգվում է (ՀՀ ՔԴՕ 306-րդ հոդվածի 5-րդ մաս):

Գլխավոր դատախազությունը նշված լիազորության իրականացման շրջանակներում, բացի այն, որ դատարանում ուղղակիորեն պաշտպանում է մեղադրանքը, դատավճիռների և որոշումների դեմ բերված բողոքները, նաև՝

1) օրենքով սահմանված ժամկետներում և կարգով, իր իրավասության սահմաններում, ստուգում է դատավճիռների և որոշումների օրինականությունն ու հիմնավորվածությունը, կազմում է օրինական ուժի մեջ չմտած դատավճիռների և որոշումների դեմ բերվող վերաքննիչ բողոքներ, ինչպես նաև նախապատրաստում է օրինական ուժի մեջ մտած դատավճիռների և որոշումների դեմ բերվող վճռաբեկ բողոքների նախագծեր և պաշտպանում այդ բողոքները վճռաբեկ դատարանում,

2) քննարկում է օրինական ուժի մեջ մտած դատավճիռների և որոշումների վերաբերյալ դատախազության կազմում գտնվող դատախազությունների միջնորդությունները, ինչպես նաև դատական այդ ակտերի դեմ քաղաքացիների և իրավաբանական անձանց բերած բողոքները, և դրանց վերաբերյալ եզրակացություն ներկայացնում գլխավոր դատախազին կամ գլխավոր դատախազի տեղակալին (ՀՀ դատախազության կանոնակարգի 25-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ կետեր):

Գլխավոր դատախազությունը նաև իրականացնում է ՀՀ դատախազության գործունեության, գործառնությունների իրականացման ամփոփման, վերլուծության, համակարգման, բարելավմանն ուղղված աշխատանքներ, մասնավորապես.

1) եզրակացություն է ներկայացնում ՀՀ գլխավոր դատախազին կամ գլխավոր դատախազի տեղակալին ենթակա դատախազների կողմից բերված բողոքների օրինականության և հիմնավորվածության մասին.

2) գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի տեղակալի հանձնարարությամբ՝ դատախազության կազմում գտնվող դատախազություններում ստուգում է գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի տեղակալի՝ ոլորտին վերաբերող դատախազական ակտերի կատարման, ինչպես նաև դատարաններում մեղադրանքի պաշտպանության և դատավճիռների ու որոշումների բողոքարկման աշխատանքների իրականացման վիճակը,

3) ուսումնասիրում և ամփոփում է դատարաններում մեղադրանքի պաշտպանության և դատավճիռների ու որոշումների բողոքարկման պրակտիկան,

4) վերլուծում է ՀՀ օրենսդրության կիրառման պրակտիկան, մշակում մեղադրանքի պաշտպանության որակի նկատմամբ հսկողության արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ,

5) նախապատրաստում է դատարաններում մեղադրանքի պաշտպանության հարցերի վերաբերյալ մեթոդական հանձնարարականների նախագծեր,

6) դատախազության կազմում գտնվող դատախազություններին՝ ներկայացվող ոլորտում ցույց է տալիս գործնական և մեթոդական օգնություն («ՀՀ Դատախազության կանոնակարգ» ՀՀ օրենքի 25-րդ հոդված):

ՀՀ մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և Կայազորների զինվորական դատախազությունները, իրենց սպասարկման տարածքներում գործող դատարաններում իրականացնում են մեղադրանքի պաշտպանությունը դատարաններում , դատարաններում պաշտպանում են օրինական ուժի մեջ չմտած դատավճիռների և որոշումների դեմ բերված բողոքները, օրենքով սահմանված ժամկետներում և կարգով ստուգում են դատավճիռների, վճիռների և որոշումների օրինականությունն ու հիմնավորվածությունը, կազմում օրինական ուժի մեջ չմտած դատավճիռների և որոշումների դեմ բերվող վերաքննիչ բողոքներ, գլխավոր դատախազին կամ գլխավոր դատախազի տեղակալին ներկայացնում են օրինական ուժի մեջ մտած դատավճիռների, վճիռների և որոշումների բողոքարկման վերաբերյալ միջնորդություններ, ապահովում են գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի տեղակալի դատախազական ակտերի կատարումը:

Դատախազության՝ պետական շահերի պաշտպանությանն ուղղված լիազորությունը

ՀՀ Սահմանադրությամբ և «Դատախազության մասին» ՀՀ օրենքով սահմանված է դատախազության՝ պետական շահերի պաշտպանությանն ուղղված լիազորությունը:

Ըստ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի՝ դատախազի կողմից պետական շահերի պաշտպանության հայց կարող է հարուցվել քաղաքացիական, վարչական և քրեական դատավարության կարգով: Քաղաքացիական դատավարության կարգով պաշտպանվում են պետության գույքային շահերը, վարչական դատավարության կարգով պետության թե՛ գույքային, թե՛ ոչ գույքային շահերը, քրեական դատավարության կարգով՝ հանցագործությամբ ուղղակիորեն պետությանը պատճառված գույքային շահերը: «Դատախազության մասին» ՀՀ օրենքով նաև սահմանված են դեպքերի այն սահմանափակ ցանկը, որոնց դեպքում դատախազը հարուցում է պետական շահերի պաշտպանության հայց: Դրանք են՝

1) իր լիազորություններն իրականացնելիս հայտնաբերում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, որին վերապահված է պետական շահերի պաշտպանությանն առնչվող տվյալ հարցերով հայց ներկայացնելը, իրազեկ լինելով պետական շահերի խախտման փաստի մասին, ողջամիտ ժամկետում հայց չի ներկայացրել կամ հայց չի ներկայացնում դատախազի կողմից հայց ներկայացնելու առաջարկություն ստանալուց հետո, կամ

2) պետական շահերի խախտում է տեղի ունեցել այն հարցերով, որոնցով հայց ներկայացնելը օրենսդրությամբ վերապահված չէ որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, կամ

3) դատախազին հայց հարուցելու միջնորդությամբ է դիմել իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, կամ

4) հանցագործությամբ ուղղակիորեն պետությանը պատճառված է գույքային վնաս, կամ

5) պետական շահերի պաշտպանության հայցը հարուցվում է այլ երկրների դատարաններում կամ ՀՀ տարածքից դուրս տեղի ունեցող արբիտրաժներում, բացառությամբ այն դեպքերի, երբ ՀՀ կառավարությունը (այսուհետ՝ կառավարություն) լիազորում է այլ մարմնի կամ կազմակերպության («Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մաս):

Հաշվի առնելով, որ տվյալ դրույթում առկա թվարկումները առանձնացված են «կամ» շաղկապով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի դրույթների համաձայն մեկնաբանելով՝ ակնհայտ է, որ պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու բավարար է թվարկած դեպքերից առնվազն մեկը: Ուստի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով սահմանված դրույթը անհրաժեշտ է սահմանել առանձին մասով: Ընդ որում վերը նշված բոլոր դեպքերում, բացի այն դեպքից, երբ դատախազին հայց հարուցելու միջնորդությամբ է դիմել իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, դատախազը պարտավոր է հարուցել պետական շահերի պաշտպանության հայց:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե դատախազը գտնում է, որ առկա են բավարար հիմքեր պետության շահերի պաշտպանության հայց հարուցելու համար, ապա իրավունք ունի մինչև հայց հարուցելը նախազգուշացնելու պետության շահերին վնաս հասցրած անձին վնասը կամովին հատուցելու մասին: Այս դրույթը սահմանում է դատախազի՝ վեճը արտադատական կարգով լուծելուն ուղղված գործողություններ իրականացնելու միջոցառումներ ձեռնարկելու հայեցողական լիազորությունը, ինչը կարող է նաև հանգեցնել պրակտիկայում տարբեր սուբյեկտների նկատմամբ դրույթի ոչ միատեսակ կիրառմանը և հետևաբար՝ չարաշահումների:

ՀՀ քաղաքացիական դատավարության օր-ի 37-րդ հոդվածի համաձայն՝ պետական մարմիններն իրավունք ունեն դատարան դիմել պետության գույքային շահերի պաշտպանության հայցով: Հայց հարուցած պետական մարմինն օգտվում է հայցվորի իրավունքներից և կրում է նրա պարտականությունները: Դատախազը պետության գույքային շահերի պաշտպանության հայց է հարուցում «Դատախազության մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում:

2008 թվականի մայիսի 23-ի թիվ 3-361(ՎԴ) քաղաքացիական գործով կայացված վճռով ՀՀ վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ ՀՀ դատախազությունը լիազորված է նաև ներկայացնելու գույքը տիրագործի ճանաչելու պահանջ բոլոր այն դեպքերում, երբ դրանով խախտվում են կամ կարող են խախտվել պետության գույքային շահերը:

ՀՀ վարչական դատավարության օր-ով սահմանվում է, որ վարչական դատարան կարող են դիմել նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինները կամ պաշտոնատար անձինք՝ ընդդեմ վարչական մարմնի, եթե համարում են, որ այդ մարմնի վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել պետության կամ համայնքի այն իրավունքները, որոնց պաշտպանության

լիազորությունը դրված է դիմողի վրա, եթե այդ վեճը ենթակա չէ լուծման վերադասության կարգով:

ՀՀ ՔԴՕ 156-րդ հոդվածով սահմանված է, որ դատախազը հարուցում և պաշտպանում է հարուցված քաղաքացիական հայցը, եթե խախտվել են պետության գույքային շահերը: Քրեական գործի շրջանակներում քաղաքացիական հայցի հարուցման կարգը և պայմանները սահմանված են ՀՀ ՔԴՕ 20-րդ գլխում:

ՀՀ վճռաբեկ դատարանը անդրադարձել է Դատախազության պետական շահերի պաշտպանությամբ հայց հարուցելու լիազորությունների մեկնաբանությանը մի շարք որոշումներում²¹: Մասնավորապես՝ ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ Արմեն Քամալյանի թիվ ԵԿԴ/1254/02/11 քաղաքացիական գործով կայացված վճռով ՀՀ վճռաբեկ դատարանը, մեկնաբանելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը, արձանագրել է, որ նշված կետերով նախատեսված դեպքերում դատախազությունն օգտվում է դատավարական այն իրավունքներից և կրում է այն պարտականությունները, որոնք ունենալու էր պետական այն մարմինը, ով հայց ներկայացնելու պարտականություն ուներ: Հետևաբար, դատախազությունը զրկված չէ վարչական դատավարության կարգով տնտեսվարող սուբյեկտի դեմ հարկային պարտավորությունների կատարմանը պարտավորեցնելու հայց ներկայացնելու հնարավորությունից, եթե պետական իրավասու մարմինը ցուցաբերում է անգործություն կամ դիմել է դատախազությանը նման հայց ներկայացնելու միջնորդությամբ: Մեկնաբանելով նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում ամրագրված դրույթը, Դատարանը արձանագրել է, որ դատախազության լիազորությունը վերաբերում է բոլոր այն դեպքերին, երբ հայց հարուցելու լիազորությամբ օժտված չէ որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին: Նշված դրույթի օրենսդրական ձևակերպումից հետևում է, որ դատախազության՝ հայց հարուցելու դատավարական պարտականության իրացման նախապայման է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի՝ հայց հարուցելու լիազորության բացակայությունը: Նշված կանոնակարգումը քննարկելով չվճարված հարկային պարտավորությունների արդյունքում պետությանը պատճառված վնասը բռնագանձելու հարցի համատեքստում՝ նախ անհրաժեշտ է որոշել, թե արդյոք կոնկրետ վիճելի իրավահարաբերության առկայության պարագայում բացակայում է որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի՝ հայց հարուցելու լիազորությունը:

Մեկնաբանելով 2-րդ մասի 4-րդ կետում ամրագրված դրույթը՝ դատախազության լիազորությունը՝ հանցագործությամբ ուղղակիորեն պետությանը պատճառված գույքային վնասը հատուցելու հայց ներկայացնելու մասին, որպիսի լիազորության իրականացումը պայմանավորված է երկու փաստերի առկայությամբ՝ հանցանքի կատարում, որը պետք է հաստատվի օրինական ուժի մեջ մտած դատավճռով, և հանցանքի արդյունքում պետությանը պատճառված գույքային վնաս:

²¹ Տես՝ ՀՀ վճռաբեկ դատարանի վճիռը թիվ ԵԿԴ/3058/02/11 քաղաքացիական գործ, ՀՀ վճռաբեկ դատարանի վճիռը թիվ ԵԿԴ/1688/02/11 քաղաքացիական գործ, ՀՀ վճռաբեկ դատարանի վճիռը թիվ ԵԿԴ/1254/02/11 քաղաքացիական գործ և այլն:

Չնայած ՀՀ դատախազության՝ վերը շարադրված լայն լիազորություններին, դատախազությունը միշտ չէ, որ հետամուտ է լինում ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումների դեպքերով պետական շահերի պաշտպանության հայց հարուցելուն:

Դատախազության դատարանների վճիռների, դատավճիռների և որոշումների բողոքարկման լիազորությունը

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի առաջին մասով ուղղակիորեն սահմանված է, որ գործին մասնակցող դատախազը պարտավոր է բողոքարկել օրինական ուժի մեջ չմտած այն դատական ակտը, որն իր կարծիքով հիմնավոր չէ կամ ապօրինի է:

Դատախազը կարող է բողոքարկել ինչպես քրեական գործերով կայացված դատական ակտերը, այնպես էլ պետության շահերի պաշտպանության հայցով հարուցված և քննված գործերով կայացված դատական ակտերը: Քրեական գործերով դատական ակտը քաղաքացիական հայցի մասով դատախազի կողմից կարող է բողոքարկվել, եթե այն վերաբերում է պետության գույքային շահերին («Դատախազության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 5-րդ մաս): Քաղաքացիական կամ վարչական գործով պետական շահերին վերաբերող օրինական ուժի մեջ մտած դատական ակտը գլխավոր դատախազն ու նրա տեղակալները կարող են բողոքարկել անկախ տվյալ գործի քննությանը դատախազության մասնակցությունից:

Ընդ որում բողոքը տվյալ գործով կարող է բերվել ինչպես անմիջական հսկողություն իրականացնող դատախազի մեղադրող, դատական քննությանը մասնակցող դատախազի, այնպես էլ վերադաս դատախազի կողմից: Նմանապես քաղաքացիական գործով կայացված օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը կարող է բողոքարկել դատական քննությանը մասնակցած դատախազը կամ վերադաս դատախազը: Օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոք կարող են բերել միայն գլխավոր դատախազն ու նրա տեղակալները: Բողոքը դատարանում պաշտպանում է բողոք բերած դատախազը, իսկ եթե բողոք բերել է գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը, ապա բողոքը պաշտպանում է ինքը կամ իր հանձնարարությամբ՝ այլ դատախազ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օր-ով նաև սահմանվում է, որ վերաքննիչ բողոքի դեպքում՝ դատախազը, վճռաբեկ բողոքի դեպքում՝ գլխավոր դատախազը և նրա տեղակալները, համապատասխան բողոքները կարող են բերել միայն օրենքով նախատեսված դեպքում (Քաղաքացիական դատավարության օր-ի 205-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ կետ, 223-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ կետ): ՀՀ վարչական դատավարության օր-ով սահմանված է որ, թե վերաքննիչ, թե վճռաբեկ բողոքը կարող են բերել գլխավոր դատախազը կամ նրա տեղակալները (նույնպես օրենքով նախատեսված դեպքերում ՀՀ վարչական դատավարության օր-ի 117.1 հոդվածի 1-ին մասի երկրորդ կետ, 118.1 հոդվածի 1-ին մասի երկրորդ կետ):

Քրեական դատավարության շրջանակներում օրենքով սահմանված կարգով վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն մեղադրողը կամ վերադաս դատախազը, վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեն գլխավոր դատախազը և նրա տեղակալները:

Մտահոգիչ է, որ բողոքը կարող է բերվել անմիջական դատախազի կամ վերադաս դատախազի կողմից, և միաժամանակ նույն բողոքը կարող է հետ վերցվել ոչ միայն բողոքը բերած դատախազի, այլ նաև վերադաս դատախազի կողմից: Նման կերպ սահմանված կարգավորումները հանդիսանում են վերադաս դատախազի կողմից դատախազի գործունեությանը ուղղակի միջամտության հնարավորություն, որով խախտվում է դատախազի անկախությունը և կարող է խաթարվել դատախազության՝ որպես միասնական ինստիտուտի սկզբունքները:

Դատախազի՝ պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության իրականացման ուղղված լիազորությունը

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասով ամփոփ կերպով սահմանված են դատախազի իրավունքները սույն լիազորությունը իրականացնելիս: Դրանք են՝

1) ցանկացած ժամանակ անարգել այցելելու այն բոլոր վայրերը, որտեղ պահվում են ազատությունից զրկված անձինք,

2) ծանոթանալու այն փաստաթղթերին, որոնց հիման վրա անձը ենթարկվել է պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների,

3) ստուգելու պատիժները և հարկադրանքի այլ միջոցներ կիրառող մարմինների վարչակազմերի պատիժները և հարկադրանքի այլ միջոցների կիրառմանը վերաբերող այն հրամանների, կարգադրությունների և որոշումների համապատասխանությունը գործող օրենսդրությանը, որոնք վերաբերում են պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների ենթարկված անձի հիմնական իրավունքներին: Օրենսդրությանը հակասող ակտ հայտնաբերելիս դատախազը միջնորդում է վերանայել այն, իսկ այն դեպքերում, երբ դատախազի կարծիքով հապաղումը կարող է հանգեցնել ծանր հետևանքների, դատախազն իրավունք ունի կասեցնելու այդ ակտի գործողությունը և այն վերանայելու միջնորդագիր ներկայացնելու,

4) հարցման ենթարկելու պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների ենթարկված անձանց,

5) անհապաղ ազատելու ազատությունից զրկելու վայրերում, ինչպես նաև այդ վայրերի տուգանային և կարգապահական մեկուսարաններում ապօրինի պահվող անձանց, իսկ եթե անձը ազատությունից զրկվել է ազատությունից զրկելու վայրի վարչակազմի իրավական ակտի հիման վրա, ապա դատախազի կարգադրությամբ ակտը կայացրած անձը պարտավոր է անհապաղ վերացնել իր ակտը,

6) պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների ենթարկված անձանց իրավունքների և ազատությունների խախտման կասկածի դեպքում պաշտոնատար անձանցից պահանջելու բացատրություններ ձեռնարկված գործողությունների կամ անգործության մասին:

Սույն լիազորության շրջանակներում դատախազը նաև ներգրավված է պատժից ազատելու գործընթացում: Մասնավորապես դատախազը մասնակցում է դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պայմանական վաղաժամկետ ազատումը

վերացնելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու, ծանր հիվանդության կամ արտակարգ հանգամանքների հետևանքով պատժից ազատելու վերաբերյալ միջնորդությունների քննությանը դատարանում:

Դատախազի նշված լիազորությունների իրականացման վերաբերյալ կարգավորումները սահմանվում են ՀՀ քրեակատարողական օրենսգրքով: Մասնավորապես սահմանված է առանց հատուկ թույլտվության պատիժը կատարելու վայր անարգել մուտքի և ելքի իրավունքը ՀՀ գլխավոր դատախազի, նրա տեղակալների համար, ինչպես նաև այն դատախազների համար, ովքեր օրենքով սահմանված կարգով հսկողություն են իրականացնում պատիժներ և հարկադրանքի այլ միջոցներ կիրառելու նկատմամբ:

Ըստ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 20-րդ հոդվածի՝ պատիժները կատարելու և պատժի կատարման հետ միացված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները կիրառելու նկատմամբ դատախազական հսկողությունն իրականացվում է «Դատախազության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Հաշվի առնելով, որ Դատախազությունը ի սկզբանե քրեական վարույթի իրականացման շրջանակներում պաշտպանում է մեղադրանքը, հետագայում քրեական պատասխանատվության կրման ընթացքում Դատախազի որոշիչ դերը կարող է բացասաբար անդրադառնալ պատիժը կրող անձի իրավունքների վրա: Ուստի անհրաժեշտ է հզորացնել առաջին հերթին քրեակատարողական հիմնարկների գործունեության հանդեպ վերահսկողություն իրականացնող մարմնի և դատական իշխանության լիազորությունները պատժի կրման ընթացքի նկատմամբ: Նման մոտեցումը անհրաժեշտ է ապահովել նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ քրեակատարողական համակարգը հանդիսանում է Արդարադատության նախարարության համակարգի մաս:

3.3. Դատախազության հաշվետվողականության, գործունեության ժողովրդավարական վերահսկողության երաշխիքները

«ՀՀ դատախազությունն այնպիսի համակարգ է, որն օրենսդիր, գործադիր և դատական իշխանություններից անկախ իրականացնում է իրեն ներհատուկ գործառույթներ: Թեպետ մեկնաբանվող հոդվածը գտնվում է Սահմանադրության 6-րդ գլխում, որը նվիրված է դատական իշխանությանը, սակայն այդ հանգամանքը չի արտացոլում պետական իշխանության մարմինների համակարգում ՀՀ դատախազության իրական տեղն ու դերը:»²²

ՀՀ դատախազության լիազորությունները և գլխավոր դատախազի նշանակման կարգը սահմանվում են ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածով: Իսկ ըստ ՀՀ Սահմանադրության մեկնաբանությունների՝ «Սահմանադրության 103-րդ հոդվածի իմաստը թույլ է տալիս արձանագրել, որ ՀՀ-ն այն երկրներից է, որտեղ դատախազությունը սահմանադրական կարգավիճակ ունեցող՝ գլխավոր դատախազի կողմից ղեկավարվող առանձին համակարգ է:»²³

«Դատախազության մասին» ՀՀ օրենքը սահմանում է նաև դատախազների անկախությունը, որպես նրանց իրավական պաշտպանության երաշխիք: Այսպես՝ ըստ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի՝ դատախազն իր գործունեությունն իրականացնելիս անկախ է և ենթարկվում է միայն օրենքին:

Օրենսդրորեն սահմանված են ՀՀ դատախազության գործունեության հաշվետվողականության և վերահսկողության մեխանիզմները:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ Դատախազությունը հանրությանը տեղեկացնում է իր իրականացրած գործունեության մասին այնքանով, որքանով դա չի հակասում մարդու և քաղաքացու իրավունքներին, ազատություններին և օրինական շահերին, ինչպես նաև պետական և օրենքով պաշտպանվող այլ գաղտնիքների պահպանությանը:

ՀՀ դատախազությունը իր գործունեության վերաբերյալ իրազեկում է դատախազության պաշտոնական կայքէջի միջոցով:

ՀՀ դատախազությունը, հանդիսանալով անկախ մարմին, տարեկան հաղորդում է ներկայացնում Ազգային ժողովին և ՀՀ նախագահին դատախազության նախորդ տարվա գործունեության մասին («Դատախազության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մաս): Դատախազության հաղորդումը ներկայացվում է Ազգային ժողովի կանոնակարգով սահմանված կարգով: Ըստ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 104-րդ հոդվածի առաջին մասի՝ Ազգային ժողովի նիստերին հաղորդումները քննարկվում են հատուկ կարգով: Նույն օրենքի 59-րդ հոդվածի համաձայն՝ հատուկ ընթացակարգով քննարկման դեպքում հեղինակը, կամ հիմնական զեկուցողը ներկայացնում է նախընտրելի կարգը զեկուցման ընթացքում, իսկ Ազգային ժողովը այդ կարգի կիրառման մասին որոշում է ընդունում առանց քննարկման: Նույն հոդվածով սահմանված է, որ հատուկ ընթացակարգով չի կարող սահմանափակվել

²² Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ /ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի. - Եր.:«Իրավունք», 2010, 1086 էջ:

²³ Տե՛ս նույնը

զեկուցողներին հարց տվողների եւ ելույթ ունեցողների թիվը, ինչպես նաև կրճատվել ելույթի կամ հարց տալու համար նույն օրենքով նախատեսված ժամանակը:

Չնայած ներկայացված կարգավորումների՝ մինչ այժմ դատախազության հաղորդումը չի քննարկվել Ազգային ժողովի նիստերի ընթացքում, *ինչի արդյունքում ԱԺ պատգամավորները հնարավորություն չեն ունեցել տալ հարցեր, քննարկումներ ծավալել և ելույթներ ունենալ հաշվետվության մեջ տեղ գտած տեղեկատվության շուրջ*: Անհրաժեշտ է նշել, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» և «Դատախազության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 2014 թ. մարտի 11-ի օրենքով հաստակեցվել է նախորդ տարվա գործունեության մասին ՀՀ դատախազության կողմից ներկայացվող հաղորդման քննարկման կարգը: Սույն օրենսդրական փոփոխությունների կատարման նախաձեռնությունը պատկանել է ՀՀ Ազգային ժողովի մի շարք պատգամավորների²⁴:

Սահմանված չի եղել նաև Դատախազության կողմից ներկայացվող հաղորդման բովանդակության վերաբերյալ նվազագույն պահանջները: ՀՀ դատախազության 2010, 2011 և 2012 թ. ներկայացված հաղորդումների ուսումնասիրության արդյունքում կարելի է կատարել հետևյալ դիտարկումները.

- 2010 թ. հաղորդումը հասցեագրված է միայն Ազգային ժողովի նախագահին, 2011 թ. հաղորդումը՝ միայն ՀՀ նախագահին, 2012 թ. հաղորդման մեջ որևէ հղում կատարված չէ, չնայած ըստ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի՝ հաղորդումը պետք ներկայացվեր և՛ ՀՀ Ազգային ժողովին, և՛ ՀՀ Նախագահին:

- Հաղորդումներում բացակայում է որոշ լիազորությունների վերաբերյալ ամբողջական կամ ամփոփ տեղեկատվությունը: Այսպես, ուսումնասիրված հաղորդումները պարունակում են քանակական տեղեկատվություն տվյալ տարվա ընթացքում գրանցված, բացահայտված հանցագործության դեպքերի, դրանց ավարտի վերաբերյալ մասնավորապես հետևյալ ուղղություններով՝

- մարդու դեմ ուղղված հանցագործություններ,
- սեփականության դեմ ուղղված հանցագործություններ,
- տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններ,
- ընդհանուր բնույթի հանցագործություններ,
- թմրամիջոցների ապօրինի շրջանառության ոլորտում հանցագործություններ,
- կոռուպցիոն և կազմակերպված հանցագործություններ,

- Ներկայացվում է տեղեկատվություն՝ ըստ այն մարմինների, որոնց գործունեության հանդեպ իրականացվում է հսկողություն՝

- ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությունում նախապատրաստված նյութերով,

- ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից քննված գործերի վերաբերյալ,

²⁴ <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=6369&Reading=0>

▪ Հաղորդումը ներկայացնում է տեղեկատվություն դատախազության գործունեության լիազորությունների իրականացման վերաբերյալ, մասնավորապես ըստ հետևյալ լիազորությունների՝

- պետական շահերի պաշտպանություն,
- պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության իրականացման բնագավառում,
- ինչ-որ չափով (որոշ ոլորտներում) հետաքննության և նախաքննության հանդեպ հսկողության, դատարանների վճիռների, դատավճիռների և որոշումների բողոքարկման և դատարանում մեղադրանքի պաշտպանության վերաբերյալ,

▪ Առանձին ներկայացված է տեղեկատվություն ըստ ստորաբաժանումների կամ բաժինների՝

- ՀՀ զինվորական դատախազության կողմից իրականացվող գործունեություն,
- Դատախազության կազմակերպական-վերահսկողական գործունեություն,
- Դատախազության միջազգային-իրավական օգնության ուղղությամբ իրականացված գործունեություն,
- ՀՀ դատախազության իրավական ապահովման ոլորտում իրականացված գործունեություն,
- ՀՀ դատախազության անձնակազմի հետ տարվող աշխատանքներ,
- ՀՀ դատախազությունում ստացված դիմումների ու բողոքների քննություն,
- ՀՀ դատախազության գործունեության հրապարակայնության և հանրային իրազեկման ապահովման ուղղությամբ իրականացված գործունեություն,
- «Դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ի գործունեություն:

Այսպիսով, ՀՀ զլխավոր դատախազության հաղորդումները ոչ միայն չեն քննարկել ՀՀ ԱԺ-ում, այլև հրապարակված հաղորդումները չեն պարունակում նրա գործունեության բոլոր ուղղությունների վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն:

ՀՀ դատախազության գործունեության հանդեպ վերահսկողության այլ մեխանիզմներ են հանդիսանում Ազգային ժողովի կողմից դատախազության գործունեության վերաբերյալ օրենսդրական կարգավորումների ընդունումը, Ազգային ժողովի հանձնաժողովների և պատգամավորների կողմից հարցումներով և առաջարկություններով պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմիններին, պաշտոնատար անձանց, հիմնարկներին եւ կազմակերպություններին դիմելու, իրենց բարձրացրած հարցերի քննարկմանը մասնակցելու իրավունքը:

Որպես հանրային վերահսկողության մեխանիզմ կարելի է դիտարկել Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը, ինչպես նաև «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը,

որի հիման վրա ՀՀ քաղաքացիները և և հասարակական միավորումները կարող են պահանջել տեղեկատվություն ՀՀ դատախազության գործունեության վերաբերյալ:

ՀՀ դատախազության ներքին հաշվետվողականության և վերահսկողության մեխանիզմները

Ըստ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ ՀՀ գլխավոր դատախազը սահմանում է դատախազության սահմանադրական լիազորությունների իրականացման քաղաքականությունը և ապահովում դրա իրականացման նկատմամբ վերահսկողությունը: Վերահսկողության իրականացման կարգը սահմանված է ՀՀ դատախազության կանոնակարգով:

Կանոնակարգը առանձնացնում է վերահսկողություն դատախազությունների գործունեության նկատմամբ և վերահսկողություն գլխավոր դատախազի, գլխավոր դատախազի ակտերի կատարման հանդեպ:

Ըստ ՀՀ դատախազության կանոնակարգի 78-րդ կետի՝ դատախազության խնդիրների կատարումն ապահովելու նպատակով դատախազությունների գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է գլխավոր դատախազը կամ գլխավոր դատախազի տեղակալը: Վերահսկողությունն իրականացվում է դատախազության ստորաբաժանումների կողմից իրականացվող ուսումնասիրությունների և ստուգումների միջոցով:

Ինչպես ստուգումները, այնպես էլ ուսումնասիրությունները իրականացվում են ՀՀ գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի տեղակալների կարգադրության, հրամանի համաձայն: Ստուգումներ անցկացնելու մասին հրամանի մեջ նշվում է ստուգումն իրականացնող ստորաբաժանման անվանումը, ստուգում իրականացնող դատախազի (դատախազների կամ աշխատանքային խմբի անդամների) անունը, ազգանունը, պաշտոնը, ստուգման իրավական հիմքը, նպատակը, ժամկետը: Ստուգում անցկացնելու մասին հրամանում չնշված դատախազները չեն կարող մասնակցել ստուգմանը: Ուսումնասիրություն անցկացնելու հրամանին ՀՀ դատախազության կանոնակարգը չի առաջադրում հատուկ պահանջներ և ըստ կանոնակարգի՝ ուսումնասիրություն անցկացնող դատախազների թիվը որոշվում է ուսումնասիրությունն իրականացնելու օրը:

Ստուգումների անցկացման մասին գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի տեղակալի հրամանը պետք է պարունակի ստուգումն իրականացնող ստորաբաժանման անվանումը, ստուգում իրականացնող դատախազի (դատախազների կամ աշխատանքային խմբի անդամների) անունը, ազգանունը, պաշտոնը, ստուգման իրավական հիմքը, նպատակը, ժամկետը:

Ստուգումներն իրականացվում են հետևյալ փաստաթղթերի հիման վրա՝

- համապատասխան դատախազությունների կողմից ներկայացված հաշվետվություններ,
- ստուգման արդյունքներով ներկայացված թերությունների վերացման ծրագիր,
- գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի տեղակալի հանձնարարություն,

- ուսումնասիրությունների անհրաժեշտություն առաջացնող այլ իրավիճակներից ելնելով (ՀՀ դատախազության կանոնակարգի 80-րդ կետ):

ՀՀ դատախազությունների վերահսկողությունը իրականացվում է ստուգման և ուսումնասիրությունների միջոցով, որոնք կատարվում են ՀՀ դատախազության ստորաբաժանումների կողմից: Մինևույն ժամանակ, չնայած ուսումնասիրություններ²⁵ իրականացնելիս երաշխիքների պահանջը շատ ավելի ցածր է, քան ստուգումներ իրականացնելիս, ստուգումներ և ուսումնասիրություններ իրականացնող դատախազները սովյալ գործառույթներ իրականացնելիս ունեն մինևույն լիազորությունները և պարտականությունները: Բացի այդ, ՀՀ դատախազության կանոնակարգով սահմանված չէ, թե որ դեպքերում է իրականացվում ստուգում և որ դեպքում՝ ուսումնասիրություն:

Կանոնակարգով նաև սահմանված է, որ վերահսկողությունն իրականացվում է նաև վիճակագրական և այլ տեղեկությունների, աշխատանքի ծրագրերի, դատախազական ակտերի, հանձնարարականների, դատախազության կազմում գտնվող դատախազություններից ստացվող զեկուցագրերի, նյութերի պարբերական ուսումնասիրությամբ և վերլուծությամբ (ՀՀ դատախազության կանոնակարգի 105-րդ կետ): Հարց է ծագում թե ում կողմից կարող է իրականացվել նման տիպի վերահսկողությունը և ինչ ընթացակարգերով:

Գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի տեղակալի հանձնարարությունները, այդ թվում՝ կապված դիմումների և բողոքների քննարկման հետ, վերահսկում են դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները կամ գլխավոր դատախազության կամ զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազները կամ դատախազները: (ՀՀ դատախազության կանոնակարգի 106-րդ հոդված): Տվյալ վերահսկողության կարգը և սահմանները նույնպես հստակ սահմանված չեն:

Վերոգրյալից կարելի է գալ այն եզրակացության, որ ՀՀ դատախազության համակարգում դատախազության և դատախազների գործունեության հանդեպ վերահսկողության իրականացման գործընթացը պատշաճ կարգավորված չէ, ինչը կարող է հանգեցնել դատախազների անկախության ոչ լիարժեք ապահովմանը:

²⁵ <http://genproc.am/am/50/item/4617/>

3.4 «Դատախազության դերը օրենքի ժողովրդավարական հասարակությունում, որը կառավարվում է օրենքի գերակայության սկզբունքի համաձայն» Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի Թիվ 1604 (2003) հանձնարարականի դրույթների և ՀՀ օրենսդրության համեմատական վերլուծությունը

Քրեաիրավական ոլորտի շրջանակներում

i. քրեական հետապնդում իրականացնելու հետ կապված պարտավորությունները պետք է կատարի ոչ թե ոստիկանությունը, այլ՝ որևէ այլ անկախ մարմին

2014 թվականի մայիսի 19-ին «Քննչական կոմիտեի մասին» ընդունված ՀՀ օրենքով ստեղծվեց ՀՀ քննչական կոմիտեն, որը կոչված է ՀՀ ՔԴՕ-ով իր իրավասությանը վերապահված՝ ենթադրյալ հանցագործությունների կապակցությամբ նախաքննության կազմակերպումը և իրականացումը: Քննչական կոմիտեի լիազորությանն են վերապահված այն բոլոր գործերը, որոնցով վարույթը չի ընկնում հարկային, մաքսային մարմինների, Ազգային անվտանգության ծառայության և Հատուկ քննչական կոմիտեի լիազորության ներքո: ՀՀ ոստիկանությունը քրեական գործերով նախաքննություն իրականացնելու լիազորություն չունի, սակայն լիազորված է իրականացնել հետաքննություն:

Քրեական արդարադատության շրջանակներում Դատախազության դերի վերաբերյալ ԵԽ նախարարների կոմիտեի թիվ Rec(2000)19 հանձնարարականի 21-րդ կետի համաձայն՝ դատախազները պետք է նաև հետևեն ոստիկանության կողմից մարդու իրավունքների սկզբունքների պահպանմանը:

Միննույն ժամանակ թե՛ քրեական հետապնդման հարուցումը, թե՛ քրեական հետապնդման ավարտը իրականացվում է դատախազի և մասնավորապես հսկող դատախազի հսկողության ներքո և դատախազի կողմից: Դատախազության կողմից նախաքննության նկատմամբ հսկողություն իրականացնելու վերաբերյալ գործող ՀՀ ՔԴՕ-ով սահմանված ընթացակարգերը /դատախազության լիազորությունները/ կարող են միջամտության ռիսկեր առաջացնել:

ii. կալանավորման դեպքերը պետք է արագ, անմիջականորեն և ինքնաբերաբար ուղղորդվեն իրավասու դատարան՝ ՄԻԵԴ 5-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան.

ՀՀ Սահմանադրությամբ սահմանվում է, որ յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք: ՀՀ Սահմանադրությամբ է սահմանվում, որ մարդուն կարելի է ազատությունից զրկել բացառապես օրենքով սահմանված դեպքերում և կարգով, սահմանվում են այն դեպքերի շրջանակը, որոնց պարագայում միայն անձը կարող է զրկվել ազատությունից: Նաև սահմանված է, որ անձը կարող է պահվել անազատության մեջ միայն մինչև 72 ժամ ժամկետով:

ՀՀ ՔԴՕ-ն նույնպես արձանագրում է անձի ազատության և անձնական անձեռնամխելիության իրավունքը (ՀՀ ՔԴՕ 11-րդ հոդված): Իսկ սահմանված 72 ժամը լրանալուն պես անձի ազատազրկումը կարող է տեղի ունենալ կալանքի տեսքով, որը իրականացվում է միայն դատարանի որոշմամբ:

ՀՀ ՔԴՕ նախագծի համաձայն ևս՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու անհրաժեշտության դեպքում դատախազը կամ քննիչը միջնորդություն է ներկայացնում դատարան՝ խափանման միջոցի այդ տեսակը ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին: Միևնույն ժամանակ լրացուցիչ սահմանված է, որ անձի նկատմամբ խափանման միջոց կիրառելու հարցը լուծելու նպատակով անձը պետք է դատարան տարվի ձերբակալման պահից ոչ ուշ քան 60 ժամվա ընթացքում:

Այս հարցի համատեքստում կարևոր և մտահոգիչ ենք համարում, որ ՀՀ գլխավոր դատախազը իր հարցազրույցներից մեկում նշում է, որ «կալանավորումը, մեղադրյալի և կասկածյալի, դիտվում է որպես նաև պաշտպանության միջոց, համապատասխանաբար»²⁶:

iii. Մեղադրողի կողմից դատարանի որոշման բողոքարկումը չպետք է ունենա կասեցնող ազդեցություն, ինչպես ընդհանուր առմամբ, այնպես էլ ինքնաբերաբար, բացառությամբ միմիայն այն դեպքերի, երբ դատարանը հստակ հիմնավորված է համարում շարունակական կանխարգելիչ կամ խափանման կալանքի անհրաժեշտությունն ապացուցող օբյեկտիվորեն որոշվող գործոնները (օրինակ, եթե ստորադաս դատարանը կարգադրագիր է ընդունել ազատ արձակել կալանավորված անձին միայն հարկադրանքի նվազ ձևի կիրառման պայմանով, իսկ հետագայում մեկ այլ դատական որոշում է ընդունվում նրան ազատ արձակելու մասին կարգադրագիրը կասեցնելու մասին):

ՀՀ ՔԴՕ 427-րդ հոդվածը ուղղակիորեն նախատեսում է, որ ամբաստանյալի արդարացման կամ նրան պատժից ազատելու մասին որոշումը ի կատար է ածում դատավճիռ կայացրած դատարանը և այս դեպքում կալանքի տակ գտնվող ամբաստանյալն անմիջապես ազատվում է դատական նիստերի դահլիճից՝ որոշումը հրապարակելուց հետո:

ՀՀ ՔԴՕ նախագծով նույնպես ուղղակիորեն սահմանվում է, որ արդարացված մեղադրյալը, այսինքն մեղադրյալը, ում նկատմամբ կայացված արդարացման վերդիկտը դեռևս ուժի մեջ չի մտել, ենթակա է ազատման կալանավորումից:

iv. Քրեական հետապնդում իրականացնելու որոշման հարցում հայեցողական լիազորություններ ընդունող համակարգը պետք է հնարավորինս արդյունավետորեն պաշտպանի ինչպես գործերի արդյունավետ և գործուն վարման հարցում արդարադատության

²⁶ Տե՛ս «Ինչ է կարևորում գլխավոր դատախազը դատախազության աշխատանքներում» խորագրով ՀՀ գլխավոր դատախազի մասնակցությամբ Բանաձև հաղորդումը: (13:20 րոպեից) https://www.youtube.com/watch?v=uibX_q-9v-Q

շահերը, այնպես էլ ամբաստանյալի և ցանկացած տուժող կողմի շահերը: Այս կապակցությամբ Վեհաժողովի մասնակիցները հղում են կատարում քրեական արդարադատության ընթացակարգերի պարզեցման վերաբերյալ Նախարարների կոմիտեի թիվ R(87)18 հանձնարարականին՝ միաժամանակ համարելով, որ պետք է համատարած ընդունվի հայեցողական դատական հետապնդման սկզբունքը:

ՀՀ ՔԴՕ ուղղակիորեն նախատեսված չէ հայեցողական քրեական հետապնդում հարուցելու մեխանիզմները, սակայն կարելի է արձանագրել, որ այս մեխանիզմին բնորոշ որոշակի տարրեր է պարունակում ՀՀ ՔԴՕ 37-րդ հոդվածի դրույթները: Համաձայն նշված հոդվածի՝ Դատարանը, դատախազը, ինչպես նաև դատախազի համաձայնությամբ՝ քննիչը կարող են հարուցված քրեական գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել ՀՀ ՔՕ 72-րդ (Քրեական պատասխանատվությունից ազատելը գործուն զոջալու դեպքում), ՀՀ ՔՕ 73-րդ (Քրեական պատասխանատվությունից ազատելը տուժողի հետ հաշտվելու դեպքում) և ՀՀ ՔՕ 74-րդ (Քրեական պատասխանատվությունից ազատելն իրադրության փոփոխման դեպքում) հոդվածներով նախատեսված դեպքերում, եթե դրա դեմ չի առարկում անձը, ում նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդումը: Գործուն զոջալու դեպքում քրեական պատասխանատվությունից կարող է ազատվել առաջին անգամ ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցանք կատարած անձը (ՀՀ ՔՕ 72-րդ հոդվածի 1-ին մաս), տուժողի հետ հաշտվելու և հատուցելու կամ այլ կերպ նրան պատճառած վնասը հարթելու դեպքում քրեական պատասխանատվությունից կարող է ազատվել ոչ մեծ ծանրության հանցանք կատարած անձը (ՀՀ ՔՕ 73-րդ հոդված), իրադրության փոփոխման հետևանքով անձը կամ նրա կատարած արարքը հանրության համար վտանգավոր լինելուց դադարելու դեպքում քրեական պատասխանատվությունից կարող է ազատվել առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անձը (ՀՀ ՔՕ 74-րդ հոդված):

ՀՀ ՔԴՕ նախագծի 195-րդ հոդվածով սահմանվում է հայեցողական քրեական հետապնդման ինստիտուտը, պայմանները, կիրառման կարգը: Մասնավորապես սահմանված է, որ եթե հսկող դատախազը, հաշվի առնելով կատարված հանցանքի բնույթը, վտանգավորության աստիճանը, առաջացրած հետևանքները, հանցանք կատարած անձի հատկանիշները, գտնում է, որ նրա նկատմամբ քրեական հետապնդումը նպատակահարմար չէ, քանի որ սոցիալական արդարության վերականգնման, այդ անձի ուղղման և հանցագործությունների կանխման համար նրան քրեական պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտությունը բացակայում է, ապա իրավասու է չհարուցել քրեական հետապնդում կամ դադարեցնել քրեական հետապնդումը:

Քրեական արդարադատության շրջանակներում Դատախազության դերի վերաբերյալ ԵԽ նախարարների կոմիտեի թիվ Rec(2000)19 հանձնարարականի 33-րդ կետի համաձայն՝ հանրային դատախազները, պետք է պատշաճ կերպով հաշվի առնեն տուժողների հայացքները և մտահոգությունները, այն դեպքում, երբ վնաս է հասցվել նրանց անձնական շահերին, և

միջոցներ ձեռնարկեն կամ նախաձեռնեն, որպեսզի տուժողները տեղեկացված լինեն իրենց իրավունքների, ինչպես նաև քննության ընթացքի վերաբերյալ:

Հաշվի առնելով, որ հայեցողական քրեական հետապնդում հարուցելու դեպքում առանցքային է հանրային և մասնավոր շահի համադրությունը և հավասարակշռումը, կարևոր է նաև ՀՀ ՔԴՕ նախագծով նախատեսված դրույթը առ այն, որ հանցագործությունից տուժած անձը կամ նրա ներկայացուցիչը իրավունք ունեն վերադաս դատախազին բողոքարկել քրեական հետապնդում չհարուցելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը: Այս առումով կարևոր է նաև տուժողի և հանրության շահերին առավել նվազ վնաս հասցնող բխող իրավակիրառ պրակտիկայի ձևավորումը:

Քրեաիրավական ոլորտից դուրս

ա. Մարդու իրավունքների պաշտպանության ընդհանուր ոլորտում դատախազների ստանձնած դերը չպետք է հանգեցնի շահերի բախումների կամ խոչընդոտ հանդիսանա իրենց իրավունքները պաշտպանելու համար պետությանը դիմած անհատների համար:

Քրեաիրավական ոլորտից դուրս ՀՀ դատախազությունը ունի հետևյալ լիազորությունները՝

- հարուցել պետական շահերի պաշտպանության հայց դատարաններում,
- բողոքարկել դատարանների վճիռները և որոշումները,
- հսկողություն իրականացնել պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման

օրինականության նկատմամբ:

Ընդ որում «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ գործին մասնակցող դատախազը պարտավոր է բողոքարկել օրինական ուժի մեջ չմտած այն դատական ակտը, որն իր կարծիքով հիմնավոր չէ կամ ապօրինի է: Դատարանների քաղաքացիական գործով կայացված օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը կարող է բողոքարկել դատական քննությանը մասնակցած դատախազը կամ վերադաս դատախազը:

Քաղաքացիական և վարչական գործերով դատախազության՝ որպես կողմ հանդես գալը պարունակում է ՀՀ դատական իշխանության նկատմամբ որոշակի ազդեցության վտանգներ:

Նախարարների կոմիտեի Քրեական արդարադատությունից դուրս դատախազների դերի մասին թիվ CM/Rec(2012)11 հանձնարարականը հատուկ ուշադրության է արժանացնում դատախազների հատուկ պատասխանատվությանը և լիազորություններին՝ քրեաիրավական արդարադատության ոլորտից դուրս դատական քննությանը, որտեղ դատախազը հանդիսանում է հիմնական կողմ: Մասնավորապես հանձնարարականը սահմանում է, որ դատախազի, որպես դատական գործով կողմի ներգրավվածությունը պետք ապահովի զենքերի հավասարության սկզբունքը: Եվ չնայած այս սկզբունքները ամրագրված են օրենսդրությամբ, սակայն գործնականում բազմաթիվ խնդիրներ են առաջանում դատախազի և դատավարության մյուս կողմերի հավասարության հարցում: Մինևույն ժամանակ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ դատախազությունը, պաշտպանելով պետության շահերը կարող է ազդեցություն ունենալ նաև համապատասխան վարչական մարմինների վրա, մասնավորապես վերջիններիս կողմից

ընդունվող որոշումների կայացման գործընթացի վրա: Այս սկզբունքի կիրառումը գործնականում ունի առավել խորը ուսումնասիրության կարիք:

Բացի այդ, սույն հանձնարարականը կրկին անգամ, արձանագրում է, որ այն դեպքերում, երբ անհատների շահերը ներկայացվում են հանրային դատախազի կողմից, անձը պետք է իրավունք ունենա լինել քննության կողմ: Այս համատեքստում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հարցին, որ ՀՀ ՔՂՕ նախագծի 439-րդ հոդվածի 1-ին մասով ի սկզբանե սահմանվել էր դատախազի լիազորությունը՝ միջնորդությամբ դիմելու դատարան բժշկական բնույթի հարկադրական միջոցը վերացնելու կամ փոխելու հարցը քննելու վերաբերյալ: Նախագծով այս իրավունքը ճանաչվում է նաև անձի մերձավոր ազգականի և այլ շահագրգիռ անձի համար, սակայն ոչ ուղղակիորեն այդ անձի համար: ՀՔԱ Վանաձորի գրասենյակի առաջարկությունների հիման վրա նախագծում լրացում է կատարվել և այս իրավունքը տրվել է նաև այն անձին, ում նկատմամբ կիրառվել է բժշկական բնույթի հարկադրական միջոցը:

Նախարարների կոմիտեի Քրեական արդարադատությունից դուրս դատախազների դերի մասին թիվ CM/Rec(2012)11 հանձնարարականը նաև սահմանում է, որ այն դեպքերում, երբ հանրային դատախազներն ունեն վերահսկող դեր ազգային, տարածաշրջանային կամ տեղական մարմինների նկատմամբ կամ այլ իրավաբանական անձանց նկատմամբ, օրենքին համապատասխան իրենց պատշաճ գործունեությունը ապահովելու նկատառումներից անհրաժեշտ է, որպեսզի նրանք իրականացնեն իրենց լիազորությունները անկախ, թափանցիկ և օրենքին համապատասխան: Անկախության և թափանցիկության վերաբերյալ ՀՀ դատախազության գործունեության դրույթները ուսումնասիրվել են սույն զեկույցի մեջ, ուստի այս խնդիրներին անդրադառնալու կարիք չկա: Մինևս ժամանակ, կրկին անհրաժեշտ է ուսումնասիրել, թե որքանով է ՀՀ դատախազության կողմից ՀՀ պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ իրականացվող հսկողությունը իրականացվում օրենքով սահմանված լիազորություններին համապատասխան:

ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը 20-րդ հոդվածով սահմանում է, որ պատիժները կատարելու և պատժի կատարման հետ միացված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները կիրառելու նկատմամբ դատախազական հսկողությունն իրականացվում է «Դատախազության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: «Դատախազության մասին» ՀՀ օրենքը իր հերթին սահմանում է սույն լիազորությունը իրականացնելիս դատախազի իրավունքները: «Դատախազության մասին» ՀՀ օրենքը նաև սահմանում է դատախազի լիազորությունը/պարտականությունը մասնակցել պայմանական վաղաժամկետ ազատելու, պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու, ծանր հիվանդության կամ արտակարգ հանգամանքների հետևանքով պատժից ազատելու վերաբերյալ միջնորդությունների քննությանը դատարանում: Անհրաժեշտ է ուսումնասիրել գործնականում այս լիազորությունների կիրառման արդյունավետությունը և գործնականում այս լիազորությունների իրականացման պատշաճ և բարեխիղճ իրացումը: Կրկին արձանագրում ենք, որ դատախազության՝ որպես դատարանում մեղադրանքը ներկայացնող և պաշտպանող ինստիտուտ, ազատագրկվածների պատժից

ազատման հետ կապված հարցերում վերահսկողություն իրականացնող մարմին հանդիսանալը պարունակում է շահերի բախման խնդիր:

բ. Դատախազներին լրացուցիչ գործառույթներ հատկացնելիս հարկավոր է հետևողականորեն պահպանել պետական իշխանության տարանջատման սկզբունքը, որպեսզի առանձին գործերի մակարդակով դատախազները լիարժեք անկախ լինեն պետական կառավարման որևէ մարմնի միջամտությունից.

Դատախազության հանդեպ նման մոտեցումն է կոչված ապահովել մարմնի իրական անկախությունը: Սահմանադրությամբ ՀՀ դատախազի նշանակման և պաշտոնից ազատման և մի շարք այլ գործոններ կոչված են ապահովել դատախազության և դատախազների անկախությունը որևէ որոշում կայացնելիս: Դատախազությունը չի հանդիսանում իշխանության որևէ ճյուղի մաս և դատախազության համակարգը ամբողջովին ինքնակառավարվող չէ: Եվ ինչպես և կառավարման այլ մարմինների կազմավորման հարցում այստեղ ևս համեմատաբար մեծ է նախագահի դերը: ՀՀ դատախազի 3 տեղակալները, որոնցից մեկը հանդիսանում է ՀՀ զինվորական դատախազը, նշանակվում են, լիազորությունները կասեցվում են ՀՀ նախագահի կողմից: Մինևույն ժամանակ ՀՀ Նախագահի բացառիկ լիազորությունն է գլխավոր դատախազին պաշտոնանկ անելու առաջարկություն ներկայացնելու լիազորությունը: Այսքանով հանդերձ կարող ենք ամրագրել, որ ՀՀ Սահմանադրությամբ և օրենսդրությամբ ապահովված չէ դատախազության անկախությունը, ավելին, այն ուղղակի կախվածության մեջ է գտնվում ՀՀ նախագահից: Այսպիսով, ՀՀ օրենսդիր, դատական իշխանության և Կառավարության ազդեցությունը Դատախազության գործունեության վրա չի հակակշռում նախագահի կողմից իրականացվող վերահսկողությանը:

գ. Դատախազների լիազորությունները և պարտավորությունները պետք է սահմանափակվեն քրեական իրավախախտումների գործերով դատական հետապնդման իրականացման և քրեական արդարադատության համակարգի շրջանակներում հանրային շահերի պաշտպանության ոլորտում նրանց ունեցած ընդհանուր դերակատարմամբ, իսկ բոլոր մյուս գործառույթներն իրականացնելու համար հարկավոր է կազմել առանձին, պատշաճ կարգով գործող և արդյունավետ մարմիններ.

Ինչպես հետևում է վերոշարադրյալ վերլուծությունից՝ ՀՀ դատախազության դերը սահմանափակված չէ միայն քրեական արդարադատության շրջանակներով և այն ունի լայն լիազորություններ նաև ոչ քրեաիրավական ոլորտում:

4. Ամփոփում

Թե ՀՀ ազգային անվտանգության, թե ՀՀ հատուկ քննչական ծառայության և թե ՀՀ դատախազության դերը ՀՀ պետական կառավարման համակարգում առանձնահատուկ է:

Այս երեք մարմինները հանդիսանում են իրավապահ մարմիններ, ԱԱԾ-ն և ՀՔԾ-ն լիազորված են կատարել քննություն իրենց իրավասության շրջանակներում, Դատախազությունն իրավասու է հսկողություն իրականացնել այս երկու մարմինների կողմից իրականացվող հետաքննության և նախաքննության հանդեպ. ԱԱԾ-ի դեպքում՝ հետաքննության և նախաքննության, ՀՔԾ-ի դեպքում՝ նախաքննության հանդեպ:

Հանդիսանալով մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում կարևորագույն գործիքներից մեկը, այս երեք մարմինների գործունեությունը կարգավորող օրենսդրությունը սահմանում է մարդու իրավունքների, արժանապատվությունը հարգելու սկզբունքները, սակայն բարձր է նաև նրանց կողմից մարդու իրավունքների խախտումների ռիսկերը: Ընդ որում այդ խախտումները կարող են վրա հասնել թե ուղղակիորեն իրենց գործունեության ընթացքում անձի իրավունքները խախտելու դեպքում (խախտելով պետության նեգատիվ պարտավորությունները), թե խախտված իրավունքների ուղղությամբ պատշաճ, համարժեք և արդյունավետ միջոցներ չձեռնարկելու արդյունքում (պոզիտիվ պարտավորություններ իրականացնելիս):

Ազգային անվտանգության ծառայությունն ունի ՀՀ ՔՕ նախատեսված հանցատեսակներից բավականին լայն շրջանակի վերաբերյալ հետաքննչական և նախաքննական գործողություններ իրականացնելու, ներառյալ նախաքննություն հատուկ քննչական ծառայության ծառայողների՝ իրենց պաշտոնական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների վերաբերյալ գործերով, ձերբակալվածներին պահելու վայրեր ունենալու լիազորություն, ինչպես նաև հանդիսանում է հեռախոսային խոսակցությունների վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացումն ապահովող միակ մարմինը: Մինևս ժամանակ այն հանդիսանում է ազգային անվտանգության ապահովման գործառույթներ իրականացնող լիազորված մարմին: Այն ռազմականացված մարմին է (ազգային անվտանգության մարմիններում ծառայությունը զինվորական ծառայություն է): Ազգային անվտանգության մարմնի գերագույն նպատակը և կոչումը ազգային անվտանգության պաշտպանությունն է, որն իր մեջ ներառում է ոչ միայն անձի իրավունքների պաշտպանությունը, այլ նաև մի շարք այլ սկզբունքներ, ինչպիսիք են անձի, հասարակության և պետության անվտանգության ապահովվածությունը, երկրի տարածքային ամբողջականության, ինքնիշխանության, սահմանադրական կարգի, տնտեսության բնականոն զարգացման, հասարակության նյութական և հոգևոր արժեքների, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, ներքին և արտաքին սպառնալիքներից շրջակա միջավայրի պաշտպանությունը: Մինևս ժամանակ նշված հասկացություններից առնվազն մի մասը գնահատողական են և իրենց իմաստը և ընկալումը քարացած չէ, դրանք կարող են փոփոխվել ժամանակի ընթացքում կամ քաղաքականության փոփոխության արդյունքում՝ այն ինչ

Ժամանակին համարվել է հասարակության նյութական կամ հոգևոր արժեք, կարող է այդպիսին չհամարվել որոշ ժամանակ անց, ինչը թույլ է տալիս նաև այս հասկացությունների օգտագործման չարաշահում և կամայական օգտագործում: Ինչպես նշվում է նաև «Անվտանգության ծառայության հանդեպ ժողովրդավարական վերահսկողության վերաբերյալ» Վենետիկի հանձնաժողովի զեկույցի²⁷ մեջ՝ «Անվտանգության ծառայություններին բնորոշ է պետական իշխանության չարաշահման պոտենցիալը: «Ազգային անվտանգություն» եզրույթի սուբյեկտիվությունը և ճկունությունը, համադրված պետության համար դրա կենսական կարևորության հետ, նշանակում է, որ կառավարությունն այս ոլորտում ունի մանրեղու լայն շրջանակ: Նրան կարող են փորձել օգտագործել անվտանգության ծառայությունները ոչ իրավաչափ նպատակներին հասնելու համար: Այսպիսով այս մարմինների արդյունավետ կառավարումն իրականացնելու ընթացքում անհրաժեշտ է հաստատել քաղաքական չարաշահումները կանխարգելող մեխանիզմների առկայությունը:»

Ուստի Ազգային անվտանգության մարմինները կամա թե ակամա գտնվում են տարաբնույթ արժեքների և սկզբունքների միջև ընտրության կատարման առջև: Այս նախապայմանները ձևավորում են Ազգային անվտանգության ծառայության և ծառայողների մոտեցումը իրենց կողմից իրականացվող գործառնությունների նկատմամբ և ընթացքում, ինչը մարդու իրավունքների տեսանկյունից առավել վտանգավոր և ռիսկային է քրեական գործերով հետաքննություն և նախաքննություն կատարելու լիազորությունը իրականացնելիս:

Հատուկ քննչական ծառայությունն իր հերթին հանդիսանում է այն անկախ մարմինը, որը կոչված է կատարել նախաքննություն այն քրեական գործերով, որոնց կատարման ընթացքում պետական մարմնի համար անկախությունը և օբյեկտիվությունը պահպանելը լրացուցիչ մարտահրավեր է: ՀՔԾ-ն լիազորված է քննել պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց, այսինքն դատախազների, քննչական կոմիտեի ծառայողների, ոստիկանության (բացառությամբ ոստիկանության գործերի), ազգային անվտանգության (բացառությամբ սահմանապահ գործերի և զինված ստորաբաժանումների), հարկային, մաքսային, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող, քրեակատարողական և փրկարարական մարմինների պաշտոնատար անձանց ինչպես նաև օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների կողմից իրենց *պաշտոնական դիրքի կապակցությամբ* հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների վերաբերյալ: Այսպես, ՀՔԾ-ի կոչումն է ապահովել իշխանության վերոնշյալ ներկայացուցիչների կողմից ենթադրյալ խախտումների դեպքում անձի իրավունքների պաշտպանությունը, ինչի արդյունքում էլ նաև աջակցել այս մարմինների կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը, և նրանց կողմից մարդու իրավունքների հանդեպ հարգանքի երաշխավորմանը: Նմանատիպ գործունեություն իրականացնելու և հնարավոր ճնշումներից և կոռուպցիոն ռիսկերից զերծ մնալու նպատակով կարևոր խնդիր է հանդիսանում

²⁷ «Անվտանգության ծառայության հանդեպ ժողովրդավարական վերահսկողության վերաբերյալ» Վենետիկի հանձնաժողովի զեկույց, ընդունված Վենետիկի հանձնաժողովի կողմից 71 –րդ պլենար նիստում, Վենետիկ 2007 թ. հունիսի 1-2, կետ 5:

²⁸ [http://www.venice.coe.int/webforms/documents/CDL-AD\(2007\)016.aspx](http://www.venice.coe.int/webforms/documents/CDL-AD(2007)016.aspx)

այս մարմնի գերատեսչական, գործառնական, նյութական անկախության բովանդակային և իրական կերպով ապահովումը ու ՀԲԾ ծառայողների իրավունքների և սոցիալական պաշտպանվածության ապահովումը: Անհրաժեշտ է նաև ապահովել մարմնի հաշվետվողականության այնպիսի համակարգ, որն ինքնին չի դնի մարմինը գերատեսչական ենթակայության ներքո, ապահովելով ներկայացուցչական մարմնի կողմից մարմնի հանդեպ վերահսկողությունը, հանրության առջև պատասխանատվության բարձր մակարդակը և հանրային վերահսկողական մեխանիզմների առկայությունը:

ՀՀ դատախազությունը հանդիսանում է ուսումնասիրվող երեք մարմիններից միակ սահմանադրական մարմինը՝ դատախազության կազմավորումը և լիազորությունների ցանկը սահմանված են Սահմանադրության մակարդակով, ինչով և ընդգծվում է օրենքի գերակայության և արդարադատության իրականացման ոլորտում այս մարմնի կարևոր դերը:

2013 թ. մայիսին հրապարակվել է «Դատախազության գնահատման զեկույցը»²⁸: Ըստ զեկույցի հեղինակների՝ դատախազական ծառայություններին վերաբերող միջազգային և եվրոպական փաստաթղթերը բազմաթիվ տարրերում համընկնում են, իսկ դրանցում պարունակվող արժեքներն ու չափանիշները կարող են բաժանվել հետևյալ ընդգրկուն խմբերի. նորմատիվ արժեքներ, դատախազական անկախություն և հաշվետվողականություն, ծառայողական երաշխիքներ և մասնագիտական պահանջներ, և դատախազների և քրեական արդարադատության համակարգի այլ դերակատարների փոխհարաբերություններ: Իրականացված ուսումնասիրության արդյունքում ներկայացվել են նաև մի շարք առաջարկություններ ուղղված թե՛ դատախազության գործունեության հրապարակայնությանը, թե՛ դատախազների անկախության ապահովման երաշխիքների ամրագրմանը:

Մինևույն ժամանակ ՀՀ Սահմանադրությամբ դատախազության լիազորությունների, Գլխավոր դատախազի նշանակման կարգի սահմանումը կոչված է ապահովել այս մարմնի իրական անկախությունը: Նման անկախության և բավականանին մեծ ծավալի լիազորություններով է պայմանավորված այս մարմնի հանդեպ արդյունավետ վերահսկողության, դատախազության գործունեության բարձր հաշվետվողականության անհրաժեշտությունը: Դատախազությունը պարտադրում է կիրառել հասարակության առավել լուրջ բարոյական պարտավորություններ և իրականացնում է պետության կողմից կիրառվող առավել լուրջ պատիժների նկատմամբ վերահսկողություն... Իրավունքի գերակայությանը հետևող ժողովրդավարական պետություններում դատախազը պետք է այս իշխանությունը կիրառի պատասխանատվորեն և կարողանա ցուցադրել դա /պատասխանատվությունը/ հասարակությանը²⁹: Դատախազությունը իր գործունեության մեջ պետք է պատասխանատու և հաշվետու լինի առաջին հերթին հասարակության առջև: Հասարակության առջև հաշվետվողականությունը ենթադրում է նաև հասարակության ներկայացուցիչների՝ երկրի

²⁸ ՀՀ դատախազության գնահատման զեկույց, մայիս, 2013

²⁹ https://genproc.am/upload/File/Pearson_%20Report_%20ARM_%20May%202013.pdf

²⁹ Ronald F. Wright and Marc L. Miller, The Worldwide Accountability Deficit for Prosecutors, 67 Wash. & Lee L. Rev. 1587 (2010),

³⁰ <http://scholarlycommons.law.wlu.edu/wlulr/vol67/iss4/9>

օրենսդիր մարմնի առջև հաշվետվողականությունը: Հատկանշական է նշել, որ թեև ՀՀ օրենսդրությամբ սահմանված է եղել ՀՀ Դատախազության կողմից ՀՀ Ազգային ժողովին տարեկան հաղորդման ներկայացնելու պարտավորությունը, սակայն մինչ այժմ ՀՀ ազգային ժողովում Հաղորդումը բանավոր կերպով դեռևս չի քննարկվել: 2014 թ. իրականացված օրենսդրական լրացումներով, կարծես թե փորձ է կատարվել լուծում տալ այս հարցին, ինչի արդյունքում 2015թ. Գլխավոր դատախազության հաղորդումը քննարկվել է ՀՀ Ազգային ժողովի նիստի ընթացքում՝ բանավոր ընթացակարգով:

Ուսումնասիրվող բոլոր երեք մարմինները մեծապես ներգրավված են և կարևոր դերակատարում ունեն ՀՀ-ում արդարադատության սկզբունքի և երկրում օրենքի գերակայության սկզբունքի հաստատման գործընթացում: Մինևույն ժամանակ այս մարմիններն ունեն շատ լայն ծավալի լիազորություններ, իսկ ԱԱԾ-ի և Դատախազության դեպքում այն նաև բազմաբովանդակ և բազմաշերտ է: Այն դեպքում, երբ ՀՔԾ լիազորությունների շրջանակը սահմանափակված է միայն քրեական գործերի որոշակի շրջանակի վերաբերյալ նախաքննություն իրականացնելու լիազորություններով, ԱԱԾ մարմինները և Դատախազության մարմիններն ունեն առավել լայն լիազորություններ: Իսկ դատախազության լիազորությունները չեն սահմանափակվում քրեական ոլորտի շրջանակներով, ինչը հղի է վարչական մարմինների կողմից իրենց լիազորությունների իրականացման ընթացքում Դատախազությունից որոշակի կախման մեջ լինելու վտանգով:

Այսպիսով ՀՀ ԱԱԾ, ՀՀ ՀՔԾ, ՀՀ դատախազության գործունեությունը կարգավորող, այդ թվում լիազորությունները, պարտականությունները, պետական այլ մարմինների հետ փոխհարաբերությունները կարգավորող նորմերի որոշ մասը համապատասխանում է միջազգային չափորոշիչներին: Մինևույն ժամանակ առակա են մի շարք կարգավորումներ, որոնք չեն համապատասխանում միջազգային չափորոշիչներին և այս մարմինների գործունեության և մարդու իրավունքների ոլորտում ռիսկերի պատճառ են հանդիսանում: Այս առումով առավել լայն անհանգստությունների տեղիք է տալիս այս մարմինների՝ ՀՀ նախագահից ուղղակի կախվածության հանգամանքը, ինչն առավել խնդրահարույց է ՀՀ ՀՔԾ և ՀՀ ԱԱԾ պարագայում: Այս կախվածությունը արտահայտվում է թե այս մարմինների բարձրաստիճան պաշտոնատար անձանց (ՀՀ դատախազության դեպքում՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալների, ՀՀ ՀՔԾ և ՀՀ ԱԱԾ դեպքում թե մարմինների ղեկավարների, թե մարմնի ղեկավարի տեղակալների, թե մարմնի կարևորագույն ստորաբաժանումների ղեկավարների)՝ նախագահի կողմից նշանակման և պաշտոնից նրանց ազատման հարցում որոշիչ դերով: Նման պարագայում անկախ այն հանգամանքից, թե որքանով է այս մարմինների գործունեությունը կարգավորող օրենսդրությունը համապատասխանում միջազգային չափորոշիչներին, այնուամենայնիվ, մեկ մարմնից կախվածության հանգամանքը էականորեն նվազեցնում է նրանց, որպես անկախ մարմինների գործունեության արդյունավետությունը: Այս խնդիրը առավել է խորանում ՀՀ ներկայացուցչական մարմնի կողմից պատշաճ

վերահսկողական մեխանիզմների բացակայության պայմաններում: ՀՀ ԱԺ կողմից վերահսկողության մեխանիզմ մշակված է միայն ՀՀ Դատախազության նկատմամբ, և թեև այդ մեխանիզմը մինչ այժմ չի գործել իր ամբողջ ծավալով և բովանդակությամբ, 2014 թ. կատարված օրենսդրական փոփոխությունները, կարծես թե, ուղղված են վերահսկողության այդ մեխանիզմի կարգավորմանը և պատշաճ օգտագործմանը:

Հաշվի առնելով վերոշարադրյալը կարելի է կրկին անգամ արձանագրել, որ ՀՀ-ում ապահովված չէ ուսումնասիրվող երեք մարմինների հանդեպ ներկայացուցչական մարմնի կողմից բավարար վերահսկողության մեխանիզմը, ինչպես նաև այս մարմինների կողմից հասարակության առջև իրական հաշվետվողականությունը:

ՀՀ ԱԱԾ, ՀՀ ՀՔԾ, ՀՀ դատախազության գործունեության ոլորտում առկա են մի շարք այլ խնդիրներ, ինչպիսիք են ՀՀ ԱԱԾ ռազմականացված լինելու հանգամանքը, ԱԱԾ-ի գործունեության կարգավորումը ենթաօրենսդրական ակտով, օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման ընթացքում անձի իրավունքների խախտումները և այդ խախտումներին նպաստող օրենսդրական կարգավորումները, ՀՔԾ կողմից հետաքննություն իրականացնելու լիազորության բացակայությունը, ՀՀ ՔՕ սահմանված խոշտանգում հանցատեսակի՝ ՄԱԿ-ի խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիային անհամապատասխանությունը, հսկող դատախազների անկախության ոչ բավարար երաշխիքները, ինչպես նաև դատախազության համակարգում դատախազների գործունեության հանդեպ վերահսկողության շրջանակների և կարգավորումների անհստակությունը, Դատախազության գործունեությունը կարգավորող իրավական ակտերում ոչ միասնական տերմինաբանության կիրառումը, միևնույն իրավահարաբերությունների դեպքում տարբեր եզրույթների կիրառումը և այլն:

5. Առաջարկություններ

Ազգային անվտանգության ծառայություն

1. «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածում «ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության գործերում» արտահայտությունը փոխարինել «ՀՀ ոստիկանության գործերում» արտահայտությամբ
2. Ամբողջությամբ իրականացնել «Օպերատիվ – հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի համեմատական վերլուծությունը Եվրոպայի Խորհրդի սկզբունքների և չափանիշների հետ» վերլուծության արդյունքում ներկայացված առաջարկությունները
3. Հստակեցնել ԱԱԾ ծառայության ընդունման և ազատման հիմքերը և պահանջները, մասնավորապես.
 - սահմանել ԱԱԾ տնօրենի ազատման հիմքերը
 - հստակեցնել գործնական, անձնական, բարոյական հատկանիշների, պահանջների և ծառայողական անհրաժեշտությունից պայմանավորված պահանջի բովանդակությունը
4. Սահմանել չափանիշներ, որոնցով պետք է առաջնորդվի դատախազը ՀՀ ՔՕ 190-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն գործը նախաքննության մեկ այլ մարմնի հանձնելիս:
5. Սահմանել չափանիշներ, որոնցով պետք է առաջնորդվել այն դեպքում, թե որ մարմինը պետք է իրականացնի նախաքննություն ՀՀ ՔԴՕ 190 -րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքում
6. Սահմանել, թե ԱԱԾ որ մարմինը, ստորաբաժանումն է պատասխանատու իրականացնել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ:
7. Մշակել գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկը համաձայն ՀՀ Սահմանադրական դատարանի ՄԴՈ 1010 որոշման և «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասի:
8. Սահմանել Ազգային անվտանգության ծառայության, որպես ՀՀ ազգային անվտանգության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի՝ խնդիրները, նպատակները, գործառնությունները և լիազորությունները օրենքով, մեկ օրենսդրական ակտով:
9. Ազգային անվտանգության ծառայության զինվորական ծառայությունը ամբողջությամբ փոխարինել քաղաքացիական հատուկ ծառայությամբ:
10. ՀՀ ՔԴՕ հետ միասին անհրաժեշտ փոփոխություններ և լրացումներ կատարել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի մեջ:
11. Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանել այլ քննչական գործողությունների կամ նվազ միջամտող ՕՀՄ-ների կիրառման անհրաժեշտությունը մինչ առավել ոխակային միջոցների կիրառմանն անցնելը:
12. ՀՀ ՔԴՕ և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանել տեսահսկումը կամ գաղտնալսումը դադարացնելուն պես 3-օրյա ժամկետում համապատասխան մարմնի կողմից անձին կիրառված միջոցների մասին տեղեկացնելու պարտականությունը:
13. «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ստեղծել ԱԱԾ Ձերբակալվածներին պահելու վայրերի գործունեության

նկատմամբ հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խումբ:

14. Սահմանել ԱԱԾ-ի կողմից ՀՀ կառավարությանը և ՀՀ նախագահին ներկայացվող հաշվետվությունների, վիճակագրական տվյալների ներկայացման կարգը և բովանդակությունը:

15. Սահմանել ԱԱԾ-ի կողմից, մարմնի գործունեության վերաբերյալ Ազգային ժողովին տարեկան հաշվետվությունների ներկայացման պարտավորությունը և այդ հաշվետվության՝ ԱԾ-ում քննարկման ընթացակարգը:

16. Մշակել և հաստատել ԱԱԾ կողմից վիճակագրության վարման համար պարտադիր վիճակագրական դասակարգիչները, վիճակագրական տվյալների (տեղեկությունների) ցանկը և վիճակագրական հաշվետվությունների բովանդակության նկարագրությունը սահմանող ՀՀ կառավարության որոշումը:

17. Ապահովել ԱԱԾ կողմից կազմվող վիճակագրական հաշվետվությունների հասանելիությունը հանրության համար:

18. Ուսումնասիրել ԱԱԾ կանոնակարգը «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համապատասխանության տեսանկյունից, ապահովել բոլոր անհրաժեշտ իրավակարգավորումների՝ օրենքով սահմանված լինելու սկզբունքը:

Հատուկ քննչական ծառայություն

1. Անկախ հանգամանքներից Հատուկ քննչական ծառայության ծառայողի հանդեպ քրեական գործ հարուցելու դեպքում սահմանել ՀՔԾ ծառայողի լիազորությունների պարտադիր դադարեցման պայմանը:

2. ՀՀ ՔՕ սահմանել Խոշտանգում հանցատեսակը, որը կհամապատասխաներ ՄԱԿ-ի խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի սահմանմանը:

3. Մշակել և հաստատել ՀՔԾ կողմից վիճակագրության վարման համար պարտադիր վիճակագրական դասակարգիչները, վիճակագրական տվյալների (տեղեկությունների) ցանկը և վիճակագրական հաշվետվությունների բովանդակության նկարագրությունը սահմանող ՀՀ կառավարության որոշումը:

4. Ապահովել ՀՔԾ կողմից կազմվող վիճակագրական հաշվետվությունների հասանելիությունը հանրության համար:

5. ՀՔԾ համար սահմանել հետաքննություն կատարելու լիազորությունը:

6. Սահմանել ՀՀ ոստիկանության և ՀՔԾ լիազորությունը դիմելու ՀՀ դատախազությանը, հայցելով հանձնարարել ՀՔԾ-ին կատարել նախաքննություն այն գործերի վերաբերյալ, որոնց վերաբերյալ նման անհրաժեշտություն կտեսնեն, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունը ապահովելու և հանրային շահի անհրաժեշտությունից ելնելով:

7. Ամրագրել ֆիզիկական անձանց համար վավերացված հեռագրի, հեռախոսագրի, ռադիոգրի, էլեկտրոնային փոստի միջոցով հաղորդում ներկայացնելու հնարավորությունը:

8. Սահմանել դատական մարմինների կողմից, իրենց լիազորությունների իրականացման ընթացքում ոստիկանության անօրինական գործունեության մասին հայտնի դառնալու դեպքում

ՀՀ ոստիկանության և ՀՔԾ մարմիններին տեղեկություն փոխանցման հստակ ընթացակարգ, ինչպես նաև յուրաքանչյուր դեպքում քննություն իրականացնելու ՀՔԾ մարմինների պարտավորությունը:

9. Սահմանել ընտրական գործընթացների վերաբերող ՀՀ ՔՕ նախատեսված բոլոր հանցատեսակների դեպքում ՀՔԾ կողմից քննության իրականացման լիազորությունը:

10. Սահմանել ՀՔԾ պետի պաշտոնում ՀՀ ԱԺ կողմից թեկնածություն առաջադրելու իրավասության սահմանում:

11. Սահմանել ՀՔԾ-ի կողմից, մարմնի գործունեության վերաբերյալ Ազգային Ժողովին տարեկան հաշվետվությունների ներկայացման պարտավորությունը և այդ հաշվետվության՝ ԱԺ-ում քննարկման ընթացակարգը:

12. Սահմանել ՀՔԾ-ի կողմից ՀՀ կառավարությանը ներկայացվող տարեկան հաղորդումների՝ ՀՀ կառավարության նիստում քննարկման կարգը:

13. Սահմանել Ոստիկանության կողմից ոստիկանության հսկողության ներքո գտնվող անձանց կամ նրանց մոտ լուրջ վնասվածքների առկայության վերաբերյալ ՀՔԾ -ին հայտնելու պարտադիր պահանջ:

Դատախազություն

1. Միասնականացնել Դատախազության գործունեությունը կարգավորող իրավական ակտերում կիրառվող տերմինաբանությունը:

2. Առանձին կերպով սահմանել գլխավոր դատախազի պաշտոնում նշանակվելու, առաջադրվելու համար նախատեսված նվազագույն չափանիշները:

3. Հստակ սահմանել, թե որ դեպքերում է դատախազը իրավասու հրաժարվել մեղադրանքից և որ դեպքերում՝ պարտավոր:

4. «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը շարադրել որպես նույն հոդվածի առանձին մաս:

5. Պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու դեպքում սահմանել դատախազի *պարտականությունը* յուրաքանչյուր դեպքում մինչև հայց հարուցելը նախազգուշացնելու պետության շահերին վնաս հասցրած անձին վնասը կամովին հատուցելու մասին:

6. Հստակեցնել դատախազի, իր գործունեության ընթացքում անկախության երաշխիքները: Հսկող դատախազի անկախության ապահովման նկատառումներից ելնելով վերացնել վերադաս դատախազի կողմից վերաքննիչ բողոք բերելու իրավունքը. ինչպես նաև դատախազի կողմից ներկայացված բողոքը՝ վերադաս դատախազի կողմից հետ վերցնելու իրավունքը:

7. Հստակեցնել ՀՀ դատախազության համակարգում դատախազների գործունեության վերաբերյալ վերահսկողության շրջանակները:

8. Ամրագրել դատախազի «ծառայողական պարտականություններ» եզրույթի սահմանումը:

9. Սահմանել ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնում ՀՀ ԱԺ-ի կողմից թեկնածության առաջադրման իրավասությունը:

6. Հավելվածներ

Հավելված 1 Պաշտոնատար անձանց լիազորությունները ԱԱԾ գործունեության ընթացքում			
Պաշտոնատար անձ			Մարմնի անմիջական ղեկավար
Մարմնի անվանում	ՀՀ Նախագահ	ԱԱԾ տնօրեն	
Ազգային անվտանգության ծառայություն	Ստեղծում, վերակազմակերպում է ծառայությունը, դադարեցնում է նրա գործունեությունը		
	Նշանակում և ազատում է Ծառայության տնօրենին	Առաջարկում է ծառայության տնօրենի թեկնածուին	
	Նշանակում է տնօրենի տեղակալներին		
ՀՀ Պետական պահպանության ծառայություն	Իրականացնում է Ծառայության կառավարումը	Իրականացնում է Ծառայության ընդհանուր ղեկավարումը	Պահպանության ծառայության ղեկավար
ՀՀ ազգային անվտանգության հանրապետական մարմնի համակարգում գործող օպերատիվ-տեխնիկական գլխավոր վարչությունը		Իրականացնում է Գլխավոր վարչության ընդհանուր ղեկավարումը	Գլխավոր վարչության պետ
	Նշանակում և ազատում է պաշտոնից վարչության ղեկավարին ՀՀ ազգային անվտանգության հանրապետական մարմնի ղեկավարի ներկայացմամբ	ՀՀ նախագահին ներկայացնում է Գլխավոր վարչության ղեկավարի թեկնածուին	
	Հաստատում է Գլխավոր վարչության կանոնադրությունը, կառուցվածքը և ծառայողների թվաքանակը ՀՀ ազգային անվտանգության հանրապետական մարմնի ղեկավարի ներկայացմամբ	Մշակում և Նախագահին է ներկայացնում Գլխավոր վարչության կանոնադրությունը, կառուցվածքը և ծառայողների թվաքանակը	
Սահմանապահ գործեր	Նշանակում է պաշտոնի և պաշտոնից ազատում է Սահմանապահ գործերի հրամանատարին		Սահմանապահ գործերի հրամանատար



ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի
Հանրապետություն, Վանաձոր
Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am
Ե/2014- 28.04/163
28.04.2014 թ.

ՀՀ վարչապետ
Հովիկ Արրահամյանին

Հարգելի պարոն Արրահամյան,

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել հետևյալ տեղեկատվությունը

- Որ իրավական ակտով է սահմանվում Ազգային անվտանգության ծառայության կառուցվածքը.
- Որ իրավական ակտով են սահմանվում Ազգային անվտանգության մարմինների ծառայողների գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբի պաշտոնները:

Խնդրում եմ տրամադրել նաև վերոնշյալ իրավական ակտերի պատճենները:

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5 օրվա ժամկետում:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ տեղեկատվություն ստանալու հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքներով
կազմակերպության նախագահ՝

Վատարդո՝ Ա. Զալյան
azalyan@hcav.am

Արթուր Մաքունց





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ
СЛУЖБА НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЗАМЕСТИТЕЛЬ ДИРЕКТОРА

Երևան-1, Նալբանդյան փ. 104

Երևան-1, ул. Налбандяна 104

«04» 05 20/18.

N 11/288

Օր. ֆ.

«Հ Լոռու մարզ, ք. Վանաձոր
Տիգրան Մեծի պողոտա 59
Հելսինկյան քաղաքացիական
ասամբլեայի Վանաձորի գրասենյակի
ղեկավար պարոն Ա. Սաքունցին»

«Հ վարչապետին հասցեագրված Ձեր 28.04.2014թ. N Ե/2014-28.04/163 գրության կապակցությամբ հայտնում եմ, որ «Հ ազգային անվտանգության ծառայության կառուցվածքը և ազգային անվտանգության մարմինների ծառայողների գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոնները սահմանված են «Հ կառավարության որոշումներով: Նշված որոշումները կրում են համապատասխանաբար «հույժ գաղտնի» և «գաղտնի» դրոշմագրեր (պարունակում են պետական և ծառայողական գաղտնիք) և համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» «Հ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի Ձեզ տրամադրվել չեն կարող:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված 3. ՀՀ ԱԱԾ քննիչների կողմից քննվող գործերի աղյուսակային պատկեր

Բոլոր հոդվածների համարակազմում/քանակը	Գլուխ/հոդված	Գլխի/հոդվածի համարը		Գլխի/հոդվածի վերնագիրը	Աստղանիշով նշված հոդվածները	Առանց աստղանիշի հոդվածները
	Գլուխ	22		Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունները		
1.	Հոդված	188		Ապօրինի ձեռնարկատիրությունը*	1.	
2.	Հոդված	189		Կեղծ ձեռնարկատիրությունը*	2.	
3.	Հոդված	190		Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելու ընդունված ակտի լիցիտի		1.
4.	Հոդված	205		Հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց խոտրելն խուսափելը*	3.	
5.	Հոդված	206		Քաղաքացու կողմից հարկ վճարելուց խուսափելը ^{30*}	4.	
6.	Հոդված	215		Մաքսանենգությունը ³¹		
	Գլուխ	23		Հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները		
7.	Հոդված	217		Ահաբեկչությունը		2.
8.	Հոդված	217 ¹		Ահաբեկչության ֆինանսավորումը		3.
9.	Հոդված	219		Շենքեր, շինություններ, տրանսպորտի, հաղորդակցության կամ կապի միջոցները զավթելը		4.
10.	Հոդված	220		Ծովահենությունը		5.
11.	Հոդված	221		Օդանավ, նավ կամ երկաթուղային շարժակազմ փախցնելը կամ զավթելը		6.
12.	Հոդված	224		Օրենքով չնախատեսված զինված միավորումներ ստեղծելը կամ դրանց ակցելը		7.
13.	Հոդված	226		Ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելը		8.
14.	Հոդված	233		Ռադիոակտիվ նյութերի ապօրինի շրջանառությունը		9.
15.	Հոդված	234		Ռադիոակտիվ նյութեր հափշտակելը կամ շորթելը		10.
16.	Հոդված	235		Ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ զենք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը*	5.	
17.	Հոդված	250		Միջազգային թռիչքների կանոնները խախտելը		11.
	Գլուխ	25		Հասարակական կարգի եւ բարոյականության դեմ ուղղված հանցագործությունները		
18.	Հոդված	263		Պոռնոկազմակերպչական նյութեր կամ առարկաներ տարածելը*	6.	
	Գլուխ	26		Բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունները		
19.	Հոդված	266		Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց արտադրանքների ապօրինի շրջանառությունն իրացնելու կամ պատրաստելու ակտի կամ դրանց ապօրինի իրացնելը*	7.	
20.	Հոդված	268		Թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի առույթունն առանց իրացնելու նպատակի*	8.	
21.	Հոդված	271		Թմրամիջոցներ գործածելը ^{32*}	9.	
22.	Հոդված	272		Թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածմանը ընդդեմ կամ ներգրավելը*	10.	

³⁰ Հոդվածն ուժը կորցրել է 29.11.11 ՀՕ-295-Ն օրենքով, սակայն ՀՀ քր. դատ օր-ում պահպանվում է

³¹ Սույն հոդվածով նախատեսված հանցագործության վերաբերյալ գործերով նախաքննությունը կատարում են ազգային անվտանգության կամ մաքսային մարմինների քննիչները:

³² Հոդվածն ուժը կորցրել է 26.05.08 ՀՕ-76-Ն, սակայն Քր. դատ-ում պահպանվում է

23.	Հողված	275	Խիստ ներգործող կամ թունավոր նյութերի ապօրինի շրջանառությունն ելու նպատակով կամ դրանք ապօրինի իրացնելը*	11.	
	Գլուխ	28	Սահմանադրական կարգի հիմունքների և պետության անվտանգության դեմ ստանդարտները		
24.	Հողված	299	Հողը փչացնելը		12.
25.	Հողված	302	Լրտեսությունը		13.
26.	Հողված	303	Դիվերսիան		14.
27.	Հողված	304	Վնասարարությունը		15.
28.	Հողված	305	Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանությունը		16.
29.	Հողված	306	Պետական գաղտնիք հրապարակելը		17.
30.	Հողված	307	Պետական գաղտնիք պարունակող փաստաթղթերի կամ համակարգչային ատվության հետ		18.
	Գլուխ	30	Կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունները		
31.	Հողված	325	Փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձևաթղթեր, տրանսպորտային միջոցների սահմանիչներ կեղծելը, իրացնելը կամ օգտագործելը* ³³	12.	
32.	Հողված	329	Պետական սահմանն ապօրինի հատելը		19.
33.	Հողված	329.1	Անօրինական միգրացիայի կազմակերպումը		20.
34.	Հողված	330	Պետական սահմանի նշանները վերցնելը, տեղաշարժելը կամ ոչնչացնելը		21.
	Գլուխ	33	Խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված գործությունները		
35.	Հողված	384	Ագրեսիվ պատերազմը		22.
36.	Հողված	385	Ագրեսիվ պատերազմի հրապարակային կոչերը		23.
37.	Հողված	386	Զանգվածային ոչնչացման զենք արտադրելը կամ տարածելը		24.
38.	Հողված	387	Պատերազմ վարելու արգելված միջոցներ և մեթոդներ կիրառելը		25.
39.	Հողված	388	Ահաբեկչական գործողությունն օտարերկրյա պետության կամ միջազգային ակերպության ներկայացուցչի		26.
40.	Հողված	389	Միջազգային ահաբեկչությունը		27.
41.	Հողված	390	Միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի լուրջ խախտումները ծ ընդհարումների		28.
42.	Հողված	391	Անգործությունը կամ հանցավոր հրաման արձակելը զինված ընդհարման մասկ		29.
43.	Հողված	392	Մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները		30.
44.	Հողված	393	Ցեղասպանությունը		31.
45.	Հողված	394	Էկոցիդը		32.
46.	Հողված	395	Վարձկանությունը		33.
47.	Հողված	396	Միջազգային պաշտպանությունից օգտվող անձանց կամ հաստատության վրա ակվելը		34.
48.	Հողված	397	Միջազգային պայմանագրերով պահպանվող տարբերանշաններն ապօրինի ործելը		35.
49.	Հողված	397 ¹	Ցեղասպանությունը և խաղաղության ու մարդկության անվտանգության դեմ ստ		36.

³³ *Աստղանիշով նշված հողվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով ԱՄՕ մարմինները կատարում են նախաքննություն, եթե այդ հանցագործությունները բացահայտվել են իրենց վարույթում գտնվող գործի քննության ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ գործը դատախազը հանձնում է նախաքննության այլ մարմնի:

Հավելված 4 Օպերատիվ - հետախուզական միջոցառումները և դրանց կատարման համար լիազորված մարմինները /Ըստ «Օպերատիվ -հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի/

	Ոստ իկանություն	Ռեզմ ական ուստիկանությ ուն	Ազգայ ին անվտանգությ ան մարմիններն	Մ աքսային մարմինն եր	Հ արկային մարմինն եր	Քրեակատ արողական ծառայության մարմիններ	Ա նհրաժեշտ է դատարա նի որոշում
1. օպերատիվ հարցում	X	X	X	X	X	X	
2. օպերատիվ տեղեկությունների ձեռքբերում.	X	X	X	X	X	X	
3. համեմատական հետազոտումների նմուշների հավաքում	X	X	X	X	X	X	
4. հսկիչ գնում					X		
5. վերահսկելի մատակարարում և գնում	X	X	X	X	X	X	
6. իրերի և փաստաթղթերի հետազոտում	X	X	X	X	X	X	
7. արտաքին դիտում	X	X	X	X	X	X	X ³⁴
8. ներքին դիտում	X	X	X	X		X	X
9. անձի նույնացում	X	X	X	X		X	
10. շենքերի, կառույցների, տեղանքի, շինությունների և տրանսպորտային միջոցների հետազոտում	X	X	X		X	X	

³⁴ Արտաքին դիտում օպերատիվ-հետախուզական միջոցառումը կարող են անցկացվել միայն դատարանի թույլտվությամբ, եթե արտաքին դիտման արդյունքների ամրագրումն առանց տեխնիկական միջոցների օգտագործման հնարավոր չէ, և անձը (անձինք), որի (որոնց) նկատմամբ իրականացվում է արտաքին դիտումը, ողջամտորեն չէր (չէին) կարող ենթադրել դրա անցկացման հնարավորության մասին

11. նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկում	X	X	X			X	X
12. հեռախոսային խոսակցություններ ի վերահսկում	X		X			X	X
13. օպերատիվ ներդրում	X	X	X	X	X	X	
14. օպերատիվ փորձարարություն	X	X	X	X	X	X	
15. ֆինանսական տվյալների մատչելիության ապահովում և ֆինանսական գործարքների զաղտնի վերահսկում	X		X				X
16. կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում	X	X	X				X

Հավելված 5 Գաղտնի քննչական գործողությունների կատարման հիմքերը և պայմանները /ըստ ՀՀ ՔԴՕ նախագծի/

	Պայմանները Գաղտնի Քննչական գործողության անվանումը	Ի՞նչ սպացույցներ է անհրաժեշտ ձեռք բերել	Ո՞ր ծանրության հանցագործության դեպքում	Ու՞մ նկատմամբ
1.	Ներքին դիտում		Ծանր և առանձնապես ծանր ենթադրյալ հանցագործությունների վերաբերյալ վարույթներով	1) այն ֆիզիկական անձի նկատմամբ, ում վերաբերյալ առկա են ենթադրյալ հանցանք կատարելու մասին վկայող փաստեր.
2.	Արտաքին դիտում		Ծանր և առանձնապես ծանր ենթադրյալ հանցագործությունների վերաբերյալ վարույթներով	2) մեղադրյալի նկատմամբ.
3.	Նամակագրության և այլ ոչ թվային Հաղորդումների վերահսկում		Ծանր և առանձնապես ծանր ենթադրյալ հանցագործությունների վերաբերյալ վարույթներով	3) այն ֆիզիկական անձի նկատմամբ, ում վերաբերյալ առկա է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ նա պարբերաբար անմիջականորեն հաղորդակցվել է կամ ողջամտորեն կարող է հաղորդակցվել մեղադրյալի հետ.
4.	Թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում	Բավարար հիմքեր կան ենթադրելու, որ դրա արդյունքում կարող է ձեռք բերվել սովյալ վարույթի համար նշանակություն ունեցող սպացույց և, միաժամանակ, այլ եղանակով այդ սպացույցի ձեռքբերումը ողջամտորեն անհնար է	Ծանր և առանձնապես ծանր ենթադրյալ հանցագործությունների վերաբերյալ վարույթներով ՀՀ ՔԴՕ նախագծի 256-րդ հոդվածի 4-րդ հոդվածով նախատեսված) նաև ոչ մեծ կամ միջին ծանրության ենթադրյալ հանցագործությունների վերաբերյալ վարույթներով	4) այն իրավաբանական անձի նկատմամբ, որի վերաբերյալ առկա է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ դրա գործունեությունն ամբողջությամբ կամ վերաբերելի մասով կարող է կառավարվել, վերահսկվել կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվել են սույն մասի 1-ին կամ 2-րդ կետով նշված անձանց կողմից:
5.	Ֆինանսական գործարքների վերահսկում		Ծանր և առանձնապես ծանր ենթադրյալ հանցագործությունների վերաբերյալ վարույթներով	Միայն այն դեպքում, երբ դրա արդյունքում ստացվելիք տեղեկությունները կարող են վերաբերել մեղադրյալին կամ այն իրավաբանական անձին, որի կապակցությամբ առկա է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ դրա գործունեությունն ամբողջությամբ կամ վերաբերելի մասով կարող է կառավարվել, վերահսկվել կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվել մեղադրյալի կողմից
6.	Կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում		Ծանր և առանձնապես ծանր ենթադրյալ հանցագործությունների վերաբերյալ վարույթներով	Բացառապես այն անձի նկատմամբ, ում վերաբերյալ առկա են ենթադրյալ հանցանք կատարելու մասին վկայող փաստեր

Հավելված 6 Անփոփ տեղեկատվություն ՀՀ ԱԱԾ, ՀՀ ՀՔԾ և ՀՀ Դատախազության կարգավիճակի և գործունեության վերաբերյալ

	ՀՀ Ազգային անվտանգության ծառայության www.sns.am	ՀՀ հատուկ քննչական ծառայություն www.investigatory.am	ՀՀ դատախազություն www.genproc.am
Մարմնի իրավական կարգավիճակը	ՀՀ Կառավարությանն առնթեր մարմին	Անկախ քննչական մարմին	Անկախ սահմանադրական մարմին
Գործունեությունը կարգավորող հիմնական իրավական ակտեր	ՀՀ Սահմանադրություն, 27.11.2005 ՀՀ ՔԴՕ, 01.07.1998 «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենք, 24.01.2002 «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենք, 11.04.2003 «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենք, 22.10.2007	ՀՀ Սահմանադրություն, 27.11.2005 ՀՀ ՔԴՕ, 01.07.1998 «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենք, 28.11.2007	ՀՀ Սահմանադրություն, 27.11.2005 ՀՀ ՔԴՕ, 01.07.1998 «Դատախազության մասին» ՀՀ օրենք, 22.02.2007
Լիազորությունները	ա) հետախուզական գործունեություն. բ) հակահետախուզական գործունեություն գ) ռազմական հակահետախուզական գործունեություն. դ) պետական սահմանի պահպանություն. ե) պայքար հանցագործությունների դեմ	1) իրականացնում է ՀՀ ՔԴՕ նախատեսված՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց իրենց պաշտոնական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների, ինչպես նաև ընտրական գործընթացների հետ կապված քրեական գործերով նախաքննություն:	1) հարուցում է քրեական հետապնդում. 2) հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ. 3) դատարանում պաշտպանում է մեղադրանքը. 4) պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան. 5) բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները. 6) հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ:
Միջազգային իրավունքի վերաբերելի հիմնական ակտեր ³⁵	PACE Recommendation 1402 (1999) on the Control of internal security services in Council of	Opinion of the Commissioner for Human Rights Concerning Independent and Effective	UN • Guidelines on the Role of Prosecutors Adopted by

³⁵ Ներկայացված չեն համընդհանուր, մարդու հիմնարար իրավունքները և ազատությունները սահմանող իրավական ակտերը:

	<p>Europe member states.</p> <p>PACE Recommendation 1713 (2005) on Democratic oversight of the security sector in member states.</p>	<p>Determination of Complaints Against the Police. CommDH(2009)4, 12 March 2009</p> <p>CPT Standards, CPT/Inf/E (2002) 1 - Rev. 2013</p> <p>CoE CoM Resolution (97) 24 on the Twenty Guiding Principles for the Fight Against Corruption, Adopted by the Committee of Ministers on 6 November 1997 at the 101st session of the Committee of Ministers.</p> <p>General Comment No. 3 of the Committee against Torture on Implementation of article 14 by States parties of the Convention against Torture and other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment, 13 December 2012</p>	<p>the Eighth United Nations Congress on the Prevention of Crime and the Treatment of Offenders, Havana, Cuba, 27 August to 7 September 1990</p> <ul style="list-style-type: none"> • Resolution 17/2, adopted by Commission on Crime Prevention and Criminal Justice (CCPCJ), Strengthening the rule of law through improved integrity and capacity of prosecution services, 2008 • “Strengthening the rule of law through improved integrity and capacity of prosecution services” Report of the Secretary-General, 24 January 2011 <p>CoE</p> <ul style="list-style-type: none"> • The role of public prosecution in the criminal justice system, Recommendation Rec(2000)19, adopted by the Committee of Ministers of the CoE on 6 October 2000 • Opinion No 3(2008) of the Consultative Council of European Prosecutors (CCPE) on “The Role of Prosecution Services outside the Criminal Law Field” • Opinion No. 5 on “Public prosecution and juvenile justice Yerevan Declaration”, adopted during the 5th plenary meeting the CCPE, which took place in (Yerevan (Armenia), 19-21 October 2010). • Opinion No. 6 of the Consultative Council of European Prosecutors (CCPE) on “The relationship between prosecutors and the prison administration” adopted during the 6th plenary meeting (Strasbourg, 24-25 November 2011) • Opinion (2012) No. 7 of the Consultative Council of European Prosecutors (CCPE) on “The Management of the Means of Prosecution Services”
--	--	--	--

			<p>Adopted by the CCPE at its 7th Plenary Meeting (Strasbourg, 26-27 November 2012)</p> <ul style="list-style-type: none"> Opinion No.12 (2009) of the Consultative Council of European Judges (CCJE) and Opinion No.4 (2009) of the Consultative Council of European Prosecutors (CCPE) to the Attention of the Committee of Ministers of the Council of Europe on the Relations Between Judges and Prosecutors in a Democratic Society. Standards of professional responsibility and statement of the essential duties and rights of prosecutors, adopted by the International Association of Prosecutors on the twenty third day of April 1999
Մարմնի ղեկավար	ՀՀ ազգային անվտանգության ծառայության պետ	ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ	ՀՀ գլխավոր դատախազ
Մարմնի ղեկավարի պաշտոնի նշանակումը և ազատումը	Նշանակվում և պաշտոնից ազատվում է ՀՀ Նախագահի կողմից ՀՀ վարչապետի առաջարկությամբ: Պաշտոնավարման ժամկետը սահմանված չէ:	Նշանակվում է ՀՀ Նախագահի կողմից ՀՀ վարչապետի ներկայացմամբ: Պաշտոնավարման ժամկետը՝ 6 տարի:	Նշանակվում է ՀՀ Ազգային Ժողովի կողմից ՀՀ Նախագահի առաջարկությամբ: Պաշտոնավարման ժամկետը՝ 6 տարի:
Երահ սկողողությունը	ՀՀ ազգային ժողով	Ողղակի վերահսկողության մեխանիզմ սահմանված չէ: Վերահսկողության հնարավոր է իրականացնել օրենսդրական գործունեության և պատգամավորական հարցումների, հանձնաժողովների հարցումների միջոցով:	Ողղակի վերահսկողության մեխանիզմ սահմանված չէ: Վերահսկողության հնարավոր է իրականացնել օրենսդրական գործունեության և պատգամավորական հարցումների, հանձնաժողովների հարցումների միջոցով:
	ՀՀ նախագահ	ԱԱԾ մարմինները պարտավոր են ՀՀ Նախագահին ու նրա հանձնարարությամբ այլ պետական մարմիններ և կազմակերպություններ տեղեկատվություն ներկայացնել ՀՀ ազգային անվտանգությանն առնչվող հարցերի մասին: ³⁶	Հատուկ քննչական ծառայության պետը յուրաքանչյուր տարի ՀՀ Նախագահին է ներկայացնում գրավոր հաղորդում՝ հատուկ քննչական ծառայության նախորդ տարվա գործունեության մասին: Հատուկ քննչական
			Գլխավոր դատախազը յուրաքանչյուր տարի՝ մինչև ապրիլի 1-ը, ՀՀ Ազգային ժողով է ներկայացնում հաղորդում ՀՀ դատախազության նախորդ տարվա գործունեության մասին:
			Գլխավոր դատախազը յուրաքանչյուր տարի՝ մինչև ապրիլի 1-ը, ՀՀ Ազգային Ժողովի հետ մեկտեղ, ՀՀ Նախագահին է ներկայացնում հաղորդում ՀՀ դատախազության նախորդ տարվա գործունեության մասին:

³⁶ Նույնը

			<p>ծառայության պետի նկատմամբ կիրառում է կարգապահական տույժ:</p> <p>Բարձրագույն կոչում ունեցողների նկատմամբ կիրառում է կոչման իջեցում՝ մեկ աստիճանով կարգապահական տույժը:</p> <p>Օրենքով սահմանված դեպքերում կիրառել նաև խրախուսման միջոցներ:</p> <p>Կարող է երկարաձգել ՀՔՕ պետի և պետի տեղակալի պաշտոնավարման սահմանային տարիքը 2 տարով:</p>	<p>Գլխավոր դատախազի առաջարկությամբ նշանակում է Գլխավոր դատախազի տեղակալներին:</p> <p>Գլխավոր դատախազի ներկայացմամբ Գլխավոր դատախազի տեղակալների նկատմամբ կիրառում է խիստ նկատողություն, դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով, պաշտոնից ազատում տույժերը:</p> <p>Գլխավոր դատախազի նկատմամբ կիրառում է դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով տույժը:</p>
ՀՀ կառավարություն	ԱԱԾ մարմինները պարտավոր են ՀՀ կառավարություն ու նրանց հանձնարարությամբ այլ պետական մարմիններ և կազմակերպություններ տեղեկատվություն ներկայացնել ՀՀ ազգային անվտանգությանն առնչվող հարցերի մասին: ³⁷	Հատուկ քննչական ծառայության պետը յուրաքանչյուր տարի ՀՀ կառավարություն է ներկայացնում գրավոր հաղորդում՝ հատուկ քննչական ծառայության նախորդ տարվա գործունեության մասին:	Ուղղակի վերահսկողության լիազորություններ սահմանված չեն: Սահմանված են դատախազության գործունեությունը կարգավորող որոշ իրավակարգավորումների ընդունման լիազորություններ, ինչիսիք են դատախազի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների կամ հիվանդությունների ցանկը, համազգեստի, տարբերանշանների նկարագիրը և դրանց կրման կարգը:	
ՀՀ դատարաններ	Դատարանը նախնական վերահսկողություն է իրականացնում օպերատիվ - հետախուզական միջոցառումների կատարման վերաբերյալ: Մասնավորապես, որոշ օպերատիվ-հետախուզական միջոցառումները կարող են իրականացվել միայն դատարանի թույլտվությամբ: Դատարանի post factum վերահսկողությունը մարմնի	Դատարանի post factum վերահսկողություն է իրականացնում ընդունված որոշումների, գործողությունների /անգործության/ նկատմամբ:	Դատարանի post factum վերահսկողություն է իրականացնում ընդունված որոշումների, գործողությունների /անգործության/ նկատմամբ:	

³⁷ Նույնը

		կողմից ընդունված որոշումների նկատմամբ:		

Հավելված 7

Թիվ 1402 (1999)1 հանձնարարական

Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունների ներքին անվտանգության ծառայությունների վերահսկում

Քաղվածք Եվրոպայի Խորհրդի Պաշտոնական տեղեկագրից՝ 1999թ. ապրիլ

1. Վեհաժողովի մասնակիցներն ընդունում են, որ ներքին անվտանգության ծառայություններն արժեքավոր գործունեություն են իրականացնում ժողովրդավարական պետությունների համար՝ ապահովելով նրանց ազգային անվտանգությունը և ժողովրդավարական պետությանը բնորոշ ազատ կարգը:

2. Այդուհանդերձ, Վեհաժողովի մասնակիցներին մտահոգում է այն հանգամանքը, որ անդամ պետությունների ներքին անվտանգության ծառայությունների աշխատակիցներն իրենց ընկալմամբ ազգային անվտանգության և հայրենիքի շահերը հաճախ վեր են դասում անհատի իրավունքներից: Եվ քանի որ ի լրումն վերոնշյալի՝ ներքին անվտանգության ծառայությունները հաճախ պատշաճ կարգով չեն վերահսկվում, օրենսդրական և սահմանադրական երաշխիքների բացակայության պարագայում առկա է իշխանության չարաշահման և մարդու իրավունքների խախտման նշանակալի վտանգ:

3. Վեհաժողովի մասնակիցների կարծիքով՝ առկա իրավիճակը կարող է վտանգավոր լինել: Թեև ներքին անվտանգության ծառայությունները պետք է լիազորված լինեն իրագործելու առկա ակնհայտ սպառնալիքներից ազգային անվտանգությունը և ժողովրդավարական պետության ազատ կարգը պահպանելու իրենց օրինական նպատակը, նրանց ձեռքերը չպետք ազատ արձակվեն մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները խախտելու համար:

4. Փոխարենը, հարկավոր է հստակ հավասարակշռություն հաստատել ժողովրդավարական պետության՝ ազգային անվտանգության պահպանման իրավունքի և անհատ մարդու իրավունքների միջև: Մարդու իրավունքների մի մասը (օրինակ՝ խոշտանգումներից կամ անմարդկային վերաբերմունքից զերծ մնալու իրավունք) բացարձակ են, և պետական մարմինները, այդ թվում՝ ներքին անվտանգության ծառայությունները երբեք չպետք է միջամտեն դրանց իրացմանը: Այդուհանդերձ, այլ դեպքերում թե որն է գերակայում՝ անհատ մարդու իրավունքը, թե ժողովրդավարական պետությունում ազգային անվտանգությունը, պետք է որոշվի հիմք ընդունելով համաչափության և օրինականության սկզբունքներով՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային համապատասխան:

5. Ներքին անվտանգության ծառայությունների կողմից իշխանության չարաշահման, ուստիև մարդու իրավունքների լուրջ խախտումների վտանգն առաջանում է այն ժամանակ, երբ ներքին անվտանգության ծառայությունների աշխատանքը կազմակերպվում է որոշակի պայմաններում, երբ դրանց աշխատակիցներն օժտվում են որոշակի լիազորություններով, ինչպես օրինակ՝ կանխարգելիչ և հարկադրանքի միջոցների կիրառում, որոնք ընդգրկում են բռնի միջոցներ (օրինակ՝ մասնավոր գույքը խուզարկելու, քրեական հետաքննություն կատարելու, ձերբակալելու և կալանավորելու լիազորություններ), կամ երբ նրանց նկատմամբ սահմանվում է ոչ պատշաճ վերահսկողություն (գործադիր, օրենսդիր և դատական իշխանությունների կողմից), ինչպես նաև այն դեպքերում, երբ նման ծառայությունների աշխատակիցները չափից մեծ թիվ են կազմում:

6. Ուստի, Վեհաժողովի մասնակիցներն առաջարկում են, որ ներքին անվտանգության ծառայությունների աշխատակիցներին չպետք է թույլատրվի կատարել քրեական հետաքննություն, ձերբակալել կամ կալանավորել մարդկանց, ինչպես նաև պետք չէ նրանց ներգրավել կազմակերպված հանցավորության դեմ պայքարում, բացառությամբ խիստ յուրահատուկ դեպքերի, երբ կազմակերպված հանցավորությունն ակնհայտ վտանգ է ներկայացնում ժողովրդավարական պետության ազատ կարգի պահպանման համար: Ներքին անվտանգության ծառայությունների օպերատիվ գործողությունների արդյունքում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով պաշտպանված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների իրացման ցանկացած խոչընդոտումը պետք է թույլատրված լինի օրենքով և, ցանկալի է, նաև դատավորի նախնական կարգադրությամբ: Այս առումով հատկապես կարևոր է, որ իշխանության երեք ճյուղերն էլ արդյունավետ նախնական և հետադարձ ժողովրդավարական վերահսկողություն հաստատեն ներքին անվտանգության ծառայությունների նկատմամբ:

7. Վեհաժողովի մասնակիցների կարծիքով՝ յուրաքանչյուր առանձին երկիր պետք է արդյունավետորեն կատարի իր ներքին անվտանգության պահանջները՝ ապահովելով միասնական ժողովրդավարական չափանիշին համապատասխանող հսկողության պատշաճ միջոցներ: Այս ընդհանուր չափանիշը պետք է ապահովի, որ ներքին անվտանգության ծառայությունների գործողությունները բխեն միմիայն ազգային շահերից՝ մարդու հիմնարար ազատությունների ամբողջական պահպանմամբ և չկիրառվեն որպես ճնշման կամ անհարկի ազդեցության միջոց:

8. Այսպիսով, Վեհաժողովի մասնակիցները հանձնարարում են Նախարարների կոմիտեին կազմել ներքին անվտանգության ծառայությունների մասին շրջանակային կոնվենցիա՝ ներառելով սույն հանձնարարականի անբաժանելի մասը կազմող ներքոշարադրյալ ուղեցույցները:

Ուղեցույցներ

Ա. Ներքին անվտանգության ծառայությունների կազմակերպման վերաբերյալ

i. Ներքին անվտանգության բոլոր ծառայությունները պետք է կազմակերպվեն և գործեն կանոնադրական հիմքերի վրա, այն է՝ խորհրդարանում պատշաճ օրինաստեղծ գործընթացի արդյունքում ընդունված ազգային օրենքների հիման վրա, որոնք պետք է լինեն ամբողջապես հրապարակային:

ii. Ներքին անվտանգության ծառայությունների միակ խնդիրը պետք է լինի ազգային անվտանգության պահպանումը: Ազգային անվտանգության պահպանումը սահմանվում է որպես պայքար պետության ժողովրդավարական կարգի և բնակչության առջև ծառայած ակնհայտ վտանգների դեմ: Ազգային անվտանգության ծառայությունների գործունեության շրջանակը չպետք է տարածվի տնտեսական նպատակների իրագործման կամ որպես այդպիսին կազմակերպված հանցագործության դեմ պայքարի վրա: Նշված ծառայությունները պետք է առնչվեն տնտեսական նպատակներին կամ կազմակերպված հանցավորություններին միմիայն այն դեպքերում, երբ դրանք ակնհայտ վտանգ են ներկայացնում ազգային անվտանգության համար:

iii. Գործադիր իշխանությունը չի կարող ընդլայնել ներքին անվտանգության ծառայությունների լիազորությունները: Փոխարենը, նման նպատակները պետք է սահմանվեն օրենքով և հակասական մեկնաբանությունների պարագայում մեկնաբանվեն դատական իշխանությունների (այլ ոչ թե իրավահաջորդ կառավարությունների) կողմից: Ներքին անվտանգության ծառայությունները չպետք է ծառայեն որպես քաղաքական գործիք՝ քաղաքական կուսակցություններին, ազգային փոքրամասնություններին, կրոնական խմբերին կամ բնակչության այլ որոշակի խմբերին ճնշելու համար:

iv. Յանկալի է, որ ներքին անվտանգության ծառայությունները չկազմավորվեն զինվորական կառույցի ներքո: Քաղաքացիական անվտանգության ծառայությունները չպետք է կազմավորվեն ռազմական կամ կիսառազմական հաստատությունների նմանությամբ:

v. Անդամ պետությունները չպետք է իրենց ներքին անվտանգության ծառայությունները ֆինանսավորեն ոչ կառավարական աղբյուրներից, այլ՝ միմիայն պետական բյուջեի միջոցներով: Խորհրդարանի հաստատմանը ներկայացվող բյուջեն պետք է լինի մանրամասն և հստակ:

Բ. Ներքին անվտանգության ծառայությունների աշխատանքային գործունեության վերաբերյալ

i. Ներքին անվտանգության ծառայությունների աշխատակիցները պետք է պահպանեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան:

ii. Ներքին անվտանգության ծառայությունների աշխատանքային գործունեության ընթացքում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի ցանկացած խախտում պետք է հիմնավորված լինի օրենքով: Հեռախոսագրույցների գաղտնալսումը, մեխանիկական կամ տեխնիկական, լսողական և տեսողական միջոցներով վերահսկողությունը և անձի իրավունքների խախտման մեծ սպառնալիք ներկայացնող այլ օպերատիվ միջոցները պետք է կիրառվեն դատական իշխանությունների հատուկ նախնական թույլտվությամբ: Օրենսդրությամբ պետք է սահմանվեն համապատասխան չափանիշներ, որոնց հիման վրա դատավորները կամ հաշտարար դատավորները պետք է նման նախնական թույլտվություն տրամադրեն: Դատավորների այս ծառայությունը պետք է հասանելի լինի շուրջօրյա, որպեսզի օպերատիվ գործողություններ, օրինակ՝ տան խուզարկություն, կատարելու թույլտվության դիմումն ընթացք ստանա մի քանի ժամում (առավելագույնը): Նման թույլտվության չափանիշները պետք է ներառեն հետևյալ նվազագույն պահանջները.

ա. հավանական պատճառ կա կարծելու, որ տվյալ անձը կատարում, կատարել կամ պատրաստվում է կատարել իրավախախտում,

բ. հավանական պատճառ կա կարծելու, որ առաջարկվող գաղտնալսման կամ բնակարանի խուզարկությունների միջոցով կարելի է ձեռք բերել նշված իրավախախտմանն առնչվող որոշակի տեղեկատվություն կամ կոնկրետ ապացույց, կամ կանխել հանցագործությունը (ձերբակալության պարագայում),

գ. ձեռնարկվել են բնականոն քննչական միջոցառումներ, որոնք, սակայն, ձախողվել են կամ անհաջող են թվացել կամ եղել են չափազանց վտանգավոր:

Նման օպերատիվ գործողություններ ձեռնարկելու թույլտվությունը պետք է լինի ժամանակավոր (առավելագույնը մինչև երեք ամիս): Հսկողության կամ հեռախոսագրույցների գաղտնալսման ավարտից հետո տվյալ անձը պետք է տեղեկացվի իր նկատմամբ ձեռնարկված նման միջոցի մասին:

iii. Ներքին անվտանգության ծառայությունները չպետք է իրավասու լինեն կատարելու իրավապահ մարմինների աշխատանքը, օրինակ՝ քրեական հետաքննություն, ձերբակալություն կամ կալանավորում: Մեծ սպառնալիք ներկայացնող նշված լիազորությունների չարաշահումից և ոստիկանության ավանդական գործառույթների կրկնությունից խուսափելու համար՝ նման լիազորությունները պետք է իրականացնեն բացառապես այլ իրավապահ մարմինները:

Գ. Ներքին անվտանգության ծառայությունների նկատմամբ արդյունավետ ժողովրդավարական հսկողության վերաբերյալ

i. Գործադիր իշխանությունը պետք է իրականացնի ներքին անվտանգության ծառայությունների հետադարձ վերահսկողություն, օրինակ՝ նման ծառայությունների աշխատակիցներին պարտավորեցնելով կազմել և ներկայացնել մանրամասն տարեկան հաշվետվություններ իրենց գործունեության վերաբերյալ: Նախարարներից մեկը պետք է ստանձնի ներքին անվտանգության ծառայությունների աշխատանքը հսկելու և վերահսկելու քաղաքական պատասխանատվությունը, և նրա աշխատակազմը պետք է ունենա արդյունավետ առօրյա հսկողության համար անհրաժեշտ լիարժեք լիազորությունները: Նախարարը պետք է խորհրդարանին ներկայացնի ներքին անվտանգության ծառայությունների աշխատանքի վերաբերյալ տարեկան հաշվետվությունը:

ii. Օրենսդիր իշխանությունը պետք է ընդունի հստակ և համարժեք օրենքներ՝ կանոնադրական հիմք նախապատրաստելով ներքին անվտանգության ծառայությունների համար և սահմանելով անձի իրավունքների խախտման մեծ սպառնալիք ներկայացնող օպերատիվ գործողությունները և դրանք ձեռնարկելու իրավիճակները և ապահովելով բռնությունից պաշտպանության համարժեք երաշխիքներ: Օրենսդիր իշխանությունը պետք է նաև խստորեն վերահսկի ներքին անվտանգության ծառայությունների բյուջեն՝ ի թիվս այլոց պարտավորեցնելով նշված ծառայություններին ներկայացնել մանրամասն տարեկան հաշվետվություններ դրանց բյուջեի օգտագործման վերաբերյալ և ձևավորի վերահսկողություն իրականացնող հատուկ ընտրված կոմիտեներ:

iii. Դատական իշխանությունը պետք է լիազորված լինի իրականացնելու նախնական և հետադարձ ծավալուն հսկողություն, այդ թվում՝ նախնական թույլտվություն տրամադրի որոշակի գործողությունների իրականացման համար, որոնք կարող են խախտել մարդու իրավունքները: Հետադարձ հսկողության գերակա սկզբունքը պետք է կայանա նրանում, որ բոլոր նրանք, ովքեր կարծում են, որ անվտանգության ծառայությունների աշխատակիցների գործողությունները (կամ բացթողումները) հանգեցրել են իրենց իրավունքների խախտմանը, պետք է, ընդհանուր առմամբ, կարողանան փոխհատուցման դիմում ներկայացնել դատարան կամ այլ դատական մարմիններ: Նման դատարանները պետք է իրավասու լինեն որոշելու, թե արդյոք բողոքարկված գործողություններն իրականացվել են ներքին անվտանգության ծառայությունների աշխատակիցների՝ օրենքով սահմանված լիազորությունների և գործառնությունների շրջանակներում, թե՞ ոչ: Այսպիսով, դատարանները պետք է իրավասու լինեն որոշելու, թե արդյոք նշված ծառայությունների աշխատակիցներն անհարկի ոտնձգություն են կատարել անձի նկատմամբ կամ չարաշահել են իրենց հայեցողական վարչական լիազորությունները:

iv. Առանձին դեպքերում այլ մարմինների ներկայացուցիչները (օրինակ օմբուդսմանները և սովյալների պաշտպանության հարցերով հանձնակատարները) պետք է լիազորված լինեն իրականացնել անվտանգության ծառայությունների աշխատանքի հետադարձ հսկողություն:

v. Անհատները պետք է ունենան ներքին անվտանգության ծառայության (ծառայությունների) կողմից ձեռքբերված և պահպանվող տեղեկատվության մատչելիության ընդհանուր իրավունք, բացառությամբ օրենքով հստակ սահմանված այն դեպքերի, երբ նման տեղեկատվության գաղտնիությունը բխում է ազգային անվտանգության շահերից: Ցանկալի կլինի նաև, որպեսզի ներքին անվտանգության ծառայության՝ տեղեկատվությունը չբացահայտելու լիազորությունը ենթակա լինի դատական վերահսկողության:

1. Վեհաժողովի քննարկման ամսաթիվ՝ 1999թ. ապրիլի 26 (9-րդ նստաշրջան) (տե՛ս՝ Փաստաթուղթ 8301, Իրավական հարցերի և մարդու իրավունքների կոմիտեի զեկույց, զեկուցող՝ պրն. Ֆրունդա)

Տեքստն ընդունվել է Վեհաժողովի կողմից 1999թ. ապրիլի 26-ին (9-րդ նստաշրջան):

Հավելված 8

Եվրոպայի խորհուրդ

Մարդու իրավունքների հարցերով հանձնակատար

2009թ. մարտի 12

DH(2009)4

**Մարդու իրավունքների հարցերով հանձնակատարի եզրակացությունը
ոստիկանության գործողությունների դեմ բողոքների անկախ և արդյունավետ
քննության վերաբերյալ**

Բովանդակություն

1. Ներածություն	5
2. Սահմանումներ	6
3. Ոստիկանական ծառայության իրականացումը. հիմնական սկզբունքներ.....	8
4. Ոստիկանության դեմ բողոքների քննության համակարգի նպատակը և բնույթը.....	9
5. Ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմին.....	11
6. Ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության համակարգի աշխատանքը	15
6.1 Թափանցիկություն և հասանելիություն.....	15
6.2 Ծանուցում, հաշվառում և ուղղորդում.....	16
6.3 Կարգավորման գործընթաց.....	18
6.4 Քննչական գործընթաց.....	19
6.5 Որոշման կայացում և վերանայում.....	24
Գրականության ցանկ.....	27

Երախտիքի խոսք

Հանձնակատարը ցանկանում է իր երախտագիտությունը հայտնել գիտությունների դոկտոր խորհրդատու Գրեհեմ Սմիթին սույն եզրակացությունը կազմելու գործում ցուցաբերած աջակցության համար:

Համառոտ նկարագիր

Ժողովրդավարական և հաշվետվողականության սկզբունքներով գործող ոստիկանության ծառայության համար առանցքային նշանակություն ունի ոստիկանության գործողությունների դեմ ներկայացվող բողոքների անկախ և արդյունավետ քննության համակարգի առկայությունը: Բողոքների անկախ և արդյունավետ քննությունը խթանում է հասարակության վստահությունը ոստիկանության նկատմամբ և ապահովում է հակաիրավական վարքագծի, պաշտոնեական իրավախախտումների կամ դաժան վերաբերմունքի պատժելիությունը:

Բողոքների քննության համակարգը պետք է կարողանա համաչափ և պատշաճ կարգով քննել ոստիկանության դեմ ուղղված զանազան մեղադրանքները՝ հաշվի առնելով բողոքարկուի ներկայացրած բողոքի հիմնավորվածությունը և ոստիկանության այն աշխատակցի համար հետևանքները, ում դեմ ուղղված է բողոքը:

Ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության համակարգը պետք է լինի հասկանալի, բաց և հասանելի և դրական ըմբռնում դրսևորի գենդերային պատկանելիության, ռասայի, ազգության, կրոնի, դավանանքի, սեռական կողմնորոշման, գենդերային ինքնության, հաշմանդամության և տարիքի հետ կապված հարցերի նկատմամբ: Նշված համակարգը պետք է լինի արդյունավետ, ապահովված լինի պատշաճ ռեսուրսներով և նպաստի ոստիկանության ծառայությունների աշխատանքի շրջանակներում քաղաքացիների նկատմամբ հոգատարության մշակույթի ձևավորմանը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մշակել է ոստիկանության գործողությունների դեմ ուղղված բողոքների արդյունավետ քննության հինգ սկզբունք՝ Մարդու իրավունքների մասին եվրոպական կոնվենցիայի 2-րդ կամ 3-րդ հոդվածների հիման վրա.

- **Անկախություն.** բողոքի գործով ներգրավված քննիչները պետք է ինստիտուցիոնալ կամ ստորակարգային բնույթի կապեր չունենան ոստիկանության այն աշխատակցի հետ, ում դեմ ուղղված է բողոքը, և հարկավոր է գործնականում ապահովել նրանց անկախությունը,
- **Համաբժեքություն.** Հետաքննություն իրականացնող մարմինը պետք է կարողանա հավաքել համապատասխան ապացույցներ՝ որոշելու համար, թե արդյոք խնդրո առարկա հանդիսացող ոստիկանության գործողությունը եղել է անօրինական, թե ոչ, ինչպես նաև մեղավորին հայտնաբերելու և պատժելու համար,
- **Արագություն.** օրենքի գերակայության սկզբունքի նկատմամբ վստահությունը պահպանելու նպատակով՝ հետաքննությունը պետք է իրականացվի անհապաղ և արագ,
- **Հանրային հսկողություն.** հաշվետվողականության ապահովման նպատակով՝ համապատասխան ընթացակարգերը և որոշումների կայացման գործընթացը պետք է լինի հրապարակային և թափանցիկ,

- **Տուժողի ներգրավում.** Բողոքների քննության գործընթացում հարկավոր է ներգրավել նաև բողոքարկուներին՝ նրանց օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով:

Վերոնշյալ հինգ սկզբունքները հարկավոր է պահպանել ոստիկանության ժամանակավոր պահման վայրում գտնվելու ընթացքում կամ ոստիկանության գործողությունների արդյունքում մահվան կամ ծանր մարմնական վնասվածքի դեպքերի քննության ժամանակ: Այս սկզբունքներն օգտակար հիմք են հանդիսանում նաև մյուս կարգի բոլոր բողոքների քննության համար: Լավագույն գործելաոճը ձևավորվում է ոստիկանության հետ համագործակցող Ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմնի աշխատանքի արդյունքում:

Ոստիկանության գործողությունների դեմ ուղղված բողոքների քննության անկախ մարմինը պետք է վերահսկողություն իրականացնի ոստիկանական դեմ ուղղված բողոքների քննության համակարգի նկատմամբ և ոստիկանության հետ համատեղ պատասխանատվություն կրի հետևյալի համար.

- համակարգի թափանցիկություն և վերահսկողություն,
- ծանուցման, բողոքների հաշվառման և ուղղորդման ընթացակարգեր,
- քննության ոչ ենթակա բողոքների կարգավորում,
- բողոքների քննություն,
- բողոքների վերաբերյալ որոշումների կայացում և վերանայում:

Ապացուցված պաշտոնեական իրավախախտման փաստի առթիվ ոստիկանության աշխատակցին քրեական կամ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը հանդիսանում է անպատժելիությունից պաշտպանության կարևոր գործոն և խիստ կարևոր է ոստիկանության դեմ բողոքների քննության համակարգի նկատմամբ հասարակության վստահության հաստատման տեսանկյունից: Դատախազությունը, ոստիկանությունը և ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմինը պետք է հիմնավորեն իրենց որոշումները իրենց կողմից իրականացվող քրեական և կարգապահական վարույթի վերաբերյալ:

1. Ներածություն

1. Վերջին տարիների ընթացքում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման կոմիտեն (ԽԿԿ) և Մարդու իրավունքների հարցերով հանձնակատարն առանձնացրել են ոստիկանության դեմ ուղղված բողոքների քննության հետ կապված խնդիրները: Ներկայումս արագ կատարելագործվում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատաիրավական պրակտիկան ոստիկանության աշխատակիցների պաշտոնեական իրավախախտումների և հետաքննության ու իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների բացակայության ոլորտում: Տարբեր անդամ պետություններ կատարած այցերից հետո ԽԿԿ-ն անհրաժեշտ է համարել ներկայացնել հանձնարարականներ դաժան վերաբերմունքի և պաշտոնեական իրավախախտումների համար ոստիկանության աշխատակիցների անպատժելիության դեմ պայքարի վերաբերյալ: Նմանապես, Հանձնակատարը հայտնել է ոստիկանության աշխատակիցների ոչ իրավաչափ գործողությունների և անպատժելիության վերաբերյալ հաղորդումների մասին և հանձնարարականներ մշակել որոշ անդամ պետություններում ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մեխանիզմների վերաբերյալ:

2. Ոստիկանության գործողությունների դեմ ներկայացվող բողոքների էությունն ավելի հասկանալի դարձնելու նպատակով 2008 թվականի մայիսին Հանձնակատարը կազմակերպել է երկու սեմինար բողոքների քննության մեխանիզմների անկախության և արդյունավետության և ազգային իրավապաշտպան կառույցների կողմից ոստիկանության դեմ ներկայացվող բողոքների դիտարկման կարգի վերաբերյալ:¹

3. Մարդու իրավունքների հարցերով հանձնակատարի՝ Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում մարդու իրավունքների վերաբերյալ իրազեկությունը, դրանց արդյունավետ պահպանումը և իրացումը, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ խորհրդատվության և տեղեկատվության տրամադրումը (Նախարարների կոմիտեի թիվ (99) 50 բանաձևի 3-րդ և 8-րդ հոդվածներ) խթանելու լիազորություններին համապատասխան՝ Հանձնակատարը հրապարակում է սույն եզրակացությունը ոստիկանության գործողությունների դեմ ներկայացվող բողոքների անկախ և արդյունավետ քննության վերաբերյալ:

¹ Փորձագիտական սեմինար ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության մեխանիզմների անկախության և արդյունավետության ապահովման վերաբերյալ, Ստրասբուրգ, 2008թ. մայիսի 26-27 և սեմինար ազգային իրավապաշտպան կառույցների կողմից՝ ոստիկանության դեմ ներկայացվող բողոքների դիտարկման կարգի վերաբերյալ, Սանկտ-Պետերբուրգ, 2008թ. մայիսի 20-21, այս սեմինարը կազմակերպվել է «Ոչ դատական անկախ իրավապաշտպան կառույցների ակտիվ ցանցի հիմունք» Եվրամիության և Եվրոպայի խորհրդի համատեղ ծրագրի շրջանակներում, որը հայտնի է նաև «Հավասարը հավասարին ծրագիր» անվամբ:

2. Սահմանումներ

Սույն Եզրակացության մեջ գործածվում են հետևյալ սահմանումները.

4. **Ոստիկանություն** նշանակում է ընդունված իմաստով ոստիկանական ուժեր կամ ծառայություններ, ինչպես նաև պետության կողմից լիազորված և (կամ) վերահսկվող այլ ծառայություններ, որոնք պատասխանատու են օրենքի գերակայության սկզբունքի լիարժեք պահպանմամբ ոստիկանական ծառայություններ իրականացնելու համար: Թեև ոստիկանության ծառայություններ կարող են մատուցել նաև մասնավոր կազմակերպությունները, օրինակ՝ անվտանգության մասնավոր ընկերությունները, սույն եզրակացությունը նման կազմակերպություններին չի վերաբերում:

5. **Ոստիկանական ծառայություններ** նշանակում է հանրության պաշտպանության նպատակով ոստիկանության վրա դրված պարտականությունները և պարտավորությունները, այդ թվում՝

- խաղաղության պահպանում,
- օրենքի կիրարկման ապահովում,
- հանցագործության կանխում և բացահայտում,
- մարդու իրավունքների պաշտպանություն:

Վերոնշյալ ծառայությունները պետք է մատուցվեն արդարության, հավասարության և մարդու իրավունքների պահպանման սկզբունքներին համապատասխան:

6. **Բողոք** նշանակում է ոստիկանության ծառայության կամ ոստիկանության աշխատակցի վարքագծի վերաբերյալ գանգատ, որը ներկայացվել է համապատասխան պետական մարմին, օրինակ՝ ոստիկանության համապատասխան բաժին կամ ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմին: Սույն Եզրակացությունը հիմնականում վերաբերում է ոստիկանության աշխատակիցների վարքագծի դեմ ներկայացվող բողոքներին: Ոստիկանության ծառայությունների կողմից իրականացվող ոստիկանական գործողությունների չափանիշների, գործառնական ցուցումների կամ ռազմավարության դեմ ուղղված գանգատները սույն Եզրակացության մեջ կնշվեն որպես «բողոքներ ծառայության դեմ»՝ դրանք ոստիկանության աշխատակիցների վարքագծի դեմ ուղղված բողոքներից տարբերակելու համար: Ծառայության դեմ ուղղված բողոքների, մասնավորապես՝ բոլոր բողոքների նկատմամբ լուրջ վերաբերմունք ցուցաբերելու, դրանք պատշաճ կարգով քննելու և դրանցից դաս քաղելու առնչությամբ հաղորդվող կարևորությունն ընդգծելու համար՝ սույն Եզրակացության մեջ հղում կկատարվի ոստիկանության աշխատակիցների դեմ ուղղված այնպիսի բողոքներին, որոնք առնչվում են ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննություն իրականացնող անկախ մարմնի նկատմամբ հասարակության վստահության պահպանմանը:

7. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատաիրավական պրակտիկայի պահանջներին համապատասխան՝ բոլոր այն դեպքերում, երբ խախտվել են ՄԻԵԿ-ի 2-րդ հոդվածով ամրագրված կյանքի իրավունքը կամ 3-րդ հոդվածով ամրագրված՝ խոշտանգումներից անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից զերծ մնալու իրավունքը, հարկավոր է հետաքննություն իրականացնել՝ անկախ նրանից, թե արդյոք ոստիկանության դեմ բողոք ներկայացվել է, թե ոչ: Սույն Եզրակացության մեջ նման կարգի ծանր իրավախախտումները նշվելու են որպես այնպիսի բողոքներ, որոնք պետք է քննվեն ոստիկանության գործողությունների դեմ ուղղված բողոքների արդյունավետ քննության ՄԻԵԿ-ի հինգ սկզբունքներին համապատասխան:

8. **Ոստիկանության գործողությունների դեմ ուղղված բողոքների արդյունավետ քննության ՄԻԵԿ-ի հինգ սկզբունքները**՝ անկախություն, համարժեքություն, արագություն, հանրային հսկողություն և տուժողների ներգրավում, բխում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատաիրավական պրակտիկայի՝ ՄԻԵԿ-ի 2-րդ կամ 3-րդ հոդվածներով ամրագրված իրավունքների խախտմամբ ուղեկցվող ոստիկանության աշխատակիցների մասնակցությամբ լուրջ միջադեպերի քննության նկատմամբ առաջադրված պահանջներից (տե՛ս ստորև, կետ 30):

9. **Բողոքարկու**՝ նշանակում է ոստիկանության աշխատակցի դեմ բողոք ներկայացրած անձ, կամ այն անձը, ով նման բողոք չի ներկայացրել, սակայն տուժել է (նման անձի մահվան պարագայում նրա հարազատը) ոստիկանության աշխատակցի մասնակցությամբ այնպիսի լուրջ միջադեպից, որի փաստով ոստիկանությունը կամ ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմինը քննություն է իրականացրել բողոքի ներկայացման պարագայում գործածվող ընթացակարգին համապատասխան:

10. **Ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմին** նշանակում է ոստիկանության դեմ ուղղված բողոքները քննող հանրային մարմին, որը որևէ կապ չունի ոստիկանության հետ և գործում է դրանից անկախ:

11. **Ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության համակարգ**՝ նշանակում է ոստիկանության դեմ ուղղված բողոքների վարույթի բոլոր փուլերում բողոքների քննության գործառնական շրջանակ, որը ենթադրում է.

1. համակարգի թափանցիկություն և հասանելիություն. հանրային իրազեկման և բողոքի ներկայացման ընթացակարգերի պարզության խթանում,
2. ծանուցում, հաշվառում և ուղղորդում, որոնք վերաբերում են բողոքների ստացմանը, հաշվառմանը և տարբեր տեսակի բողոքների քննության համար համապատասխան ընթացակարգի ընտրությանը,
3. քննության ոչ ենթակա բողոքների կարգավորում, որը վերաբերում է նման տեսակի բողոքների կարգավորման ընթացակարգերին,

4. քննության ընթացքը վերաբերում է քննության ենթակա բողոքների քննության ընթացակարգերին,
5. որոշումը վերաբերում է բողոքների քննության արդյունքներին,
6. վերանայման ընթացակարգերը վերաբերում են բողոքարկուի՝ իր բողոքի քննության կարգը կամ արդյունքները վիճարկելու իրավունքին:

12. **Բողոքի լուծումը** նշանակում է բոլոր ոչ-դատական վարչական ընթացակարգերով բողոքի ընթացքը, որի ավարտին հանձնարարական է ընդունվում քրեական հետապնդում իրականացնող մարմնի կամ ոստիկանության նկատմամբ: Սույն Եզրակացությունը կիրառելի չէ նման բողոքի ներկայացման արդյունքում ոստիկանության աշխատակցի նկատմամբ իրականացվող քրեական կամ կարգապահական վարույթի շրջանակներում հնարավոր դատական նիստի գումարման կամ դատական կարգով փաստերի բացահայտման առնչությամբ:

3. Ոստիկանական ծառայության իրականացումը. հիմնական սկզբունքներ

13. Ոստիկանական ծառայությունների մատուցումը և կառավարումը կարգավորվում են լայնածավալ միջազգային համաձայնագրով:²

14. Ոստիկանության՝ հեղինակություն և հարգանք վայելող պետական կառույցի վարկը պայմանավորված է մի շարք ներքոհիշյալ գործոններով.

- առանցքային նշանակության հանրային ծառայությունների մատուցում,
- հասարակության հետ փոխգործողության բարձր աստիճան,
- հանցագործությունների կանխման, հասարակական անվտանգության և քրեական հետաքննության վերաբերյալ իրազեկության բարձրացման ծավալուն միջոցառումներ և հասարակության կողմից օգնության և աջակցության կոչեր,
- ոստիկանության տեղական բաժինների ցանց,
- տեղական համայնքների հետ սերտ կապերի պահպանում:

15. Անկախ, անաչառ և արդյունավետ ոստիկանական ծառայությունների մատուցումն ապահովելու և քաղաքական կառույցների կողմից միջամտությունները կանխելու նկատառումներով ոստիկանության աշխատակիցներին հայեցողության լայն շրջանակ է վերապահված իրենց պարտականությունների կատարման գործում:

² Տե՛ս, օրինակ, Եվրոպայի խորհուրդ. «Ոստիկանության աշխատակցի էթիկայի եվրոպական կանոնագիրք», Եվրոպայի խորհրդի Խոշտանգումների կանխարգելման կոմիտե. «ԽԿԿ չափանիշներ, Գլուխ IX. Պայքար անպատժելիության դեմ, Միավորված ազգերի կազմակերպություն. «Իրավապահ պաշտոնյաների վարքագծի կանոնագիրք, Եվրոպայի խորհրդի համատեղ ոչ ֆորմալ խումբ ոստիկանության և մարդու իրավունքների հարցերով. «Ոստիկանության գործունեությունը ժողովրդավարական պետությունում». «Ձեր ոստիկանության ծառայությունը հանդիսանում է արդյո՞ք մարդու իրավունքների պաշտպան», Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն. «Ձեռնարկ ժողովրդավարական պետությունում ոստիկանության գործունեության մասին», ՄԱԿ-ի Միջազգային ոստիկանական ուժեր. «Հանձնակատարի ուղղորդող սկզբունքներ Բոսնիա և Հերցեգովինայի դաշնությունում ժողովրդավարական սկզբունքների վրա հիմնված ոստիկանության գործունեության վերաբերյալ»:

16. Ոստիկանության աշխատակիցների կողմից իրենց պարտականությունների կատարումն ապահովվում է օրենքով նախատեսված հարկադրանքի միջոցներ ձեռնարկելու լիազորություններով և իրենց օրինական լիազորությունները կատարելիս ողջամիտ ուժ կիրառելու իրավունքով:

17. Վերջին տասնամյակների ընթացքում հասարակության կառուցվածքի բարդացման և գիտության ու տեխնոլոգիաների առաջընթացի հետ համընթաց մեծացել է նաև ոստիկանության աշխատակիցների՝ իրենց պարտականությունների կատարման համար վերապահված հատուկ լիազորությունների շրջանակը և նրանց՝ քաղաքացիների կյանքին միջամտելու և քաղաքացիների մարդու իրավունքները խախտելու հնարավորությունները:

18. Օրենքի գերակայության սկզբունքը պահպանելու պահանջը պետք է կատարեն ինչպես հասարակության բոլոր անդամները, այնպես էլ ոստիկանության աշխատակիցները: Ոստիկանության աշխատակիցները կարող են փորձել թաքցնել, հիմնավորել կամ արդարացնել իրենց կողմից ձեռնարկված հարկադրանքի ապօրինի միջոցները կամ լիազորությունների չարաշահումը՝ հղում անելով օրենքով նախատեսված հարկադրանքի միջոցների ձեռնարկմանը կամ իրենց պաշտոնական լիազորությունների կատարմանը: Ոստիկանության էթիկան և մասնագիտական չափանիշները կոչված են ապահովելու ոստիկանական ծառայությունների մատուցման ամենաբարձր որակը: Դաժան վերաբերմունքի դրսևորման կամ պաշտոնական իրավախախտման համար ոստիկանության աշխատակիցների անպատժելիությունն անընդունելի է:

19. Ոստիկանության աշխատակիցների լիազորությունների շրջանակի ընդլայնմանը զուգընթաց աճել են նաև այն սպասելիքները, որ ոստիկանական ծառայությունները կհամապատասխանեն ժողովրդավարության, հաշվետվողականության և մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքներին, ասել է թե՛ ինչպես նշված է Միավորված ազգերի կազմակերպության Իրավապահ պաշտոնյաների վարքագծի կանոնագրքի նախաբանում. «Իրավապահ մարմիններից յուրաքանչյուրը պետք է ներկայացնի իր ամբողջ համայնքը և հաշվետու լինի ու պատասխանատվություն կրի ողջ համայնքի համար»:

20. Ժողովրդավարական, հաշվետու և մարդու իրավունքների պահպանմանն ուղղված ոստիկանական ծառայությունների ապահովմանը նպաստում է վարչական, քաղաքական, իրավական և հարկային կարգավորման մեխանիզմների ցանցի աշխատանքը: Նման կարգավորման մեխանիզմների ցանցի առանցքային բաղադրիչներից է ոստիկանության դեմ բողոքների արդար և արդյունավետ քննության համակարգը, և բողոքների քննության գործընթացի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար վերջին տարիների ընթացքում աշխարհի մի շարք երկրներում օրենքին համապատասխան արդեն հիմնվել են ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմիններ:

4. Ոստիկանության դեմ բողոքների քննության համակարգի նպատակը և բնույթը

21. Ոստիկանական ծառայությունների աշխատանքը սերտորեն առնչվում է առանձին անհատների և մարդկանց խմբերի միջև իրավական վեճերի կարգավորման հետ: Ուստի, ոստիկանության աշխատանքում գործնականում հնարավոր են սխալներ և թյուրիմացություններ: Հետադարձ կապի վրա հիմնված ոստիկանության գործունեությունը, ներառյալ՝ առաջին իսկ հնարավորության դեպքում բողոքներին արձագանքելու, սխալներն ընդունելու և բողոքներից դասեր քաղելու պատրաստակամությունը նպաստում է ոստիկանության աշխատանքի արդյունավետության բարձրացմանը և ոստիկանության նկատմամբ հասարակական վստահության ամրապնդմանը: Հանրության մտահոգության առարկա հանդիսացող խնդիրները լուծելու ակնհայտ պատրաստակամություն դրսևորող արձագանքող և հաշվետու ոստիկանության ծառայությունը կարժանանա հասարակության ավելի մեծ վստահությանը իր՝ ոստիկանության աշխատակիցների կողմից հանցագործությունների կատարումը և իրենց լիազորությունների չարաշահումը կանխելու կարողությունների և պատրաստակամության նկատմամբ:

22. Ստորև ներկայացվում են ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության համակարգի առջև դրված հիմնական խնդիրները.

- ծանոթանալ բողոքարկուների կողմից ներկայացվող բողոքներին,
- վեր հանել ոստիկանության աշխատակիցների կողմից կատարված ոչ իրավաչափ գործողությունները և ըստ անհրաժեշտության ապացույցներ հավաքել հետևյալ միջոցները ձեռնարկելու համար.
 - i. քրեական վարույթ,
 - ii. կարգապահական վարույթ, կամ
 - iii. այլ պաշտոնական միջոցներ:
- ոստիկանությանը տրամադրել ոստիկանության գործելառճի հետ առնչված հասարակության անդամների գնահատականը,
- խթանել ՄԻԵԿ-ով ամրագրված որևէ հոդվածի խախտման համար իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի հասանելիությունը՝ ՄԻԵԿ-ի 13-րդ հոդվածին համապատասխան,
- կանխել ոստիկանների կողմից դաժան վերաբերմունքի դրսևորումը և նրանց ոչ իրավաչափ գործունեությունը,
- ոստիկանության և այլ կարգավորող մարմինների հետ համատեղ սահմանել և վերահսկել ոստիկանության գործունեության չափանիշները և ապահովել դրանց կիրարկումը:

23. Բոլոր տեսակի բողոքները, այդ թվում՝ ոստիկանության ծառայության դեմ ուղղված բողոքները հնարավորություն են տալիս ոստիկանության ծառայություններին դասեր քաղել

հանրության հետ անմիջական հաղորդակցումից և հանդիսանում են համայնքի նկատմամբ ուստիկանության պատասխանատվության և հաշվետվողականության կարևոր ցուցանիշ:

24. Ուստիկանության կողմից դրսևորվող դաժան վերաբերմունքը և ոչ իրավաչափ գործողությունները կանխելու համար՝ ուստիկանության աշխատակիցների դեմ ներկայացվող բոլոր բողոքները, այդ թվում՝ ուստիկանության ծառայության դեմ ուղղված բողոքները, պետք է քննվեն համապատասխան ընթացակարգով: Բողոքների և դրանց քննության ընթացակարգի տարբերակումը պետք է որոշվի դրանցում արտահայտված մեղադրանքի ծանրության աստիճանով և ուստիկանության այն աշխատակցի համար հանգեցրած հնարավոր հետևանքներով, ում դեմ ուղղված է բողոքը:

25. Ուստիկանության գործողությունների դեմ ուղղված բողոքների քննության համակարգը պետք է գործի ի լրումն ուստիկանության կողմից ոչ իրավաչափ գործողություններից իրավական պաշտպանության քրեական, հանրային և մասնավոր միջոցների, այլ ոչ թե՛ որպես դրանց այլընտրանք:

26. Առանձնացում են ուստիկանության աշխատակցի վարքագծի դեմ ուղղված բողոքների չորս հիմնական տեսակ՝ հետևյալ հաղորդումներով.

- քրեական պատասխանատվություն առաջացնող ոչ իրավաչափ գործողություններ,
- մարդու հիմնարար իրավունքի կամ ազատության խախտում,
- կարգապահական պատասխանատվություն առաջացնող ոչ իրավաչափ գործողություններ,
- աշխատանքային պարտականությունների ոչ պատշաճ կամ թերի կատարում:

27. Նվազ կոպիտ իրավախախտումներով բողոքների ներկայացման ընթացակարգերը չպետք է ուղեկցվեն այնպիսի վարչական քաշքշուկներով, որ հնարավոր բողոքարկուն մտափոխվի բողոք ներկայացնելուց: Այն դեպքերում, երբ բողոքի ներկայացման արդյունքում հարուցվի քրեական կամ կարգապահական վարույթ, պետք է նախատեսված լինեն իրավական պաշտպանության բավարար երաշխիքներ ուստիկանության այն աշխատակցի համար, ում դեմ ներկայացվել է բողոքը:

28. Ուստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության համակարգը պետք է լինի հասկանալի, բաց ու հասանելի և դրական ըմբռնում դրսևորի գենդերային պատկանելիության, ռասայի, ազգության, կրոնի, դավանանքի, սեռական կողմնորոշման, գենդերային ինքնության, հաշմանդամության և տարիքի հետ կապված հարցերի նկատմամբ: Նշված համակարգը պետք է լինի արդյունավետ, ապահովված լինի պատշաճ ռեսուրսներով և նպաստի ուստիկանության ծառայությունների աշխատանքի շրջանակներում քաղաքացիների նկատմամբ հոգատարության մշակույթի ձևավորմանը:

5. Ուստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմին

29. Բողոքների քննության անկախ և արդյունավետ համակարգն առանցքային նշանակություն ունի ոստիկանության նկատմամբ հասարակության վստահությունը ձևավորելու և այն պահպանելու համար, և նախատեսվում է, որ այն հիմնարար դեր կկատարի դաժան վերաբերմունքից և ոչ իրավաչափ գործողություններից իրավական պաշտպանության ոլորտում: Նման համակարգի առանցքային բաղադրիչը կլինի ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմինը:

30. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական պրակտիկայում սահմանվել են ՄԻԵԿ-ի 2-րդ և 3-րդ հոդվածների առնչությամբ ոստիկանության գործողությունների դեմ ուղղված բողոքների արդյունավետ քննության ներքոհիշյալ հինգ սկզբունքները.

1. **Անկախություն.** բողոքի գործով ներգրավված քննիչները պետք է ինստիտուցիոնալ կամ ստորակարգային բնույթի կապեր չունենան ոստիկանության այն աշխատակցի հետ, ում դեմ ուղղված է բողոքը, և հարկավոր է գործնականում ապահովել նրանց անկախությունը,³

2. **Համարժեքություն.** հետաքննություն իրականացնող մարմինը պետք է կարողանա հավաքել համապատասխան ապացույցներ՝ որոշելու համար, թե արդյոք խնդրո առարկա հանդիսացող ոստիկանության գործողությունը եղել է անօրինական, թե ոչ, ինչպես նաև մեղավորին հայտնաբերելու և պատժելու համար,⁴

3. **Արագություն.** օրենքի գերակայության սկզբունքի նկատմամբ վստահությունը պահպանելու նպատակով՝ հետաքննությունը պետք է իրականացվի անհապաղ և արագ,⁵

4. **Հանրային հսկողություն.** հաշվետվողականության ապահովման նպատակով՝ համապատասխան ընթացակարգերը և որոշումների կայացման գործընթացը պետք է լինի հրապարակային և թափանցիկ,⁶

5. **Տուժողի ներգրավում.** բողոքների քննության գործընթացում հարկավոր է ներգրավել նաև բողոքարկուներին՝ նրանց օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով:⁷

31. ՄԻԵԿ-ի 2-րդ և 3-րդ հոդվածներում ամրագրված են հիմնարար դրույթները և Եվրոպայի խորհրդի մաս կազմող ժողովրդավարական պետությունների հիմնական արժեքները:⁸ Ոստիկանության գործողությունների դեմ ուղղված բողոքների ՄԻԵԿ արդյունավետ քննության հինգ սկզբունքների հիմքում դրված է երկու հիմնական նպատակ: Մի կողմից, այդ սկզբունքները կոչված են ապահովելու անհատին ՄԻԵԿ-ի 2-րդ կամ 3-րդ հոդվածների ենթադրյալ խախտումից

³ Տե՛ս՝ օրինակ՝ «Ռամսահայն ընդդեմ Նիդերլանդների» (Ramsahai v The Netherlands) գործ (դիմում թիվ 52391/99), 2007թ. մայիսի 15-ի վճիռ, «Բաթին ընդդեմ Թուրքիայի» (Bati v Turkey) գործ (դիմումներ թիվ 33097/96 և 57834/00), 2004թ. հունիսի 3-ի վճիռ:

⁴ Տե՛ս՝ օրինակ՝ «Նաչովան ընդդեմ Բուլղարիայի» (Nachova v Bulgaria) գործ (դիմում թիվ 43577/98 և 43579/98), 2005թ. հուլիսի 6-ի վճիռ, «Աքսոյն ընդդեմ Թուրքիայի» (Aksoy v Turkey) գործ (100/1995/606/694), 1996թ. դեկտեմբերի 18-ի վճիռ:

⁵ Տե՛ս՝ օրինակ՝ «Իսայևան ընդդեմ Ռուսաստանի» (Isayeva v Russia) գործ (դիմում թիվ 5794/00, 57948/00 և 57949/00), 2005թ. փետրվարի 24-ի վճիռ, «Այդին ընդդեմ Թուրքիայի» (Aydin v Turkey) գործ (57/1996/676/866), 1997թ. սեպտեմբերի 25-ի վճիռ:

⁶ Տե՛ս՝ օրինակ՝ «Օգնյանովան ընդդեմ Բուլղարիայի» (Ognyanova v Bulgaria) գործ (դիմում թիվ՝ 46317/99), 2006թ. փետրվարի 23-ի վճիռ, «Չիտայևն ընդդեմ Ռուսաստանի» (Chitayev v Russia) գործ (դիմում թիվ՝ 59334/00), 2007թ. հունվարի 18-ի վճիռ:

⁷ Տե՛ս՝ օրինակ՝ «Մաքթենն ընդդեմ Միացյալ Թագավորության» (McKerr v UK) գործ (դիմում թիվ՝ 28883/95), 2001թ. մայիսի 4-ի վճիռ:

⁸ Տե՛ս՝ օրինակ՝ «Մաքթենն ընդդեմ Միացյալ Թագավորության» (McCann v UK) գործ (17/1994/464/545), 1995թ. փետրվարի 20-ի վճիռ, «Սելմունին ընդդեմ Ֆրանսիայի» (Selmouni v France) գործ (դիմում թիվ՝ 25803/94), 1999թ. հուլիսի 28-ի վճիռ:

իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներով,⁹ իսկ մյուս կողմից՝ նշված հիմնարար իրավունքների խախտումը կանխելու համար՝ ապահովելով արդյունավետ քննության իրականացման այնպիսի պայմաններ, որոնք թույլ են տալիս պատասխանատվության ենթարկել իրավախախտներին:¹⁰

32. Նվազագույն պահանջն այն է, որ ՄԻԵԿ-ի 2-րդ կամ 3-րդ հոդվածներով ամրագրված իրավունքների խախտման պարագայում անդամ պետությունը պետք է պայմաններ ստեղծի վերոնշյալ հինգ սկզբունքների պահպանման համար: Այս նպատակի իրականացմանը նպաստելու համար ԽԿԿ-ն հաստատակամորեն խրախուսել է կազմել լիարժեքորեն անկախ քննչական մարմին:¹¹

33. Ընդհանուր առմամբ, նշված հինգ սկզբունքները հանդիսանում են նաև օգտակար ուղեցույցներ բոլոր տեսակի բողոքների քննության համար: Ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության ամբողջ համակարգի հսկողությունն իրականացնելու համապարփակ պարտավորությունը կատարող ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմնի գոյությունը կնպաստի անկախության սկզբունքի ամրապնդմանը: Մույն Եզրակացության մեջ առաջարկվում են մարդու իրավունքների պաշտպանության վրա հիմնված բողոքների քննության համակարգի ամրապնդմանն ուղղված այնպիսի գործնական միջոցներ, որոնք թույլ կտան համարժեք և համաչափ արձագանք ապահովել բոլոր բողոքներին:

34. Առաջնային օրենսդրությամբ պետք է նախատեսվի ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմնի գործունեությունը, որը պետք է ներառի ընդհանուր բնույթի պատասխանատվությունն ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության համակարգը վերահսկելու և ՄԻԵԿ-ի 2-րդ և 3-րդ հոդվածներով ամրագրված իրավունքների խախտման առնչությամբ ներկայացվող բողոքներն անկախության սկզբունքին համապատասխան քննելու համար: Ոստիկանության և ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմնի համագործակցության համար պայմաններ ստեղծելու և բողոքների արդար, անկախ և արդյունավետ քննությունն ապահովելու նպատակով հարկավոր կլինի ձեռնարկել համապատասխան միջոցներ, օրինակ՝ երկրորդային օրենսդրության՝ ենթաօրենսդրական ակտերի, կանոնակարգերի, կանոնադրական ուղղորդող սկզբունքների և արձանագրությունների տեսքով:

35. Եվրոպայի մի շարք պետություններում վերջերս հիմնված Ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմիններն իրենց կազմակերպման

⁹ Տե՛ս՝ օրինակ՝ «Սալմանն ընդդեմ Թուրքիայի» (Salman v Turkey) գործ (դիմում թիվ՝ 21986/93), 2000թ. հունիսի 27-ի վճիռ, § 123:

¹⁰ Տե՛ս՝ օրինակ՝ «Նաչովան ընդդեմ Բուլղարիայի» (Nachova v Bulgaria) գործ (դիմում թվեր՝ 43577/98 և 43579/98), 2005թ. հուլիսի 6-ի վճիռ, § 110:

¹¹ ԽԿԿ-ի չափանիշներ, Գլուխ IX, § 38:

ձևով նման են մարդու իրավունքների պաշտպանի մասնագիտացված հաստատություններին կամ մշտական հանձնաժողովի կառույցներին: Ոստիկանության հարցերով օմբուդսմենը կամ ոստիկանության գործողությունների դեմ բողոքները քննող հանձնաժողովը՝ կազմված մի շարք հանձնակատարներից և նրանց աշխատանքը համակարգվող նախագահից, կարող են վերահսկել բողոքների արդար, անկախ և արդյունավետ քննության համակարգի աշխատանքը: Մարդու իրավունքների պաշտպանությամբ և խթանմամբ զբաղվող ազգային կառույցների կարգավիճակի և գործունեության վերաբերյալ ՄՄԿ-ի սկզբունքները (Փարիզյան սկզբունքներ) կիրառելի են նաև բողոքները քննող վերոնշյալ մարմինների անկախությունն ու գործունեությունն ապահովելու համար: Ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմնի կազմակերպչական ձևերի որոշման գործում կարևորագույն դերը, բնականաբար, կատարելու են սահմանադրական դրույթները և իրավապահ մարմինների համակարգերը՝ յուրաքանչյուր անդամ պետությունում գերիշխող պատմական, քաղաքական և մշակութային ազդեցության հետ մեկտեղ:

36. Ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմինը պետք է լինի հաշվետու, իսկ նրա գործունեությունը՝ թափանցիկ: Ոստիկանության հարցերով յուրաքանչյուր օմբուդսմեն կամ ոստիկանության գործողությունների դեմ բողոքները քննող հանձնաժողովի հանձնակատար պետք է նշանակվի և պատասխանատու լինի օրենսդրական մարմնին կամ հանձնաժողովի ընտրված ներկայացուցիչների կոմիտեին, որն անմիջական պատասխանատվություն չի կրում ոստիկանական ծառայություններ մատուցելու համար:¹²

37. Ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմնին պետք է հատկացնել բավարար պետական միջոցներ, որպեսզի այն կարողանա կատարել իր քննչական և վերահսկողական գործառնությունները: Նշված մարմնի քննիչները պետք է ունենան ոստիկանության աշխատակիցներին վերապահված բոլոր լիազորությունները, որպեսզի կարողանան իրականացնել արդար, անկախ և արդյունավետ քննություն:

38. Ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմինը պետք է ներկայացնի բնակչության տարբեր խմբերի շահերը և սահմանի ոստիկանության դեմ բողոքների քննության համակարգին առնչվող բոլոր անձանց խորհրդատվություն տրամադրելու ընթացակարգերը: Նման անձանցից են՝ բողոքարկուները և նրանց ներկայացուցիչները, ոստիկանության ծառայությունները և աշխատակիցների ներկայացուցչական միավորումները, ոստիկանական գործողությունների համար պատասխանատու կենտրոնական և տեղական կառավարման մարմինների գերատեսչությունները, դատախազները, ինչպես նաև ոստիկանության գործունեության նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերող համայնքային կազմակերպությունները և հասարակական կազմակերպությունները:

¹² Տե՛ս՝ օրինակ՝ «Խանն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Khan v UK) գործ (դիմում թիվ՝ 35394/97), 2000թ. հունիսի 27-ի վճիռ, § 46:

39. Ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմինը պետք է հարգի ոստիկանության գործառնական անկախությունը և աջակցի ոստիկանապետին որպես ոստիկանության կարգապահական մարմին: Ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմնի և ոստիկանության լիարժեք համագործակցության շրջանակներում հարկավոր է հետևողականորեն և հստակ տարանջատել այդ երկու մարմինների պարտականությունները, ինչը կնպաստի վարքագծի բարձր չափանիշների պահպանմանը և ոստիկանության աշխատանքի որակի բարելավմանը:

40. Ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմինը պետք է պատասխանատու լինի այնպիսի բողոքների քննության համար, որոնք առնչվում են.

- ՄԻԵԿ-ի 2-րդ կամ 3-րդ հոդվածով ամրագրված իրավունքների խախտմանը կամ
- քրեական կամ կարգապահական պատասխանատվության առաջացմանը:

Բացի այդ, ոստիկանությունը կարող է կամավոր բողոքարկություններին ուղղորդել ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմնի մասնագետների մոտ: Ոստիկանության գործունեության համար պատասխանատու Կառավարությունը կարող է պահանջել, որպեսզի նշված մարմինն իրականացնի ոստիկանության գործունեությանն առնչվող որևէ հարցի քննություն, եթե, համարվի, որ դա բխում է հանրային շահերից է, կամ Ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմինը կարող է կոչ անել քննել ոստիկանության գործունեության հետ կապված որևէ հարց, եթե դա բխում է հանրության շահերից:¹³

41. Ոստիկանությունը պատասխանատու է բողոքների քննության համար, եթե.

- դրանցում չեն խախտվում ՄԻԵԿ-ի 2-րդ կամ 3-րդ հոդվածով ամրագրված իրավունքները,
- քրեական կամ կարգապահական պատասխանատվության հարց չի առաջանում,
- Ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմինը ոստիկանությանն է փոխանցում բողոքը քննելու պարտավորությունը:

6. Ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության համակարգի աշխատանքը

6.1 Թափանցիկություն և հասանելիություն

42. Ոստիկանությունը և Ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմինը պետք է համատեղ պատասխանատվություն կրեն բողոքների քննության համակարգի թափանցիկության և հասանելիության համար: Իր բարձր հեղինակության և հասարակության հետ հաճախակի հաղորդակցման բերումով ոստիկանությունը հիանալի հնարավորություն ունի Ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ

¹³ Տե՛ս՝ օրինակ՝ «Աքարն ընդդեմ Թուրքիայի» (Acar v Turkey) գործ (դիմում թիվ՝ 26307/95), 2004թ. ապրիլի 8-ի վճիռ, § 221:

մարմնի հսկողության ներքո գտնվող բողոքների քննության համակարգի մասին հանրային իրազեկության մակարդակի բարձրացումը խթանելու համար:

43. Ստորև թվարկված են արդյունավետ գործելառճի օրինակները.

- հրապարակված նյութերում տեղեկություններ ներկայացնել ոստիկանության գործողությունների դեմ բողոքների մասին,
- բողոք ներկայացնելու մասին տեղեկություններ տեղադրել ոստիկանության ամբողջ տարածքի և մասնավորապես՝ ժամանակավոր պահման վայրերի առավել ուշագրավ վայրերում,
- ոստիկանության տարածքում կալանքի տակ գտվող բոլոր անձանց գրավոր տեղեկացնել՝ իրենց ազատումից հետո բողոք ներկայացնելու կարգի մասին, հերթապահ ոստիկանները պետք է իրենց հետ կրեն «բողոք ներկայացնելու վերաբերյալ տեղեկատվական քարտեր» և կարող են դրանք բաժանել ոստիկանության աշխատանքից դժգոհություն արտահայտող հասարակության ներկայացուցիչներին,
- ոստիկանության գործողությունների դեմ բողոքների մասին տեղեկություններ տեղադրել քրեական արդարադատության մարմինների կողմից վերահսկվող հանրային վայրերում, այդ թվում՝ դատախազության, պայմանական վաղաժամկետ ազատման հարցերով մարմինների, քրեակատարողական հիմնարկների և դատարանների շենքերում,
- ոստիկանության գործողությունների դեմ բողոքների մասին տեղեկություններ տեղադրել քրեական արդարադատության մարմինների կողմից չվերահսկվող հանրային վայրերում, այդ թվում՝ տեղական ինքնակառավարման մարմինների, խորհրդակցական մարմինների և սոցիալական ապահովության հաստատությունների շենքերում:

44. Իրենց պաշտոնեական պարտականությունների կատարման բերումով ոստիկանության աշխատակիցները հաճախակի հաղորդակցվում են տարբեր մարդկանց հետ, և հնարավոր բողոքարկուի կարգավիճակը կարող է ազդեցություն ունենալ բողոքների քննության համակարգի հետ առնչվելու հարցում նրա վստահության վրա: Նշված համակարգի հասանելիությունը պետք է ապահովի ոստիկանությունը կամ ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմինը: Հարկավոր է նաև նախատեսել մի շարք միջոցներ, որոնք ավելի հասանելի կդարձնեն համակարգը՝ ամրապնդելով բողոքարկուների վստահությունը, որպեսզի նրանք լիարժեքորեն իրազեկված լինեն իրենց բողոքելու իրավունքի մասին և ցանկություն հայտնեն անմիջապես և ուղղակիորեն առերեսվել ոստիկանության աշխատակիցների հետ: Ինչ վերաբերում է այն բողոքարկուներին, ովքեր բավականաչափ վստահություն չունեն և նախընտրում են խորհրդատվության ստանալ, այլ ոչ թե անմիջապես հաղորդակցվել ոստիկանության աշխատակցի հետ, ապա բողոքների քննության վերոնշյալ համակարգը պետք է լիովին հասանելի լինի նաև նրանց համար:

45. Բողոքարկուները պետք է հնարավորություն ունենան իրենց հայեցողությամբ նշանակելու իրավական ներկայացուցիչ, գործակալ կամ որևէ երրորդ անձ իրենց բողոքին առնչվող բոլոր

հարցերում իրենց անունից գործելու համար: Բողոքարկուների՝ իրենց օրինական շահերը պաշտպանելու համար նրանց հարկավոր է տրամադրել ֆինանսական աջակցություն իրավաբանական խորհրդատվությունից և ներկայացուցչության ծառայություններից օգտվելու համար:

46. Թե՛ բողոքարկուները և թե՛ նրանց իրավական ներկայացուցիչները կարող են դիմել ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության համակարգին մի շարք միջոցներով, այդ թվում՝

- դիմել անձամբ ոստիկանության տարածքում բողոք ներկայացնելու պատճառը հանդիսացող միջադեպից անմիջապես հետո կամ հետագայում,
- գանգահարել ոստիկանության բաժին կամ ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության մարմնի գրասենյակ,
- հեռապատճեն ուղարկել ոստիկանության բաժին կամ ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության մարմնի գրասենյակ,
- նամակ ուղարկել ոստիկանության բաժին կամ ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության մարմնի գրասենյակ,
- դիմել ոստիկանության բաժին կամ ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության մարմնի գրասենյակ էլեկտրոնային եղանակով, էլեկտրոնային փոստով կամ համաշխարհային համացանցի ընձեռնած միջոցներով:

47. Քաղաքացիների ընդհանուր հարցումներին անձամբ կամ հեռախոսով պատասխանող ոստիկանության ընդունարանի աշխատակիցները պետք է համապատասխան դասընթացներ անցնեն, որպեսզի կարողանան հիմնական ցուցումներ տալ բողոքների համակարգի վերաբերյալ:

6.2 Ծանուցում, հաշվառում և ուղղորդում

48. Ոստիկանության ժամանակավոր պահման վայրում գտնվելու ընթացքում կամ ոստիկանության գործողությունների արդյունքում մահվան կամ ծանր մարմնական վնասվածքի հանգեցրած բոլոր միջադեպերի մասին հարկավոր է հնարավորինս շուտ հայտնել ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմնին:¹⁴

49. Ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմինը կունենա համապատասխան լիազորություններ մահվան ելքով կամ ծանր մարմնական վնասվածքների հանգեցրած միջադեպերը բողոքարկուի բացակայությամբ կամ առանց տուժողի կամ նրա մահվան պարագայում՝ առանց նրա հարազատների համաձայնության քննելու համար:¹⁵

¹⁴ Տե՛ս՝ օրինակ՝ «Ռամսահայն ընդդեմ Նիդերլանդների» (Ramsahai v The Netherlands) գործ (դիմում թիվ՝ 52391/99), 15 May 2007թ. մայիսի 15-ի վճիռ, § 339:

¹⁵ Տե՛ս՝ օրինակ՝ «Ռամսահայն ընդդեմ Նիդերլանդների» (Ramsahai v The Netherlands) գործ (դիմում թիվ՝ 52391/99), 15 May 2007թ. մայիսի 15-ի վճիռ, § 339:

50. Ոստիկանության և Ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմնի աշխատակիցները պետք է հարգալից վերաբերմունք դրսևորեն անձամբ կամ հեռախոսով իրենց բողոքը ներկայացնող հնարավոր բողոքարկուների և նրանց իրավական ներկայացուցիչների նկատմամբ՝ նրանց համարելով իրենց քաղաքացիական պարտքը կատարող քաղաքացիներ:

51. Բողոքի մասին ծանուցումը կարող է ուղղվել ոստիկանությանը կամ ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմնին:

52. Ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմինը պետք է հաշվառի բոլոր բողոքները: Ոստիկանություն ներկայացրած բոլոր բողոքները պետք է փոխանցվեն ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմնին հաշվառվելու համար:

53. Դաժան վերաբերմունքի կամ ոչ իրավաչափ գործողությունների վերաբերյալ դատական մարմին ներկայացված հաղորդումները պետք է հաշվառվեն և ուղղորդվեն Ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմնին այնտեղ ևս հաշվառվելու համար:¹⁶ Նույնը վերաբերում է դատական մարմին ներկայացվող վստահության արժանի ապացույցների ընթացակարգին:

54. Դաժան վերաբերմունքի կամ ոչ իրավաչափ գործողությունների վերաբերյալ հաղորդման առկայության կամ քրեական արդարադատության համակարգի ղեկավարի¹⁷ կամ բժիշկ մասնագետի մոտ վստահություն ներշնչող ապացույցների առկայության պարագայում հարկավոր է նրան աջակցել դրանք ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմնին հաշվառման նպատակով փոխանցելու գործում:

55. Ոստիկանությունը պետք է իրավասու լինի ծանուցման հիման վրա քննել ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմնի կողմից դեռևս չհաշվառված բողոքները, եթե.

- դրանք պատկանում են ոստիկանության կողմից քննության ենթակա բողոքների խմբին,
- բողոքարկուն ցանկանում է, որ ոստիկանությունը քննի իր դիմումն առանց վերոնշյալ մարմնի ներգրավման:

56. Ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմինը պետք է պատասխանատվություն կրի բողոքները դասակարգելու և դրանց քննության ընթացակարգերն

¹⁶ Տե՛ս՝ օրինակ՝ ԽԿԿ չափանիշներ, Գլուխ IX, § 28:

¹⁷ Տե՛ս՝ օրինակ՝ «Աքսոյն ընդդեմ Թուրքիայի» (Aksoy v Turkey) գործ (100/1995/606/694), 1996թ. դեկտեմբերի 18-ի վճիռ, §§ 56 և 99:

ընտրելու համար: Ստորև ներկայացված են բողոքի հաշվառման ընթացքում դրա հետագա ուղղորդման տարբերակները.

- այլևս ոչ մի միջոց չձեռնարկել՝ հաշվի առնելով բողոքարկուի մոտ հիմնավոր պատճառների բացակայությունը,
- որևէ լրացուցիչ միջոց չձեռնարկել բողոքարկուի բողոքի առնչությամբ,
- սահմանել բողոքը որպես ոստիկանության ծառայության դեմ ուղղված բողոք և ուղղորդել այն համապատասխան մարմնի քննությանը,
- հաստատել ոստիկանության որոշումը բողոքը քննելու վերաբերյալ մինչ վերոնշյալ մարմնին այն ուղղորդելը,
- ուղղորդել ոստիկանության աշխատակիցներին՝ բողոքը կարգավորելու համար,
- ուղղորդել ոստիկանության քննություն իրականացնելու համար կամ
- ուղղորդել ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմնի քննիչին:

6.3 Կարգավորման գործընթաց

57. Համապատասխան մասնագետի կողմից սովորական համարվող բողոքը կարող է հուսահատության հասցնել քաղաքացուն: Նման բողոքներն ուսումնասիրելու ընթացակարգն ինքնին արդեն կարող է ազդեցություն գործել ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության համակարգի և ոստիկանության նկատմամբ հասարակության վստահության վրա:

58. Իրենց առօրյայում հասարակության հետ հաղորդակցման ժամանակ ոստիկանության աշխատակիցները պարբերաբար անդրադառնում են գանգատներին, ուստիև առանձին բողոքներ ներկայացնելու անհրաժեշտություն գոյություն չունի: Նման պայմաններում գանգատները կարող են ուսումնասիրվել բացատրության, մեկ այլ կարծիքն ընդունելու կամ ներողություն խնդրելու միջոցով: Այն դեպքերում, երբ համեմատաբար պարզ թյուրիմացության կամ ոստիկանության աշխատակցի և քաղաքացու միջև լարվածության առաջացումը հանգեցրել է բողոքի ներկայացմանը, կարող է անհրաժեշտություն չառաջանալ, որպեսզի ոստիկանությունը կամ ոստիկանության գործողությունների դեմ բողոքների անկախ քննության մարմինը նախաձեռնեն տևական և թանկարժեք քննություն: Ավելին, քննությունը թերևս չի համապատասխանի բողոքարկուների սպասելիքներին առ այն, որ նրանց պարզ բողոքը լուծում կստանա կարճ ժամանակահատվածում պարզ ու անմիջական ընթացակարգով: Հարկավոր է պայմաններ ստեղծել նման կարգի բողոքներին հաշտարար համաձայնությամբ կամ նվազ ֆորմալ կառուցակարգերով լուծում տալու համար:

59. Հաշտարար համաձայնության առարկա հանդիսացող բողոքին լուծում տալու համար պատասխանատվություն կրող ոստիկանության աշխատակիցը պետք է տեղեկություններ

հավաքի բողոքի, ինչպես նաև բողոքարկուի և ոստիկանության այն աշխատակցի վերաբերյալ, ում դեմ ուղղված է բողոքը, հետագա մտադրությունների վերաբերյալ և անհրաժեշտության դեպքում պետք է նշանակի միջնորդ:

60. Ստորև բերված են բողոքարկուի և ոստիկանության աշխատակցի միջև հաշտարար համաձայնության արդյունքում ողջամիտ ժամկետներում բողոքի բավարարման օրինակներ.

- ոստիկանության ավագ մասնագետի կողմից բողոքարկուին հասցեագրված նամակի միջոցով, որտեղ նա հայտնում է բողոքի հանգեցրած միջադեպի մասին և ողջամտության պարագայում՝ նաև ներում է հայցում,
- բողոքարկուի, նրա ներկայացուցչի և ոստիկանության ավագ մասնագետի հանդիպման կազմակերպում,
- կամավոր հիմունքներով փոխհատուցման առաջարկելը կամ
- ոստիկանության ավագ մասնագետի կամ անկախ միջնորդի կողմից բողոքարկուի և բողոքում նշված ոստիկանության աշխատակցի հանդիպման կազմակերպումը՝ նրանց ներկայացուցիչների մասնակցությամբ:

61. Բողոքարկուն պետք է իրավունք ունենա ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմիններում վիճարկելու ոստիկանության կողմից իր բողոքին լուծում տալու կամ այն ուսումնասիրելու կարգը:

6.4 Քննչական գործընթաց

62. Ի լրումն ՄԻԵԿ-ի 2-րդ և 3-րդ հոդվածներով ամրագրված իրավունքների խախտմանն առնչվող բողոքները ոստիկանության գործողությունների դեմ ուղղված բողոքների արդյունավետ քննության հինգ սկզբունքներին համապատասխան քննելու վերոնշյալ պանանջին՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատաիրավական պրակտիկայով օգտակար ուղեցույցներ են նախատեսվում նաև ոստիկանության դեմ բողոքների քննության գործընթացի բոլոր փուլերի համար:

Անկախություն

63. Ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության համակարգի նկատմամբ ամբողջական վերահսկողություն իրականացնող Ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմնի առկայությունը մեծապես նպաստում է անկախության սկզբունքի պահպանմանը: Նշված մարմնին վերապահված՝ բողոքների հաշվառման և դրանց քննության ընթացակարգի ընտրության պարտավորությունը լիովին համապատասխանում է այն սպասումներին, որ ի լրումն գործնական անկախության՝ բողոքի գործով ներգրավված քննիչները պետք է ինստիտուցիոնալ կամ ստորակարգային բնույթի կապեր չունենան

նստիկանության այն աշխատակցի հետ, ում դեմ ուղղված է բողոքը:¹⁸ Բողոքի քննությունը վարելու և այն վերահսկելու համար պատասխանատու անձանց նշանակելու համար հարկավոր կլինի սահմանել համապատասխան չափանիշներ:

64. Բողոքների քննության համար պատասխանատու անձին ընտրելու հարցում առանցքային դեր են կատարում հետևյալ գործոնները՝ բողոքի լրջությունը ներկայացնողի խոսքերով, բողոքում նշված նստիկանության աշխատակցի համար իրավական հետևանքները և հանրային շահը:

65. Քննություն իրականացնելու և համապատասխան ծախսերի մեծ մասը հոգալու համար կազմակերպություն, այն է՝ նստիկանության և նստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմնի միջև ընտրություն կատարելու հարցում որոշիչ դեր կատարող գործոնը ռեսուրսներն են:

66. Ստորև բերված են անկախության սկզբունքին, բողոքի հիմնավորվածության և ռեսուրսների կառավարման առումով հնարավոր հետևանքներին համապատասխան նստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմնի և նստիկանության միջև համագործակցության ընթացակարգերի օրինակները.

- Ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմինը պատասխանատու է նույն մարմնի քննիչների կողմից այնպիսի բողոքների քննության համար, որոնք առնչվում են ՄԻԵԿ-ի 2-րդ կամ 3-րդ հոդվածներում ամրագրված իրավունքների խախտմանը:¹⁹

- Ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմինը պատասխանատու է նշված մարմնի կամ նստիկանության կողմից այնպիսի բողոքների քննության համար, որոնք առաջացնում են քրեական պատասխանատվություն:

- Ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմինը կամ նստիկանությունը կարող են պատասխանատվություն կրել նույն մարմնի կամ նստիկանության քննիչների կողմից այնպիսի բողոքների քննության համար, որոնք առնչվում են ՄԻԵԿ-ով, բացառությամբ՝ 2-րդ կամ 3-րդ հոդվածների, ամրագրված իրավունքների խախտմանը կամ առաջացնում են կարգապահական պատասխանատվություն:

- Ոստիկանության աշխատանքի թերի կամ անպատշաճ կարգով կատարման մասին բողոքը, քննության նպատակահարմարության պարագայում, փոխանցվում է նստիկանությանը, և դրա վարույթը կատարում են նստիկանության քննիչները:

- Ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմինը պատասխանատվություն է կրում բողոքարկուի բացակայությամբ գրանցված միջադեպի

¹⁸ Տե՛ս՝ օրինակ՝ «Ռամսահայն ընդդեմ Նիդերլանդների» (Ramsahai v The Netherlands) գործ (դիմում թիվ՝ 52391/99), 15 May 2007թ. մայիսի 15-ի վճիռ, § 325.

¹⁹ Տե՛ս՝ օրինակ՝ «Ռամսահայն ընդդեմ Նիդերլանդների» (Ramsahai v The Netherlands) գործ (դիմում թիվ՝ 52391/99), Judgment 15 May 2007, §§ 337 – 340:

քննության համար, ընդ որում՝ քննությունը կարող են իրականացնել նշված կառույցի կամ ոստիկանության քննիչները:

Համարժեքություն

67. Համարժեքության սկզբունքի նպատակն է ապահովել ոստիկանության դեմ բողոքների քննության արդյունավետությունը և իրավախախտներին պատասխանատվության ենթարկելու կարողությունը:

68. Օրենքի գերակայության սկզբունքի համաձայն՝ ոստիկանության աշխատակցի դեմ բողոքի հետաքննությունը պետք է իրականացվի նույն ընթացակարգերով, այդ թվում՝ աշխատակցին վերապահված երաշխիքներով, որոնք կիրառելի են ոչ իրավաչափ գործողությունների մեջ կասկածվող բոլոր քաղաքացիների պարագայում:

69. Ստորև ներկայացված են ոստիկանության գործողությունների դեմ բողոքների մանրակրկիտ և համակողմանի հետաքննության պահանջները.

- գրանցել բողոքարկուի ամբողջական և ճշգրիտ հայտարարությունը՝ նրա բողոքի բոլոր հանգամանքներով հանդերձ,²⁰
- ողջամիտ ջանքեր գործադրել վկաներին, այդ թվում՝ առանձին քաղաքացիներին²¹ և ոստիկանության աշխատակիցներին²² վեր հանելու ուղղությամբ ամբողջական և ճշգրիտ հայտարարություններ ստանալու նպատակով,²³
- բոլոր այն դեպքերում, երբ գործի քննությունը կարող է հանգեցնել քրեական պատասխանատվության, հարցազրույցներ անցկացնել ոչ իրավաչափ գործողությունների մեջ մեղադրվող կամ կասկածվող ոստիկանության աշխատակիցների հետ՝ որպես նման երաշխիքներ ունեցող քաղաքացիներ,²⁴ և թույլ չտալ նրանց ցուցմունք տալուց առաջ հաղորդակցվել իրենց գործընկերների հետ,
- ողջամիտ ջանքեր գործադրել դատաբժշկական²⁵ և բժշկական փորձաքննությունների արդյունքում ստացված բոլոր ապացույցներն²⁶ ապահովելու, հավաքելու և վերլուծելու համար,
- շարունակել հետաքննչական գործողությունները՝ առաջնորդվելով հիմնավոր կասկածներով և հաշվի առնելով բողոքարկուի օգտին ապացույցները²⁷ կամ առանց քննադատության ընդունելով

²⁰ Տե՛ս՝ օրինակ՝ «Քոբզարուն ընդդեմ Ռումինիայի» (Cobzaru v Romania) գործ (դիմում թիվ՝ 48254/99), 2007թ. հուլիսի 26-ի վճիռ, § 71:

²¹ Տե՛ս՝ օրինակ՝ «Օգնյանովան ընդդեմ Բուլղարիայի» (Ognyanova v Bulgaria) գործ (դիմում թիվ՝ 46317/99), 2006թ. փետրվարի 23-ի վճիռ, § 110:

²² Տե՛ս՝ օրինակ՝ «Վելիկովան ընդդեմ Բուլղարիայի» (Velikova v Bulgaria) գործ (դիմում թիվ՝ 41488/98), 2000թ. մայիսի 18-ի վճիռ, § 79:

²³ Տե՛ս՝ օրինակ՝ «Ասենովն ընդդեմ Բուլղարիայի» (Assenov v Bulgaria) գործ (90/1997/874/1086), 1998թ. հոկտեմբերի 28-ի վճիռ, § 103:

²⁴ Տե՛ս՝ օրինակ՝ «Ռամսահայն ընդդեմ Նիդերլանդների» (Ramsahai v The Netherlands) գործ (դիմում թիվ՝ 52391/99), 2007թ. մայիսի 15-ի վճիռ, § 330:

²⁵ Տե՛ս՝ օրինակ՝ «Ռամսահայն ընդդեմ Նիդերլանդների» (Ramsahai v The Netherlands) գործ (դիմում թիվ՝ 52391/99), Judgment 15 May 2007, § 329:

²⁶ Տե՛ս՝ օրինակ՝ «Աքսոյն ընդդեմ Թուրքիայի» (Aksoy v Turkey) գործ (100/1995/606/694), 1996թ. դեկտեմբերի 18-ի վճիռ, § 56:

²⁷ Տե՛ս՝ օրինակ՝ «Աքսոյն ընդդեմ Թուրքիայի» (Aksoy v Turkey) գործ, (57/1996/676/866), 1997թ. սեպտեմբերի 25-ի վճիռ, § 98 :

ապացույցները, մասնավորապես՝ ոստիկանության աշխատակցի ցուցմունքները²⁸ բողոքարկուի դեմ,²⁹

- հետաքննել ոստիկանության կողմից ոչ իրավաչափ գործողությունների կատարումը կամ խտրականությունը ռասայի,³⁰ ազգության, կրոնի, դավանանքի, սեռի, գենդերային ինքնության, սեռական կողմնորոշման, հաշմանդամության, տարիքի կամ ցանկացած այլ հիմքով, և

- հաշվի առնելով խտրականության գործերով ապացույցներ գտնելու դժվարությունները՝ քննիչների վրա դրված է խտրականության հնարավոր դրդապատճառները վեր հանելու համար բոլոր փաստերը մանրագնի ուսումնասիրելու լրացուցիչ պարտականությունը:³¹

Արագություն

70. Արագության սկզբունքով ընդգծվում է գործը համապատասխան ժամկետներում քննելու անհրաժեշտությունը, և այն, որ բողոքների արդար և արդյունավետ քննությունը պետք է իրականացվի անհապաղ և արագ:³² Հետաքննության ձգձգումը կարող է հանգեցնել առանցքային նշանակություն ունեցող ապացույցների կորստին և պատշաճ հետաքննություն իրականացնելու անհնարինությունը:³³

71. Բողոքի հետաքննությունն արագ և ողջամիտ ժամկետներում չիրականացնելու պարագայում կարող է ստեղծվել այն տպավորությունը, որ համապատասխան մարմինները դժկամություն են դրսևորում այս հարցում, կամ որ ոստիկանության այն աշխատակիցները, ում դեմ ներկայացվել է բողոքը՝ գաղտնի համաձայնության են եկել քննիչների հետ:³⁴ Հետաքննության ձգձգումը կարող է անարդար լինել ոստիկանության աշխատակցի նկատմամբ և խախտել գործի ընթացքը, ինչն էլ իր հերթին կարող է հանգեցնել իրավախախտին պատասխանատվության ենթարկելու անհնարինությանը՝ չնայած նրա դեմ անհերքելի ապացույցների առկայությանը:³⁵

72. Արագության սկզբունքն առանցքային դեր է կատարում օրենքի գերակայության սկզբունքի նկատմամբ վստահության պահպանման և ոստիկանական գործունեության անկյունաքարային սկզբունքի ամրապնդման գործում, որի համաձայն՝ ոստիկանության դեմ բողոքների քննության ողջ ընթացքում ոստիկանության աշխատակիցները պատասխանատու են օրենքի առջև և պաշտպանված են օրենքով:

²⁸ Տե՛ս օրինակ՝ «Քայան ընդդեմ Թուրքիայի» (Kaya v Turkey) գործ (158/1996/777/978), 1998թ. փետրվարի 19-ի վճիռ, § 89:

²⁹ Տե՛ս օրինակ՝ «Բոբզարու ընդդեմ Ռումինիայի» (Cobzaru v Romania) գործ (դիմում թիվ՝ 48254/99), 2007թ. հուլիսի 26-ի վճիռ, § 72:

³⁰ Տե՛ս օրինակ՝ «Նաչովան ընդդեմ Բուլղարիայի» (Nachova v Bulgaria) գործ (դիմում թիվ՝ 43577/98 և 43579/98), 2005թ. հուլիսի 6-ի վճիռ, §§ 162-168; և Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի թիվ 11 համաքաղաքային հանձնարարական Ոստիկանության գործունեության շրջանակներում ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի մասին, § 51:

³¹ Տե՛ս օրինակ՝ «Նաչովան ընդդեմ Բուլղարիայի» (Nachova v Bulgaria) գործ (դիմում թիվ՝ 43577/98 և 43579/98), 2005թ. հուլիսի 6-ի վճիռ, §§ 160-164:

³² Տե՛ս օրինակ՝ Ognyanova v Bulgaria (դիմում թիվ՝ 46317/99), Judgment 23 February 2006, § 114.

³³ Տե՛ս օրինակ՝ «Այդինն ընդդեմ Թուրքիայի» (Aksoy v Turkey) գործ (57/1996/676/866), 1997թ. սեպտեմբերի 25-ի վճիռ, § 108:

³⁴ Տե՛ս օրինակ՝ «Ռասահայն ընդդեմ Նիդերլանդների» (Ramsahai v The Netherlands) գործ (դիմում թիվ՝ 52391/99), 2007թ. մայիսի 15-ի վճիռ, § 330:

³⁵ Տե՛ս օրինակ՝ «Րասահայն ընդդեմ Թուրքիայի» (Ramsahai v The Netherlands) գործ (դիմում թիվ՝ 33097/96 և 57834/00), 2004թ. հունիսի 3-ի վճիռ, § 147:

73. Արագության սկզբունքի պահպանումն ապահովվում է հետևյալ գործողություններով.

- ծանուցման, հաշվառման և ուղղորդման ընթացակարգերը պատշաճ ժամկետում իրականացնելը,

- Ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմնի և ոստիկանության միջև ամբողջական համագործակցության հաստատում բողոքների հետաքննության ոլորտում, մասնավորապես՝ լուրջ միջադեպերի հետ կապված ապացույցների պահպանման նպատակով և այն դեպքերում, երբ ոստիկանության աշխատակիցները դեպքի վայրում են հայտնվում ավելի շուտ, քան ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմնի քննիչները³⁶ և

- ճիշտ ժամանակին ամբողջական և համակողմանի հետաքննության իրականացումը և բողոքի վերաբերյալ որոշման կայացումը:

Հանրային հսկողություն

74. Հանրային հսկողության սկզբունքի նպատակն է հաշվետվողականությունն ապահովել ինչպես գործնականում, այնպես էլ տեսականորեն: Հարկավոր է հաշվի առնել ոստիկանության աշխատակիցների դեմ բողոքների քննության գաղտնի և նրբանկատ բնույթը և անհրաժեշտ ծավալով հանրային վերահսկողությունը, որը կարող է տարբերվել դեպքից դեպք:³⁷

75. Հանրային հսկողության և տուժողների ներգրավման սկզբունքները խիստ փոխկապակցված են: Այս առումով հարկավոր է հիմք ընդունել այն փաստը, որ գործով հաղորդումները և այլ փաստաթղթերը նախևառաջ ներկայացվելու են բողոքարկուին: Բողոքի վերաբերյալ կայացրած որոշումը պարզաբանող փաստաթղթերի հրապարակումը կարող է նպաստել ոչ իրավաչափ գործողությունների համար ոստիկանության աշխատակիցների անպատժելիության վերաբերյալ մտահոգությունների վերացմանը:³⁸ Որոշ դեպքերում, օրինակ կալանավայրում գտնվող անձի մահվան կամ ծանր մարմնական վնասվածների հանգեցրած գործերով կարող է առաջանալ արդարադատության համակարգի ներկայացուցչի մասնակցությամբ հրապարակային հետաքննություն իրականացնելու անհրաժեշտությունը,³⁹ կամ կարգապահական հարցի շուրջ ոստիկանությունում հրապարակային լուսմաներ անցկացնելու անհրաժեշտությունը:

76. Բողոքների ուսումնասիրության գործընթացի ավարտից հետո գործով հայտարարություններին և փաստաթղթերին մուտք չունեցող բողոքարկուները կարող են զրկվել

³⁶ Տե՛ս՝ օրինակ՝ «Ռամսահայն ընդդեմ Նիդերլանդների» (Ramsahai v The Netherlands) գործ (դիմում թիվ՝ 52391/99), 2007թ. մայիսի 15-ի վճիռ, § 338:

³⁷ Տե՛ս՝ օրինակ՝ «Իսայևան ընդդեմ Ռուսաստանի» (Isayeva v Russia) գործ (դիմում թիվ 5794/00, 57948/00 և 57949/00), 2005թ. փետրվարի 24-ի վճիռ, § 213:

³⁸ Տե՛ս՝ օրինակ՝ «ՄաքՔերն ընդդեմ Միացյալ Թագավորության» (McKerr v UK) գործ (դիմում թիվ՝ 28883/95), 2001թ. մայիսի 4-ի վճիռ, § 338:

³⁹ Տե՛ս՝ օրինակ՝ «Էդվարդսն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Edwards v UK) գործ (դիմում թիվ՝ 46477/99), 2002թ. մարտի 14-ի վճիռ, § 84:

իրենց բողոքի ուսումնասիրության ընթացքը կամ դրա վերաբերյալ կայացրած որոշումը վիճարկելու հնարավորությունից:⁴⁰

Տուժողի ներգրավում

77. Ապահովելով բողոքարկուի մասնակցությունը բողոքի քննությանը՝ տուժողների ներգրավման սկզբունքը կոչված է երաշխավորելու բողոքների քննության համակարգի ներքո նրա օրինական շահերի պաշտպանությունը:⁴¹ Առանց բողոքում նշված ուստիկանության աշխատակցի շահերին վնասելու՝ բողոքարկուի ներգրավումը խթանելու նպատակով՝ Ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմնի կամ ոստիկանության՝ բողոքի ուսումնասիրության համար պատասխանատու աշխատակիցը պետք է կապ հաստատի բողոքարկուի հետ: Բողոքարկուին հարկավոր է տեղեկություններ տրամադրել իր բողոքի ողջ ընթացքի մասին:⁴²

78. Խիստ կարևոր է ապահովել տուժողի ներգրավման սկզբունքի արդյունավետ գործնական կիրառումը, որպեսզի այն չվերածվի դատարկախոսության և հռետորականության: Եթե բողոքարկուն իր վերապրած միջադեպի հետևանքով ցնցված լինելու, վստահությունը կորցնելու կամ բողոքների քննության համակարգի աշխատանքի բնույթի չպատկերացնելու պատճառով դժվարանում է իր բողոքի մասին խոսել ոստիկանության կամ ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմնի ներկայացուցիչների հետ, նրա շահերի պաշտպանությունը չի երաշխավորվում: Բողոքի ուսումնասիրության ողջ ընթացքում հարկավոր է ցնցում վերապրած բողոքարկուին ապահովել տուժողի համար նախատեսված աջակցությամբ և խորհրդատվությամբ՝ օգնելով նրանց հաղթահարել իրենց ապրումները: Բողոքարկուների շահերի արդյունավետ պաշտպանությունն ապահովելու համար՝ անհրաժեշտ է նրանց տրամադրել իրավաբանական խորհրդատվություն և ներկայացուցչական ծառայություններ:⁴³

79. Տուժողի ներգրավման սկզբունքի պահպանումը, մասնավորապես՝ իրավական ներկայացուցչության պայմաններում բողոքարկուին հնարավորություն կտա վերահսկել բողոքի քննության ընթացքը և վիճարկել անարդար և անարդյունավետ գործելակերպը: Այս սկզբունքի պահպանումը կամրապնդի նաև անկախությունը՝ ապահովելով, որ բողոքարկուի շահերը չմնան ոստիկանության հզոր կառույցի շահերի ստվերում:

6.5 Որոշման կայացում և վերանայում

⁴⁰ Տե՛ս՝ օրինակ՝ «Օգյուրն ընդդեմ Թուրքիայի» (Oğur Ogurv. Turkey) գործ (դիմում թիվ՝ 21594/93), 1999թ. մայիսի 20-ի վճիռ, § 92:

⁴¹ Տե՛ս՝ օրինակ՝ «Գյուլեչն ընդդեմ Թուրքիայի» (Güleç v. Turkey) գործ (54/1997/838/1044), 1998թ. հուլիսի 27-ի վճիռ, § 82:

⁴² Տե՛ս՝ օրինակ՝ «Էդվարդսն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Edwards v UK) գործ (դիմում թիվ՝ 46477/99), 2002թ. մարտի 14-ի վճիռ, § 84:

⁴³ Տե՛ս՝ օրինակ՝ Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի թիվ 11 համաքաղաքային հանձնարարական Ոստիկանության գործունեության շրջանակներում ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի մասին, § 51:

80. Հետաքննության ավարտի վերաբերյալ զեկույցն ամբողջացնելուն պես ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմնի կամ ոստիկանության իրավասու քննիչները պետք է անկախ և անկողմնակալ վճիռ կայացնեն բողոքի կարգավորման վերաբերյալ և որոշում կայացնեն առկա ապացույցներն ընդունելու կամ չընդունելու վերաբերյալ: Իր ներկայացրած բողոքի ուսումնասիրության կարգը կամ արդյունքը վիճարկելու պարագայում բողոքարկուն պետք է իրավունք ունենա դիմելու ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմնին, եթե նրա բողոքը քննվել է ոստիկանության կողմից, և բողոքարկի այն դատական կարգով, եթե այն քննվել է ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմնի կողմից:

81. Բողոքի ուսումնասիրությունից հետո կարող է ձեռնարկվել գործողությունների ուղղության հետևյալ հինգ տեսակներից որևէ մեկը.

- ոչ մի հետագա գործողություն,
- ոստիկանության աշխատակցի նկատմամբ կարող է հարուցվել քրեական գործ,
- ոստիկանության աշխատակցի նկատմամբ կարող է հարուցվել կարգապահական վարույթ,
- ոստիկանության ղեկավարությունը կարող է ոչ ֆորմալ միջոցներ ձեռնարկել իր աշխատակցի նկատմամբ, կամ
- ոստիկանության աշխատանքում կարող են փոփոխություններ արվել քաղված դասերի հիման վրա:

Բողոքարկուն պետք է գրավոր և բանավոր տեղեկացվի իր բողոքի վերաբերյալ կայացրած որոշման մասին:

82. Ոչ իրավաչափ գործողություններ կատարած (համապատասխան ապացույցների առկայության պարագայում) ոստիկանության աշխատակցի նկատմամբ քրեական կամ կարգապահական վարույթ հարուցելու հնարավորությունն ինքնին հանդիսանում է ոստիկանության անպատժելիությունը կանխելու կարևորագույն միջոց⁴⁴ և էական նշանակություն ունի ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության համակարգի նկատմամբ հասարակության վստահության պահպանման համար:⁴⁵ Ոստիկանության աշխատակիցների նկատմամբ կարող է քրեական կամ կարգապահական վարույթ հարուցվել ոչ միայն բողոքների քննության շրջանակներում, իսկ նրանց իրավունքները և երաշխիքները սույն Եզրակացության շրջանակից դուրս են: Փոխարենը, սույն Եզրակացության հիմքում ընկած է այն ենթադրությունը, որ ոստիկանության աշխատակիցների նկատմամբ կիրառելի են քրեական արդարադատության սովորական ընթացակարգերը, այդ թվում նաև՝ արդար դատավարության պատշաճ երաշխիքները, իսկ նրանց կարգապահության պահպանման համար պատասխանատու է ոստիկանությունը:

⁴⁴ ԽԿԿ չափանիշներ, Գլուխ IX, § 31:

⁴⁵ Տե՛ս՝ օրինակ՝ «Գուժան ընդդեմ Մոլդովայի» (Guja v Moldova) գործ (դիմում թիվ՝ 14277/04), 2008թ. փետրվարի 12-ի վճիռ, § 88:

83. Բողոքների հիման վրա ոստիկանության աշխատակիցների նկատմամբ քրեական կամ կարգապահական վարույթ հարուցելու մոդելներից մեկը կայանում է նրանում, որ այն պետք է ընթանա քրեական արդարադատության կամ կարգապահական դատավարության սովորական ընթացակարգերով: Գործի հարուցման համար անհրաժեշտ ապացույցների առկայության պարագայում Ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմինը պետք է իր կատարած քննության մասին զեկույցը փոխանցի քրեական հետապնդում իրականացնող մարմնին, որպեսզի վերջինս որոշում կայացնի քրեական գործ հարուցելու վերաբերյալ, և ոստիկանությանը, որպեսզի այն որոշում կայացնի կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ:

84. Քրեական կամ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ որոշում կայացնելիս քրեական հետապնդում իրականացնող մարմինը և ոստիկանությունը պետք է հաշվի առնեն բողոքն ուսումնասիրող քննիչի զեկույցում ամփոփված առաջարկները: Քրեական հետապնդում իրականացնող մարմինը, ոստիկանությունը և Ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմինը պետք է հիմնավորեն քրեական կամ կարգապահական վարույթ հարուցելու մասին իրենց կայացրած բոլոր որոշումները:⁴⁶

85. Անդամ պետություններից մի քանիսը մտահոգություն են հայտնել այն մասին, որ քրեական գործի հարուցման շրջանակներում ոստիկանության և քրեական հետապնդում իրականացնող մարմնի միջև հաստատված սերտ աշխատանքային հարաբերությունները կարող են վնասակար ազդեցություն գործել քրեական հետապնդման անկախ և անկողմնակալ ընթացակարգերի վրա: Մտահոգության հիմնական պատճառը կայանում է նրանում, որ ոստիկանության և քննիչների և քրեական հետապնդում իրականացնող մարմնի դատախազների միջև հաստատվող համագործակցությունը կարող է վտանգել ոստիկանության աշխատակիցների դեմ հարուցված գործերի քննության ժամանակ դատախազների անկախությունը: Այս խնդիրը լուծելու նպատակով ոստիկանության աշխատակիցների դեմ բողոքների քննություն և քրեական հետապնդում իրականացնելու համար որոշ երկրներում հիմնվել են քրեական հետապնդման զծով հատուկ մասնագիտական մարմիններ՝ իրենց քննիչներով:

86. Ոստիկանության աշխատակիցների նկատմամբ հետապնդում իրականացնող անկախ մարմինների համակարգի այս տեսակը կարող է համապատասխան փոփոխություններով կիրառվել ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության համակարգում, որը գործում է ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմնի ղեկավարության ներքո: Որոշ եվրոպական պետությունների օմբուդսմենների գրասենյակների օրինակով, որոնք լիազորված են իրենց իսկ նախաձեռնությամբ մեղադրանք առաջադրել դատական կարգով, Ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմինը կարող է օժտվել նմանօրինակ լիազորություններով, որպեսզի այն կարողանա

⁴⁶ Տե՛ս՝ օրինակ՝ «ՄաքՔերն ընդդեմ Միացյալ Թագավորության» (McKerr v UK) գործ (դիմում թիվ՝ 28883/95), 2001թ. մայիսի 4-ի վճիռ, § 157:

քրեական մեղադրանք առաջադրել բողոքների հետաքննության ավարտից հետո: Բնականաբար, նման ընթացակարգի իրագործելիության գնահատման գործում կարևոր դեր կկատարեն անդամ պետությունների սահմանադրական և իրավական համակարգերը: Հարկավոր է հատուկ ուշադրություն դարձնել նաև քրեական դատավարության ընթացքում պատասխանողի դերում հանդես եկող ոստիկանության աշխատակիցների համար համապատասխան երաշխիքների և նրանց իրավունքների պաշտպանության մեխանիզմների առկայությունը:

87. Բոլոր բողոքներից անհրաժեշտ է քաղել դասեր: Անգամ պատշաճ կարգով չհիմնավորված բողոքներից կարելի է ինչ-որ բան իմանալ ոստիկանության և համայնքի փոխհարաբերությունների վերաբերյալ: Վիճակագրական և փորձագիտական հետազոտությունները և բողոքների վերլուծությունը հիմնարար դերակատարում ունեն ժողովրդավարական և հաշվետվողականության սկզբունքների վրա հիմնված ոստիկանական գործողությունների համար: Ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմինն ունի մեծ հնարավորություններ, քանի որ հանդիսանում է ոստիկանության գործունեության և համայնքային փորձի հատման կետ, ուստիև կարող է ոստիկանությանը և հասարակությանը տալ ողջամիտ խորհուրդներ՝ ոստիկանական գործողությունների արդյունավետությունը բարձրացնելու և ոստիկանության և համայնքի փոխհարաբերությունները բարելավելու վերաբերյալ: Եթե բողոքի վերաբերյալ եզրակացության կամ դրան հաջորդող ուսումնասիրության և վերլուծության արդյունքում ոստիկանությունը կամ ոստիկանության գործողությունների դեմ բողոքների քննության անկախ մարմինը նպատակահարմար համարեն իրենց աշխատանքում ներդնել քաղված դասերից կատարված եզրահանգումները, ապա նրանք կարող են իրականացնել իրենց մտահղացումը մյուս կողմի հետ խորհրդակցելուց հետո միայն:

Գրականության ցանկ

Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հարցերով հանձնակատար (2007թ.), *There must be no impunity for police violence* (Ոստիկանության աշխատակիցները չպետք է անպատիժ մնան իրենց գործած բռնությունների համար), Տեսակետ 3, 2007թ. դեկտեմբեր, www.commissioner.coe.int

Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հարցերով հանձնակատար (2008թ.), *'Police Complaints Mechanisms: Ensuring Independence and Effectiveness'* (փորձագիտական սեմինարի զեկույց, ոստիկանության գործողությունների դեմ բողոքների մեխանիզմներ. անկախության և արդյունավետության ապահովում 'CommDH (2008) 16, www.commissioner.coe.int

Եվրոպայի խորհուրդ (2001թ.), «Ոստիկանության աշխատակցի էթիկայի եվրոպական կանոնագիրք», Նախարարների կոմիտեի թիվ (2001)10 Հանձնարարական անդամ

պետություններին (Նախարարների կոմիտեի կողմից ընդունվել է 2001թ. սեպտեմբերի 19-ին Նախարարների տեղակալների 765-րդ ժողովին)

Եվրոպայի խորհրդի Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման կոմիտե (2006թ.), ԽԿԿ չափանիշներ. ‘Substantive’ sections of the CPT’s General Reports (ԽԿԿ Ընդհանուր զեկույցների էական բաժիններ), ԽԿԿ/Inf (2002) 1 – Rev. 2006թ.

Եվրոպայի խորհրդի Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողով (2007թ.), Թիվ 11 համաքաղաքային հանձնարարական Ոստիկանության գործունեության շրջանակներում ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի մասին

Եվրոպական խորհրդի համատեղ ոչ ֆորմալ աշխատանքային խումբ ոստիկանության և մարդու իրավունքների հարցերով (2000թ.), Ոստիկանության գործունեությունը ժողովրդավարական պետությունում. Ձեր ոստիկանության ծառայությունը հանդիսանում է արդյո՞ք մարդու իրավունքների պաշտպան, (Is your police service a human rights champion?)

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն (2008թ.), ԵԱՀԿ Գլխավոր քարտուղարի Ոստիկանության գծով ավագ խորհրդականի հեղինակած Ոստիկանության գործունեության ժողովրդավարական հիմքերի մասին ուղեցույց (Guidebook on Democratic Policing)

Միավորված ազգերի կազմակերպություն (1979թ.), Գլխավոր Ասամբլեայի 34-րդ նիստի թիվ 169 Բանաձև, 34/169. Իրավապահ պաշտոնյաների վարքագծի կանոնագիրք

ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեա (1993թ.), Մարդու իրավունքների խթանման և պաշտպանության ազգային կառույցների մասին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի բանաձևին (A/RES/48/134, 85-րդ լիազումար նիստ, 1993թ. դեկտեմբերի 20,) կից Մարդու իրավունքների պաշտպանությամբ և խթանմամբ զբաղվող ազգային կառույցների կարգավիճակի և գործունեության վերաբերյալ ՄԱԿ-ի սկզբունքներ (Փարիզյան սկզբունքներ)

ՄԱԿ-ի Միջազգային ոստիկանական ուժեր (1996թ.), Հանձնակատարի ուղղորդող սկզբունքներ Բոսնիա և Հերցեգովինայի դաշնությունում ժողովրդավարական սկզբունքների վրա հիմնված ոստիկանության գործունեության վերաբերյալ:

Հավելված 9

Եվրոպայի խորհուրդ

Խորհրդարանական վեհաժողով

Թիվ 1604 (2003) հանձնարարական 1

Ղատախազության դերն օրենքի գերակայության սկզբունքով կառավարվող ժողովրդավարական պետությունում

1. Խորհրդարանական վեհաժողովի մասնակիցները ճանաչում և գնահատում են եվրոպական պետություններում անվտանգության և ազատության ապահովման գործում դատախազների ունեցած կարևոր դերակատարումը օրենքի գերակայությունն ապահովելու, մարդկանց՝ իրենց իրավունքների և ազատությունների հանցավոր խախտումներից պաշտպանելու, քրեական հանցագործություն կատարելու մեջ կասկածվող կամ մեղադրվող անձանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու և հանցագործությունների հետաքննության և դատական հետապնդման համար պատասխանատու մարմինների պատշաճ աշխատանքը վերահսկելու միջոցով:

2. Վեհաժողովի մասնակիցների կարծիքով՝ պետությունների՝ իրենց իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուրի՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով (ՄԻԵԴ) ամրագրված իրավունքների ու ազատությունների իրացումն ապահովելու պարտավորությունից բխող իրավական հետևանքները հավասարապես կիրառելի են թե՛ դատախազների և թե՛ քրեական հետապնդման ենթարկված անձանց համար: Բացի այդ, ժողովրդավարության և օրենքի գերակայության սկզբունքի պահպանումը ենթադրում է պետական մարմինների, մասնավորապես՝ մի կողմից՝ դատախազի (որպես գործադիր կամ օրենսդիր իշխանության ներկայացուցիչ), իսկ մյուս կողմից՝ դատական իշխանության լիազորությունների արդյունավետ տարանջատում:

3. Հաշվի առնելով քրեական արդարադատության համակարգում դատախազության դերակատարման վերաբերյալ Նախարարների կոմիտեի թիվ(2000)19 Հանձնարարականը՝ Վեհաժողովի մասնակիցները կարծում են, որ նշված փաստաթուղթը հանդիսանում է մանրամասն ուղեցույց Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում դատախազությունների ընթացիկ աշխատանքային գործունեության և հետագա բարեփոխումների համար: Վեհաժողովի մասնակիցները հատկապես առանձնացրել են այն, որ վերոնշյալ հանձնարարականով ճանաչվում է ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներով հանցավորություն դեմ պայքարն ուժեղացնելու անհրաժեշտությունը և այդ ոլորտում միջազգային համագործակցությունը խորացնելու կոչը ՄԻԵԴ-ի սկզբունքների լիարժեք պահպանմամբ: Վեհաժողովի մասնակիցները կոչ են անում անդամ պետություններին ամեն ջանք գործադրել, որպեսզի այս փաստաթուղթն անմիջապես և լիարժեք ուժի մեջ մտնի:

4. Վեհաժողովի մասնակիցները համակարծիք են, որ առավել քան երբևէ փոխկապակցված և շարժունակ ներկայիս Եվրոպայում, որի քաղաքացիներն ավելի ու ավելի շատ են ենթարկվում (ուղղակիորեն կամ անուղղակիորեն) այլ երկրների իրավական համակարգերին և մշակույթներին, շատ կարևոր է որոշակի ներդաշնակություն հաստատել անդամ պետությունների քրեական արդարադատության համակարգերի միջև՝ նպաստելով անդրազգային կազմակերպված հանցավորության նոր մարտահրավերների հաղթահարման գործում նրանց արդյունավետության, ինչպես նաև օրենքի գերակայության սկզբունքի և դրա կիրառման կանխատեսելիության նկատմամբ հանրության վստահության պահպանմանը: Թեև հարկավոր է հարգել ազգային որոշակի գործելաոճերը և ավանդույթները, բոլոր այն դեպքերում, երբ տարբեր անդամ պետությունների դատախազությունների դերակատարման որոշակի հայեցակետեր մտահոգության տեղիք են տալիս, նման մտահոգություններին հարկավոր է ըստ հարկի արձագանքել Եվրոպայի մակարդակով՝ Եվրոպայի խորհրդի շրջանակներում:

5. Այս առումով, Վեհաժողովի մասնակիցները ողջունում են Եվրոպայի գլխավոր դատախազների խորհրդաժողովների մեկնարկը, որոնց սկզբունքորեն վերապահված է Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունների դատախազական գործունեության տարբեր մշակույթները և փորձը համախմբելու գործուն և առանցքային դերը: Որպես փորձառության համախմբման և քննարկումների լայնածավալ մասնագիտացված հարթակ՝ այս մարմինն ունի հսկայական ներուժ տվյալ բնագավառում Եվրոպայի խորհրդի ծավալած գործունեությանը նպաստելուն ուղղված առաջարկություններ ներկայացնելու և դրանք ուսումնասիրելու, խորհուրդներ տալու, առանձին անդամ պետություններում տիրող իրավիճակները համեմատելու և լավագույն փորձը վեր հանելու համար: Ուստի, Վեհաժողովի մասնակիցների կարծիքով՝ այդ մարմինը պետք է գործի մշտական հիմունքներով, Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի (անգլ.՝ CCJE) հետ համեմատ նույն մակարդակով և պետք է ունենա համապատասխան ռեսուրսներ:

6. Հարցաշարի պատասխանների հիման վրա Վեհաժողովի մասնակիցները գտնում են, որ անդամ պետությունների ազգային իրավական պրակտիկայի ներքոհիշյալ ակնհայտ առանձնահատկությունները մտահոգության տեղիք են տալիս Եվրոպայի խորհրդի հիմնարար սկզբունքներին իրենց համապատասխանության առնչությամբ:

- i. ոստիկանությունն ունի քրեական հետապնդում իրականացնելու պարտավորություն,
- ii. դատախազի պարտավորությունը, կամ միջնորդի դերակատարումը կալանավորման վերաբերյալ նախնական առարկություն ներկայացնելու գործում,
- iii. կալանավորված անձին ազատ արձակելու մասին դատական որոշման բողոքարկումը դատախազի կողմից ունի կասեցնող ազդեցություն,
- iv. անձի նկատմամբ հետապնդում իրականացնելու որոշումն ինքնաբերաբար բխում է ապացուցողական բնույթ կրող հիմքերի հաստատումից և
- v. դատախազների պարտավորությունները քրեական իրավունքին չառնչվող զանազան ոլորտներում:

7. Վերոնշյալ մտահոգիչ հարցերի առնչությամբ Վեհաժողովն անդամ պետությունների կառավարություններին է ներկայացնում հետևյալ հանձնարարականները.

i. քրեական հետապնդում իրականացնելու հետ կապված պարտավորությունները պետք է կատարի ոչ թե ոստիկանությունը, այլ՝ որևէ այլ անկախ մարմին:

ii. կալանավորման դեպքերը պետք է արագ, անմիջականորեն և ինքնաբերաբար ուղղորդվեն իրավասու դատարան՝ ՄԻԵԴ 5-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան:

iii. Մեղադրողի կողմից դատարանի որոշման բողոքարկումը չպետք է ունենա կասեցնող ազդեցություն, ինչպես ընդհանուր առմամբ, այնպես էլ ինքնաբերաբար, բացառությամբ միմիայն այն դեպքերի, երբ դատարանը հստակ հիմնավորված է համարում շարունակական կանխարգելիչ կամ խափանման կալանքի անհրաժեշտությունն ապացուցող օբյեկտիվորեն որոշվող գործոնները (օրինակ, եթե ստորադաս դատարանը կարգադրագիր է ընդունել ազատ արձակել կալանավորված անձին միայն հարկադրանքի նվազ ձևի կիրառման պայմանով, իսկ հետագայում մեկ այլ դատական որոշում է ընդունվում նրան ազատ արձակելու մասին կարգադրագիրը կասեցնելու մասին):

iv. Քրեական հետապնդում իրականացնելու որոշման հարցում հայեցողական լիազորություններ ընդունող համակարգը պետք է հնարավորինս արդյունավետորեն պաշտպանի ինչպես գործերի արդյունավետ և գործուն վարման հարցում արդարադատության շահերը, այնպես էլ ամբաստանյալի և ցանկացած տուժող կողմի շահերը: Այս կապակցությամբ Վեհաժողովի մասնակիցները հղում են կատարում քրեական արդարադատության ընթացակարգերի պարզեցման վերաբերյալ Նախարարների կոմիտեի թիվ R(87)18 հանձնարարականին՝ միաժամանակ համարելով, որ պետք է համատարած ընդունվի հայեցողական դատական հետապնդման սկզբունքը:

v. Ինչ վերաբերում է քրեական իրավունքին չառնչվող ոլորտներում ստանձնած պարտավորություններին, կարևոր է հաշվի առնել հետևյալը.

ա. Մարդու իրավունքների պաշտպանության ընդհանուր ոլորտում դատախազների ստանձնած դերը չպետք է հանգեցնի շահերի բխյումների կամ խոչընդոտ հանդիսանա իրենց իրավունքները պաշտպանելու համար պետությանը դիմած անհատների համար:

բ. Դատախազներին լրացուցիչ գործառնություններ հատկացնելիս հարկավոր է հետևողականորեն պահպանել պետական իշխանության տարանջատման սկզբունքը, որպեսզի առանձին գործերի մակարդակով դատախազները լիարժեք անկախ լինեն պետական կառավարման որևէ մարմնի միջամտությունից:

գ. Դատախազների լիազորությունները և պարտավորությունները պետք է սահմանափակվեն քրեական իրավախախտումների գործերով դատական հետապնդման իրականացման և քրեական արդարադատության համակարգի շրջանակներում հանրային շահերի պաշտպանության ոլորտում նրանց ունեցած ընդհանուր դերակատարմամբ, իսկ բոլոր մյուս գործառնություններն իրականացնելու համար հարկավոր է կազմել առանձին, պատշաճ կարգով գործող և արդյունավետ մարմիններ:

ինչպես նաև՝

vi. Նախարարների կոմիտեի թիվ R(87)18 և թիվ (2000)19 հանձնարարականները պետք է կենսագործվեն արագ, ամբողջովին և արդյունավետորեն:

8. Ուստի, Վեհաժողովի մասնակիցները խորհուրդ են տալիս Նախարարների կոմիտեին.

i. շարունակել անդամ պետություններում թիվ R(87)18 և թիվ (2000)19 հանձնարարականների լիարժեք և արդյունավետ իրագործմանն ուղղված աշխատանքը,

ii. աջակցել Եվրոպայի գլխավոր դատախազների խորհրդաժողովի կարևոր գործունեությանը, մասնավորապես՝ ապահովելով այս մարմնի աշխատանքը մշտական հիմունքներով, Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի հետ նույն մակարդակով և ապահովելով այն համապատասխան ռեսուրսներով,

iii. հրահանգել Եվրոպայի գլխավոր դատախազների խորհրդաժողովի հետ առնչվող իր համապատասխան մարմիններին իրականացնել մանրագնին ուսումնասիրություն, որի արդյունքում պետք է կազմվի անդամ պետություններին ուղղված հանձնարարական՝ թիվ Rec(2000)19 չընդգրկված դատախազների դերակատարման հայեցակետերի վերաբերյալ՝ հատուկ ուշադրություն դարձնելով վերոնշյալ 7-րդ կետի (i)-(v) ենթակետերում ամփոփված Վեհաժողովի հանձնարարականներին: Նշված ուսումնասիրության իրականացման ընթացքում հարկավոր է հաշվի առնել նաև հայեցողական դատական հետապնդման սկզբունքի համատարած ընդունման առաջարկությունը:

1. Տեքստն ընդունվել է Վեհաժողովի անունից գործող Մշտական կոմիտեի կողմից 2003թ. մայիսի 27-ին (Տե՛ս [Doc. 9796](#), Կոմիտեի զեկույց իրավական հարցերի և մարդու իրավունքների վերաբերյալ, զեկուցող՝ պարոն Արաբաջիև):

Հավելված 10

Եվրոպայի խորհուրդ

Նախարարների կոմիտե

Նախարարների կոմիտեի թիվ Rec(2000)19 հանձնարարական անդամ պետություններին քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի վերաբերյալ

(Ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից 2000թ. հոկտեմբերի 6-ին Նախարարների տեղակալների 724-րդ հանդիպմանը)

Եվրոպայի խորհրդի կանոնադրության 15-րդ հոդվածի (բ) կետով ամրագրված դրույթների համաձայն՝ Նախարարների կոմիտեն,

վերհիշելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն է էլ ավելի ամրապնդել անդամ պետությունների միասնությունը,

հաշվի առնելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակներից է նաև խթանել օրենքի գերակայությունը, որը կազմում է բոլոր ժողովրդավարական պետությունների հիմքը,

հաշվի առնելով, որ քրեական արդարադատության համակարգն առանցքային դեր է կատարում օրենքի գերակայությունն ապահովելու գործում,

տեղյակ լինելով բոլոր անդամ պետությունների՝ ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակով հանցավորության դեմ տարվող պայքարում մեկ քայլ առաջ անելու միասնական անհրաժեշտության մասին,

հաշվի առնելով, որ այդ նպատակով հարկավոր է մեծացնել ոչ միայն քրեական արդարադատության ազգային համակարգերի արդյունավետությունը, այլև քրեական հանցավորության դեմ ուղղված միջազգային համագործակցությունը՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին կոնվենցիայով ամրագրված սկզբունքների պահպանմամբ,

տեղյակ լինելով, որ դատախազական ծառայությունները կարևոր դերակատարում ունեն քրեական արդարադատության համակարգում և քրեական հանցավորության կանխմանն ուղղված միջազգային մակարդակով համագործակցության հաստատման գործում,

համոզված լինելով, որ այդ նպատակով հարկավոր է խրախուսել անդամ պետություններում դատախազության համար միասնական սկզբունքների սահմանումը,

հաշվի առնելով Նախարարների կոմիտեի կողմից ընդունված՝ քրեական հանցավորության կանխման վերաբերյալ փաստաթղթերում ամրագրված բոլոր սկզբունքներն ու կանոնները,

սույնով հանձնարարում է անդամ պետությունների կառավարություններին քրեական արդարադատության համակարգում դատախազների դերակատարման վերաբերյալ իրենց օրենսդրության և իրավական պրակտիկայի հիմքում դնեն հետևյալ սկզբունքները.

Դատախազի գործառույթները.

1. «Դատախազները» հանդիսանում են պետական իշխանությամբ օժտված մարմինների ներկայացուցիչներ, ովքեր հասարակության անունից և հանուն հանրային շահի ապահովում են օրենքի կիրառումը բոլոր այն դեպքերում, երբ օրենքի խախտումը քրեապես պատժելի է՝ հաշվի առնելով ինչպես անհատի իրավունքները, այնպես էլ քրեական արդարադատության համակարգի պատշաճ արդյունավետությունը:

2. Քրեական արդարադատության բոլոր համակարգերում դատախազները.

- որոշում են կայացնում դատական հետապնդում (մեղադրանք) նախաձեռնելու կամ այն շարունակելու վերաբերյալ,
- դատարաններում պաշտպանում են մեղադրանքը,
- կարող են բողոքարկել կամ քննել բոլոր կամ որոշ դատական որոշումները:

3. Քրեական արդարադատության որոշ համակարգերում դատախազները նաև.

- իրականացնում են հանցավորության դեմ պայքարի պետական քաղաքականությունը՝ ըստ անհրաժեշտության հարմարեցնելով այն տարածաշրջանային և տեղական պայմաններին,
- կատարում են հետաքննություն կամ ուղղորդում կամ վերահսկում են դրան կատարումը,
- ապահովում են հանցագործություններից տուժողներին արդյունավետ աջակցության տրամադրումը,
- որոշում են կայացնում հետապնդման այլընտրանքային տարբերակների մասին,
- վերահսկում են դատական որոշումների կատարումը,
- և այլն:

Դատախազներին իրենց գործառույթները կատարելու համար տրամադրված երաշխիքներ

4. Անդամ պետությունները պետք է արդյունավետ միջոցներ ձեռնարկեն՝ երաշխավորելու, որ դատախազները կարողանան կատարել իրենց մասնագիտական պարտականությունները և պարտավորությունները համապատասխան իրավական և կազմակերպչական պայմաններում, ինչպես նաև պատշաճ պայմաններ, մասնավորապես՝ իրենց տրամադրության տակ առկա

բյուջետային միջոցների տեսանկյունից: Նման պայմանները պետք է ստեղծվեն դատախազների ներկայացուցիչների հետ սերտ համագործակցության արդյունքում:

5. Պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն՝ երաշխավորելու, որպեսզի.

ա. դատախազների հավաքագրումը, պաշտոնի բարձրացումը և մեկ այլ պաշտոնի նշանակումը կատարվեն արդար և անկողմնակալ ընթացակարգերով, որոնք երաշխիքներ են պարունակում ցանկացած այնպիսի մոտեցումների դեմ, որոնք բխում են որոշակի խմբերի շահերից և բացառում են որևէ հիմքով (օրինակ՝ սեռի, ռասայի, մաշկի գույնի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային կամ սոցիալական ծագման, որևէ ազգային փոքրամասնությանը պատկանելության, գույքային կարգավիճակի, ծննդյան կամ այլ կարգավիճակի) խտրականությունը,

բ. դատախազների պաշտոնեական առաջխաղացումը և աշխատանքային շարժունակությունը կարգավորվեն ընդունված և անաչառ չափորոշիչներով, ինչպիսիք են՝ իրավասությունը և փորձը,

գ. դատախազների աշխատանքային շարժունակությունը կարգավորվի նաև ծառայողական անհրաժեշտությամբ,

դ. դատախազներն ապահովված լինեն աշխատանքի ողջամիտ պայմաններով, ներառյալ՝ իրենց առանցքային դերին համաչափ վարձատրությամբ, պաշտոնավարման և կենսաթոշակի պայմաններով, ինչպես նաև պատշաճ կենսաթոշակային տարիքով, և այս բոլոր պայմանները կարգավորվեն օրենքով,

ե. դատախազների դեմ կարգապահական վարույթի հարուցումը կարգավորվի օրենքով, և երաշխավորվի արդար և անաչառ գնահատման կատարում և որոշման կայացում, որը պետք է ենթակա լինի անկախ և անկողմնակալ վերանայման,

զ. դատախազներին հասանելի լինի վեճերի լուծման ընթացակարգը, այդ թվում՝ ըստ անհրաժեշտության դատարան դիմելու հնարավորությունն այն դեպքում, երբ խախտվում է նրանց իրավական կարգավիճակը,

է. իշխանություններն ապահովեն դատախազների և նրանց ընտանիքի ֆիզիկական պաշտպանությունը այն դեպքերում, երբ նրանց պաշտոնեական գործառույթների պատշաճ կատարման հետևանքով վտանգվում է նրանց անվտանգությունը:

6. Պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն նաև ապահովելու համար, որ դատախազներն ունենան խոսքի, դավանանքի, հավաքների և միավորումներ կազմելու ազատության գործուն

իրավունք: Մասնավորապես, նրանք պետք է իրավունք ունենան մասնակցելու օրենքին, արդարադատության իրականացման և մարդու իրավունքների պաշտպանության և խթանման հարցերին նվիրված հանրային քննարկումներին, ինչպես նաև միանալու կամ կազմելու տեղական, ազգային կամ միջազգային կազմակերպություններ և որպես մասնավոր անձ մասնակցելու դրանց հանդիպումներին՝ առանց մասնագիտական առումով տուժելու իրենց իրավաչափ գործողությունների կամ օրինական կազմակերպություններին անդամակցելու համար: Վերոնշյալ իրավունքները կարող են սահմանափակվել միմիայն օրենքով նախատեսված կարգով և այնքանով, որքանով անհրաժեշտ է դատախազների սահմանադրական կարգավիճակը պահպանելու համար: Վերոնշյալ իրավունքների խախտման դեպքերում դատախազները պետք է կարողանան օգտվել իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներից:

7. Բոլոր դատախազները միաժամանակ պարտավոր են և իրավունք ունեն անցնելու մասնագիտական վերապատրաստում ինչպես իրենց նշանակումից առաջ, այնպես էլ մշտական հիմունքներով: Ուստի, պետությունները պետք է արդյունավետ միջոցներ ձեռնարկեն՝ ապահովելու դատախազների պատշաճ կրթությունը և ուսուցումը նրանց նշանակումից առաջ և հետո: Մասնավորապես, դատախազներին հարկավոր է գիտելիքներ տրամադրել հետևյալի մասին.

ա. նրանց պաշտոնի հիմքում ընկած սկզբունքները և մասնագիտական էթիկայից բխող պարտականությունները,

բ. կասկածյալների, տուժածների և վկաների սահմանադրական և իրավական պաշտպանությունը,

գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով ամրագրված մարդու իրավունքներն ու ազատությունները, մասնավորապես՝ կոնվենցիայի 5-րդ և 6-րդ հոդվածներով նախանշված իրավունքները,

դ. դատական համակարգի համատեքստում կազմակերպման, կառավարման և մարդկային ռեսուրսների սկզբունքները և գործելակերպը,

ե. նրանց աշխատանքի հետևողականությանը նպաստող կառուցակարգերը (մեխանիզմները) և միջոցները:

Բացի այդ, պետությունները պետք է արդյունավետ միջոցներ ձեռնարկեն առկա իրավիճակի լույսի ներքո որոշակի հարցերի կամ որոշակի ոլորտների վերաբերյալ լրացուցիչ վերապատրաստման հնարավորություններ ապահովելու համար՝ մասնավորապես հաշվի

առնելով տարածվող հանցատեսակները և հանցավորության կանխման ոլորտում միջազգային համագործակցությունը:

8. Տարածվող հանցատեսակներին, մասնավորապես՝ կազմակերպված հանցավորությանը ավելի արդյունավետ դիմակայելու համար՝ դատախազների աշխատանքի կազմակերպման, ինչպես նաև նրանց վերապատրաստման և մասնագիտական առաջխաղացման առումով առաջնահերթ պետք է համարվի նրանց մասնագիտացումը: Հարկավոր է նաև մշակել դատախազներին իրենց պաշտոնական գործառույթների կատարման գործում աջակցելու նպատակով կազմված մասնագետների, այդ թվում՝ բազմագործառույթային մասնագետների խմբերին դիմելու ընթացակարգը:

9. Ինչ վերաբերում է դատախազության աշխատանքի կազմակերպմանը և ներքին գործունեությանը, մասնավորապես՝ գործերի քննության հանձնարարումը և վերահանձնարարումը, ապա վերոնշյալ հարցերը կարգավորող ընթացակարգերը պետք է համապատասխանեն անաչառության և անկախության պահանջներին և առավելագույնս բարելավեն քրեական արդարադատության համակարգի պատշաճ աշխատանքը, մասնավորապես՝ յուրաքանչյուր գործում ներդրված իրավաբանական որակավորման և մասնագիտացման մակարդակը:

10. Բոլորը դատախազներն իրավունք ունեն պահանջելու, որ նրանց հասցեագրված հրահանգները ներկայացվեն գրավոր տեսքով: Այն դեպքերում, երբ նրա կարծիքով որևէ հրահանգ անօրինական է կամ հակասում է իր խղճի ազատությանը, պետք է հասանելի լինի համարժեք ներքին ընթացակարգ, որն ի վերջո կարող է հանգեցնել մեկ այլ մասնագետով նրա փոխարինմանը:

Դատախազների և գործադիր ու օրենսդիր իշխանությունների փոխհարաբերությունները

11. Պետությունները պետք է պատշաճ միջոցներ ձեռնարկեն՝ ապահովելու դատախազների կողմից իրենց մասնագիտական պարտականությունների և պարտավորությունների կատարումը՝ նրանց զերծ պահելով անհիմն միջամտությունից կամ քաղաքացիական, քրեական կամ այլ տեսակի անհիմն պատասխանատվությունից: Այդուհանդերձ, դատախազները պետք է պարբերաբար և հրապարակայնորեն հաշվետվողականություն ներկայացնեն ընդհանուր առմամբ իրենց աշխատանքի և մասնավորապես առաջնահերթությունների կատարման համար:

12. Դատախազները չպետք է միջամտեն օրենսդիր և գործադիր իշխանությունների իրավասություններին:

13. Եթե դատախազությունը (պետական մեղադրանքի ներկայացումը) կառավարության մաս են կազմում կամ ենթակա են դրան, ապա պետությունները պետք է արդյունավետ միջոցներ ձեռնարկեն հետևյալը երաշխավորելու համար.

ա. դատախազության նկատմամբ կառավարության ունեցած լիազորությունների բնույթը և շրջանակը որոշվում են օրենքով,

բ. կառավարության լիազորություններն իրականացվում են թափանցիկ՝ միջազգային պայմանագրերի, ազգային օրենսդրությանը և իրավունքի ընդհանուր սկզբունքներին համապատասխան,

գ. կառավարության՝ ընդհանուր բնույթի հրահանգները պետք է ներկայացվեն գրավոր և հրապարակվեն պատշաճ կարգով,

դ. այն դեպքում, երբ կառավարությունն իրավասու է հրահանգել որևէ գործով հետապնդման իրականացումը, նման հրահանգները պետք է պարունակեն համապատասխան երաշխիքներ, որ գործի վարույթի ընթացքում ազգային օրենսդրության համապատասխան կպահպանվեն թափանցիկության և հավասարության սկզբունքները, ինչի արդյունքում կառավարությունը պարտավորված կլինի, օրինակ՝

- նախապես գրավոր խորհրդատվություն հայցել կա՛մ իրավասու դատախազից, կա՛մ էլ դատախազական ծառայություններ մատուցող մարմնից,

- պատշաճ կարգով պարզաբանել իր գրավոր հրահանգները, հատկապես՝ այն պարագայում, երբ դրանք տարբերվում են դատախազի խորհուրդներից և դրանք փոխանցել ստորակարգային աստիճանակարգով,

- ապահովել, որ մինչև դատավարությունը ստացված խորհուրդները և ցուցումները կցվեն դատական գործին, որպեսզի դատավարության մյուս մասնակիցները կարողանան ծանոթանալ դրանց և ներկայացնել համապատասխան դիտողություններ:

ե. Պահպանվում է դատախազների՝ իրենց հայեցողությամբ որևէ իրավական փաստարկ դատարան ներկայացնելու ազատությունը անգամ այն պարագայում, եթե նրանք պարտավորված են գրավոր ներկայացնելու իրենց ստացած հրահանգները,

զ. որոշակի գործերով հետապնդում չիրականացնելու հրահանգները պետք է սկզբունքորեն արգելված լինեն: Հակառակ դեպքում, նման հրահանգները պետք է լինեն բացառիկ և ոչ միայն համապատասխանեն վերոնշյալ (դ) և (ե) կետերում ներկայացված պահանջներին, այլև՝

պատշաճ վերահսկողության ենթարկվեն՝ մասնավորապես դրանց թափանցիկությունը երաշխավորելու նպատակով:

14. Այն երկրներում, որտեղ դատախազությունը գործում է պետությունից անկախ, պետությունը պետք է արդյունավետ միջոցներ ձեռնարկի՝ դատախազության անկախության բնույթը և շրջանակն օրենքով ամրագրելու համար երաշխիքներ սահմանելու ուղղությամբ:

15. Հանցավորության դեմ պայքարի քաղաքականության անաչառությունն ու արդյունավետությունը խթանելու նպատակով դատախազները պետք է օրենքի շրջանակներում համագործակցեն պետական մարմինների և հաստատությունների հետ:

16. Ամեն դեպքում դատախազները պետք է իրավասու լինեն առանց որևէ խոչընդոտների դատական հետապնդման ենթարկել պետական պաշտոնյաներին նրանց կատարած իրավախախտումների համար, մասնավորապես՝ կոռուպցիայի, իշխանության չարաշահման, մարդու իրավունքների կոպիտ խախտումների և միջազգային իրավունքի ներքո ճանաչված ցանկացած այլ հանցագործությունների համար:

Դատախազների և դատավորների փոխհարաբերությունները

17. Պետությունները պետք է պատշաճ միջոցներ ձեռնարկեն՝ ապահովելու, դատախազների իրավական կարգավիճակի, իրավասությունների և դատավարական դերի օրենսդրական սահմանումը, որպեսզի որևէ իրավաչափ կասկած չառաջանա դատավորների անկախության և անաչառության վերաբերյալ: Մասնավորապես, պետությունները պետք է երաշխավորեն, որ նույն անձը միաժամանակ չկատարի դատախազի (պետական մեղադրողի) և դատավորի պարտականությունները:

18. Այդուհանդերձ, եթե որևէ պետության իրավական համակարգում վերոնշյալը համարվում է թույլատրելի, պետությունը պետք է միջոցներ ձեռնարկի, որպեսզի մինևույն անձը կարողանա հաջորդաբար կատարել դատախազի և դատավորի գործառույթները կամ հակառակը: Գործառույթների նման փոփոխությունները հնարավոր են միայն տվյալ անձի կողմից ակնհայտ խնդրանքի ներկայացման և համապատասխան երաշխիքների պահպանման պարագայում:

19. Դատախազները պետք է խստիվ հարգեն դատավորների անկախությունը և անկողմնակալությունը, մասնավորապես՝ կասկածի չենթարկեն դատական որոշումները և չխոչընդոտեն դրանց իրականացմանը՝ բացառությամբ իրենց բողոքարկման և որևէ այլ բացատրական ընթացակարգի պահանջելու իրավունքների իրացման դեպքերից:

20. Դատավարության ընթացքում դատախազները պետք է դրսևորեն անաչառ և արդար պահվածք: Մասնավորապես նրանք պետք է ապահովեն, որպեսզի դատարանին տրամադրվեն

արդարադատության արդար իրականացման համար անհրաժեշտ բոլոր փաստերը և իրավական փաստարկները:

Դատախազների և ոստիկանության փոխհարաբերությունները

21. Ընդհանուր առմամբ, դատախազները պետք է մանրակրկիտ ուսումնասիրեն ոստիկանության կողմից կատարված հետաքննության օրինականությունը ամենաուշը հետապնդման մեկնարկի կամ շարունակության մասին որոշում կայացնելու ընթացքում: Այս առումով դատախազները պետք է նաև վերահսկեն ոստիկանության աշխատակիցների կողմից մարդու իրավունքների պահպանումը:

22. Այն երկրներում, որտեղ ոստիկանությունը գտնվում է դատախազության ենթակայության տակ, կամ որտեղ ոստիկանական հետաքննությունները վարվում կամ վերահսկվում են դատախազի կողմից, պետությունը պետք է արդյունավետ միջոցներ ձեռնարկի՝ երաշխավորելու, որպեսզի դատախազը կարողանա կատարել հետևյալ գործողությունները.

ա. պատշաճ ցուցումներ տալ ոստիկանությանը՝ հաշվի առնելով հանցավորության դեմ պայքարի քաղաքականության առաջնահերթությունների արդյունավետ իրականացումը, մասնավորապես որոշելով գործերի այն կարգերը, որոնք պետք է հետաքննվեն առաջինը, ապացույցներ փնտրելու համար գործածվող միջոցները, այդ նպատակով անհրաժեշտ աշխատակիցների կազմը, գործերի քննության տևողությունը, դատախազին տրամադրվելիք տեղեկությունները և այլն,

բ. եթե տվյալ երկրում գործում են տարբեր ոստիկանական մարմիններ, առանձին գործերը հանձնել այն ոստիկանական մարմնին, որն, իր կարծիքով, առավել համապատասխանում է տվյալ գործը վարելու համար,

գ. կատարել գնահատումներ և իրականացնել հսկողություն՝ ցուցումների կատարման օրինականությունն ապահովելու համար,

դ. պատժամիջոցներ սահմանել կամ ըստ անհրաժեշտության նպաստել պատժամիջոցների սահմանմանը հնարավոր խախտումների համար:

23. Այն պետությունները, որտեղ ոստիկանությունը գործում է դատախազությունից անկախ, պետք է արդյունավետ միջոցներ ձեռնարկեն դատախազության և ոստիկանության միջև գործուն և պատշաճ համագործակցության հաստատումը երաշխավորելու համար:

Դատախազների պարտականություններն անհատների նկատմամբ

24. Իրենց պարտականությունների կատարման ընթացքում դատախազները մասնավորապես պարտավոր են՝

ա. իրենց գործառույթները կատարել արդար, անկողմնակալ և անաչառ,

բ. հարգանք դրսևորել մարդու իրավունքների նկատմամբ և ջանք գործադրել դրանց պաշտպանության ուղղությամբ՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատություններ մասին կոնվենցիային համապատասխան,

գ. ջանք գործադրել ապահովելու, որ քրեական արդարադատության համակարգը գործի հնարավորինս արագ:

25. Դատախազները պետք է ձեռնպահ մնան ցանկացած հիմքով (օրինակ՝ սեռի, ռասայի, մաշկի գույնի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային կամ սոցիալական ծագման, որևէ ազգային փոքրամասնությանը պատկանելության, գույքային կարգավիճակի, ծննդյան, առողջության, հաշմանդամության կամ այլ կարգավիճակի) խտրականություն դրսևորելուց:

26. Դատախազները պետք է ապահովեն օրենքի առջև հավասարության սկզբունքը և տեղյակ լինեն բոլոր համապատասխան հանգամանքներից, այդ թվում՝ կասկածյալի վրա որևէ ազդեցություն գործող հանգամանքներից՝ անկախ նրանից, թե արդյոք դրանք վկայում են նրա օգտին կամ նրա դեմ:

27. Դատախազները չպետք է նախաձեռնեն կամ շարունակեն հետապնդումը, եթե անկողմնակալ հետաքննությամբ պարզվի, որ մեղադրանքն անհիմն է:

28. Դատախազները չպետք է դատարան ներկայացնեն կասկածյալների դեմ այնպիսի ապացույց, որը ըստ նրանց տեղեկությունների կամ հիմնավոր կարծիքի՝ ձեռք է բերել հակաօրինական ճանապարհով: Նման կասկածի առկայության պարագայում դատախազները պետք է դիմեն դատարանին ապացույցի ընդունելիության վերաբերյալ որոշում կայացնելու հայցով:

29. Դատախազները պետք է ջանան պահպանել դատավարության կողմերի հավասարության սկզբունքը՝ մասնավորապես հայտնելով մյուս կողմին իրենց հայտնի այնպիսի տեղեկություն (բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով այլ բան է նախատեսված), որը կարող է ազդել դատավարության շրջանակներում արդարադատության իրականացման ընթացքի վրա:

30. Դատախազները պետք է պահպանեն որևէ երրորդ անձից ստացված տեղեկությունների գաղտնիությունը, մասնավորապես՝ այն դեպքերում, երբ վտանգված է անմեղության

կանխավարկածի սկզբունքի պահպանումը, բացառությամբ այն դեպքերի, երբ նման տեղեկությունների բացահայտումը բխում է արդարադատության իրականացման շահերից կամ պահանջվում է օրենքով:

31. Այն դեպքերում, երբ դատախազներն իրավունք ունեն ձեռնարկելու կասկածյալի հիմնարար իրավունքներն ու ազատությունները սահմանափակող միջոցներ, ապա նման միջոցների նկատմամբ պետք է սահմանվի դատական հսկողություն:

32. Դատախազները պետք է պատշաճ կերպով հաշվի առնեն վկաների շահերը և հատկապես՝ միջոցներ ձեռնարկելն կամ խթանեն նրանց կյանքը, անվտանգությունը և մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը պաշտպանելու ուղղությամբ կամ վերահսկեն նման միջոցների ձեռնարկումը:

33. Դատախազները պետք է պատշաճ կերպով հաշվի առնեն տուժողների՝ իրենց անձնական շահերի առնչությամբ կարծիքները և մտահոգությունները և միջոցներ ձեռնարկելն կամ խթանեն՝ ապահովելու, որ նրանք տեղեկացվեն ինչպես իրենց իրավունքների, այնպես էլ դատավարության ընթացքի մասին:

34. Ճանաչված կամ նույնացվելիք կարգավիճակով շահագրգիռ կողմերը, մասնավորապես՝ տուժողները պետք է հնարավորություն ունենան վիճարկելու դատախազների՝ կասկածյալների նկատմամբ դատական հետապնդում չիրականացնելու մասին որոշումները: Նրանք կարող են նման քայլի դիմել համապատասխան դեպքերում վերադաս մարմինների կողմից նման որոշումների վերանայումից հետո ինչպես դատական կարգով, այնպես էլ դատավարության մասնակիցների մոտ մասնավոր կարգով գործ հարուցելու թույլտվության առկայության պարագայում:

35. Պետությունները պետք է ապահովեն, որ իրենց պարտականություններն իրականացնելիս դատախազները պարտավոր լինեն առաջնորդվել «վարվեցողության կանոնագրքով»: Նման կանոնների խախտումները կարող են հանգեցնել պատժամիջոցների՝ վերոնշյալ 5-րդ կետին համապատասխան: Դատախազների աշխատանքը պետք է ենթակա լինի ներքին կանոնավոր վերահսկողության:

36. ա. Դատախազների արդար, հետևողական և արդյունավետ աշխատանքը խթանելու նպատակով պետությունները պետք է ձեռնարկեն հետևյալ միջոցները.

– առաջնային ուշադրություն դարձնել նրանց աշխատանքի կազմակերպմանը՝ միաժամանակ չթույլատրելով, որ նման կազմակերպչական միջոցները հանգեցնեն վարչական քաջքուկներով աշխատող անարդյունավետ կամ խոչընդոտող կառույցների առաջացմանը,

- սահմանել քրեական քաղաքականության իրականացման ընդհանուր ուղենիշները,
- սահմանել այն ընդհանուր սկզբունքները և չափանիշները, որոնք պետք է հիմք ընդունվեն առանձին գործերով որոշումներ կայացնելու ժամանակ կամայականությունից խուսափելու համար:

բ. Աշխատանքի կազմակերպման վերոնշյալ միջոցները, ուղեցույցները, սկզբունքները և չափանիշները պետք է սահմանեն խորհրդարանը կամ կառավարությունը կամ դատախազության ներկայացուցիչները, եթե տվյալ երկրի պետական օրենսդրությամբ ամրագրված է դատախազության անկախությունը:

գ. Հանրությունը պետք է տեղեկացված լինի վերոնշյալ կազմակերպման միջոցների, ուղեցույցների, սկզբունքների և չափանիշների մասին. դրանց մասին տեղեկությունները պետք է ըստ պահանջի տրամադրվեն ցանկացած անձի:

Միջազգային համագործակցություն

37. Անկախ միջազգային համագործակցության շրջանակներում այլ պետական մարմինների դերակատարումից՝ տարբեր երկրների դատախազների միջև պետք է անմիջական կապեր հաստատվեն տվյալ երկրների ստորագրած միջազգային պայմանագրերի կամ գործնական պայմանավորվածությունների հիման վրա:

38. Հարկավոր է քայլեր ձեռնարկել միջազգային դատական համագործակցության համատեքստում մի շարք ոլորտներում դատախազների միջև անմիջական կապերը խթանելու համար: Մասնավորապես, նման քայլերը պետք է ենթադրեն հետևյալը.

ա. ապահովել փաստաթղթերի շրջանառությունը,

բ. կազմել կոնտակտային անձանց անունների և հասցեների ցանկը՝ ներառելով տարբեր դատախազական մարմինների համապատասխան կոնտակտային անձանց անունները, ինչպես նաև՝ նրանց մասնագիտական գործունեության և պատասխանատվության ոլորտները և այլն,

գ. կանոնավոր կապեր հաստատել տարբեր երկրների դատախազների միջև, մասնավորապես՝ կազմակերպելով գլխավոր դատախազների կանոնավոր հանդիպումներ,

դ. կազմակերպել դասընթացներ և իրազեկման մակարդակի բարձրացմանն ուղղած միջոցառումներ,

ե. ներդնել և ընդլայնել օտար երկրներում գտնվող և դրանց հետ կապեր հաստատող իրավաբանների գործառույթները,

զ. կազմակերպել օտար լեզուների ուսուցում,

է. ընդլայնել էլեկտրոնային տվյալների փոխանցման համակարգի օգտագործումը,

ը. աշխատանքային սեմինարներ կազմակերպել այլ պետությունների ներկայացուցիչների հետ փոխօգնության և քրեական արդարադատության ընդհանուր խնդիրների շուրջ:

39. Արդարադատության համակարգն ավելի ողջամիտ դարձնելու և փոխօգնության ընթացակարգերը համակարգելու նպատակով հարկավոր է աշխատանք տանել հետևյալը խթանելու համար.

ա. ընդհանուր իրազեկում դատախազների շրջանում միջազգային համագործակցությանն ակտիվ մասնակցություն ունենալու անհրաժեշտության մասին և

բ. որոշ դատախազների մասնագիտացումը միջազգային համագործակցության ոլորտում:

Այս առումով պետությունները պետք է քայլեր ձեռնարկեն՝ ապահովելու, որպեսզի հայցող պետության դատախազը, այն դեպքերում, երբ նա պատասխանատու է միջազգային համագործակցության համար, կարողանա փոխօգնություն հայցել անմիջապես հայցվող պետության իրավասու պաշտոնատար անձից, և որպեսզի վերջինս կարողանա անմիջապես հայցող պետության դատախազին փոխանցել ձեռքբերված ապացույցները:

Հավելված 11

Եվրոպայի խորհուրդ

Նախարարների կոմիտե

Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2012)11 հանձնարարական անդամ պետություններին քրեական արդարադատության համակարգից դուրս դատախազների դերի մասին

(Ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից 2012թ. սեպտեմբերի 19-ին

Նախարարների տեղակալների 1151-րդ հանդիպմանը)

Եվրոպայի խորհրդի կանոնադրության 15-րդ հոդվածի (բ) կետով ամրագրված դրույթների համաձայն՝ Նախարարների կոմիտեն,

վերհիշելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն է էլ ավելի ամրապնդել անդամ պետությունների միասնությունն ի թիվս այլոց նրանց ընդհանուր ժառանգությունը հանդիսացող պատկերացումների և սկզբունքների պահպանման և կենսագործման նպատակով,

վերհիշելով նաև, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետություններից յուրաքանչյուրն ընդունել է օրենքի գերակայության և իրենց իրավասության ներքո գտնվող բոլոր անձանց՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով ամրագրված իրավունքներից օգտվելու սկզբունքը (ETS No 5),

տեղյակ լինելով, որ անդամ պետություններից շատերում իրավական ավանդույթների բերումով դատախազները որոշակի դերակատարում ունեն նաև քրեական արդարադատության համակարգից դուրս, և որ այդ դերը զգալիորեն տարբերվում է ըստ տարբեր ազգերի իրավակարգերի,

նշելով մասնավորապես, որ տարբեր պետությունների իրավակարգերում այդ դերը կարող է ներառել ընդհանուր կամ հանրային հետաքրքրության ներկայացումը, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության գծով անհատներին իրավական աջակցության ապահովումը, դատարաններում պետության ներկայացումը, պետական (հանրային) մարմինների և այլ հաստատությունների վերահսկումը և խորհրդակցական դերը դատարաններում, և ավելին՝ այն հանգամանքը, որ այս դերի բնույթը կարող է տարբեր լինել մասնավոր և հանրային իրավունքով կարգավորվող ոլորտներում,

հաշվի առնելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխան նախադեպային իրավունքը, մասնավորապես՝ արդար դատաքննության սկզբունքների ոլորտում,

վերհիշելով անդամ պետություններին հասցեագրված իր թիվ (2000)19 հանձնարարականը քրեական արդարադատության համակարգում դատախազի դերի վերաբերյալ,

հաշվի առնելով Եվրոպական դատախազների խորհրդատվական խորհրդի (անգլ.՝ CCPE) թիվ 3 (2008) Եզրակացությունը «Քրեական իրավունքի ոլորտից դուրս դատախազական ծառայությունների դերի մասին» և Եվրոպայի գլխավոր դատախազների՝ Բուդապեշտում (2005թ. մայիսի 29-31) և Սանկտ Պետերբուրգում (2008թ. հուլիսի 2-3) կայացած խորհրդաժողովների եզրակացությունները,

վերհիշելով Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի (անգլ.՝ CCJE) և Եվրոպական դատախազների խորհրդատվական խորհրդի՝ Ժողովրդավարական պետություններում դատավորների և դատախազների փոխհարաբերությունների մասին 2009թ. նոյեմբերի 18-ին հրապարակած համատեղ եզրակացության մեջ նախանշված սկզբունքները («Բորդոյի հռչակագիր») և մասնավորապես՝ քրեական իրավունքի ոլորտից դուրս գործառույթներ իրականացնող դատախազներին վերաբերող սկզբունքները,

հաշվի առնելով «Իրավունքի միջոցով հանուն ժողովրդավարության» Եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) 2010 թվականի գեկույցը դատական համակարգի անկախության եվրոպական չափանիշների մասին (Մաս II. Դատախազական ծառայություն) և այս հարցի շուրջ արտահայտած տարբեր կարծիքները,

հաշվի առնելով քրեական արդարադատության ոլորտից դուրս դատախազական ծառայությունների գործառույթների և աշխատանքի կազմակերպման միջազգային ընդհանուր իրավական չափանիշների բացակայությունը,

ուստիև համոզված լինելով, որ անդամ պետությունների համար անհրաժեշտ է սահմանել միասնական սկզբունքներ քրեական արդարադատության ոլորտից դուրս դատախազների դերակատարման վերաբերյալ,

հանձնարարում է, որպեսզի բոլոր այն դեպքերում, երբ դատախազական ծառայությունները որևէ գործառույթ են կատարում քրեական արդարադատության համակարգից դուրս, անդամ պետությունները ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ և պատշաճ միջոցները՝ ապահովելու, որ նման գործառույթների շրջանակներում հատուկ ուշադրություն դարձվի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությանը օրենքի գերակայության սկզբունքին համապատասխան, մասնավորապես՝ արդար դատաքննության իրավունքի պահպանմամբ, և

այդ նպատակով ամբողջությամբ հաշվի առնվեն սույն փաստաթղթին կից հավելվածում սահմանված սկզբունքները:

Ա. Շրջանակ

1. Սույն հանձնարարականը և հավելվածում տեղ գտած սկզբունքները կիրառելի են այն բոլոր դեպքերում, երբ ազգային իրավակարգով սահմանված է դատախազների դերակատարումը քրեական արդարադատության համակարգից դուրս:

Բ. Դատախազների առաքելությունը

2. Այն դեպքերում, երբ ազգային իրավակարգով սահմանված են քրեական արդարադատության համակարգից դուրս ընկնող ոլորտներում դատախազների պարտականությունները և լիազորությունները, նրանց առաքելությունը պետք է լինի ընդհանուր կամ հանրային շահերի ներկայացումը, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը և օրենքի գերակայության սկզբունքի պահպանումը:

Գ. Ընդհանուր սկզբունքներ

3. Քրեական արդարադատության համակարգից դուրս դատավորների բոլոր պարտականություններն ու լիազորությունները պետք է ամրագրված և հստակ սահմանված լինեն օրենքով՝ անորոշությունից խուսափելու նպատակով:

4. Ինչպես քրեական իրավունքի ոլորտում, այնպես էլ քրեական արդարադատության համակարգից դուրս դատավորներն իրենց պարտականություններն ու լիազորությունները պետք է իրականացնեն օրինականության, օբյեկտիվության, արդարության և անաչառության սկզբունքների լիարժեք պահպանմամբ:

5. Նախարարների կոմիտեի՝ Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի վերաբերյալ թիվ Rec(2000)19 հանձնարարականը պետք է համապատասխան փոփոխություններով կիրառելի լինի քրեական արդարադատության համակարգից դուրս պարտականություններ և լիազորություններ իրականացնող դատախազների նկատմամբ հետևյալ հարցերի առնչությամբ.

- իրենց գործառնությունների կատարման երաշխիքներ,
- գործադիր, օրենսդիր և դատական իշխանությունների հետ նրանց փոխհարաբերություններ,
- նրանց պարտականությունները և պարտավորություններն անհատների նկատմամբ:

6. Դատախազական ծառայությունները պետք է որդեգրեն հնարավորինս թափանցիկ և հրապարակային գործելակերպ՝ գաղտնիություն պահպանելու իրենց պարտականության լիարժեք կատարմամբ:

7. Դատախազների վարքագիծը պետք է կարգավորվի համապատասխան էթիկայի կանոնադրքերով:

8. Դատախազական ծառայությունները պետք է իրենց տրամադրության տակ ունենան անհրաժեշտ ֆինանսական և մարդկային ռեսուրսները, և նրանց աշխատակիցները պետք է ունենան համապատասխան վերապատրաստումներ անցնելու հնարավորություն, որպեսզի կարողանան քրեական արդարադատության համակարգից դուրս ընկնող ոլորտներում պատշաճ կերպով կատարել իրենց պարտականությունները:

9. Ազգային իրավագործության շրջանակներում վարվող քաղաքականությունը և իրավական պրակտիկան ներդաշնակեցնելու նպատակով դատախազական ծառայությունները կարող են համապատասխան լիազորություններ և պարտականություններ ունեցող դատախազներին ուղեցույցներ և տեղեկություններ տրամադրել քրեական արդարադատության համակարգից դուրս ոլորտներում նման լիազորությունների և պարտականությունների իրականացման լավագույն փորձի վերաբերյալ:

Դ. Քրեական արդարադատության համակարգից դուրս գտնվող ոլորտներում դատախազների որոշակի պարտականությունների և լիազորությունների նկատմամբ կիրառելի սկզբունքներ

Հանրության համար արդարադատության և իրավական պաշտպանության միջոցների հասանելիության առնչությամբ

10. Քրեական արդարադատության համակարգից դուրս դատախազի իրավասությունները չպետք է սահմանափակեն որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի՝ անկախ և անկողմնակալ դատարանում իր շահերի պաշտպանության նպատակով որպես դատավարական գործողություններ նախաձեռնող կամ պատասխանող հանդես գալու իրավունքն անգամ այն դեպքերում, երբ դատախազը մասնակցում կամ մտադիր է մասնակցել դատավարությանը:

11. Դատախազի՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և պարտավորությունների վրա որևէ կերպ ազդող որոշում կայացնելու լիազորությունները պետք է կրեն խիստ սահմանափակ բնույթ, լինեն օրենքով նախատեսված և չպետք է ազդեն դատավարության կողմերի՝ անկախ և անաչառ դատարանում նման որոշման փաստացի և իրավական հարցերը բողոքարկելու իրավունքի վրա: Դատախազները պետք է գործեն

ցանկացած այլ իշխանության մարմիններից անկախ, և նրանց կայացրած որոշումները պետք է լինեն հիմնավորված և պետք է ներկայացվեն համապատասխան անձանց:

Այնպիսի դատավարությունների առնչությամբ, որոնց գլխավոր մասնակիցներից է դատախազը

12. Դատախազի՝ դատական վարույթ սկսելու կամ որպես պատասխանող հանդես գալու լիազորությունները չպետք է խաթարեն դատավարության մասնակիցների հավասարության սկզբունքը:

13. Դատախազը չպետք է թաքցնի վիճարանության առարկա դարձած հարցերին առնչվող հանցանշանները:

14. Մինչդատական քննությանը հետևելու լիազորությունը պետք է սահմանված լինի օրենքով: Նման լիազորության իրականացումը պետք է լինի համաչափ և չպետք է անհիմն առավելություններ տա դատախազին:

15. Բոլոր այն դեպքերում, երբ դատախազը ներկայացնում է որևէ անհատի շահերը, վերջինս պետք է ունենա որպես դատավարության մասնակից հանդես գալու իրավունք, որի իրացումը չպետք է կանխի դատախազի մասնակցությունն ընդհանուր կամ հասարակական շահին առնչվող գործերով ընթացող դատավարությանը:

16. Դատախազի՝ դատարանի որոշումը բողոքարկելու կամ որևէ այլ ճանապարհով այն վերադաս դատարանում վերանայման ենթարկելու իրավունքը չպետք է տարբերվի դատավարության մյուս կողմերին վերապահված իրավունքներից և պետք է համապատասխանի նույն պահանջներին, ներառյալ՝ բողոք ներկայացնելու ժամկետները:

Այնպիսի դատավարությունների առնչությամբ, որոնց միջամտում կամ որպես դատավարության կողմ միանում է դատախազը

17. Դատախազը կամ դատարանը պետք է դատավարության մասնակիցներին տեղեկացնեն դատախազի՝ վարույթին միջամտելու կամ մասնակցելու որոշման մասին:

18. Նախքան դատական նիստը դատախազի ներկայացրած գրավոր եզրակացությունները պետք է տրամադրվեն դատավարության բոլոր կողմերին նախապես, որպեսզի նրանք բավականաչափ ժամանակ ունենան դրանց ծանոթանալու համար: Հակառակ դեպքում դատական նիստը կարող է հետաձգվել:

19. Դատավարության կողմերը պետք է ունենան դատախազի եզրակացության վերաբերյալ իրենց տեսակետը հայտնելու և հակափաստարկներ ներկայացնելու հնարավորություն:

20. Դատախազը չպետք է մասնակցի վճռի կայացման նպատակով դատարանի խորհրդակցությանը կամ նման մասնակցության տպավորություն թողնի:

21. Սույն ենթավերնագրի շրջանակներում կիրառելի են 16-րդ կետում նախանշված սկզբունքները

Իրավական որոշակիության և դատական ակտերի վերջնականության (res judicata) սկզբունքների առնչությամբ

22. Իրավական որոշակիության և դատական ակտերի վերջնականության սկզբունքների պահպանման նկատառումով՝ դատախազի կողմից վերջնական դատական որոշումը վերանայելու հիմքերը պետք է սահմանափակվեն բացառիկ դեպքերով, և որոշումը պետք է վերանայվի ողջամիտ ժամկետում: Բացառությամբ այն դեպքերի, երբ որոշման վերանայումը որևէ կերպ չի առնչվում տվյալ որոշմամբ նախանշված դատավարության մասնակիցների իրավունքներին ու պարտավորություններին, դատավարության մասնակիցներին հարկավոր է տեղեկացնել որոշման վերանայման մասին, և ցանկության դեպքում նրանք պետք է ունենան դատավարությանը միանալու հնարավորություն:

Ե. Դատախազների՝ վերահսկիչ մարմնի դերը

23. Բոլոր այն ոլորտներում, որտեղ դատախազները կատարում են կենտրոնական, մարզային և տեղական իշխանությունների, ինչպես նաև այլ իրավաբանական անձանց աշխատանքը վերահսկող մարմնի դեր օրենքին համապատասխան նրանց պատշաճ գործունեությունն ապահովելու նպատակով, նրանք պետք է իրենց լիազորությունն իրականացնեն ինքնուրույն, թափանցիկ և օրենքի գերակայության սկզբունքին լիարժեք համապատասխանությամբ:

24. Ինչ վերաբերում է մասնավոր իրավաբանական անձանց, դատախազը պետք է իրավասու լինի իրականացնելու իր վերահսկողական լիազորությունները միայն այնպիսի դեպքերում, երբ առկա են հիմնավոր և օբյեկտիվ հիմքեր ենթադրելու, որ խնդրո առարկա մասնավոր իրավաբանական անձը խախտել է իր իրավական պարտավորությունները, այդ թվում՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային համաձայնագրերի կիրառումից բխող պարտավորությունները:

25. Պետական իշխանության մարմինները կամ ցանկացած այլ իրավաբանական անձինք, ում նկատմամբ դատախազը 23-րդ և 24-րդ կետերին համապատասխան որևէ միջոց է ձեռնարկել, պետք է իրավունք ունենան առարկել նման միջոցներին և վիճարկել դրանք դատարանում:

Չ. Ազգային և միջազգային համագործակցություն

26. Իրենց պարտավորությունների կատարման ընթացքում դատախազական ծառայությունները պետք է համագործակցություն հաստատեն, իսկ անհրաժեշտության դեպքում ամրապնդեն համագործակցությունը կամ կապերը օմբուդսմենների կամ նմանօրինակ ինստիտուտների, այլ կենտրոնական, տարածաշրջանային և տեղական իշխանությունների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության, այդ թվում՝ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

27. Հարկավոր է խթանել քրեական արդարադատության համակարգից դուրս նմանօրինակ պարտականություններ կատարող դատախազական ծառայությունների միջազգային համագործակցությունը և գործնական փոխօգնությունը ինչպես համապատասխան միջազգային պայմանագրերի շրջանակներում, այնպես էլ դրանցից դուրս:

6. Օգտագործված գրականության ցանկ

1. Օրենսգրքեր

- Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք (1998 թ. ապրիլի 18)
- Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք (1998 թ. հուլիսի 1)
- Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրք (2013 թ. դեկտեմբերի 5)
- Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգիրք (2004թվականի դեկտեմբերի 24)

ՀՀ օրենքներ

- ՀՀ Սահմանադրություն (2005 թ. նոյեմբերի 27-ի փոփոխություններով)
- «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենք (2000 թ. դեկտեմբերի 28-ին)
- «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենք (2003 թ. ապրիլի 11)
- «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք (2003 թ. սեպտեմբերի 23)
- «Պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենք (2003 թ. դեկտեմբերի 3)
- «Սահմանապահ զորքերի մասին» ՀՀ օրենք (2001 թ. նոյեմբերի 20)
- «Օպերատիվ հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենք (2007 թ. հոկտեմբերի 22)
- «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենք (2001թ. նոյեմբերի 20)
- «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք (2002 թ. փետրվարի 6)
- «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենք (1996 թ. դեկտեմբերի 3)
- «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենք (2007 թ. նոյեմբերի 28)
- «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք (2001 թ. դեկտեմբերի 4)
- «Զինապարտության մասին» ՀՀ օրենք (1998 թ. սեպտեմբերի 16)
- «Ազգային Ժողովի Կանոնակարգ» ՀՀ օրենք (2002 թ. փետրվարի 20)
- «Դատախազության մասին» ՀՀ օրենք (2007 թ. փետրվարի 22)
- «Քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենք (2014 թ. մայիսի 19)

2. ՀՀ օրենքների նախագծեր

- Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի նախագիծ

3. ՀՀ կառավարության որոշումներ

- «Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր ազգային անվտանգության ծառայության կանոնադրությունը հաստատելու մասին» (2003 թ. ապրիլի 17, թիվ 433-Ն)
- «Օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում օգտագործվող հատուկ (մշակված, ծրագրված, հարմարեցված) տեխնիկական միջոցների ցանկը հաստատելու մասին» (2008 թվականի հուլիսի 3, թիվ 810-Ն որոշում)

- «ՀԲԾ ծառայողի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների եվ հիվանդությունների ցանկը սահմանելու մասին» (2008 փետրվարի 13 թիվ 143-Ն)
- «Հատուկ քննչական ծառայության մրցութային հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու մասին» (2008 թ. փետրվարի 28-ի թիվ 180-Ն)
- «Դատախազի և ՀՀ դատախազության աշխատակազմի պետական ծառայողի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների ցանկը սահմանելու և դատախազի ու ՀՀ դատախազության աշխատակազմի պետական ծառայողի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության վերաբերյալ տեղեկանք տրամադրելու մասին» (2007 թ. նոյեմբերի 15 թիվ 1348-Ն)

4. Հրամաններ, հրամանագրեր

- «Կ.Պետրոսյանին Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրեն նշանակելու մասին» (2002 թ. դեկտեմբերի 17-ի 1220-Ա)
- «Կ.Պետրոսյանին Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրենի պաշտոնից ազատելու մասին» (2004 թ. նոյեմբերի 4-ի թիվ 194-Ա)
- «Գ. Հակոբյանին Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրեն նշանակելու մասին» (2004 թ. նոյեմբերի 8-ի թիվ 195-Ա)
- «Հայաստանի Հանրապետության կառավարության և նրան ենթակա պետական կառավարման և այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» (2007 թ. հուլիսի 18-ի թիվ 98-Ն)
- «Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքը հաստատելու մասին» (2002 թ. մարտի 16-ի թիվ 1132-Ն)
- «ՀՀ Դատախազության կանոնակարգ» ՀՀ գլխավոր դատախազի հրաման (20. 06. 2008թ. , Երևան թիվ 59)

5. Դատական ակտեր

- ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 08-617 քաղաքացիական գործ (2008 թվականի մայիսի 23)
- ՀՀ Սահմանադրական դատարանի ՄԴՈ 1010 որոշում (2012 թ. մարտի 6)

6. Միջազգային իրավակարգավորումներ

- Ներքին անվտանգության մարմինների հանդեպ վերահսկողությունը Եվրոպայի Խորհրդի անդամ երկրներում ԵԽԽՎ թիվ 1402 (1999)1 հանձնարարական
- «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիա (1950թ. նոյեմբերի 4)
- «Դատախազության դերը օրենքի ժողովրդավարական հասարակությունում, որը կառավարվում է օրենքի գերակայության սկզբունքի համաձայն» Խորհրդարանական վեհաժողովի Թիվ 1604 (2003) հանձնարարական

- «Խոշտանգումների և այլ դաժան, անարդարադատ կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» կոնվենցիա (1984 թ. դեկտեմբերի 10)
- Committee of Ministers Recommendation [No. R \(87\) 18](#)
- PACE Recommendation 1402 (1999) on the Control of internal security services in Council of Europe member states.
- PACE Recommendation 1713 (2005) on Democratic oversight of the security sector in member states.
- Opinion of the Commissioner for Human Rights Concerning Independent and Effective Determination of Complaints Against the Police. CommDH(2009)4, 12 March 2009
- CPT Standards, CPT/Inf/E (2002) 1 - Rev. 2013
- CoE CoM Resolution (97) 24 on the Twenty Guiding Principles for the Fight Against Corruption, Adopted by the Committee of Ministers on 6 November 1997 at the 101st session of the Committee of Ministers.
- General Comment No. 3 of the Committee against Torture on Implementation of article 14 by States parties of the Convention against Torture and other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment, 13 December 2012
- Guidelines on the Role of Prosecutors Adopted by the Eighth United Nations Congress on the Prevention of Crime and the Treatment of Offenders, Havana, Cuba, 27 August to 7 September 1990
- Resolution 17/2, adopted by Commission on Crime Prevention and Criminal Justice (CCPCJ), Strengthening the rule of law through improved integrity and capacity of prosecution services, 2008
- «Strengthening the rule of law through improved integrity and capacity of prosecution services» Report of the UN Secretary General, 24 January 2011
- The role of public prosecution in the criminal justice system, Recommendation Rec(2000)19, adopted by the Committee of Ministers of the CoE on 6 October 2000
- Opinion No 3(2008) of the Consultative Council of European Prosecutors (CCPE) on “The Role of Prosecution Services outside the Criminal Law Field”
- Opinion No. 5 on “Public prosecution and juvenile justice Yerevan Declaration”, adopted during the 5th plenary meeting the CCPE, which took place in (Yerevan (Armenia), 19-21 October 2010).
- Opinion No. 6 of the Consultative Council of European Prosecutors (CCPE) on “The relationship between prosecutors and the prison administration” adopted during the 6th plenary meeting (Strasbourg, 24-25 November 2011)
- Opinion (2012) No. 7 of the Consultative Council of European Prosecutors (CCPE) on “The Management of the Means of Prosecution Services” Adopted by the CCPE at its 7th Plenary Meeting (Strasbourg, 26-27 November 2012)
- Opinion No.12 (2009) of the Consultative Council of European Judges (CCJE) and Opinion No.4 (2009) of the Consultative Council of European Prosecutors (CCPE) to the Attention of the Committee of Ministers of the Council of Europe on the Relations Between Judges and Prosecutors in a Democratic Society.

- Standards of professional responsibility and statement of the essential duties and rights of prosecutors, adopted by the International Association of Prosecutors on the twenty third day of April 1999

7. Այլ

- ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ, «Իրավունք» (2010թ.)
- Խոշտանգումների եվ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (cpt) 2008 թվականի մարտի 15-17-ը Հայաստան կատարած այցելության վերաբերյալ զեկույցը, Ստրասբուրգ (2010թ մարտի19)
- 2012 թ. Պետական բյուջեի կատարման ՀՀ կառավարության տարեկան հաշվետվություն
- «Անվտանգության ծառայության հանդեպ ժողովարդավարական վերահսկողության վերաբերյալ» Վենետիկի հանձնաժողովի զեկույց (2007 թ. հունիսի 1-2)

Կազմակերպության մասին

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը

ոչ քաղաքական, ոչ կրոնական, շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է, որը միավորում է ժողովրդավարության, հանդուրժողության, բազմակարծության և մարդու իրավունքների գերակայության սկզբունքներն արժևորող անհատներին:

Ինչով ենք մենք զբաղվում

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը գործում է հետևյալ ոլորտներում՝ մարդու իրավունքների պաշտպանություն, շահերի պաշտպանություն և քաղաքացիական նախաձեռնություններ, խաղաղասիրություն: ՀՔԱ Վանաձորի գրասենյակը քննարկումների, սեմինարների, հանրային լսումների, (համատեղ) ակցիաների, դասընթացների, իրավական ակցիաների, քաղաքացիական մասնակցության, հրապարակումների, ուսումնասիրությունների/հետազոտությունների, մոնիթորինգի, լոբբինգի, ՁԼՄ-ների ներգրավման, հեռուստատեսային և ռադիո քննարկումների ու բանավեճերի միջոցով իրականացնում է իր գործունեության ոլորտները:

Ինչու դիմել մեզ

խախտվել են Ձեր իրավունքներն ու ազատությունները պետական մարմինների կողմից, և Դուք իրավական խորհրդատվության կարիք ունեք, որը տրամադրվում է անվճար:

Ինչպես գտնել մեզ

Դուք կարող եք այցելել մեր գրասենյակ, զանգահարել, կապ հաստատել էլեկտրոնային նամակագրությամբ, մեր փոստային հասցեին ուղարկել նամակներ անձամբ կամ Ձեր բարեկամների միջոցով՝ մեզ տեղեկացնելով իրավական խնդիրների վերաբերյալ:

Մեր հասցեն Վանաձորում՝

ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր 2001, Տիգրան Մեծի 59

հեռ՝ +374 /322/ 4 22 68

բջջ. 094 042268

անվճար թեժ գիծ՝ 0 8000 12 11

կայքէջ՝ www.hcav.am

էլ. հասցե՝ hcav@hcav.am

Մեր հասցեն Երևանում՝

ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 3 շենք, բն. 21

Մեր հասցեն Սպիտակում՝

ՀՀ, Լոռու մարզ, ք. Սպիտակ, Թորոսյան 23/2